335

LGN
1593

1999

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԱՆԿԼԻԱՑՈՑ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԵԱՆ

Հ. ՇԷՐԷՐ

ԳԵՐՄԱՆԱՑՈՒ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

ՄԱՐԿՈՍԻ ԱՂԱԲԷԳԵԱՆ

ԽՈՆԱՐՀ ՆՈՒՔԻՐ

ԵՐԱԽՏԱԳԷՏ ԲԱՐԵԿԱՄՈՒԹԵԱՆ

ԿԻՄԻՒԻՇԿԷՐՏԱՆԵԱՆ ԵՂԲՕՐ

ՊԱՐՈՆԱՑ

ՌՈՒԲԷՆԻ, ՏԻԳՐԱՆԻ ԵՒ ԳՐԻԳՈՐԻ

Թարգմանողի կողմէ

1048

Եկեղեցին ու գերդաստան
Ազգայնութիւն, ընտանիք
Թող ձեզ լինին մի ապաստան
Քառանգութիւն, հայրենիք։
Սէր հայրենեաց, սէր ընտանեաց
Թող ձեզ չնորհեն սուրբ պատկ
Դարուց ի դար ձեր զաւակաց
Անմահական է կտակ։

ՏԷ՛ս, Ք՛ Գաբրիէլեան աղբերգուհի,
Մատն Ա. Տեսիլ Ա. Ղեռնէ երէց
երես 20։

Կ. ՊՕԼԻՍ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐՈՑ
— 1882 —

ԳՐԱՏՈՒՆ
Ց. ՉԻՆՃԻՐՃԵԱՆ

28 1593

1593-60

ՄԻ ԿԱՐՃ ԽՕՍՔ ԿԱՐԴԱՑՈՂԻՆ

Ցօրէս՝ 20 տարի կայ որ, հանգուցեալ Պ. Յովհաննէս Յովակիմեան, մեր Ազգ. Ընդհ. Ժողովոյ Երեսփոխանը, թարգմանած ու հրատարակած ունի մի պատուական գիրք, ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՆԱԽՆԵԱՑ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ՁԱՆԱՊԱՐՀ ՀԱՐՍՏՈՒԹԵԱՆ անունով։ Մարդս ճանաչուած է ինչպէս իր կարդացած գրքերով, այնպէս էլ իր թարգմանած կամ հեղինակած գրքերով։ Թէպէտ կամք է քեզ, ո՛վ կարդացող, ճանաչել թէ ինչ մարդ է եղել ողբացած հոգի Յովհաննէս Յովակիմեան, կարդա՛ նրա այդ գիրքը, իսկոյն կիմանաս թէ նա՝ ինչ մտաք եւ ինչ հոգի կրում է եղել իր մէջումն մեր ազգի վրայ։ Իրաւ է, որ այդ գրուածքը պատմութիւն չէ, այլ առենախօսութիւն նախնեաց վաճառականութեան պատմական ծանօթութեանց՝ եւ մեր օրուայ վաճառականաց ունենալու վարքին վրայ։ Ես՝ ոչ թէ միայն պահանջում եմ իմ այս թարգմանութիւնը կարդացողներէն, որ իրրեւ նախապիտոյք կամ յառաջարան Անկլիացոց վաճառականութեան պատմութեան՝ նախ այդ առենախօսութիւնը կարդան եւ պատրաստուին, հապա պատուէր էլ եմ տալի ամէն պատմութեան դասախօսներին, որ այսու յետոյ ուսումնարանները՝ նոյն այդ առենախօսին միատուն խօսքին հետեւելով այդ առենախօսութիւնը դասախօսեն ուսանողներին։ Նա՝ ասում է, «Մեր հիմակուան ժամանակը այս խնդիրներուն վրայօք չատ գիրքեր հրատարակել սկսած են. հիմայ վաճառականութիւնը՝ չէ թէ արհեստի նման հետեւութիւն ունի, այլ գրեթէ խորին փիլոսոփայութեան մը պէս կը սովրըվի, որ մեր (Անկլիացոց համար է ասում) հիմակուան համալսարանները այս ամենահարկաւոր գործին համար ճարտարապետ ուսուցիչներ սնօրինած են, որ վաճառականութեան հիմանցը եւ սկզբանցը վրայ դասատուութիւն ընեն»։

Երբ, մի Անկլիացի իր ազգին քանի երեսուն տարի առաջ այդ հանգի է խօսում, ես պէտք է որ, աւելի հեռուն երթամ եւ ասեմ իմ ազգայնոց թէ՝ այսու յետոյ դադրած են կրօնական հալածանքները, եւ ազգային զգացմունքին ու եռանդին դէմ մաքառումն էլ ազդեցութիւն չունի, հապա՝ երկրագործութիւնը, վաճառականութիւնը եւ ձեռարհեստներն են եղել աշխարհակարներ եւ տիրապետներ այսօր, զրանց արած պատերազմը կամ արշաւանքը որ եւ է երկրի կամ ազգի վրայ սարսափելի է. ապահով են զրանք երկրատիրելու, տիրապետելու, ազգեր ու երկիրներ զրեթէ ջնջելու առանց դիմադրութեան։ Ո՞ր երկիրը կամ ո՞ր ազգը այսօր կարող է Անկլիացոց, Ֆրանսիացոց ու Գերմանացոց այդ երեք զործունէութեանցը դէմ կալ, խափան լինել նրանց տիեզերական յառաջադիմութեան։ Ամերիկայի վրայ տիրապետեցին, Ասիոյ վրայ էլ տիրապետելու վրայ են։ Ա՛րդ ժամն եկաւ որ Հայոց ազգն էլ զգայ այդ երեք զօրութեանց ներգործութիւնը եւ սթափի՝ ոչ թէ զրանց դէմ գնելու, որ անհնարին է, այլ նոյն զօրութենէն իր ձեռին բերելու եւ նրանով ինքնիրան պաշտպանելու։

Թէ ինչպէս նա կարող է այդ զօրութենէն իր ձեռին բերել, ըսա ինձ այդ բանը կը լինի յատուկ ուսումնասիրելով եւ երկար բարակ խորը դեգերելով այդ մեծ ազգին եւ նրա պետութեանց վաճառականութեան պատմութիւնը եւ ապա ինքնիրան մի ուղղութիւն տալով ձեռք բերելու երկրագործական, վաճառականական եւ ձեռարհեստական դիտութիւնը։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԱՆԿԼԻԱՑՈՑ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ԳԼՈՒԽ Ա.

Անգլիոյ վաճառականութեան պատմականը.—Անգլօ-Սաքսոնական նաւարկութեան կարեւորութիւնը.—Անգլիոյ նոյնաձեւը ներքնաշխարհին.—Մեծ հրվանդակը (Շարտա Մալիա).—Օրինականութեան ընդհանրութիւնը.—Անգլիոյ աջնեան առաջ դուրս բերած բերքն է երկրագործական:—Իր բերքը և իր բարդուն վաճառականութիւնը.—Այդ ապրանքին գրեանական կարեւորութիւնը.—Եղանակը գործածութիւնը Անգլիացոց նորնեցս.—Վաճառականական ընկերակցութիւն, բախտախնդիր վաճառականները:

Հռոմէական կայսրութեան կործանութենէն յետոյ, Անգլիա՝ ուր չատ հին ժամանակներում փիւնիկեցիք և կարթագինեցիք տեսնելու էին դնացել, ուր տեղ և երկրագործութիւնը մեծ յառաջացում էր արած Հռոմայեցոց ժամանակ, միւս երկիրների նման կործանուեց և տեղատեց ու բարբարոսութեան մէջ մղրճուեց: Մինչև մեծ Ալֆրեդի ժամանակները երկրում է այդ երկրում լուսաւորութեան ծիլեր, որոնց սերմը փրկուելն էր ցանել և որոնք այդ թագաւորը հետամուտ եղաւ զարգացնելու, ինչպես նոյնն էր արած Մեծն կարլ Փրանկաց պետութեան մէջ: Այդ ժամանակներում Անգլօ-Սաքսոնք նաւարկութիւն ունէին և Միջերկրական ծովումն էլ ճամբորդութիւն էին անում, բայց մ'չ թէ առեւտուր անելու նպատակով, հարստ ծովահարութիւն ու բաղդատրական արշաւանքներ: Անգլօ-Սաքսոնք՝ Բրիտանիոյ ախրապետողներն՝ իրանց եղբայր Նորմանդների նման վարժ ծովու վրայ, որսւ ախերում էին միշտ բնակած, իրանց նոր հայրենիքը ընտրեցին մի կղզի, այսինքն այնպիսի մի երկիր՝ որսւ մէջ մնալը նաւերով էր միայն կարելի: Այդ իրողութենէն հասկացւում է որ, զրանք այդ տարերքի հետ ընտանեցած լինելով, երբեմն միևնոյն կարճ թէ նորմանդների հետ միասին փորձ փորձած լինին արշաւանք անելու Միջերկրական ծովում և յետ դարձած նրա եղերական բերկրելով բեռցած իրանց նաւերը:

Այն քիչ ու միչ յառաջացումը որ եղած էր խաղաղ ժամանակւայ արհեստներում, ինչպես են դլխաւորապես տուար մեռցանելը, մանուածապես ոչխարը, երկրագործութիւնը և հանքագործութիւնը, կլայեկի և արճիճի բուլադործութիւնը մոռասանդ, Անգլօ-Սաքսոնների ախրապե-

Իրաւ է որ, դժուար է դրանք զարգացնելը մի երկրի մէջ ինչպես որ մերինն է, եւ ինչպես ասում են անտեսագէտք, թէ «միապետական եւ ազնուապետական կառավարութեամբ եւ դրութեամբ մի ազգ վաճառական չէ կարող լինել, հին պատմութիւնը այդ մասին մեր աչքի առաջ չատ ապացոյցներ է դնում. միապետականութիւնը իր զօշաքաղութեամբ եւ ինքնակամութեամբ կարգապահութեան եւ ապահովութեան վնաս է բերում ազնուապետականութիւնն էլ աշխատութիւնն է արհամարհում, հապա բարեխառն ժողովրդասէր կառավարութիւնն է մեծ դրդում տուող վաճառականութեան»: Բայց մեր Օսմանեան տէրութիւնը՝ Աբաքաց կրօնն ու լեզուն իբրացնելով՝ ժառանգորդ է նաեւ նրանց գիտնականութեան, վաճառականութեան եւ արհեստականութեան, ու քառատուն տալի է որ, նա արդէն մոռծէ դրանք զարգացնելու ճամբում իր տիրապետած երկիրներում եւ ազգերում. Ուստի եւ մեր ազգի յոյսն էլ մեծ պէտք է լինի թէ ապ

տութեան ժամանակ Նորմանդների երկրաշարժութեամբ դրեթէ ոչնչացան։ Նորմանդներն արհամարհում էին որ և է գործ և զբաղմունք բաց ի պատերազմականէն և որսորդականէն։ Ամենքի կալուածների վրայ ահագին տուրքեր դնելով կործանեցին դրանք, բայց և այնպէս որքան որ ճնշող էր այդ լուծը, ուժը, դիմադրութիւնը և ազատութեան հոգին, որ յաւուրս է Գերմանական ցեղին, կարելի չեղաւ նուաճուիլ։ Անկլիոյ վաճառականական մեծութեան բուն ծագումը իր ձեռք բերած սահմանադրական մեծ հրովարտակէն է առած, այն մարդկային իրաւանց խարիսխը, այնպիսի մի ժամանակում որ հոգեւոր և մարմնաւոր բռնապետութիւնը սարկացնում էր Եւրոպական ցամաքի ազգերին և կործանում էր մանաւանդ Գերմանիաումը նոյն այն ազգային կարգերն ու սովրքերը, որոնք Անկլիա կարող եղաւ ամբողջ ու անեղծ պահպանել։ 1218 Թուին ցովհաննէս Թագաւորէն մի սահմանադրութիւն բռնցնող պարոնայց վարմունքին մէջ արդէն քաջ յայտնուում է ընկերակցութեան աքանչելագործ հոգին։ Այն միաբանութիւնը, որն որ յետոյ պահպանեց մարդուս զարմանքը տանող յաջողմունքներով, ընկերական և քաղաքական կեանքում մի օրինական կարգ ու կանոնի հաստատութիւնը՝ բաց արեց Անկլիոյ դռները լուսաւորութեան առաջ, երկրաշարժից վրայ յաջորդող սերունդը կերպարանափոխ եղաւ, և այսօր յայտնի երեւում է որ, իրենէ այնքան իրարմէ տարբեր ցեղերի և վիճակների մէջում կատարուած երաւախոհութեանց յաւուրց բնութեան մէջն է որ, այդ երկիրն իր քաղաքական կարգաւորութեան միտական հիմքը դրել է։ Մինչդեռ Թագաւորների իշխանութիւն սահմանուած էր աղնուականացմէ, մի երրորդ կարգի ժողովուրդ կամ մի հասարակութիւն, բոլորովին Անկլօ–Սաքսոնական ծագում ունեցող, չատ չուտով կազմուեց քաղաքներում և գիւղերում ու դէմ դրեց Նորմանդ պարոնաց աւատային ձեռնածութեանց և յափշտակութեանց։ Եկեղեցական դասն էլ (նուիրապետութիւնը) վերջապէս չատ աւելի պակաս իշխանութիւն ունեցաւ Անկլիաումը, եւրոպական ցամաքում եկեղեցական դասուն ունեցածէն։

Թէև այս պատմութեանս մէջ տեղը չէ Անկլիական սահմանադրութեան պատմութեանը մանրամասնութեանց մէջ մտնել, բայց մեզ արժանի էինք անելու յանդիմանութեան, թէպէտ դուրս բերած չլինէինք այստեղ այն ամենամեծ ազդեցութիւնը, որ այդ սահմանադրութիւնը գործեց այդ երկրի վաճառականական զարգացման վրայ։ Մեծ հրովարտակի մի քանի յօդուածները վերաբերում են ուղղակի վաճառականութեան, որոնք են կշիռքների և չափերի միակերպութեան, մի քանի քաղաքների արտօնութեանց հաստատութեան, որոնց մէջ Լօնտօնինը, և նեղքին և արտաքին փոխանակութեանց դիւրութեանց մասին եղած կարգադրութեանց։

Բայց և այդպէս Անկլիոյ վաճառականութիւնը, այդ ժամանակում դեռ հաղիւ իր սկզբնաւորութեան մէջն էր ու խիստ զօրաւոր հակառակորդների հետ էլ կռուելու պարտական, որոնք իր վրայ աւելի նպաստաւոր դրութեան, աւելի յառաջադէմ լուսաւորութեան բարձր կարողութեանց առաւելութիւնը ունէին, ինչպէս էին Իտալացիք, Ֆլանդրիացիք, ու Հանսեականք։ (1) Ֆլանդրիացիք ձեռարուեստներում էին ընտիր և Հանսեականք էլ նաւարկութեան մէջ։ Զարմանալի բան է որ այդ Անկլիան՝ որուն ձեռարհեստական ապրանքներն այսօր աչխարհիս ամէն չահաստան տեղուանք (վաճառանոցներում) մեծ չահեր են վայելում, որուն տերութենական և վաճառականական նաւատորմիղներն ծածկում են ամէն ծովերն, այն ժամանակ հարկատու լինի Ֆլանդրիական ձեռարհեստականութեան և պարտական նրան ճարելու խակ նիւթեր, մանանդ բուրդ՝ և փոխարէն ստանայ նրանէն կերպաս նոյն բրդեղենով պատրաստուած։ Նմանապէս Ֆիօրէնցացի վաճառականք, յարաբերութիւն ունենան Անկլիոյ հարուստ վանքերի հետ և նրանցմէ ծախու առնում լինեին մի քանի տարուայ ոչխարի կտուրքը։ Երկրին ծովային վաճառականութիւնը մեծ մասնով օտարների ձեռնումն էր, գլխաւորապէս Հանսեականաց, ուր տեղ կարգէ դուրս արտօնութիւնք էին վայելում, լօնտօնում մեծամեծ հաստատութեանց տէր էին եղած և երկրին բնակիչներին չատ չատ նեղքին առուտուրն էին թողած։ Ոչ մի տեղ իրանց նաւերն այնքան գործ չէին գտնում, որքան Անկլիացւոց նաւահանգիստներում. չատ թագաւորների օգտին համար նաւային չաղթանակներ են տարած և նրանց էլ միանգամայն իրանց զօրութիւն ղգացուցին։ Երկրացիք ուղղակի Ֆրանսիոյ հետ էին անում առուտուր, որու հիւսիսային գաւառները Անկլիոյ թագէն ունէին կախում։

Այն տեղաց գլխաւորապէս գինի էին ներս բերում, բուրդն իրանց գէպ ի դուրս վաճառատարութեան գլխաւոր ապրանքն էր միչտ։ Բրիւկ, Անտէրպա և Քալէ այդ ապրանքների համար նշանակուած չուեմարաններն էին։ 1354 Թուին մի պաչտօնական արժեցուցիչ հաչիւ ծանօթացնում է այդ ապրանքների յուղարկութեանց կարեւորութիւնը, հաստատում է 277,000 փաունդ ստէռլինկ, մինչդեռ ամբողջ արժողութիւնը միւս բոլոր դուրս հանուած ապրանքների ցորենի, կաչու, արճճի և կլայեկի չէ հասել։

---

(1) Հանսա բառը Ֆլանդրիական է և նշանակում է հանգանակ. բայց յետոյ նշանակեց որ և է ընկերութիւն, որոյ անդամներն մի ընդհանուր նպատակի համար էին հանգանակում։ Հանսա էլ կազմուելով Ֆլանդրիական քաղաքների օրինակի վրայ՝ նոյն երկրէն գաղթող և Պալթիկ ծովափերումը բնակող քաղաքացոց եւ արհեստաւորաց ազդեցութեան ներքեւ, եօթանասունը եօթ քաղաքներ էր բովանդակում, 1364 Թուին եւ իր ամենէն նշանաւոր անդամների չարքումն էին Քօլօնիա, Բրունսվիկ, Վիզմար, Ռօստօք, Արտալսունդ, Ուէզըլ, Բէրկէն, Ռիկա, Կրօնինկա, Լունէպուրկ, Պոէմա, Հալլա, Կօզլա, եւ այլ քաղաքները։ Դրանց ամենքը միասին Հանէական քաղաքներ էին կոչւում, որոնց պաչտօնն ու գործն էր ծովու եւ ցամաքի վրայ վաճառականութիւն անել, գրեթէ իբրեւ մի հասարակապետութիւն։ Ս. Թ.

նում 16,400 փառնդ ատեռլինկ։ Ջինորառթիւնը նոյնպէս բերում էր մի վոքը չահ, բայց դրա միջումն էլ օտարների մրցողութեան էին պատահում, դվխաւորապէս ատորին Նահանդացոց և Հանսեականաց։ Նիւքաստլի քարածուխի բովերը ծանօթ էին տասնեչորրորդ դարուց, բայց վայրը, որով երկիրը դեռ շատ հարուստ էր, դործածական վառելիք էր լինում, իսկ երկաթէ ձեռարհեստները դեռ տղայութեան մէջն էին։

Եդուարդ Գ. ի թագաւորութիւնը դարադլուխ է կազմում Անկլիոյ նորածին վաճառականութեան տարեգրներում։ Այդ թագաւորը խորհեցաւ որ աւելի շահաւորութիւն կայ բուրդ դործածելում քան թէ դուրս հանելումը, բերել տուեց այդ նպատակով Բելճիկայէն մի շատ վարպետ դործաւորներ։ Այդպէսով նա իր երկրի ձեռարհեստական մեծութեան հիմքը դրեց. կամաւոր դործաւորների նոր դաղթականութիւնը օդնութեան դալով այդ դործին՝ շատ շուտով դործարանները յառաջացան և առաջիկայ ժամանակաշրջանի վերջէն սկսած՝ իրանց չուխաները՝ ոչ թէ միայն ազդային առուտուրի մէջ էին քշում, այլ մեծ քանակութեամբ դուրս էլ էին դնում։ Նախ Բրիտոլ և յետոյ Լօնտոն դլխաւոր պորտերն էին այդ ձեռարհեստների։ Բուրդով պարիկը՝ որ վայ բաղմում է Լօրդ դիւանադպիրն, այն ժամանակուայ երեւցած վաճառականական քաղաքականութեան խորհրդանշան է, բայց և այնպէս երկրագործութիւնն ու անասնապահութիւնը միշտ առաւելութիւն ունէին, և Անկլիա եւրոպիոյ յամենքին յօրէն էր, էր տալի։ Անկլիայի վաճառականները սկսում էին քիչ քիչ մանակցիլ արտաքին վաճառականութեան և իրանց միջում ընկերութիւնը կազմել, որպէս դի օտար վաճառականներին դուրս հանեն իրանց երկրէն, ինչպէս էին Թոմաս Բեգոլի ընկերութիւնը, կայսն վաճառականների ընկերակցութիւնը և բախտաբեր վաճառականների ընկերականութիւնը։ Սակայն Հանսեականաց դուրս հանելը, որ Անկլիական ձեռարհեստների մի քայլ առաջ, մանաւանդ մի ազդային նաւական զօրութեան յառաջ դալուն՝ յետագայ ժամանակաշրջանին է պատկանում։ Կղզիական թագաւորութեան նաւարկութիւնը դեռ շատ թերակատար էր և սորին՝ մեծն Ալֆրէտի ժամանակուայ եղածէն անդամ, և շատ քիչ էլ Ֆրանսիոյ ծովափերով էր անց կենում. Սպանիա և Պօրտուկալ տասնեչորրորդ և տասնեհինգերորդ դարուց դործ ունէին Անկլիոյ հետ. սակայն շատ քիչ անդամ Անկլիացի նաւեր էին երեւում նրանց նաւահանգստներում. Միջերկրականում անդործ էին, Հանսեականք էլ հիւսիսն էին փակում նրանց առջև։ Կառավարութիւնը զուր տեղ չէնք ու փորձ արեց նրանց օդնական լինելու օրէնքներով, ինչպէս էին Ռիչարդ Բ. ի նաւարկութեան օրէնքները։ Այդ օրէնքները երկրի դրութեան յատուկ չլինելով անարդիւն եղան։ Հրոյալի յառաջադիմութիւնը Անկլիական նաւային զօրութեան ովկիանոս ճամբայ հանելուց յետոյ եղաւ։

ԳԼՈՒԽ Բ.

Անկլիոյ պատմութեան ժամանակական որոշ ընթացքները. — Հայեացք անցելոյն վերայ. — Անկլիացոց վաճառականութեան և նաւարկութեան նորատ ու հեռաւոր պաշտօնը. — Գաքսօրներէն (երկու երէսէրց) երկրային բերութիւն առնելու ձամպրդութիւնը. — Այդ ճամպրդութիւնն ու ի հեռուստութիւն վերաբերմունք. — Հինդերկ Գ. իր թոռնէն տալտաբնակ և բերքնակ ժողովրդներէն վերայ. — Հինդերկ Ը. ի ժամանակ նաւական բարուքներ. — Պատերազմական նաւարկութիւն և վաճառականական նաւարկութիւն. — կրօնական դիրք (տարբերութիւն) պարտաւորութիւն և պարագրութիւն. — Հանսեականաց մենաշնորհութեան դիմադրելու կարգաւորութիւն. — Այսորիկ կռիւ այդ տարին։

Անկլիացիք տասնեվեցերորդ դարումն են երեւում ազգերական վաճառականութեան պատմութեան մէջ, ու մարդուս զարմանքը տանող երկարու վրայ արած յառաջադիմութեամբ՝ այդ փոքրիկ ու չկուռած ազգը, ողջ աշխարհի ծովերու և նրա ամէն մասերու վրայ տիրող մի տէրութիւն է լինում։ Այդպիսի առարկայի մեծութեան ազդու՝ մարդս կանգ առնել է կամենում, որպէս դի կարող լինի խորհիլ ազդերի նուաղմանալու և զօրանալու վրայ։ Եղիսաբեթ թագուհու թագաւորութիւնը մեր աչքի առաջն է հանում այդ զարադլուխներէն մինը։ Ներառանդ արի հասակում հասած մի ազդ՝ իր դլուխը պրծացնում է բոլորովին Հանսեականաց վաճառականական խնամակալութենէն և իր ձեռումն է բերում, մի յատուկ վաճառականութիւն։ Դրսուանդ Սպանիական Աբմադայ վրայ յաղթութիւն է տանում, ձեռք է բերում ծովու ազատութիւնը, ոչնչացնում է քահանայապետական բաժանումը ու ինքն էլ դաղթականութիւնք է հիմնարկում։ Այդ առաջին շրջանը մեր աչքի առաջ, իրաւ է որ մի ծանր ընթացք է հանում։ Երկրորդը, որ սկսում է նաւարկութեան համար հաստատած օրէնքով և առաջ է բերում ծովային զօրութիւն, ցոյց է տալի արդէն՝ մի աւելի մեծ առաջ քշում։ Բայց այդ երկուսի վրայ աւելի արդիւնաբեր եղողն է լինում երրորդ շրջանը, որն որ Ուարէխաի խաղաղութեան թուականէն սկսած մեր առջեւն է բաց անում իրերանման դործունէութիւն ամէն տեղ և ամէն կերպ, ինչպէս մայր երկրում, նոյնպէս և դաղթականական երկրում, ինչպէս առուտուրի մէջ, նոյնպէս և ձեռարհեստներում, երկրադործութեան նոյնպէս և նաւարկութեան մէջ։ Դրանք են լինելու այս պատմական բաժանումները, բայց այս պատմութիւնը կապակցութիւն ունենալու համար անց կացած ժամանակների հետ, պէտք է առաջուց մի քանի ծանօթութիւնք նախադասել նրան։

Մէջին դարու վերջերում, 1430 թուերին, Անկլիական վաճառականութիւն դեռ իր հետեւակ ստորնութենէն չէր բարձրացած։ Ապրանք դուրս ու ներս տանելն ու բերելը դլխաւորապէս արտօնատէր օտարների ձեռումն էր՝ Իտալացոց, Նէէրլանտացոց ու Հանսեականաց։ Այդ վեր-

ջինք՝ իրանց Լօնտօնու վաճառատաններով, որոնք (Գ--ըդ Ա-ՒՒ) երկաթ–Ա-պարան էին կոչուած, ուերէրն էին եղած դրսի առուտուրին։ Թագաւորներէ ձեռքով եղած դարմանատարութիւն այդ մասին, երկրին չահերը պաշտպանելու համար, խիստ նուազ և խիստ կիկատար էին, հետեւաբար և անգօր ու անդործօն։ Շատ անգամ էլ, այդ դարմանատարութիւն ջղակոր էր լինում անձնական նկատումներով։ Կառավարութիւնը դրամի պէտք էր ունենում և Հանսեականք միշտ պատրաստ էին նրան պայմանով տալու։ Աղնուականք էլ, վախենում էին որ չըլնի թէ օտարների դուրս քչուելը նուազեցնէ իրանց բրդի առուտուրի չահը, վասն զի թէև Էդուարդ Գ. քաջալերած էր այս նիւթի գործածութիւնը երկրումը, սակայն այդ նիւթին աւելի առարկայ էր եղած վաճառատարութեան, և Անկլիական ձեռարհեստն էլ չատ հեռու էր դեռ մրցելու կարող լինել Ստորին նահանգների ձեռարհեստների հետ։ Բայց և այնպէս մի չինքի առաջին հիմքերը դրուած էին, որոնց վրայ յետոյ քիչ քիչ այդ չինքը պէտք էր բարձրանալ։ Ընկերակցութեան հոդու զօրութիւնը ցոյց տուեց ինքն իրան այդ համեատ հանգամանքներում։ Բազդաւինգիր վաճառականների ընկերակցութիւնը, որն որ հաստատուեց 1406 թուին՝ Հէնրիկ Դ. ի մի հրամանով, հաստատուն մնաց, թէև օտարների հետ բուռն կռուի բռնուած, և տարածեց՝ քանի որ տեւեց՝ իր գործողութեանց սահմանը։ Այդ ընկերակցութիւնն ամենէն աւելի Անկլիական չուխայի վաճառատարութեամբ զբաղեց, որու վոխարէն դինի, արեւելեան բերք և իտալիոյ կերպաս էր առնում։ Նա պահում էր մի նշանաւոր վաճառատուն Անվերբատում և Հանսեատում։ Հանսեականք այդ իրողութեան վրայ պարտաւորած էին եղած իրանցը վոխադրել Բրիւկէնում, Լոքօա գետի վրայ, ու սատիկ էլ ջլատ կրեցին նրա մրցումէն։ Ընկերութիւնը չատ զօրաւոր էր ինքն իրմով ու իր յաղթանակը ապահովելու համար՝ կառավարութեան կողմէն ուրիշ բանէ պէտք չունեցաւ, հապա միայն քիչ ու միչ անկախ դրութիւն վաճառականական քաղաքականութենէն, 1505 թուականի սահմանադրական հրովարտակը, որ սահմանադրում էր նրա մենավաճառութիւնը միմիայն մի տեսակ առարկայի վաճառատարութեան, բրդէ բանուածքների, ու միմիայն Ստորին նահանգաց հրապարակներում, անբաւական էին։ Բացի մանաւոր վաճառականաց գործողութեանց ջլատ պատճառելուց՝ օտարին մրցում պակաս չէր մնում ջլատելու նաև բոլոր միւս ճիւղերին և բոլոր միւս ուղղութեանց։ Հանսեականք նախորդ տարուայ մէջ ձեռք էլ էին բերած իրանց արտօնութեանց համար մի նոր հաստատութիւն։ Հէնրիկ Է. երեւում է որ այդ արտօնութիւն հաստատելու հաւանել է՝ այն համոզումով որ Անկլիացիք դեռ այն աստիճանին չէին հասած, որ իրանք իրանցմով կարող լինէին վարել իրանց գրսի վաճառականութիւնը. վասն զի, ուրիշ հայեացքով, նա հետամուտ եղաւ ազգային գործունէութիւն դրդել, ինչպէս որ այդ բանին ապացոյց է Մեծ Ջէֆֆրի (Ինքեփօրտ Մ-ինտ) անունով դաշնադրութիւնը, որ նոր

կատարեց 1496 թուին Ստորին նահանգների հետ, որով ընդհում էր մի փոխադարձ վաճառականական ազատութիւն։

Անկլիացոց վաճառականութեան հետևակ վիճակը կանգնեցուց, ինչպէս երեւում է, իրանց նաւարկութեան զարգացումը։ Այդ նաւարկութիւնը դրեթէ եղերական ձկնորսութեան և Մ-ՒՒ նեղուցով անց կենալու վրայ էր կայանում։ Անկլիացիք օտարների խնամակալութեան ներքեւ ճնշուած՝ անփորձ ու անհմուտ, չունէին այն քաջութիւն, ձեռնարկութեանց այն հոգին և անձնավստահութիւն, որոնք խիստ կարեւոր են երկար ճամպորդութիւն անողներին։ Հիմք չկայ ձեռներում, որ մի խնդիր անելու կարող լինէինք թէ՝ Գոլոմբին Հէնրիկ Է. ի առաջը հանած է խորհուրդներն երկրային գիւտեր անելու մասին, որովհետեւ գիտենք թէ՝ ինչ ողորմելի նաւեր ստացաւ նա՝ Սպանիացոցմէ։ Շատ հաւանական է որ, այդ նաւերն աւելի լաւ չէին դրանց վրայ, որոնցմով Սէբաստիան Գաբօտ Բրիստոլէն չուեց 1496 թուին հռչակաւոր Գինովացու քամակէն և գտաւ հիւսիսային Ամերիկու ցամաքը։ Հէնրիկ Է. հասկացող մարդ էր արեւմտեան կիսագնտի գիւտի ունենալու կարեւորութիւնը Անկլիոյ համար։ Բայց իր ազահութիւնը իրան չէր ներում այդ բանում մտանակցել նիւթական օգնութեամբ։ Գաբօտները պարտաւորեցան իրանց յատուկ ծախքով ձեռնարկութիւնը վարձել։ Թագաւորը միմիայն առանց բանի տեղ դնելու պայմ ձեռքով եղած բաժանումը, նրանց իշխանութիւն տուեց տէր լինելու նորագիւտ երկիրներին Անկլիոյ անունով։ Նա միեւնոյն ժամանակ խոհեմութիւն արեց իրան համար վեր առնել ոսկի եկամուտների և բոլոր չահերու հինգերորդ մասը, Գաբօտները կարողութիւն չունենալով օգուտ քաղել իրանց արած գիւտերէն, ձեռք վեր առին իրանց ձեռնարկութենէն։ Յետոյ դէպքերն այնպէս բերին որ՝ Հիւսիսային Ամերիկու գաղթականք Անկլիոյ վերադարձան, ուր տեղ նա էլ պատահեց այն ժամանակ Սպանիոյ և Ֆրանսիոյ իրաւապահանջողութեանց։ Հէնրիկ Է. առաջինն եղաւ աղնուականաց չափազանց կարողութիւնը նուազեցնողը, որոնց կուսակցական փառամոլութիւնն երկիրը քաղաքային պատերազմներում էր մղել։ Միւս կողմէն նա առաւելացուց քաղքեցոց ազդեցութիւն և գիւղաբնակ ժողովրդին էլ մեծ նշանակութիւն տուեց։ Հրամայելով աւատային կարուածատէրանց իրանց ուզածին պէս իրանց աւատներն ուրիշներին վաճառել, որն որ դիւրացնում էր հողին մի մասը ձեռքէ միւս մարդու ձեռք անց կենալը, մանաւանդ երրորդ կարգի ժողովրդեան կամ հասարակութեան։ Կրօնական վերանորոգութիւնը և վանքերի վերնալը Հէնրիկ Է. էն յետոյ՝ համանման մի հետեւանք ունեցաւ։ Ոչ մի երկրում, հողը՝ ինչպէս Անկլիատում՝ աղնուականաց առանձին սեպհականութիւնը չէ եղած։ Մի չատ կանոնադրութիւնք չափաւորեցին և հեշտացուցին մշակների ձրի աշխատութիւնը, որն որ Եւրոպական ցամաքի վրայ աւելի ծանր էր քան թեթեւ։ Այդ իրողութիւնքը, պէտք չէ որ աչքէ հեռանան Անկլիոյ վաճառականական մեծութեան պատճառները

թուելիս, վաճառականական ձգտումներ արդէն դրանց միջում երեւան են գալի, մինչեւ երկրագործութեան մէջ անգամ, կալուածատիրոջ քաղաք մեծամեծ առաւելութիւնը ըրդառու անսահմանափակութեամբ նրան մի սահուն եռանդ տուեց ձեռնարկատիրական եւ երկրագործական բարւոքմանց մասին: Հէնրիկ Ը. ի բռնապետական եւ անձնատրական կառավարութեան ժամանակ, վաճառականութիւնը առ հասարակ քիչ յառաջադիմեց, այդ բանն երեւում է այն ժամանակուայ չինուած բռնաւարի եւ կամուլի կանոնադրութեանց վրայ, որոնք ցոյց են տալի Անկլիացոց ունեցած շատ քիչ հակազդութիւն իրանց ճշմարիտ պէտքերի եւ օգտաների մասին: Բայի ոսկի եւ արծաթ դուրս հանելու արգելադրութեննէն, խոտացի վաճառականաց էլ հրաման եղաւ չանգկացնել իրանց երկրում փոխանակադրի ձեւով, իրանց Անկլիատում վաճառած ապրանքին բերած փողը, այնպէս որ, խոտացիք պարտաւոր եղան այդ փողով բնիկ ապրանք առնելու: Թագաւորն ինքը սեղանաւոր եղաւ, մի թագաւորական հաշուեգիւտ փոխանակութեան՝ փոխանակադրեր էր տալի փողի փոխարէն, և գժբաղդ Աննա Բօլէյնի հայրը այդ հաստատութեան անօրէնն եղաւ: Սակայն Հէնրիկ Ը. մասնաւոր հոգս տարաւ ծովային գործութեան: Անկլիոյ առաջին թագաւորն եղաւ մշանջենաւոր պատերազմական նաւատորմիղ ունեցող: Երկրին պաշտպանութեան պարտաւորութիւնը մինչեւ այդ ժամանակները հինգ նաւահանգստներին և մի քանի քաղաքներին էր վերաբերում, նաւերու չինութիւնը, նաւարանները, զերանատեղիք, որոնցում ցամիզի վրայ վաւրիչի նաւարաններն ամենքէն հներն էին և շատ էլ թանգ նստած: Նաւային գործոյ մի ծովային տեսչութիւն կարգուեց պաշտօնատարների ժողովով և Դէպտֆօրտում, Հիւլլում և Նիւքաստլում տեսուչներ հաստատուեցան նաւապետներ պատրաստելու և առ հասարակ ծովային տեղեկութիւնք և դիտելիք տարածելու, ծովային իրաւաբանական խնդիրների վրայ վճիռ տալու, և ջահերի, լապտերների, խարախնելիք տեղերի և նաւահանգստների վրայ հսկելու համար: Դուվրի նաւահանգիստը գլխաւորապէս լաւ վիճակում դրուեց, իբրեւ Ֆրանսիոյ բանալիքը: Անկլիատում առնն ժամանակ նաւորդներ եղել էին, այնպիսի նաւորդներ, որ շատ անգամ ծովահէնութեամբ էին ապրած քան թէ մի պատուաւոր վաճառականութեամբ: Յօրէն՝ երբ մի տորիղի պաշտպանութիւնը աւելի ապահովից նաւարկութիւնը, ծովային վաճառականութիւնը իր թեւերն առաւ: Իրաւ է որ, հիւսիսային արեւելքում Հանսեական Անկլիացոց արգելք էին լինում: Անկլիական նաւերն էլ սակայն՝ Հոլանտացոց բաց արած պատուանդքով մտան և յատուկ Նորվեկիոյ ափերում գնացին: Ցետոյ էլ աւելի երկար ճանապարհութիւն անելով Միջերկրական Արշիպելագոսում, խոտացոց առացուածքները տեսնելու գնացին և մի Բրիտանական հիւպատոս հաստատուեց Գիռոսում 1513 թուին: 1530 էն 1532 ին՝ վեր կացան գնացին դէպի Կինեա և Բրէզիլիա, ուր տեղ այն ժամանակներում, երեւում է որ վաճառականութիւնը ազատ էր: Սակայն

նիացոց և Պօրտուկալացոց հրաշալի երկրային գիւտերը, քանի գնացին՝ վերջապէս զարթեցուցին Անկլիացոց մէջ ծովային ձեռնարկութեանց ճաշակը: Անդրատլանդեան ճամպրդութիւնք աւելի յաճախ եղան. թէեւ հիւսիսային Ամերիկան երեւում էր բոլորովին մոռացման մէջ ընկած: Ընկերակցութիւնք կազմուեցան հիւսիսային արեւելքով մի անցք գտնելու դէպի Հնդկաստան՝ աւետեաց երկիրը, բայց և այդպէս, այդ ազգի ծովային զօրութիւն դեռ շատ հեռու էր գլուխ հնելու Հանսեականաց և Հոլանտացոց նաւային զօրութեան հետ: Հէնրիկ Է, իր երկարատեւ թագաւորութեան ժամանակ՝ առեւտրական դաշնադրութիւնք կնքեց Սպանիոյ, Ֆրանսիացոց և ստորին Նահանդացոց հետ. բայց այդ դաշնադրութիւնք վերաբերելով իրերապաշտպանութեան՝ ծովահէնների դէմ, նաւակատորների և նաւակոծութեան իրաւունքի ջնջման, նմանապէս ուրիշ արգելքների, որոնք միչեւ դարն էր աւանդել նոր դարերու նաւարկութեան, չէր պարունակում իր միջում բուն իսկ առեւտրական պայմանք:

Տարազագործութիւնը, երկրին միմիայն կարեւոր ձեռնարհեստը՝ կամաց էր քայլում, շատ անգամ էլ իր առաջադիմութիւն ընդհատում էր: Բրիստոլէն և հարեւան կոմսական երկիրներէն, իր նախնական երգը՝ տարազագործութիւնը տարածուել էր դէպի հիւսիս Եօրքի կոմսական երկրում: Այն ժամանակուայ հոգու համաձայն, այդ արհեստը կշխատութեան օրէնքն էր կրում, օրինակի համար, մի քանի տեղերումն էր սահմանուած և մի գնահատութեան էր ենթարկուած: Ոչխարի հօտերն առատօրէն էին տալի բուրդ, որքան երկրի տարազագործութեան համար, այնքան էլ դուրս վաճառահանութեան համար: 1534 թուին դեռ տասը հազարէն մինչեւ քսան և չորս հազար գլուխ ոչխարների հօտեր կային: Ցորենի մշակութիւնը զանազան ձեռներ կրելով, խորհրդարանը մի քանի հրամաններ հանեց արօտներին սահման դնելու նպատակով: Եւրոպական ցամաքում եղած կրօնական հալածանքները՝ Անկլիոյ երկրին շատ վարպետ աշխատողներ տուին, որոնք գլխաւորապէս տարազագործ և կտաւագործ էին: Կառավարութիւնը կանոններ հրատարակեց Անկլիական չուխայի լաւ անունը վերահաստատելու համար և անպիտան ապրանքների առաւարն էլ արգիլելու համար, ինչպէս նաև վաճառականական նենգութիւնքը: Ձամպանները նոյնպէս լաւացան, քանի որ ներքին վաճառականութիւնը հոգի առաւ: Սակայն լաւ ճամպէք չինելը կարող բ. ի ժամանակ սկսան, մինչեւ այդ միջոցներում ամենակարեւոր հարցդակցութեանց վրայ հոգս տանելը մի վիճակաւորի ժողովրդի էր թողուած:

Այդպէս, Անկլիական ազգը արդէն չարժում էր և զարգանում սակաւիկ գործունէութեամբ, որպէս զի Հանսեական մենաւաճառութեան ցնցոտուած արգելքներին աւելի դիմանալու կարող լինէին, փոքրիկ տերութիւնք, ինչպէս են Դանիացոցը և Շուէտացոցը՝ առանց խօսելու Ռուսաց ցոցը մասին, որ դրանցմէ առաջ էր տեսած իր գործը, չատունց ճամպա

տալով Հանսէականաց ։ Հապա միայն Բրիտանական առիւծն իր հպարտ ճակատը խոնարհում էր դեռ իբրեւ սովորութիւն ։ Հանսէականաց Նովգորոդում ունեցած վաճառատունը ընկած էր ։ Բերկինամ եղածն էլ տարակոյս բան էր, իսկ Անգլերայինը պարապուղ էր եղած ձեռը վեր առնել իր օգուտների մեծ մասէն ։ Բայց Լօնտօնում Երկաթ-Ապարանքը ձեռին ունէր դեռ անթերի իրան անսահման արտօնութեանց ստացումը, որ երկու տարուց աւելի էր հաստատուած լինելը ։ Այլ և այլ ժամանակ՝ պարագայ տեղ վարձ և չանք եղան այդ արտօնութիւնքը չնչելու ։

Հանսէականք երբեմն զօրութենով, երբեմն նենգութենով և չատ անգամ էլ կրծօն ուտացնելով, միշտ իրանք իրանց հաստատ էին բռնում ենոյն իսկ այն ժամանակում, երբ արդէն չատ ժամանակէ հետէ իրանց չուաքը հանդել էր, Նրանք նորէն կարող եղան չնորհ գտնել և ուշացնել իրանց անկումը մինչ ի տասնեւվեցերորդ դարու վերջերը ։

Հասարակաց կարծիքը Անգլիաում, ոչ մի ժամանակ նպաստաւոր չէ եղած Հանսէականաց ։ Ւսան զի այն ժամանակէն՝ որ այդ ընկերակցութեան նուազութիւնը երեւալի էր լինում, իր արտօնութեանց պահպանութիւնը չնորհարարութեան էր պարական, և ոչ իր յատուկ զօրունութիւնը էր ։ Ուրեմն հանդիսանքն էլ եկաւ միացած թշնամութեան հետ, այն է՝ անդիք որ՝ իր հին յաջողութենով կուրացած, իրերի նոր վիճակէն խաբուեց և փոխանակ լինաստութեամբ զիջանելու՝ առաջուայ պէս, տէրօրէն վարուեց, պինտ մնաց ու մերժեց կատարելու իր դաշնադրապէս տուած խոստումնքը, այն էր՝ ազատ կացուցանելու Անգլիական վաճառականութիւնը իր նաւահանգստաներում ։ Այլ և այլ բողոքներ Հէնրիկ Է-ի և Հէնրիկ Ը-ի ժամանակներում անարդիւն էին մնացած ։ Է-դուարդ Զ-ի աւելի որոշ և յայտնի մի ընթացք բռնեց, նա դաշնադրութեանց անմիջական դործադրութիւնը պահանջեց և յետոյ էլ դանդատուեց Անգլիական վաճառականութեան հանդիպած սահմանաւորութենէն, որ էր ամենէն երեւելի յորինի վաճառատարութեան կեդրոնը ։ Այդ վաճառատարութիւնը խիստ չահաւոր առուտուր էր, որու հետ որ և է մրցում Հանսէականք չանք էին անում հեռացնել ։ 1526 թուի սովածութեան տարուը, մի քառորդ լիտր ցորենը, Լօնտօնում 6 շիլինկէն 40 շիլինկ բարձրացաւ ։ Անգլիացիք պահանջեցին, որ իրանք իրանցմով իրանց պաշարեղէնի պատրաստութիւնը տեսնեն, և ինչպէս որ իրանց դանդատներն ընդունելի եղան թագաւորին, այնպէս էլ եղան իրանց դիտողութիւնքը՝ թէ Հանսէականք միաս էին բերում դանձուն, ներս բերելով՝ ապօրինի ճամպով օտար ապրանքներ, որոնք ամենեւին, իրանց չէին պատկանում ։ Բետոյ էլ, թագաւորին աչքի առաջը դրին թէ՝ Հանսէականք դուրս էին տանում Անգլիական չուխան՝ ոչ թէ միայն Գերմանիոյ համար, այլ ուրիշ երկիրների, գլխաւորապէս Սաորին-Նահանգներին, Անգլիական առեւտրին վնասելու համար, նրան չատ բարձր մաքսի ենթարկելով ։ Նմանապէս գանգատուեցան որ՝ նրանք վատ տեսակ չուխան

էին գնում, որն որ Անգլիացի վաճառականները մերժում էին և թէ այդ կերպով քայլերը էին լինում անպիտան տարազատութեան յառաջանալուն ։ Ամենէն աւելի ազդու կերպով եմացուցին թագաւորին թէ՝ անթափ կամ անլուայ չուխայի դուրս հանուիլը նրանց ձեռքով և օտար երկրներում այդ չուխայի ներկուելն ու պատրաստուելն, մի այնպիսի վաճառականութիւն էր, որ զրկում էր Անգլիան իր ձեռարհեստական չահերու մեծ ու լաւ մասէն ։ Վերջին տրտունջն էլ այն էր որ՝ այն ահագին դրամագլուխը, որու օգնութեամբ Հանսէականք տիրում էին Անգլիական առուտուրին վրայ, ջնջում էր գլխաւոր բերքերի, բրդեղէնի և չուխայ գինն ու յարդը ։

Այդ բողոքի վրայ՝ Է-դուարդ Զ-ի հրաման արեց 1552 ին, 1 էն մինչ 20, 100 ին վերածել Հանսէականաց վաճառաբերութեանց և վաճառատարութեանց մաքսը ։ Հանսէականք այն ժամանակ դուրս եկան իրանց կեղծ ապահովութենէն և կարծեցին որ իրանց արտօնութեանց պայմաններում մնալով, կարող կը լինին նորէն ձեռք բերել իրանց կորուսած դրութիւնը ։ Ուսաի արդելք դրին, որ և է ընկերակցութիւն կազմելու Անգլիաում օտարականների դրամագլխով և մասնակցութեամբ գործ տեսնելու՝ այն տեղ և չուխա ուղարկելու ազատ մաքսով Սաորին-Նահանգներում կամ թէ Հանսէականացմէ զատ ուրիշ վաճառականաց, վարձու տալու Անգլիացի վաճառականաց ձեռքով Հանսէական նաւեր օտար նաւահանգիստներ երթալու համար վաճառատարութեան մասին մաքս չտալու նպատակով ։

Բայց այդ բանն անելու ժամանակն անց էր կացել, խնդիրը մի խիստ գործադրութեան՝ կամ թէ իրանց արտօնութեանց սահմանաւորութեան վրայ չէր, հապա իր ամբողջովին ջնջուելուն ։ Հանսէականաց այդ կրած հարուածներին հետեւանքները մի քանի ժամանակ ուշացան, երբ քաթոլիկ Մարիամ թագուհին՝ Է-դուարդ Զ-ին յաջորդեց ։ Հանսէականք կայսերական իշխանութիւնը իրանց նեցուկ բռնելով, խնդրեցին այդ թագուհուց իրանց հին արտօնութեանց վերահաստատութիւնը ։ Թագուհու ամուսնութիւնը Փիլիպ Բ-ի հետ կարող Հինգերորդի որդու, ապահովեց իրանց խնդիրքին յաջողումը ։ Խորհրդարանին, Լօնտօնի քաղքին, համարհեստաւորների և հասարակաց կարծեաց ճգրու (հակառակ) 1553 ին Է-դուարդ Զ-ի օրինադրութիւնը յետ առնուեց և Հանսէականք իրանց հին դրութեան մէջ հաստատուեցան ։ Բայց Անգլիացոց աւելութիւնը աւելի քրքրուեց Թագուհու այդ չնորհումներով և անգադար քամակէն եղաւ նորանոր արդելքներ յարուցանելու Հանսէականաց վաճառականութեան առջեւ ։ Վերջն ու վերջը այդ վաճառականութիւնը անկարող նորէն կենդանութիւն գտնելու պինդ և յամառ՝ կապուած կապկպուած հնացած ու մաշուած ձեւերում և ինչպէս որ արդէն քար էր կտրած, պէտք էր մի բուն իսկ ազգային կառավարութիւն, որ տասելէր մի չէնք որ ամէն կողմէն փուլ գալու վրայ էր ։ Այդ ժամն հասաւ երբ կոյս Թագուհին Անգլիոյ գահի վրայ բարձրացաւ ։

ԳԼՈՒԽ Գ.

Թագաւորութիւն Եղիսաբեթի նախնեաց. — Անկլիա երբոյն հալածական դրութիւն ունէր ազգին ամենայն ազատութեան եւ իր պետական անկախութեան եւս յետոյ բերաւ. — Հանգամանք անոր անկումը. — Բացատրութիւն վճռաւականութեան տրամաբանութեան եւ իրանց հասարակ իրաւունքներուն. — Բերելին յետաբերեալներ յաջողութեան Անկլիացւոյ. — Աբեհամ պատրաստութիւն Սաորին–Նահանգներուն եւ Ցրտանկայեն. — Ջնջումն ինքնավարութեան Սաորին–Նահանգներուն եւ Ցրտանկայեն. խորհրդարանի ցոյցերն այս մասին. նախնական ահռելի պատերազմութիւնը. — Անվերայ նահանջներ եւ լինաւ յետոյ. — Առաջին վճռաւականութեան պատճառ (բնաւ) քաղաքական զեղծումն. — Եպիսկոպոսական շահերու քերականութիւնը. — Յուդիթ վճռաւորութիւնը պետք դարձաւ. — Անկլիական նահապետութիւնը ու իր յաջողանքն Ատրոպոսէ վերայ (Սպանիական անյաղթելի նահապետութիւնը որ փիլիպ Բ. յաղթուեցաւ Անկլիոյ վերայ). — Ճոպարդութիւն աշխարհին ընդհանուր. — Պատճառներ վերայ կանոնաւորութիւն. — Աբեհեմեան ընկերութիւնը. — Փոքր ինքնավարութիւն հասարակութեան Անգլիոյ, ինչպէս Ռուսիոյ. — Հնդկաստանի հետ առեւտրի յատկութիւնն հասարակութեան ընդհանուր. — Աբեհեմեան Հնդկաստանի առաջին ընկերութիւնն ու իր նահապետութիւնը։

Անկլիոյ, վճռաւականութեան պատմութիւնը՝ քաղաքական պատմութենէն առաջնորդուելուն պէտք չունի և այդ մասին՝ ոչ մի երկիր հասարակել կարող չէ նման, վասն զի, այդ երկրում քաղաքական պատմութիւնը՝ թագաւորների ու դահիճների պատմութիւնը չէ, հապա՝ ազգին ու իր երեսփոխանների։ Բարձրէն եղած ազդեցութիւնը երբեմն կարող եղան յաղթանակ տանել, բայց յաճախն եղածներն էլ երբեք դադար չառին ազգի վրայ լինելուց, և ոչ մի ժամանակ քաղաքականութիւնը և անհետևական վարչութիւնն Անկլիոյ կարելի չեն եղել չկոտրել ազգին կամքն ու երկրին չահերուց, ինչպես եղած են եւրոպական ցամաքի միապետական երկիրներում։

Եղիսաբեթ թագուհու թագաւորութեան պատիւն Անկլիոյ դիրքը կանգնած լինելն է եւրոպիոյ քաղաքական դրութեան մէջ։ Նա ամուր կերպով կապեց բողոքական վերանորոգութիւնը սահմանադրութեան հետ, և այն համոզմունքը թէ՝ երկուսն էլ պէտք էին ապրել ու մեռնել միասին, խորն արմատ ձգեց հետզհետէ Անգլիացւոց մտքին և հոգուն մէջ։ Այդ հայեացքը սիրեց ցամաքի հետ եղած յարաբերութեանց մէջ։ Եղիսաբեթ ապստամբ Սաորին–Նահանգների կողմը բռնեց և այդ բանով ինքն իրան հակառակորդ կացուց Սպանիական թէրակղզուն և քաթոլիկութեան։ Այդ կռիւն եղաւ պատճառ Անկլիացւոց ազգին իր բոլոր ճար ու ճարակին անելու և իր մեծութեան հիմքը դնելու, նրան ծովերուն վրայ տանելով և նորա առաջ բաց անելով մի անսահման ասպարէզ՝ աղատուած Ովկիանոս վրայ։ Անգլիա անուշադ մի մեծ ծովային տէրութիւն էր լինելու։

Թէ որ մի ազգի համար յաջողութեան առաջին պայմանն անկախութիւնն է, եղիսաբեթ ամբողջապէս կատարեց այդ, պրծացնելով Սպանիոյ

ձեռքէն՝ Անկլիոյ նաւարկութիւնը, Սաորին նահանգներէն՝ իր ձեռագործները և Հնդկականացմէ էլ իր վաճառականութիւնը։

Նորէն ձեռք առնելու համար մեր պատմութեան թելն ուր որ թողցինք, պէտք է որ նախ Հնդկականաց մասին պատմագրենք։ Թէեւ Մարիամ թագուհին նրանց հրովարտակներ էր տուած, բայց Հնդագանքներն թոյլ չէին տուած նրանց՝ իրանց ողջ հին իրաւունքներն ձեռք առնելու. ուստի իրանց ձեռաներն ու դրկանքներն նոր թագուհու առաջն դրին ու նրա պաշտպանութիւնը խնդրեցին։ Եղիսաբեթ ուղեց չահագործել Հնդկականաց և նրանց յոյսերով օրօր ասել, որպէս զի իր հպատակները ժամանակ տայ առաջադիմելու վաճառականութեան և նաւարկութեան մէջ։ Նա վարուեց այդ մասին մի վարպետորդի քաղաքագէտի պէս։ Նա բացայայտ ծանուց թէ՝ ինքը չէր կարող և ոչ էլ էր կամենում հաստատել իրանց աղատութիւնը, և թէ սակայն Գերմանացի վաճառականք չէին վճարելու՝ ինչպէս վաճառաշերութեան՝ նոյնպէս և վաճառատարութեան համար ոչ աւելի. հապա միայն մաքսի կէսը, որու ամբողջն է պահանջում ամենքէ աւելի չնորհ վայելող ազգացմէ, և թէ Գերմանացի վաճառականք (Հնդկականք) առ հասարակ նոյն իսկ բուն Անկլիացոց հատատար պիտի բռնուէին։ Թագուհին միեւնոյն ժամանակ էլ պահանջեց Անկլիացոց համար, Հնդկական քաղաքներում, Ուտրէխտի դաշնագրութեամբ պայմանագրուած աղատութիւնը 1473 թուին։ Այդ բանագնացութեան միջոցում՝ բնիկ ընկերակցութիւնը, մանաւանդ բաղդատելով վաճառականացը, այնպիսի օգնութիւնը ստացան և այնպես սիրտ առնելով քաջալերուեցան իրանց դործերին ընդարձակութիւն տալու, որ Հնդկականք էլ աւելի բռնուեցան նրանց մրցումէն։ Վերեւը տեսանք որ իրանց ամենէն չահաւոր դործառնութեանց մինը անթափ կամ անլուայ չուխա դուրս հանելու վրայ էր, որոնք իրանց քաղաքներում ներկկել էին տալի ու պատրաստում։

Եղիսաբեթ սահման դնելով այդ անլուայ չուխայի վաճառատարութեան մինչեւ հինդ հազար կտորին, նրանց բաւական ղգալի մի հարուած տուեց։ Այդ հերիք չէր, մի արդելք էլ դրեց նա որ և է չուխա չառնել Սաորին նահանգներում և իրանց չնորհ եղած մաքսն էլ ներս մնեցնելով՝ նրանց չչնորհուեց օտար ապրանքների համար, հապա միայն իրանց ներս բերած վաճառքին քառորդին հետ մրցելու չափ, միւս երեք քառորդն պէտք էին Հնդկական բերք լինել։

Այդ հալածողական դրութիւն, թէեւ ծանր էր, բայց օր օրի վրայ աւելի էր դործելու, այնու յետոյ Հնդկականք էլ իրանց մտքում դրին իրանց ձեռքին եկած վերջին ճիգն անելու. էլ տեղի կար ոչ զէնքի դիմելու, փորձ փորձելին դեսպանական բանակցութեամբ դործել։ Նոյն իսկ Անկլիաում անդամ յաջողութիւն չունեցան, բայց աւելի լաւ յաջողուեցան Սաորին Նահանգներում, ուր տեղ եղիսաբեթի դրած արդելքը այդ երկրի մի քանի տեսակ վաճառաշերութեանց դէմ, Անկլիական տա-

բազադործութեան օգտին համար, գրգռութիւն և ջնասու փոխարինութիւն պահանջելու մտքեր էր ծագել տուել։ Հանսէականք կրակը բռընկեցուցին ու Պարմայի Դքսուհին՝ այն ժամանակուայ Ստորին Նահանգաց կառավարչուհին՝ արդիլեց Անկլիական բրդէ կերպասներուն վաճառաբերութիւնը, նոյնպէս 1563 ին խափանեց որ և է առուտուր անոնց Անկլիացոց հետ. այդ խափանումն պարտաւորեց բազդախնդիր վաճառականներուն դուրս ելնելու Անվերապային և երթալու Լմնենում հաստատուելու Արեւելեան Ֆրիզում. բայց արդէն Անկլիոյ հետ վաճառականութիւն այնքան մեծ կարեւորութիւն ունէր նոյն իսկ Ստորին Նահանգաց համար, որ իրարհանգստութիւն վերահաստատուեց քիչ տարուց յետոյ։ Այդ իրողութենէն դուրս եկաւ, որ Անկլիական վաճառականութիւնը արդէն ամենակարեւոր էր դարած ցամաքային Եւրոպու վրայ, և թէ՝ այդ արդելադրութիւնը հրաւիրելով՝ Հանսեականք իրանք իրանց էին ջնաս տուած։ Ստորին Նահանգաց ապստամբութիւնը, Ալթա կոմսի բռնաբարութիւնը և մանաւանդ Անվերապայի անկումը՝ ինչպէս Անկլիացոց՝ նոյնպէս միւս երկիրներուն վաճառականաց վախուցին, որոնք Հոլլանտիոյ և Գերմանիոյ քաղաքներում դնացին հաստատուեցան։ Համբուրկ անդամ իր յատուկ օգուտը նախապատիւ համարելով՝ հասարակաց օգտին վրայ, նրանց՝ իր պարիսպներումը ընդունեց 1569ին։

Այն ժամանակ Հանսեականք, որոնք առաջները շատ քիչ էին մնացել դուրս բերած այն կապն՝ որ դիրանք միացնում էր Գերմանական կայսրութեան հետ, վեր կացան կայսեր դիմեցին խնդրելու՝ որ նա պաշտպան կենայ աղդային չահերուն, որոնց վտանգ էր սպառնում իրանց վաճառականութեան մէջ։ Ուստի կայսեր առաջ մատուցին իրանց ոգքան վնաս կրելն իրանց հին արտօնութեան դէմ եղած դիմադարձութենէն, այն ժամանակէն որ Անկլիացիք իրանք էին գալի ծախելու իրանց չուխան ցամաքի վրայ շատ բարձր գներով։ Անկլիական չուխան՝ որու գինն առաջներում 23 կամ 25 ֆիւորին էր Ֆրանքֆօրդու տօնավաճառում, արժում է, ատում էին, 33, 35 ֆիւորին, և իրանց Լօնտօնու, Բրիստօլի և Լիօնի վաճառքներն խիստ մեծ վտանգումն էին ենթարկուած, ինչպէս նաև իրանց ահագին ծովային զօրութիւնը։ Կայսրն էլ ըստ այդ յայտարարութեան, պահանջողութիւն արեց Լօնտօնում, որոնց համար իրար չքնող պատասխաններ ընդունեց. Լուբէկի քաղաքացոց թեյադրուած Հանսեականները պարտաւոր էին մեկնիլ Համբուրկէն 1578 ին։ Այդ բան թագուհու համար մի չատ լաւ առիթ եղաւ գործադրելու այն խորհուրդներն, որոնք նա չատոնց էր իր միջում յղացել։ Նա ջնջեց մի և նոյն տարին Հանսեականաց թողուած վերջին արտօնութիւնքը և նրանց հաւասարցուց բոլորովին միւս օտարականների հետ. բացի այդ արարքէն՝ բրդէ վաճառատարութիւնն էլ մանաւորապէս արդիլուեց։ Հանսեականաց մի ժողովը, որ եղաւ Լունէբուրկում 1579 ին, Անկլիական ողջ վաճառաբերութեանց Հանսեական քաղաքնե-

րում 100/7 1/2 մաքսային տուրք վերադիր արեց։ Եղիսաբէթ պատասխանեց այդ բանին՝ նոյն և մի հաւասար մաքս դնելով Հանսեականաց վաճառաբերութեանց վրայ. Հանսեականք դիմեցին այն ժամանակ կայսերական ժողովին և խնդրեցին 1582 ին, որ մի ընդհանուր արդելք դրուի Անկլիական չուխայի վաճառաբերութեան և մի հատածանք էլ լինի նէ բոլոր Անկլիացի վաճառականներին Գերմանական երկրէն. երեւում է որ ժողովն այդ մտքով մի որոշում արած լինի. բայց Անկլիոյ դեսպան կելպէնի յայտնակ գործառնութիւնքն այդ որոշումն անարդիւն արին։

Բազդախնդիր վաճառականք Համպուրկէն դուրս քշուելով, գնացին Լիւթա գետէն մի փոքր ցածր՝ Ստատում հաստատուեցան։ Բայց այն թշնամութիւնն որուն չարունակ առարկայ եղան, իրանց չղակտուր արեց։ Եղիսաբէթ թագուհին այն ժամանակ իր ձեռնարկութեան հետեւողութեանը մէջ նուազեցուց իր ակնածութիւնը. Հանսեականք սպանիոյ հետ մի չահաւոր առուտուր էին անում ցորենի և պատերազմական պաշարեղէնի վրայ։ Թագուհին՝ ապացոյց մէջ բերեց, ասելով թէ՝ այդ առուտուրն մի օգնութիւն էր իր ամենամեծ թշնամուն. դրա համար էլ չէր կարող թոյլ տալ որ չարունակուի, վաճառական քաղաքներն բանի տեղ չդնելով թագուհու այդ նկատողութիւնն, նա էլ 1589 թուին, իր տոր միղով՝ Լիւբօնու առջեւ նրանց բեռնաւորած նաւերէն վաթսունը բռնել տուեց. նա այնպէս ցոյց արեց առաջ՝ իբր թէ նրանց ահ տալու դիտաւորութիւն ունի, բայց իսկապով որ նրանք՝ այդ արարքէն մի մեծ վրէժ առնելու վրայ էին խորհում, այդ նաւերն իրանց բեռներով գրաւեց, բաց ի երկուսէն, որոնք Լուբէկ ուղարկեց ամենախորին արհամարհանքով պատժամաւորութեամբ Հանսեականաց և իրանց անելու ճար ու ճարակին վրայ։

Գերմանական կայսրութիւնը՝ բաժան բաժան եղած և օտար աղդեցութեանց անձնատուր՝ մի տակաւ կեդրոնական իշխանութեան ներքեւ, աղդու միջոցներ ձեռք առնելու վիճակումն չէր աղդային չահերուն պաշտպան կանդնելու, ոչինչ այնքան օտար բան չէր իրան համար, որքան վաճառականութեան և նաւարկութեան պէտքի իմացողութիւնը։ Սակայն Հանսեականք յաջողուեցան գործադրութեան մէջ դնելու կայսերական ժողովին առաջուայ որոշումը։ Մի կայսերական հրաման 1597ին դուրս հանեց ողջ Անկլիացի վաճառականներին Գերմանական հողէն։ Եղիսաբէթ թագուհին անօգուտ տեղն այդ հրամանին յետ առնուիլը խնդրելուց յետոյ, չ յետագայ տարին ապստրեց Լօրտ քաղաքապետին և Լօնտօնու դատաւորապետներին փակել Հանսեականաց վաճառատունը Եօկաթ Ապարանը. միեւնոյն ժամանակ էլ պատուեր էր տուում Անկլիատում ապրող ամեն Գերմանացոց թողել ու գնալ երկրէն նոյն այն օրն որ Անկլիացիք պիտի պարտաւորէին մեկնել Ստատէն։

Այդպէս եղաւ Անկլիատում այդ ահաւոր միաբանութեան՝ Հանսեականաց և օտար երկրում իրանց ունեցած վերջին վաճառատանը վախճա-

նը։ Մի փոքձ որ արին Յակոբ Ա. ի ժամանակ նորին ձեռք բերելու գոնէ իրանց կորուսած իրաւունքների մի մասը, մերժուեց քամահրանքով։ Իրանք գոհ պիտի լինէին այն ժամանակ մաքսերի վճարման մասին հատատար ատենան ունենալու, որն որ առաջ մերժած էին ամբարտաւանութեամբ։ Չհաջուրկ ձեռք բերեց, իրաւ է, 1611 ին երկաթի Ազատանի վերահաստատութիւնը, որու մէջ մի Հանսէական վաճառատուն նորէն հաստատուեց։ Բայց այդ միմիայն մի անուն էր, մի տարտակ յիշատակ կամ թէ մի առանձին ձեռնարկութիւն որ և է կարողութեամբ զուրկ։ 1666 թուի մեծ հրդեհում երկաթի Ազատանն այրուեց, և վողի պակասութեան պատճառով նորը չկինուեց իր հին դրութեան մէջ. Հանսէական վերջին ժողովը՝ 1669 ին այդ մասին ոչ մի առաջադրութիւն չարեց։ Երեք չորս քաղաքներն որ դեռ մի փոքր ժամանակ միաբան մնացին Հանսէականաց լուծուելուց յետոյ, յետնէն մի փոքր բան արեցին։ Իսկ բաղդատիկ վաճառականները հանգարտ մնացին Սառատում՝ հակառակ կայսերական ամէն հրամաններին, և թէպէտ մի փոքր ժամանակ իրանց գործերի շրջան ամփոփելու յարմար գտատեցին, չատ չանցկացաւ որ նոյն իսկ կայսերմէն հատանութիւն ստացան պաշտօնապէս Գերմանիատում բնակել։ 1611 թուին Հանդուրկ վերադարձան, որ նոյն ժամանակէն դէպատոր պորտ եղաւ որով ներս մտան Անկլիոյ ձեռնարհետական բերքերը։

Տարազատործութիւն, մերժել չէ կարելի, որ մի բնական կոչում էր երկրին, և յառաջ էր բերում այդ միջոցներում՝ այդ նիւթը՝ չատ մեծ քանակութեամբ։ Ինչպէս էլ տեսանք, առաջին դէպում, Էդուարդ Գ. ի արած չանքերը տանեւչորրորդ դարում, քաղաքերէու տարազատործներին պաշտպանողական միջոցներով. սակայն և այնպէս չատ կամաց յառաջ գնաց այդ ձեռնարհետը։ Աղնուականք՝ դրեթէ առանձնակի հոգին տէրն եղած, նախապատիւ էին համարում իրանց բուրդն օտարին վաճառելը, որ լաւ ու չուտով էր վճարում, և Անկլիոյ տարազատործներն էլ իրանց դէմ Սառին նահանգների տարազատործներն ունէին զօրաւոր մրցօղներ։ Բայց դրանց հակառակ՝ Հանսէականացմէ օգտուելան, որոնք չահ ունէին Ֆլանդրիացոց վրայ նախանձորդ յարուցանելու և ուելի արդիւնք էին ձեռք բերում Անկլիոյ անթափ չուխայի վաճառատարութեան մէջ, որն որ յետոյ իրանց երկրում ներկել և պատրաստել էին տալի, գան թէ այն ապրանքների վրայ, որոնք բոլորովին տարազատործուած էին Ֆլանդրիատում և Բրապանատում։ Այս կերպով Անկլիական ձեռնարհետները կամաց կամաց ծուալում ստացան, և առաջիկայ ժամանակական շրջանի սկզբին՝ դուրս յետզարկուած ապրանքների արժողութիւնը դերազանցում էր բրդի վաճառատարութեան արժողութեան վրայ։ Բայց այդ վաճառատարութիւնը կայանում էր առանձնակի հատարակ տեսակ չուխայի վրայ, և Հանսէականք, որոն դժուատոր գնողներն էին, անթափն էին նախապատիւ համարում։ Պրծացնել երկիրն այդ միջնորդութեան ծանրաբեռն պայմաններէ և ուղղակի դուրս հանել չուխան, վերջնականօրէն

պատրաստուած. այդ եղաւ յատուկ նպատակ բազդատիկ վաճառականաց ընկերութեան. այդ նպատակին միայն եղիսաբէթ թագուհու ժամանակ կարելի եղաւ հասնիլ երբոր նա՝ անթափ չուխայի դուրս հանուիլը արգիլեց և բոլորովին վերուց Հանսէական մրցողութիւնը։ Այդ ժամանակէն սկսած՝ Անկլիական ձեռնարհետներն մի կարգ դուրս ընթացք ստացան և բազդատականաց գազմականութիւնն էլ իրանց միջում Ֆրանսիացին և Սառին նահանգներէն վախած՝ ձեռք զարնել տուեց ձեռնարհետատարներին նրբահիւս կերպասների պատրաստութեան։

Այդ ժամանակներում է ընկնում դուլպա գործելու արհետին դիւտը. Գէմբրիճում, հնարողն էր Ուիլիամ Լի 1589 թուին։ Այդ հնարիչն իր բուն երկրում անփութութեան տեսնելով և հալածանք անդամ կրելով անց է կենում Ֆրանսիատում, ուրտեղ Հէնրիկ Դ. ի պաշտպանութեամբ մի մեծ գործատան է հաստատում։ Հէնրիկ Դ. ի մեռնելուց յետոյ է որ՝ Ուիլիամ Լիի եղբայրն նոյն ձեռնարհետան Անկլիա է տանում։

Եղիսաբէթ թագուհին չանք արեց ուրիշ ձեռնարհետներ էլ մտցնել Անկլիատում։ Խորհրդարանի մի վճիռը նրա թագաւորութեան հինգերորդ տարին 1563 արգիլեց տատիկ պատիժներ սպատնալով, գէնքի, թամքի, տեղի, ժանեակի, և մետաղէ և կաշուէ զանազան ապրանքների ներս բերուելը. ուշագրութիւն էլ դարձուեց հանքերի վրայ և գերմանական պղինձի, արուրաքարի, պղնձէ բազագործութեան, ծծմրիկ առաջնորդութեան, թելարանների ու ձիթաջաղացների հատատատութեան համար։

Կառավարութիւնն որ օտարներին մենատճառութիւնն էր չնչել, յանդանք գործեց, նոյն ինքը ուրիշ մենատճառութիւնք հատատատելով։ Դրսի վաճառականութեան նոյնպէս և ներսի վաճառականութեան գրեթէ բոլոր ճիւղերը չահագուեան, տրատնատեր ընկերութեանց ձեռքով. մանատար գործունէութեան ջնատելով։ Այդ ընկերութեանց օտարներն անդամ չէին կարող լինել, որն որ երեսում է արգիլած լինելը չատ անվերայի վաճառականներին լծատոն փոխադրութիւնք։ Ընկերութիւնք կային չամի, երկաթի, աղի, վարսակ, մուշտակի, ձկանեղի, պատատի, արճճի, կօճլու, (ածխի) վաճառականութեան համար. պատատում ինք օտար երկիրներում էլ բազատանդիր վաճառականացմէ զատ, մի ընկերութիւն Արեւելքում, մի ընկերութիւն Ամերիկեան, մի ընկերութիւն Արեւելեան երկիրների համար, մի ընկերութիւն Ռուսիայ համար. մի ընկերութիւն էլ Արեւելեան Հնդկաստանի համար։ Եղիսաբէթ թագուհին չատ էր այդ տեսակ տրատնութեանց մասին. բայց այդ բանն իրան ներելի եղաւ իր ժամանակուայ հարկին պահանջողութեանը համար։ Այն ժամանակ՝ քիչ մանատար մարդիկ էին գանում պէտք եղած հարստութեամբ, մեծ բաների ձեռնարկութեանց համար։ Եւ նոյն իսկ այդ ընկերութեանց դործութիւն ընկերակցութեան հողու յատաջադիմութեան համար վկայում է։ Սակայն մենատճառութեանց առաջ բե-

ըած զեղծմունքն մի քանի ապրանքներում և նրանց առուտրին երկրին ներսերում, դրգիռ եղաւ ընդհանուր անբաւականութեան ժողովրդին մէջ, ու 1601 թուին խորհրդարանը պարտք համարեց իրան այդ մասին ծանր ցոյցեր անելու Թագուհուն. վախցուեց որ, Թագուհին դիմաւորութեանց անհամբեր լինելով ինչպէս որ էր ընդհանրապէս, իր արածն ետ առնել չկամենայ: Բայց, ինչպէս բացատրում է մեր ժամանակուայ մի հռչակաւոր մարդ, Մաքոլէյ, որ Անկլիայոյ պատմութիւնն ունի գըրած, Թագուհին մի հիանալի վարպետութեամբ առաջն առաւ կռուին, ինքը գլուխ անց կենալով վերանորոգական կռուակցութեան, վերաց զեղծմունքը, չնորհակալ եղաւ խորհրդարանին աղդու և արժանաւոր խօսքերով, և իր յաջորդներին յիշատակայ արժանի մի օրինակ թողուց՝ թէ ի՛նչ վարմունք հարկ է բռնել մի միապետի հասարակայ կարծեաց յայտնութեան առջեւ, երբ նրանց դէմ կենալու միջոցները չունի:

Եւրոպայում Սաորին Նահանգներն էին այն երկիրը, որու հետ Անկլիան աւելի յարաբերութիւն ունէր, իր նաւերը չատ քիչ էին դնում Լիսբօնա, Հապա Ամերիկա՝ հնդկական բերքերով բեռնաւորուած, բրդի և չուխայի փոխարէն: Էդ—բօտի դեռատիում, իրան ունեցած ահագին վաճառատեղը՝ առևտրատուր դրութեան մէջն էր այդ գործոդութեանց համար, դրա անկում օգուտ տուեց Լօնտօնում, որ այն ժամանակէն էլ արագ յառաջադիմութիւն արեց՝ ոչ թէ միայն մարդաշատութեան մասին, հապա գործերի կարեւորութեանն էլ: 1576 ին՝ Թումաս Կրազամ, Մ***, այսինքն՝ բուն քաղքի առևտրի հարուստ վաճառականը՝ այդ ժամանակում բաց արեց առաջին Պօրան (բօրսա) վաճառականաց: Անկլիոյ միւս քաղաքների միջում, Պրիստոլն էր միայն արժանի յիշուելու իր առուտրին կողմէն: Եօրք, Ն.ուորչեստր ու Նորվիկ քաղաքները նշանաւոր էին իրանց ձեռարհեստների կողմէն: Բայց սակայն գիւղական բնակիչների թիւը հինգ անգամ աւելի էր քաղաքների բնակիչների վրայ՝ և երկրի հարստութիւնը գլխաւորապէս երկրագործութեան վրայ էր հիմնուած: Տեղական գործարանների գործածած բրդի քանակութիւնը, քանի գնաց մեծ եղաւ, և չնայելով Սպանիոյ նորածին մրցողութեան՝ Անկլիական բուրդը միշտ վնասուում էր դրսէն: Բայց ի մի ժամանակաւոր ցոյցէ, Հանսեականաց դէմ, Եղիսաբէթ Թագուհին յարգեց վաճառականական ազատութիւնը, յայտնի ապացոյց, որ երկրագործականն շահը գերազանցում էր այն ժամանակ ձեռարհեստական շահու վրայ: Միւս կողմէն առևտրական և ձեռարհեստական յառաջադիմութիւնը երկրի միւս բերքերն աւելի տաք կերպով վնասելու պատճառ եղան, որոնց գինը համեմատութեամբ բարձրացան: Ցորենի լիտրը որ վաճառում էր ութ շիլինկ տասնեւվեցերորդ դարու միջերում, երեսուներկու աւելի էր արժում վերջերում:

Բայց և այնպէս, լաւ տարիներում միշտ ցորենի մի աւելորդ էր մնում դուրս հանելու համար: Վաճառատարութիւնը թոյլ տուած էր քանի որ ցորենի գինը տասը շիլինկէն դէնը չէր անցկենում: Այդ յետոյ ամէն տասիճանի գինը, 1593 ին, մինչ քանի հասաւ, 1603 ին, քսանուվեցի: Միւս արմատ եղքն նոյն և մի պայմանների էր ենթարկուած: Ագարակների վարձքը դներու նման նոյն և մի ժամանակ բարձրացաւ և երկրի մուտքն աճեց իր բերքերի սպառումին հետ: Մարդիկ բարեկեցիկ և լաւ դուգս (լիւքս) անելով ապրեցան: Սաորին Նահանգներէն յետոյ Անկլիացին էր, որ ամենէն աւելի հնդկական ապրանք էր սպառում, Թագուհու օրինակին հետեւելով, ճոխ և թանգ հագուստների գործածելու սովորութիւնը տարածուեց և այն աստիճանի հասաւ, որ ծախսը համար օրէնքներ հաստատելու գրգիռ եղաւ, վաճառականութեան անդիմադրելի և միշտ աճեցող զօրութիւնը տակաւ սակագնու վրայ յայտնուեց: Եկեղեցու արդելումն տակաւոյ փոխատուութեան մասին, Անկլիացում կար, ինչպէս Եւրոպական ցամաքում: Հրեայք և Լօմբարտները՝ այդ գործողութեանց տէրերն էին: Եղիսաբէթ Թագուհին արդելումը չնչեց, Թոյլ տուեց ամենքին փոխ առուտուրը և իբրեւ օրինաւոր սակագին 100/10 ը, նրա յաջորդն ութնի իջեցուց այդ սակագինը, հաստատութիւնը և նախորդ Թագաւորական վերահաստատութիւնը՝ վեց:

Իբրեւ պատճառ և իբրեւ արդիւնք միանգամայն, պէտք է այս տեղ նշանակել ոսկի արծաթի կամ ոսկի դրամի չրջաբերութեան նշանաւոր աճեցողութիւնը: Աներորն մինչեւ չորս միլիոն փաունդ Սթէրլինկ է հասցընում՝ ոսկի և արծաթ դրամի գումարն չրջաբերութեան մէջ, Եղիսաբէթ Թագուհու Թագաւորութեան սկզբներում: Դրանք եղան, ասում է, աշխատութեան գործիքներն՝ որոնցմով ականք գործ տեսնել աշխարհումս: Ադրէն Ամերիկու ոսկու և արծաթի ազդեցութիւնն զգալի էր լինում Սպանիու հետ պատերազմն ամենամեծ չահեր առաջ բերաւ Անկլիոյ համար. նախ՝ չինութեանց նիւթեղինաց առուտրի կողմէն Ռուսիոյ հետ, յետոյ՝ նոյն իսկ պատերազմէն: Ծովահէնք չատ բեռնաթափ նաւեր առին և Դրէկի արշաւանքներն, որ մի քաջասիրտ նաւարկող էր, ահ ու սարսափ սփռեցին Անկլիական դէնքով Ամերիկու ողջ ափերի վրայ:

Բայց, Եղիսաբէթ Թագուհին՝ բաց ի իր աերութեան առևտրական անկախութենէն՝ պէտք էր որ նրա քաղաքական անկախութիւնն էլ պաշտպանէր ու ապահովէր: փիլիպ Բ. Սպանիոյ ողջ զօրութիւնն ամիսներ փոքրիկ Անկլիան նուաճելու համար և այն տեղից ջնջելու հերետիկոսութիւնը, նա՝ իր տորմղին (Արմատային) Ա.յ.ղ.Ր.Ե.Լ անունը տուեց, և իրաւ է որ, Ովկիան երբէք իր մէջ դրա վրայ աւելի մեծը տեսած չունէր:

Անկլիան, անտարակոյս ակսած ունէր Հէնրիկ Ը.ի ժամանակ իր նաւատին զօրութիւն կազմել և Եղիսաբէթ էլ մեծ եռանդով առաջ էր քշած այդ գործը: 1563 թուին ազգային նաւարկութիւնը քաջալերելու նպատակով նա՝ նրա համար վերապահած էր եզերական և ձկնորսական նաւարկութիւնը, մանաւորապէս ձկնորսութեան գործ ու զբաղմունք տալու համար. նա արդիւած էր միս ուտելը չաբթուայ երկու օրերում,

որն որ ճշմարտապես քաղաքական պահս էր, և այն ժամանակէն որ կա-
րող էին եղել ուղղակի Ռուսիայէն և Պալթիկեան միւս երկիրներէն առ-
նել չինութեան համար նիւթեղէններ, ազգային նաւարաններն ոգեւոր-
ուած էին, մեծամեծ գնութիւնքն հիւսիսում ու Դրէքի Գալէնաիւչի
ճամպրդութիւնք աչխարհիս բոլորտիքով՝ 1580 և 1586 ին զարթեցուցած
էին Անկլիացոց մէջ նաւարկութեան ճաչակը և ընդարձակած նրա ծո-
վային ծանօթութիւնքը: Թագուհին՝ սակայն՝ Հոլանտացւոց օգնականու-
թեամբն անգամ, Թշնամու տորմիլին դէմ մի ատորին տորմիլ դնելու հա-
մարձակ կարող եղաւ, որն որ գրեթէ նրան կիսուն չափն էր: Նաւերու
թիւը գրեթէ հաւասար էր երկու կողմին այս և այն դէնէն, տարբերու-
թիւնը՝ նաւային ընդունողութեան միջումն էր, Սպանիական տորմիլին
անձրպետան 39,744 տակառ էր և Անկլիականը՝ մի միայն 89,744. նոյն ան-
հաւասարութիւնը նաւորդների թուումն էլ կար: Արդէն ծանօթ է հե-
տեւանքը: Անկլիաւում, ինչպէս նաև Տորին Նահանգներում, փիլիպ Բ. իր
աչքով տեսաւ իր խաւարային խորհուրդների վիժումն իր ոսխներին ա-
զատութեան, զօրեղութեան և փառաւորութեան ծնունդը: Յաղթու-
թիւնն այն ներգործութիւն ունեցաւ որ Անկլիացոց մէջ ազգային ըզ-
գացմունք սաստիկ վառեց, որն որ այն օրէն մինչ մեր օրերը զարգա-
նում է մի հրաչալի զօրութեամբ: Այն ժամանակ Անկլիա պատմութեան
մեծ տեսարանում դուրս է գալի և մանաւանդ ամենազօրական վաճա-
ռականութեան: Մինչև այն ժամանակ յետամնաց, այնու յետոյ յառա-
ջադէմ է լինելու: Վասն զի միանգամ որ ծովու տիրապետութիւն իր
ձեռին է առնում, էլ ոչինչ չէ կարող լինում նրան կանգնեցնել:

Անկլիացոց առուտուրն Արխանկէլի հետ 1553 թուին սկսեց, Լիւսա-
նում մի ընկերութիւն կազմուեց հիւսիսային արևելքով դէպի Հնդկաս-
տան մի ճանապարհ փնտռելու նպատակով: Այդ ընկերութիւն նոյն ճամ-
պրդութեան համար երեք նաւ տնէր սարքել տուած՝ հրամանատարու-
թեամբ Ուիլլօվպայ և Ջենսլը նաւորդների: Այդ նաւերուց երկուսը ա-
ռանց նրանց բռնուեցան Ռուսական Լապօնիոյ ափերում և Ուիլլօվպայ այն
տեղ մեռաւ. բայց Ջենսլը բարեբաղդ եղաւ, Սպիտակ ծով մտաւ և հա-
սաւ նոյն տարուս օգոստոսի 24ին Դուինա գետին բերանը:

Ընակիչք զարմացած փութացին իմաց տալ այդ դէպքն Մոսկուայի
արքունեաց, և այն չատպղական հրաւերի վրայ, որ եղաւ Ջենսլրին,
սա անձամբ վեր կացաւ գնաց Մոսկուա, ու այն տեղ ամենամեծ մե-
ծարանքով ընդունուեց, և երբ մի քանի ամիս բնակելուց յետոյ Ռուսիոյ
մայրաքաղաքն մեկնեց, ձարը նրան՝ եղուարդ Դի համար մի նամակ
յանձնեց, որով խոստանում էր ամէն Անգլիացոց մի ամբողջ ապատու-
թեամբ առուտուր անելու իր երկրի ափերի վրայ: Ջենսլրին դառնալուց
անմիջապէս յետոյ՝ մի ընկերութիւն կազմուեց Ռուսիական վաճառակա-
նութեան համար. կանոնաւոր յարաբերութիւն հաստատելու դիտաւորու-
թեամբ նոր բացուած ճամպով և քաղելու այն չահերն որ տեղի կար յուսալու:

Ջենսլը ընդարձակ իշխանութիւն ստացած՝ Մարիամ թագուհուց, 1555
թուին, նորին չուեց դէպի Դուինա մի խումբ վաճառականաց ընկերու-
թեամբ այն տեղ առուտուր կարգաւորելու: Զարն հաստատելով յաւուկ
կերպով արդէն չնորհուած արտօնութիւնը, չնորհեց Անկլիացոց ամէն
մաքսէ ազատ մնալ և թոյլատուութիւն արեց հաստատութիւնք կազմելու,
ձեռարհեստներով զբաղելու և ուրիշ թանկագին իրաւունքներ վարելու:
Իսկ Բալթիկեան նաւահանգստներու հետ յարաբերութեան մասին, ինչ-
պէս Գասլենհակի, մի արտօնութիւն տրուեց 1579 ին մի մանաւոր ընկե-
րութեան, այն է Արեւելեան երկիրներին: Մի փոքր յետոյ 1581ին նմանա-
պէս հաստատուեց Արեւելեան երկիրների ընկերութիւն, որու գլխա-
ւոր առուտուրն Բերիոսում էր: Անդրադարձեան արշաւանքները նոյն-
պէս կրկնուեցան: Առաջին նաւարկողն որ աչխարհիս չրջանով մտն և-
կաւ, Մաժելանէն յետոյ, մի Անկլիացի եղաւ: Ցաջողութիւնը վստահու-
թիւն ազդեցուց, և ապահովութեան վրայ 1600 թուին հրատարակուած
կանոնադրութիւնը քիչ նպաստաւոր չեղաւ վաճառականութեան երաչ-
խաւորութեանը: Առաջուց ապահովութիւնք ծանօթ էին, բայց մինչեւ
այն ժամանակ Անկլիաւում լամբարդների ձեռումն էր եղած: Անուսւ-
տոյ ապահովութիւնք ազգային կայանք եղան: Կիւնեայի և Սենեկալի
միջում եղած առուտուրն էլ Ափրիկեան ընկերութեան յանձնուեց: Այդ-
միջոցում այդ առուտուրն իրան առարկայ չէր արած տորուկներին: Իր
գլխաւոր ապրանքներն էին տաք գեղը, փղոսկրը, արմաւենու ձէթը:
Մի քանի նաւեր էլ բաղդ փնտռելու էին գնում Բրեզիլիոյ ծովուն կող-
մերում: Բոլոր այդ ճամպրդութեանց մէջ միայն անմիջական չահերու
էին հետամուտ, թէ առուտուրի չահու մասին և թէ Սպանիացոց կողո-
պուտի: Սակայն Եղիսաբէթի թագաւորութիւնը մեր աչքի առաջ է բե-
րում երկրագործութիւն և գաղթականական կազմաւորութեան նպաստակ
ունեցող մի քանի արշաւանք:

Ուալտր Ռալէկ միաը բերեց հիւսիսային Ամերիկու մուտքած ցամա-
քը՝ ու չատ ընդարձակ իշխանութեամբ ամրացած՝ 1584 ին չուեց նա՝ մի
չատ նաւերով և երկաթ ձգեց այն երկրի ափի վրայ, որն որ վիրգինիա
անուանեց կոյս թագուհու պատուոյն համար: Բայց իր հիմնած գաղթա-
կանութիւն չտեւեց: Մի չատ անարդիւն փորձեր անելուց յետոյ կեն-
դանացնելու մտքով, նա փճացաւ 1587 ին: Աւելի դժբաղդ եղաւ, նոյն
Ռալէկի մի ուրիշ արշաւանքն որ՝ 1585 ին ձեռնարկեց կիսյանաւում էլ-
դօրադօն վնտռելու, նրա երեւակայական մայրաքաղաքը, որուն անուն
նշանաւոր է: Թէ որ գաղթականութեան խորհուրդներն մի պահիկ ձա-
խորդ էին գնում, գոնէ եղիսաբէթ թագուհու թագաւորութեան վեր-
ջին տարիներում, առաջին քարը դրուեց Անկլիական տիրապետութեան
մեծ չէնքի արեւելեան հնդկաստանում: Առելութենէ մղորուած՝ փիլիպ
Բ. Լիսբօնայի նաւահանգիստը փակած էր Անկլիացոց դէմ, ինչպէս նաև
Հոլանտացոց, և այդ կերպով ստիպեցուցած նրանց վեր կենալ գնալ

քան Հնդկաստան։ Անկլիացիք նախ յոյս ունեցան այդ տեղ գնալ ցամաքով, Ռուսական ընկերութեան գործակատար Ջենքինսոնի ճամփորդութիւնը կասեցից ծովով դէպի Բագդրիա այդ նպատակով ձեռնարկուեց։ Ինչպէս նաև Արեւելական ընկերութեան մի քանի անդամների Բէրիայէն չուելը դէպի Բաբելոն և Պարսից խորշը 1591 թուին։ Բայց շուտով հասկացուեց, որ դրանցպիսի փորձեր աւելի հետեւանք պիտի չունենան հիւսիսային Արեւմուքէն մի ծովային ճամպայ գտնելուց, և թէ ծովու ճամպան յաջողութեամբ գլուխ բերուած Հոլանտացոց ձեռքով 1595 ին՝ միևնակ կարող էր առաջնորդ լինել նոյն նպատակին։ Այդէն պատահած էր մի քանի Անկլիացի ծովահէններին Բարբարոսոյ հրամանով անց կենալ և Սպանիացոց քամակէն ընկնել մինչեւ Հնդկական ծովերում, ուրեմն ճամպան ծանօթ էր, բանը միայն էր մի ուղղակի առուտուր սարքել։ Աւարառութեամբ հարստութիւնը ծակաչքութիւն էր գրգռում և ամէն բանի վրայ տեղեկութիւն էլ ստացուած էր՝ գերի բռնուած նաւերու թղթերէն՝ դրսէն եկած եկամուտ ապրանքների, նրանց առուծախի և բեռնաբարձութեան պայմանների վրայ։

Առանց հաւան կենալու այն ժամանակուայ ձգտումներին, չէ կարելի ուրանալ, որ մի այդպիսի նոր ձեռնարկութիւն պահանջում էր ընկերակցութեան հաւաքական միջոցները։ 1600 թուականի վերջերում կազմուեց Աբե-Ելչա Հնդկաստանի հետ առևտուր անող վաճառականաց ընկերակցութիւնը։ Այդ ընկերակցութիւնը ձեռք բերեց թագաւորութենէն տասնեհինգ տարուայ համար, վաճառականութեան արտօնութիւն առանձնակի Ասիական, Ափրիկական և Ամերիկական բոլոր երկիրների հետ, որոնք բացուայ գլխաւոր դէմն են մինչի Մաժելանի նեղուցը։ Այդ արտօնութիւնը ընկերութեան մեծամեծ առաւելութիւնք էր տալի. նա ունէր իրաւունք խաղաղութիւն և պատերազմ անել. կարող էր՝ թէ՛ ծովային և թէ՛ ցամաքային զօրութիւն պահել, օրէնքներ հրատարակել, պատիժներ տալ, պատուհասել և նուազեցնել մաքսային տուրքի։ Բացի դրանցմէ, նրան թոյլ էր տրուած, տարէկան 30,000 լիրա թանկագին մետաղ (այսինքն ոսկի արծաթի դրամ) դուրս հանել այն ժամանակուայ գլխաւոր միջոց փոխանակութեան Հնդկաստանու հետ, այն պայմանով, իբրև է, նոյնը ներս բերել հաւասար քանակութեամբ վեց ամսուայ միջոցում ճամպորդութիւն կատարուելուց յետոյ։ Առաջին արշաւանքը տեղի ունեցաւ 1601 ին հինգ նաւով Լանքաստրի հրամանատարութեան ներքեւ։ Այդ նաւերն հասան Աքէմ, Սումադրա կղզում։ Երկրին իշխանք, իմացած լինելով՝ որ Անկլիացիք թշնամի էին Պորտուկալցոց, նրանց լաւ ընդունելութիւն արին։ Միևնոյն կերպով եղաւ Բանտամու մէջ Ճաւա կղզում։ Այդ տեղից Լանքաստր Մոլիքեան կղզիներում մի նաւ յուղարկեց, որ շուտով յետ դառաւ համեմներով և խնկեղէնով բարձած. նա բարձեց միւս նաւերն էլ տաք-դեղով և հնդկական բերքերով և ողջ առողջ վերադարձաւ Անկլիա, երկուս ու կէս տարի բացակայ մնալ։

լուց յետոյ։ Բայց նա՛ պէտք չէր որ իր մեծ թագուհուն տեսնէր. սա մի քանի ամիս նրա գարձէն առաջ մեռած էր և իր մահովը տալիս էր երկրին մեծութեան և զօրութեան մի աւելում։ Իսլանտիան հնազանդել էր. Սկովտիան մինչեւ այն ժամանակ անկախ՝ եղիսաբէթի յաջորդի գահակալութեամբ միացաւ յաւիտեան Անկլիոյ հետ։

ԳԼՈՒԽ Դ.

Սկովտիա երբէք Անկլիան հետ չգոյած.—Ողբերգէ էլիզաբէթ թագուհի Անկլիոյ տալտական և առևտրական գործոցոմ.—Աղէտ կոխ էր էդինբուրգէ և ազատութեանց համար պայմանագրութիւն գէմ.—իր տալտական գատաստանը.—Հոլանտացոց հզօրմ ընթացքը Հնդկաստան մէջ.—Վնասուց դէմ գրութիւն հերքելիք ընդունած.—Անկլիական բերքէ գուրս գանելու գէմ արգելքներ.—Սկզբնաւորութիւն բամբակի յեղափոխականութեան.—Երկրին առաջգիները.—Շոգանաւութիւն և վաճառականութիւն տարածիչ.—Ցրանուց յեղափոխ ապրանքների վաճառաքերութեան աճեցուցիչ Անկլիոյ.—Վնասակ երկրագործութեան։

Սկովտիոյ միաւորութիւնը մեծապէս աւելցուց Բրիտանական նաւատին զօրութիւնը. նրա բնակիչքը շատ հին ժամանակներէ հետէ լաւ նաւորդներ ու վարձ ու քաջ ձկնորսներ էին։ Միւս բաներում Անկլիացոցմէ շատ յետ էին մնացած. սակայն իրանց ոչխարների բուլդը շատ հասարակ տարազագործութեան համար էին գործածում, և նրանք հակերով Յորին—նահանգներում էին յուղարկում։ Իսկ իսլանտիան այն ժամանակ բարբարոսութեան մօտ մի վիճակում էր գտնում։ Անտանապահութիւնն իր գլխաւոր ազբիւրն էր կազմում. երկրագործութիւն բոլորովին երեսէ էր թողուած։ Անկլիա երկրակալութեան իրաւունքով իր օրէնքները դրեց նրա վրայ, և մինչեւ անգամ իր կրօնը, և բնիկների ձեռքէն կապտեց լուեց իրանց կալուածներն և բաժանեց նրանք մի քանի Անկլիացի մեծ սեռանց միջում, որոնք միշտ բացակայ էին իրանց կալուածներէն։ Այդ կերպով ցանուեց այն ազետալի սերմ, որ իր պատուղներն հասուցանելու համար մինչեւ մեր օրերը տեւեց։ Իսլանտիոյ վաճառականութեան առարկայք էին մորթ, կաշի, քթան, կանեփ, այդ անկի մշակութիւնը շատ վաղուց էր այդ տեղ սկսած։

Անկլիոյ ազդեցութիւնը պէտք էր որ այն ժամանակ, ինչպէս երեւում է, աւելցած լինի զգալի կերպով Եւրոպիում։ Այն երկիրը, որու վրայ թագաւորում էր նոր միապետը, գրեթէ կրկնին էր եղիսաբէթի տիրած երկրին։ Չէր կարելի ըմբռնել մի երկիր այնքան լաւ բոլորված և այնքան լաւ էլ ապահոված՝ որ և է յարձակումի դէմ, ինչպէս որ էր Բրիտանական թագաւորութիւնը։ Շատ անգամ պատահում էր և միւսօրք պարտաւորուած էին իրանք իրանց պաշտպանելու Սկովտիոյ դէմ, երբ

պատերազմով էին բռնուած Եւրոպիոյ ցամաքի վրայ և Իտալանտիոյ հետ եղած չարունակ կռիւներն էլ մի ծանր բեռ էին։ Սակայն այդ թագաւորներն մի մեծ նշանակութիւն էին վայելում ողջ քրիստոնէից մէջ, և ամեն մարդ իրաւունք ունէր յուսալու, որ այնուհետև այդ երեք թագաւորութիւնքն միացած՝ միևնոյն դաւադանի ներքեւ մի տէրութիւն էր կազմելու, որ ոչ մի ուրիշն չէր տեղի տալու և զիջանելու, ոչ թէ միայն քաղաքականութեան մասին, այլ և վաճառականութեանն էլ։

Եղիսաբէթ այդ վաճառականական մեծութեան հիմունքը ձգած և նուիրեղէնքն էլ պատրաստած ունէր։ Բայց իր յոյսերը տարօրինակ կերպով պարապեն եղան։ Թէեւ Անգլիա նորէն չընկաւ Հանսեականաց լուծին տակ և իր առևտրական անկախութիւնն պահպանեց, բայց չատ ծանր քայլով դնաց այն ճամպով, որով մտած էր, և թողեց որ իր վրայ դերազանցեն Հոլլանտիոյ հասարակապետութիւնը, որ սասեիկ եռանդով տասն ութներորդ դարուն նիւթական լուսաւորութեան գլուխն անցկացաւ Եւրոպիում։ Ֆրանսիան անդամ այդ ժամանակում Անգլիոյ համար մի վտանգաւոր նախանձորդ եղաւ։ Այդ տարօրինակ յաւասիճութեան մասին, յանցանքը նորին իսկ ազգին վրայ դնելուց առաջ, նրա նար տերող հարցութեան (թագաւորական ցեղին) վրայ պէտք է դնել։ Յաւարդնները հին սահմանադրութեան հիմունքը փորձին ու անձնական ազատութեան և սեպհականութեան մեծ ու չատ վնասներ հասուցին. իրանք իրանց անձնատուր արին կրօնական մասին մի տասակի անհերոդամտութեան։ Մի խօսքով, Յաւարդնները այն բաներն բոլոր հակառակ գործեցին, որոնք Հոլլանտիան հարուստ, բազդաւոր, փառաւոր և գօրաւոր արին։ Իրանց պահանջողութեան մէջ բացարձակ տէր լինելու՝ բոլորովին զուրկ էին մի լուդովիկ ԺԴ-ի հանճարէն և նրա ամենաճար գործունէութենէն, որու յաղթանակներն Ֆրանսիաում ազգային զգայմունքը զգուեցին ու չվերացին։ կարելի էր որ մի բռնապետ եղիսաբէթին յաջորդում լինէր, բայց այն պայմանով միայն որ նա՝ մի մեծ մարդ լինէր, որն որ Յաւարդնեբէն ոչ մինն եղաւ։ Դրանք կարճամիտ մարդիկ էին, որոնք միմիայն կցկտուր ճար ու ճարակ, և վերեւանց դեղ ու դարման անել գիտէին, և այն արհնաւ գան՝ որ կարող Ա. ու մնով ազատեց նրանց, ոչինչ եղաւ նրա յաջորդների համար։ Իսկ Անգլիական ազգին համար, ընդհակառակն առանին վճճերն մի գլուխ եղան, որոյ մէջէն գուրս եկաւ նա լիքը փորձով և հաստատ իր սկզբունքներում։ Ինչ տարբերութիւն 1643 թուի յեղափոխութեան և 1688 թուի յեղափոխութեան մէջ։ Առաջնումն տեսնում ենք, կռուի բռնուած ամենաբուռն կրքերն, երկրորդում մի ազգ իր իրաւունքով խորը համոզուած ու անդիմադրելի վիրաւորութիւն։ Այն ինչ առաւելակշռութիւն ձեռք բերեց յանկարծ Անգլիա այն ժամանակ, և ինչ արագութեամբ կորուսած ժամանակին նորէն տեղը բերեց, և իր բոլոր ոսոխներին յաղթելով՝ ազգերի վրայ այն գերազանցութիւն սուաց, որն որ պահպանեց մինչեւ մեր օրերը։ Իր վաճառականութեան

պատմութիւնն այս մասին ամենէն ճոխ վկայութիւն է տալի։ Ազատութեան հասած մի ազգ, ինչպես Անգլիական ազգը, կարող էր միայն վաճառականութեան հետ միաւորել մի մեծ քաղաքակրթիչ պաշտօն։ Անչուշտ նա տիրապետութեան և չահամոլութեան քամակէն ընկաւ, չատ անգամ և չափազանցութեան։ Այդ կերպով հրաւիրեց ու գրգռեց զանազան կողմէն օրինաւոր դիմադրութիւնք և անբաւականութիւնք։ Բայց պէտք է ճանաչենք որ, ուր որ մի Անգլիացի նաև և վաճառական ոտք են դրած, լուսաւորութիւնն ու քաղաքակրթութիւն ուշ կամ վաղ նրանց քայլերն վրայ է հասել, և թէ հետզհետէ առաջ բերող գործութիւնք, նմանապես վսեմանակելի արժանութիւնք հրաշալի կերպով աւելցած են գործութեան և քանակութեան մասին միջազգային յարաբերութեանց մէջ։

Ուստի՝ Յաւարդնների թագաւորութիւնը այն կարճ ընդհատումով կամ դադարով, որ հասարակապետութիւն նրա մէջ բերեց, պէտք է նըկատուի իբրեւ մի մեծ դարագլուխ վսեմանցութեան, որ նախընթացն եղաւ Անգլիոյ վաճառականական գլխաւորութեան, զարգացողութեան։ Ազգն էլ չէր կարող թողնել այն ճամպան, որն որ բռնած էր եղիսաբէթ թագուհու ժամանակ, նա կարող էր ենթարկուիլ երկարձգութեան և խառնակութեան, իր նպատակն իր աչքէն չէր վսխչելու։ Իր կսիննեբուսմ իր իրաւանց և ազատութեանցը պաշտպանութեան համար, նա սորված էր, թէ ո՛րքան կարեւոր էր, որ խորհրդարանն ունենայ իր օրինաւոր մասը առևտրական օրէնգրութեան մէջ։ Մինչեւ այն ժամանակ թագաւորները մենակ իրանց ձեռնումն էին պահած այդ օրէնգրութիւն, չատ անգամ իբրեւ իրանց ձեռնհասութեան չնորհ։ Մինչ տեսանք թէ ինչպես եղիսաբէթ թագուհին այդ ձեռնհասութեան իրաւունքով չնորհած ունէր ըստ իր հաճութեան ամեն տեսակ արտօնութիւնք, և ինչպես նա աչք խփեց իսաստութեամբ ընդհանուր դժգոհութեան յայտնութեան առաջ։ Յաւարդնները այդ առաւելապատասխանութիւն պահպանելու համար, ոչ միևնոյն յստակ տեսութիւնը և ոչ էլ նոյն և մի ուղղութիւնն ունեցան։ Որպէս զի իրանց համար փող ճարեն, որն որ օրինագրութիւնը նրանց սահմանադրապէս մերժել էր, ուստի իրանք էլ միևնաճառութիւնն ծախու հանելու վեր կացան։ Յետոյ հին մաքսերու դերները բարձրացուցին և նորեր էլ վերահաստատեցին, որոնն արդիւնքն իրանց մանուր չահուն համար գործածեցին։ Մենէք մաքսագրութեան և նաւարկութեան համար հաստատած կանոնի հարկապահանջութեան դէմ չէր որ բողոքեց Հարման և հարկ վճարելը մերժելով ապստամբութեան նչան տուեց։

Բրդեղէն ձեռարհեստներն խիստ ազգային էին եղած և այնպիսի յաջողութեան բնական պայմաններում էին գտնուում, որ կարելի չէր իրօք սպառնալ նրա գոյութիւն ջնջելու։ Բայց սակայն Հոլլանտական բրդեղէն գործարաններն էլ՝ այն ժամանակ խիստ բանուկ և խիստ հասուն խելքով էին կառավարուած և որոնց ազգային առևտուրը իրայ բերքերն

ամենէն հեռու առևտրական հրապարակներումն էր տանում, Անկլիական ձեռնարհեսաններին մեծ վնաս հասուցին։ Բաղդախնդիր վաճառականք, որոնք Մէդդելբուրկում էին հաստատուած, այնքան քիչ կարող եղան այդ մրցողութիւն պահպանել, որքան շատ Հոլլանտական խորհրդարանն Անկլիական մի քանի չուխաներ ներս մտնելն ջնջեց բարձր մաքսերով և միւսներն էլ արդիլեց։ Անկլիա էլ իր կրած վնասուց վոխարէն, արդիլեց յատուկ բրդի դուրս հանումը, և այդ արդելքը արդէն Յակոբ Ա.ու ձեռքով էր եղած իր թագաւորութեան սկզբում և հաստատուած 1660 թուին խորհրդարանի մի վճռով և այս վերջին ժամանակներումնել դեռ ղօրութիւն ունէր։ Այդ արդելքը թէև մի քիչ ժամանակաւոր վնաս կարող եղաւ պատճառել, բայց իր նպատակին չհասաւ, Սպանիոյ, Գերմանիոյ և Հունկարիոյ բուրդը քիչ քիչ ցանքի վրայ Անկլիական բրդին տեղը բռնեց։ Ջուխայի ներկը լաւացնելու համար եղած ջանքերը աւելի յաջող եղան։ Ամենամեծ մասը մինչեւ այն ժամանակ դուրս էր հանում անթափ ու անլուայ գերմանիաում ներկուելու և պատրաստուելու համար, ինչպէս նաեւ Սաորին–Նահանգներում։ Այդ երկու երկիրները լուացնում էին այդպէս մի առևտրական շահուց դուրս մի ձեռնարհեսական շահ, և այդ վերջին շահը ձեռք բերելու համար էր մնաւանդ՝ որ այդ երկիրները նպաստել էին այդ ապրանքի ներս մտնելու։ Հանախակնացց դուրս հանուելուց հետէ, Անկլիացիք բաւական ապահովացուցել էին իրանց առուտուրը, կամեցան նաև տարազատրծութենէն էլ մի շահ վայելել։ Այդ բանէ ծագեցան կռիւներ և արդելք, որոնք յիշեցինք վերեւն։ Անկլիացիք սորվեցան աւելի լաւ ներկել չուխան և արդիլեցին, որ իրանց անթափ կամ անլուայ դուրս հանուած չուխան, ինչպէս որ շատ անգամ պատահած էր, կրկին անգամ ներկուած ու պատրաստուած ներս չբերուի իրանց մէջ։ Այն տարօրինակ նախապաշարումն, որուն բռնկիլով վայան երկար ժամանակ առարկայ էր եղած՝ և պատճառ նրա ներս մտնելը խափանելու, վերջապէս անհետացել եղաւ և այդ վայրը ներկում գործածուեց։ Բրդեղենի տարազատրծութիւնը քաջալերելու համար սահմանուած պակաս կանոնադրութեանց մէջ պէտք է յիշենք այս տեղ իրրև նշանակութեան արժանի այն՝ որ 1660 թուին սահմանեց 3 փաունդ ստերլինկ տուգանք վճարելու՝ ննջեցեալն բրդեղէն կերպասով չպատանքուին։

Առաջին անգամ խնդիր է լինում, 1641ին բամբակեղէն կերպասների առքագործութեան Մէնչեսթրում։ 1676ին նոյն է մի կերպասների տպագրութիւնը ծանօթ է Լօնտօնում։ Նախնական նիւթը կիսս կղզուց և Իռլանտիայէն էր գալի, քթանի կամ կանեփի ձեռնարհեսան որ արդէն կար հեչտացուց բամբակի ձեռնարհեսի յառաջադիմութիւնը։ Այդ ժամանակ ներում, նոյնը սկսում էր տարածուիլ Իտալիոյում. մինչդեռ Անկլիաում վճռական էր երեւում։ Քթան թելերը ամեն ժամանակ Իռլանտացէն էր առնում, կղզու հիւսիսային կողմերում, ուր հաստատուած էին Սկոտիացիք, սկսան

պարապիլ այդ թելերով բուն իսկ երկրում։ Այդ ժամանակում Իռլանտան մեծ պատրաստութիւն էր ցոյց տալի ձեռնարհեսանների մասին, բայց ամեն հնարք գործ դրուեցան ջղակտոր անել այն՝ Անկլիոյ շահուն համար։

Այդպէս չուխայի գործատանց թուն սահմանափակութիւնը պարտաւորեց մի շատ բանւորներին Ֆրանսիայում գաղթել։ Կրօնական անհանդուրժողութիւնը նմանապէս դուրս քշեց շատ վարպետ աշխատաղներին։ Մանաքեղէնի առաջին տարազատրծութեան գործարանները տասնութերորդ դարու սկզբում հիմնուեցան Անկլիաում և գունաւոր թղթերինն էլ մի փոքր յետոյ երեւան եկաւ։ Ապակու շինութիւնն այնպէս յառաջադիմեց, որ վաճառականութեան առարկայ էր եղած և մրցում էր վենետկու հետ։ Մինս կողմէն երկաթէ ձեռնարհեսանները շատ կամաց էր զարգանում, և ամենեւին իր վաստատուն ապագան չէր ցոյց տալի առաջուց։ Հապա օտար երկաթն էր, որ խիստ մեծ մասնով սպառման մէջ դրած էր ածուում։ 1619 թուերում, իրաւ է Դուդլէյ կոմսը, մի յիշատակելի հնարագործութեան հեղինակ եղաւ, այն է երկաթի ձուլուիլը քարածխի հրով։ Բայց այդ նոր հնարքի բերրի հետեւանքները մի քար յետոյ ճանաչուեց։ Կոյր և չար մարդիկ կործանեցին այդ հնարքը գործ դնող գործատուներ։ Քարածուխ հանելու պատրան նիւթեսալ լինելով մեծ զարգացում ստացաւ։ 1615 էն 400 Անկլիական նաւու բեռ էր տալի առանց Ֆրանսական Գերմանական և Հոլլանտական նաւերը հաշուելու։ Առաջուց եղած նախապաշարումն այդ վաճառքի մասին ցնդուեց՝ վայրկ Թանգանալու վրայ, քարածխի գործածութիւնը այն աստիճան ընդհանուր եղաւ Լօնտօնում, որ վաճառականութիւնը դէպ ի դուրս արդէն հասնում էր այն տեղ 1671 ին, 180,000 տակառաչափ, և գանգատ էին բառնում բացարձակ այն անհնարին տուրքին դէմ, որուն քարածուխն ենթարկուած էր։

Երկու վերջին Սաուարդների ժամանակ, Ֆրանսական ձեռնարհեսաները հրաշալի կերպով զարգացան Գոբլերդի փութաջանութեամբ, մի սաստիկ փայլ արձակեցին և ահ տուեցին, ոչ թէ միայն Հոլլանտական ձեռնարհեսաններին, այլ Անկլիականին էլ։ Կարող Բ. ի տուած նախապատուութիւնը Ֆրանսիոյ ձեռնարհեսական բերքերին, այնքան աւելի վնասակար եղաւ բնիկ ձեռնարհեսաներին՝ որքան աւելի որ արքունեաց չհայելութիւնը պատճառ եղաւ երկրէն շատ փող դուրս հանուելուն։ Ֆրանսիա յուզարկում էր Անկլիաում բուրդ և քթան, տարաներ, մետաքսեղէն և թուղթ, զուգակ առարկաներ մի և նոյն միլիոն փաունդ Ստերլինկ արժողութեամբ, առանց հաշուելու մանրակ փոխուցածները։ Անկլիական ապրանքները՝ Ֆրանսիական հրապարակներէն դուրս էին հանուած արգելքով կամ բարձր տուրքերով։ Թէ որ բանի տեղ դրուում լինի, դրանց հետ միասին Ֆրանսական գինով ներս մտած արժէգինը, պիտի իմացուի այն ժամանակուայ հեղինակների բնաբանի ճշտութիւնը, որ վաճառականութեան կշիռը Անկլիոյ ձեռնակար էին համարում. վերջա-

պէս չէ կարելի չատ զգոյշ կենալ մի վարդապետութեան չինծու երե-
ւոյթներէն, որ անսխալական էր համարուած այն ժամանակ։ Ա.յդ գա-
րագլուխ առեւտրական ցուցակներն հակասութեամբ լիքն են և զանա-
զան չահերու առջեւ իրարու դէմ են կանգնում միջազգային առուտը-
րում, պէտք է մեծ փոյթ ունենալ որոշելու համար հաստատ գլխաներն
անհաստատներէն։

Նանգի հրովարտակի յետոյ կոչումը, որ դուրս արեց իրանց հայրե-
նիքէն ամենէն արհեստագէտ ֆրանսիացոցը՝ և տարաւ մի մասը նրանց-
մէ Անկլիատւմ, Գօլբերդի մահը, որուն հանճարը զգաստրելուց
իր գործը, ներս մտնելու արգելքները, գաղթականական օրէնսդրու-
թեան և նաւարկական վարչութեան խստութիւնը՝ այն ժամանակ դրու-
թեան և նաւարկական վարչութեան խստութիւնը՝ այն ժամանակ դրու-
թենապէս ընդունուած իբրեւ տէրութենական ամած, մանակցեցան
1685 թուականի յեղափոխութենով, հատցնելու Անկլիական ձեռար-
հեստներն այն զօրաւորութեան և դլխաւորութեան աստիճանին՝ որու
վրայ կանգնեց ու մնաց մինչեւ մեր օրերը։

Անկլիական երկրագործութիւնը գրեթէ միայն միայն սանձաթո-
ղերդ դարուս, քաղաքային պատերազմները դրան նպաստաւոր չլինե-
լուն համար։ Լաւ տարիներուս, մի փոքր յորեն դուրս էր հանում,
բայց երբեմն էլ դրսէն էր ներս բերում։ Բրդի բերքն իր արժողու-
թիւնը կորուսած էր՝ դուրս հանելու արգելադրութենէն հետէ, երկրա-
գործները էլ առելի զբաղեցան իրանց նախիրներէ յառաջ եկած մնեղէ-
նով։ Իսկ եզ, կով և այլ դրանց նման անասնապահութեան մասին քա-
ջալերուեցան՝ ուրիչներին ներս մտնելն արգիլելով, նոյն իսկ խոլանաւ-
չինները։ Պատուները մեծ տեղ էին բռնում դեռ. իսկ երկրի մշակութեան
մասին՝ դեռ չատ բաներ ունէին սորվելու Հոլլանտացին, ուր տեղացի ի-
րաւ է որ չատ տեսակ մրգեր, մասդաչ բանջարեղէնք ներս բերուեցան։
Գետնախնձորը ծանօթ էր եղիսաբեթի օրէն, բայց չատ ժամանակ չե-
տոյ առարկայ եղաւ մեծ մշակութեան և ընդհանուր ապառման։ Հասա-
րակապետական ժամանակամիջոցը նպաստեց զօրաւոր կերպով երկրի ա-
զատութեան. այդ չնչեց ազատային ծառայութիւնն և դիւղացու ան-
վարձ գործածութիւնը, որ ներքին վերանորոգութիւնը անփոյթ էին և-
զած դրա դոյութիւն չնչել։

ԳԼՈՒԽ Ե.

Անկլիոյ յիշատակութիւն, սորբին Հոլլանտիոն. — Ռանկին յետագայութիւնը. — Անկլիա՝ հա-
սարակապետութեան մէջ. — Գրօմուելի վճռաւորականան հաղթականութիւնը. — Նաւա-
կոմութեան օրէնքի պատմականը, նրա առիթն ու նպատակը. — Նրա ուշնչած անդլիական հե-
պեաներէն Հոլլանտիոյ համար։

Անկլիացիք մինչեւ այդ ժամանակ՝ չատ թերակատար կերպով ունէին
օդուտ քաղած այն առաւելութենէն, որ իրանց ընծայում էր ձկնորս-
սութեան մասին, իրանց կղզիական դրութիւնն ու հիւսիսակողմանց մեր-
ձաւորութիւնը։ Նրանք առելի իրանց երկրում ապառելու կամ ծախելու
համար էին ձկնորսում, քան թէ օտար երկրում վաճառելու։ Սկսելով
դիք միայն՝ երեւում է որ ժամանակ ժամանակ սորած լինին մի քիչ
ձուկն Ֆրանսիա։ Եղիսաբեթի և Յակոբ Ա.ու պահս կամ պահեցողու-
թիւն սահմանող այլ և այլ հրովարտակները վկայում են կառավարու-
թեան ձկնորսականութեան ունեցած կարեւորութիւն ճանաչելը՝ թէ իբ-
րեւ ազգային արհեստասերութիւն, և թէ իբրեւ ածուռ նաւորդաց, բայց
դրանք բաւական չէին ձուկը վեր առնել ասղ Հոլլանտիոյ այդ ՌՒն-
կ ձկան ձկնորսութենէն, որն որ նա պահպանում էր կարդէ դուրս չան-
քերու դնով, որովհետեւ այդ էր հիմքը իր ծովային զօրութեան, և իր
հարստութեան դլխաւոր աղբիւրներէն մին։ Ռինկա ձկներն Սկոտիոյ
ծովակերի մօտերումն էին վխվխում, բայց փոխանակ աէր լինելու իր
ձեռի տակ եղածին, Յակոբ Ա. թող առաւ 1600 թուին, Հոլլանտացոց
վոխարէն մի գումարի, որն որ իր որդին կարդ Ա. 30,000 փաունդ Սթեր-
լինկ բարձրացուց։ Գահն այդ դաշնագրութեամբ մի չնչին եկամուտ
ձեռք բերեց, բայց ազգը զուրկ մնաց մի ամենաչահաւոր արհեստասեր-
րութենէ։ Դէպի Սիպտակ ծովումը եղած արշաւանքներն ու հիւսիսային
արեւմտքով մի ճանապայ գտնելու հետաքրքրութիւնը վարժեցուցին Անկ-
լիացոցը կէտորսութեան մէջ, ուր տեղ Բասքերն իրանց համար վարպետ
էին եղել։ Ա.յդ գործատնութեան մէջ էլ Անկլիացիք Հոլլանտացոց մրցո-
զութեան պատահեցան, և երկար ժամանակ հազիւ թէ կարող եղան ի-
րանց երկրորդ աստիճանում բռնել։ Բայց առելի յաջող գնացին Ն.ր Երեւ
ձկնորսատեղիներում, ուր Հոլլանտացիք չէին գնացած և ուր տեղ իրանց
միակ մրցողներն էին Ֆրանսացիք և Սպանիացիք։ Դբսօն կոմսաներկրի
նաւահանգիստներն՝ որոնք այդ ձկնորսատեղերում էին օդուտ քաղում,
գլխաւորապէս ուղարկում էին այն տեղերը, տարինը 150 նաւ Յակոբ
Ա.ու թագաւորութեան վերջերում։ Անկլիական որսատեղիք սակայն՝ ի-
րանց մեծ յաջողութիւնը՝ նաւարկութեան օրէնքին որսամարդութեանց
են պարտական։

Պէտք է Հոլլանտացոց վաճառականութեան պատմութիւնն ուսումնա-

սիրել իմանալու համար թէ՝ ինչ միջոցներ է բանեցուցել այդ ազգը ծո-
վու տիրապետութիւն ձեռք բերելու համար, և տէր է եղել՝ ինչպէս
միջնորդական վաճառականութեան՝ այնպէս էլ եւրոպական ծովային փո-
խադրութեան։ Ոչ եղիսաբէթ թագուհին և ոչ Ցակոբ Ա. բաւականին
չէին գործած Անգլիական նաւարկութիւնը Հոլլանտացոց նաւարկութեան
աստիճանին բարձրացնելու։ Իր մահուց փոքր ժամանակ առաջ, Հռչա-
կաւոր Ուալտր Ռալէյհ՝ մի յիշատակարան հանեց թագաւորին առաջ,
որու մէջ հայրենասիրական անկեղծութեամբ տեղեկագրում էր շատ քիչ
միջոցներով Անգլիոյ համար։ Նա դրանով ցոյց էր տալի
Հոլլանտական վաճառականութեան վայելած մեծ կարեւորութիւն և նրա
այդ դերազանցութեան պատճառները։ Անգլիոյ հետ եղած փոխանակու-
թիւնքն այն ժամանակ գործում էին վարում 500 Հոլլանտական նաւ և
50 Անգլիական։ «Մեծն Բրիտանիոյ ծովավէրներն, ասում է խորագէտն
Ուալէյհ, ամենահարուստ որսն է մեր առաջն հանում. բայց Հոլլանտան
է ձկան ամենամեծ առուտուր անողը։ Լեհաստանը, Ֆրանսիան և Սպա-
նիան հնձում են ամենքէն աւելի ցորեն, գինի ու աղ. բայց այդ արմը-
տիքի առուտուրը՝ Հոլլանտուն է պատկանում։ Գերմանիան փառաւոր
անտառներ ունի, Անգլիա՝ արճիճ, անագ, բուրդ ու չուխա. նորէն Հոլ-
լանտուհի է այդ բերքերի առուտուրը։ Մի խօսքով, մենք ամենքս էլ
կախում ունինք Ամստէլ և Մէօզ գետափերի վրայ եղած ընդարձակ վա-
ճառապահ տներէն, որոնք հարստացուցինք մեր տուրքերով»։ Ուրդ՝
Ուալէյհի մտքում, Անգլիա չատ աւելի լաւ պայմաններում էր մի այդ-
պիսի պաշտօնի համար։ Միայն պէտք էր որ ազգն ու կառավարութիւնը
խորը մտնէին այն հոգուն, և ձեռք առնէին այն հնարքը, որոնցմով կա-
րելի էր մի վաճառական տէրութիւն լինել։ Այդ յիշատակարանը մեր
աչքի առաջ է դնում մի մեծ օգուտ. նրա միջումն է գանւում այն ու-
ղղութեան ամենայատակ ձեւագիրը, որ Անգլիական քաղաքականութիւնը
շատ չուտով էր ընդունելու։

Ոչինչ կար յատուկ առաջին Ստուարդներէն։ Իրանց բռնապետու-
թիւնը ներսումն և իրանց ցածր քաղաքականութիւնը դէպի օտարա-
կանը՝ վիրաւորեցին ազգային պատուոյն և ազատութեան սիրոյն զգայ-
մունքը և մի յեղափոխութիւն թելադրեցին։ Թագաւորականք անգամ
կարող չեղան չճանաչել, որ Գրոմուէլի հասարակապետական գործունէ-
ութիւնը բարձրացուց Անգլիան աւելի բարձր, որն որ չէր հասուցած այն
տեղ եղիսաբէթ թագուհու խնամատն և յաջող թագաւորութիւնը։ Անգ-
լիան եւրոպական մի մեծ տէրութիւն եղաւ և նա հասատատեց եւրոպա-
կան ցամաքի հետ, գրեթէ բոլորովին դադրած յարաբերութիւնը ամե-
նատուր հիմունքների վրայ։ Այդ պաշտպանը (Գրոմուէլ) ոչ թէ միայն
զօրապետի տաղանդ ցոյց տուեց, այլ ճշմարիտ մի տէրութենական մար-
դու։ Սպանիոյ հետ կռիւը մի սովորական բան էր եղած. բայց մի հին
բարեկամ՝ մի վտանգաւոր թշնամի էր դարած։ Գրոմուէլ հասկացաւ՝ որ

առանց ծովային և վաճառականական գօրութեան, Անգլիա չէր կարող
մեծամտել մի աշխարհավարական մեծ պաշտօն ունենալու, և թէ նա՝ իր
հարեւան Հոլլանտիոյ միջոցին էր պատահում իր ամենամեծ արգելքին,
որ մի և նոյն նպատակին էր հետամուտ։ Բայց այդ արգելքին յաղթելու
համար հերիք չէր պատերազմական մի հասարակ յայտարարութիւն ա-
նելը. հապա մի օրինաւոր ծրագիր էր հարկաւոր առաջ բերող կամաց
կամաց, բայց ապահով կերպով՝ իրական և տեւական արդիւնք։ Այդ
մտքով էր որ՝ Գրոմուէլ 1651 թուին նաւարկութեան օրէնքը հրապարակ
հանեց։ Շատ առաջ՝ Ռիչարդ Բ-ի և Հէնրիկ Է-ի օրերում օրինակի հա-
մար նաւարկութեան օրէնքներ հրատարակուած էին, որոնք թոյլ չէին
տալ մի քանի ապրանքների դուրս տարուիլը, բայց միայն Անգլիացոց նա-
ւերով և նրանց ձեռքով պատրաստուածներով։ Եղիսաբէթ թագուհին,
նմանապէս ազգային դրօշին համար ունէր պահած ձկնորսութիւնը և
ներքին նաւարկութիւնը. 1650 թուին երկարատեւ խորհրդարանն էլ՝
արգիլեց օտար նաւերին որ և է առուտուր անելը գաղթականաց հետ։
Բայց՝ այդ օրէնքները կամ չէին գործադրուած, կամ թէ վերաբերում
էին տէրութեան այլ և այլ կողմերի և իրան տացուածք եղած երկիր-
ներին մէջ տեղ եղած յարաբերութեանց, քան թէ բուն իսկ միջազգային
վաճառականութեան։ Հէնց այդ վաճառականութիւնն է որն որ այն
ժամանակ մանրամասնօրէն կանոնաւորեց նոր օրէնքը, որ հաստատուե-
լով և կատարելագործուելով 1660 թուին կարգ Բ-ի ձեռքով, երկար ժա-
մանակ յիշուեց իբրեւ Անգլիոյ ծովային օրէնք, մինչեւ որ այս վերջին օ-
րերումն էլ դադար տուեց մի նոր դարագլխի հարկաւորութեանց և լու-
սաւորութեանց առջեւ։

Անհատական որոնք էին էական տրամադրութիւնքը այդ օրէնքին, շար-
ժին. ոչ մի Ասիական, Ամերիկական և Աֆրիկական երկրէն կամ ձեռ-
նարհեստէն առաջ եկած բերք չէր կարելի բերել Անգլիոյ ներսերը, բայց
միայն նոյն իսկ Անգլիատւ, կամ թէ՝ նրա գաղթական երկիրներումն չին-
ուած, Անգլիական սեպհականութիւն եղած, և նաւորդներն էլ երեք
մասնով Անգլիայի եղած նաւերով։ Բայց ի ծննդոյ Անգլիացի՝ կամ թէ
անգլիացած մէկէն, մի ուրիշ որ մին չէր կարող՝ առանց իր ապրանքներն
ու առնելիքները կառավարութեան կողմէն գրաւուելու պատժոյ ներքեւ
դնելու վաճառականութեան կամ թէ գործակատարութեան պաշտօնը
վարել անգլիական գաղթականաց մէջ։ Այդպէս ապահովացնելուց յետոյ
Անգլիացի նաւատէրտոներին (արմատներ) համար Ասիոյ, Աֆրիկէի և Ամե-
րիկու վաճառաշարաւթիւնը, օրէնքը չանք արեց դրանց մատակարա-
րելու նաեւ, որքան կարելի է եւրոպիուն էլ, և տրամադրեց որ եւրո-
պիոյ ապրանքներն էլ չեն կարող ներս բերուիլ Անգլիա, բայց միայն Անգ-
լիական կամ բերքն առաջ բերող երկրի նաւերով։ Այդ երկու վերջին
տրամադրութիւնքն ուղղուած էին մանաւանդ Հոլլանտացոց դէմ,
որոնք՝ իրանց յատուկ փոքր ապրանք ունենալով դուրս հանելու, շատ ան-

դամ իրանց բեռներն օտար երկիրներէն էին առնում։ Այդ օրէնքով պատրաստում էին նմանապէս կործանելու անհրաժեշտ եղած ապրանքների մեծ վաճառական մները, գլխաւորապէս հիւսիսային բերքերով եղածներն, որոնք Ամստերդամում էին դիզուած։ Այդ օրէնքը հարուածով նմանապէս, մի կրկնակի մաքսով, օտարների ձեռքով պատրաստուած և նրա բերուած ամեն տեսակ ապրանքների վրայ։ Անկլիական գաղթականաց շաքարը, ծխախոտը, բամբակը, լոգակը, կոճապղպեղը (ջինջիֆիլ), ներկափայտը միայն Անկլիա կարելի էր ուղարկել։ Այդ ապրանքները նշանակուած էին համբուած պիտոնիներէ նշանակութեամբ։ Միւս գաղթականական ապրանքները, կարելի էր, իրաւ է որ մի քանի չափաւորութեան ներքեւ դուրս տանել տար երկրում։

Առաջուանէն ոչ համրուած մի չատ բերքեր անցկացան համրուած ապրանքների չարքումն ու փոխադարձաբար։ Համրուած չեղողների մէջ կային չինութեան համար գործելու տախտակը կամ փայտը, ապաներն ու ձկնեղէնը։ Այդպէս էր այդ նաւարկութեան հռչակաւոր օրէնքը, որն որ այնքան տարբերութիւն դատուեց։ Այս մեր ժամանակուայ չրջանում, որու մէջ տեսնուեց այդ օրէնքի չնչումը, մեզ աւելի կը տայ կշռադատելու նպատակաւոր և հակառակ վատաբանութիւնները։ Այն յարձակումներուն՝ որ այդ օրէնքը առարկայ եղաւ, վերաբերում է, չէ կարելի անդէմ լինել այդ մասին, համեմատաբար մի նոր ժամանակի, և այդ յարձակումներն աւելի նրա երկարատեւութեան վրայ էին քան թէ այդ օրէնքին ծնունդ տուող միտքին վրայ։ Մի ուրիշ կողմէն չափազանցելով նրա առաւելութիւնքը, կուրօրէն յանձնարարելուն նրան հետեւելու՝ և նրան այնպիսի հետեւանքներ տուին, որոնց պատճառներն պէտք է որ ուրիշ տեղ փնտռուին։ Ինչ որ էլ լինի, չատ լաւ մտածուած դիտաւորութիւն ունէին մի մեծատուր տալ Հոլլանտիոյ, և էհյու գահլիճն էլ չուտով հասկացաւ, որ այդ բանը չատ աւելի մի բան էր մի ներքին օրէնսդրական զգուշութիւնէ։ Այդ մի հրաւէր էր պատերազմի, որն որ փնտռում էր Գրոմուէլ. հասարակաց կարծիքով պաշտպանուած, որ դրդուած էր Հոլլանտիոյ դէմ։ Սակայն պէտք չէ Անկլիական ատրճղին յաջողութեանցը համար և նրա փառաւոր արշաւանացը մասին՝ Արեւմտեան Հնդկաստանումը և Բերբերատանի դէմ՝ պատիւ տալ դէտ նոր հրատարակուած նաւարկութեան օրէնքին։ Դիւանաւորների հիացողութիւնը, անձնուիրութիւնը և յաջողակութիւնը դրանց մասին բացատրութիւն կուան։ Աբրահամի օրերը նորէն չատ էին եկել և Անկլիական հայրենասիրութիւնն եղաւ որ յաղթանակը տարաւ Հոլլանտիոյ նաւային գերազանցութեան վրայ։ Թող ներուի մեզ յիշել այս վճռողական վարկեանի առթիւ, մեր նկատողութիւնքը Հոլլանտացոյ յանկատար և կեղծաւոր ազգայնութեան վրայ։ Ահա այդ բանն է որ աւելի քան թէ ուրիշ բան՝ Հոլլանտացոյ ընկճեց նաւարկութեան օրէնքն տրամադրութեանց ներքեւ, որոնք պատահարեցան ճանաչել Ուէսթմինսթրի հաշտութեան ժամանակ 1654 ին։

վճռողական կերպով, կարելի է իրաւունք տալ նրանց, որոնք թուլացան են բռնում նաւարկութեան օրէնքը Հոլլանտիոյ վաճառականական և ծովային զօրութեան նուազութեան սկսելուն, և Անկլիոյ նաւական և առեւտրական զօրութեան զօրանալուն։ Բայց և այնպէս՝ այդ յեղափոխութիւնն յանկարծակի չեղաւ և ոչ էլ առանց ուրիշ պատճառների զուգընթացութեան։ Սկզբներումը այդ օրէնքը ցաւալի արդիւնք ունեցան Անկլիաւում, նաւաշինութիւնք թանգացան, նաւորդների վարձքը բարձրացաւ, վաճառականութիւնը Ռուսիոյ ու Կրօհնլանտի հետ վնասուեց և նաւավարձութեան բարձր գինը թոյլ տուեց մրցելու ձկնորսութեան համար Հոլլանտիոյ հետ։ Բայց երկրին պէտք եղած պաշտպանութիւնն ազգային դրօշակին անց կենալով՝ նաւային չինութիւնք ետ չմնացին չատ չուտով մի մեծ զարգացում ստանալուց, չատ աւելի լաւ կերպով քան եւրոպիոյ երկիրներէն մեծ մասին, որոնց բերքերը վնասուած էին Անկլիաւում այն ժամանակ և որոնք չատ տկար առեւտրական նաւարկութիւն ունէին, և հետեւաբար անկարող նոյն իսկ իրանց ապրանքներ ներս տանելու իրաւունքը բանեցնելու։ Բայց նորէն լաւ աչքով էր նկատուում նոր մրցողութիւնը, ինչպէս որ առաջ երբ Հոլլանտացիք կռուի էին բռնուած Հանսեականաց գերազանցութեան դէմ։ Եւ երբոր միւս տերութեանց մէջ էլ մտածուեց նմանապէս օտար նաւարկութիւնը չափու և սահմանի մէջ առնելու ազգային դրօշակի շահուն համար, Անկլիական նաւարկութիւնը այնպէս էր առաջադիմել որ էլ անհնարին էր եղել նրան հասնելը։ Կռւաւին բացուեց միմիայն Հոլլանտիոյ հետ և նրա յաղողութիւն ծանր քայլեց։ Բրետաւի հաշտութեան 1667 ին, Ստորին Նահանգները կամ միացած գաւառները ձեռք բերին այն կարեւոր առանձնաշնորհութիւն որ Գերմանիաէն Ռէն գետով դէպի Հոլլանտա ուղարկուած բոլոր ապրանքները Հոլլանտիոյ բերքերին նմանակ լինին, այսինքն Հոլլանտական բերք համարուին և հետեւաբար ներս տարուին Հոլլանտական նաւերով։ Նաւարկութեան օրէնքը արդելք դրեց Հոլլանտացոյ միջնորդական գործողութեանց միմիայն Անկլիաւում և ոչ միւս երկիրներում, որոնց մէջ չարունակեցին քաւական ժամանակ։ Երբոր յետոյ ու յետոյ Անկլիա վերջապէս յաջողուեց Հոլլանտացոյ տեղն անց կենալ, օրինակի համար Միջերկրականում և Բալթիական Թերակղզում, նա այդ յաւաչ անցում պատահարեց ի հարկէ, ոչ այնքան իր առեւտրական առաւելութեամբը, որքան իր իշխանութեամբ իբրեւ մեծ տերութիւն եւրոպիոյ քաղաքական դրութեան մէջ։ Նրա հետ դէմս եղնելն բարձր էր փոքրիկ հասարակապետութեան զօրութենէն։

Նաւարկութեան օրէնքը Ամերիկեան գաղթականաց վրայ է որ ամենէն ուղղակի և ամենէն զգալի ներգործութիւնը վարեց։ Հոլլանտացոյ միջամտութիւնը ոչնչացուցած էր մի կերպով մայրաքաղաքի վնասակարութիւնը, որն որ այն ժամանակուայ գաղափարով գաղթականական տացուածքի տէր լինել էր նշանակում։ Բայց կատարելու վրայ եղող

յեղափոխութեան վրայ հասնելուց առաջ, հարկ է անդրադառնալ նրբին ձեռք առնել, և քննել թէ ինչպէ՞ս Անգլիա յաջողուել էր դաղթականաց տէր լինել։

ԳԼՈՒԽ Զ.

Անգլիական քաղաքականութիւն։ — Առաջին ժամանակաց արշաւանքներն Հիւսիսային Ամերիկա։ — Լինգոնի ընկերութիւնը և պլիմութինը։ — Խնդիր ծանր յարաբերութեան։ — Կրօնական և քաղաքական պատճառներէ դրդուած քաղաքականութիւն։ — Գաղթականական հաստատութիւն նոր Անգլիա։ — Ամեն մէկ քաստատ ջուկ ջուկ սահմանադրութիւն։ — Ամերիկեան ծովահէններէ (ֆիլիպսթրէ) չեռավ առաջ եկած հաստատութիւն։ աբեր մըտքեան Հնդկաստան։ — Սուրբ Քրիստոբեր, Թոբեգան, Եամայկան։ — Անգլիական նշանաւոր քաղաքական ազատութիւնը։ — Թագաւորական քաղաքական դրութիւն։ — փոփոխութիւն։ Գրոմուելի ժամանակին, հաստատութիւն և առաջին պահպանութիւն քաղաքական դրութեան։ — Բնաւ առեւտրական ընկերութիւն։ Ամերիկա համար։

Եւրոպիոյ միւս ծովեզերեայ ազգերի նման, հիացողութեան և նախանձութեան կրկնակի ազդեցութեան ներքեւ որ դրդիւ եղան Սպանիոյ երկրային գիւտեր և երկրատիրութիւնը անելու նոր աշխարհում, Անգլիացիք շատ վաղուց մտածել էին դրա քաղաքին գնալու այն տեղ։ Գաբօտի ճամպորդութիւնն յիշեցինք և եղած չանքերն էլ՝ եղիսաբեթ թագուհու ժամանակ դաղթականք հաստատելու նպատակով, հիւսիսային Ամերիկու արեւելեան ափերում։ Այդ եղած բոլոր չանքերն ու փորձերը ձախորդ դնացին ձեռնարկողների երկրի մասին ունեցած ապիտութեան, իրանց միջոցների անբաւականութեան, ոսկի գտնելու համար կորուսած ժամանակի և այն անհամար դժուարութեանց պատճառով, որոնց պատահում են դաղթականք իրանց սկզբնաւորութեան ժամանակ։ 1602 ին, Գօսնօլդ որ առաջուց եղած ձեռնարկութեանց մասնակից էր եղել, մի ճամպորդութիւն արեց նորին տեսնելու համար թէ բան մանն ձեռացած էր արդեօք դեռ վիրդինիասում եղած հաստատութենէն։ Իր ճամպորդութիւնը յիշատակելի է նաւարկութեան տարերգրերում։ Նա առաջինն եղաւ գլուխ հանող ուղիղ գծի վրայ մի ճամպորդութիւն դէպ ի հիւսիսային Ամերիկու ցամաք, ուր՝ մինչեւ այն ժամանակ գանարեան կղզիներով, Հնդկաստանով, և յետոյ Ֆլօրիդայի ափով էին գնում։

Գօսնօլդ դէպ ի հիւսիս ուղղուելով՝ այն երկիրը հասաւ ուր կանգնած է այսօր Բօստոն։ Նա յետ դառաւ մշտակեղենով բարձած նաւով, որու վաճառումն մի լաւ շահ տուեց։ Այդ բանի վրայ վաճառականաց շահագիտութիւնը գարթեց։ 1606 ին շատ մարդիկ հաւաքուեցան մի

դաղթականութիւն հաստատելու համար Գօսնօլդի ձեռքով գտնուած երկրում։ Դրանց օրինակին հետեւողներ գտնուեցան։ Ուրիշ մարդիկ ալ ընկերակցեցան, որպէս զի վերահաստատեն Ռայլէկի հին գաղթականութիւնը Ջեսապէկ խորշում։ Այդպէս երկու ընկերութիւն եղաւ, Լօնդոնինն ու պլիմութինը. առաջինն հարաւային մասին համար, երկրորդը՝ հիւսիսական Ամերիկու ցամաքի հիւսիսային մասին, որն որ այն ժամանակ վիրդինիա անունով էր նշանակուած։ Ձեմսթաունն՝ որ 1609 ին հիմնարկուեց Ձէյմս գետի վրայ, այս օրուայ վիրդինիայում, Անգլիացոց առաջին տեւական հաստատութիւնն եղաւ։ Գաղթականաց առաջնած հրոսարտակները Ցակոբ թագաւորէն, նրանց իրաւունք չնորհեցին իրանք իրանցմով կառավարելու, մի երեսփոխանական սահմանադրութիւն ունենալու, Անգլիացի քաղաքացոց իրաւունքներն ու արտօնութիւնքը վայելելու, մինչեւ անգամ մաքսատուութենէ ազատ մնալու։ Թագաւորն իրան համար՝ մի միայն բարձր գերիշխանութիւնն էր պահում ու պատնիոյ նման՝ թանկագին մետաղների հանումն էլ հինգերորդ մասը։ Բայց իշխանութեան բաժանումը չուտով վիճաբանութեան մի նիւթ եղաւ։ Գաղթականաց իրանք իրանց կառավարելու իրաւունքը սահմանափակուեց շատ մեծ մասով։ Թագաւորը յետ առաւ նրանցմէ կառավարիչ նշանակելու և վարչութեան խորհուրդը կազմելու իրաւունքը։

Առաջուայ եռանդին վրայ մի ցրտութիւն յայտնուեց և, մի թուլութիւն՝ դաղթականութիւն հաստատելում։ Կարգէ դուրս դէպքեր պէտք եղան յօժարեցնելու Անգլիացոց դաղթականութիւն անելու, վասն զի չէին կարող հրապուրուիլ երթալու այն տեղ՝ ոսկու ծարաւէ դրդուած, քանի որ իմացուած էր ոսկու չգոյութիւնն այդ անչէն երկրում. վաճառականք էլ վախենում էին կարիճ վայրենիների հետ կռուելուց։ Բայց այդ ժամանակ՝ այնպիսի դէպքեր վրայ հասան, որ պատճառ եղան պնդամիտ և անընկճուն մարդկանց մտներնում դնելու՝ տարագիր լինելը հայրենական երկրէն, քան թէ հնազանդ լինելը բռնութեան ու զօրութեան և իրանց համոզումներ գոհելը։ Մինչդեռ մինչ այն ժամանակ, նիւթական առաւելութիւնք և հարստութիւն գտնելու ակնկալութիւնք էին միայն դրդիռ եղել Եւրոպացոյը Ատլանտեան Ովկիանով անց կենալ, այնու յետոյ՝ քաղաքական և կրօնական ազատութեան անդիմադրելի հրապոյրն եղաւ հիմնող ու մարդաչատ անող Նոր Անգլիոյ դաղթականութիւնքը Միացեալ Նահանգաց ծագումը։ Պարզակրօնների կրած հալածանքները Յաուարդների ժամանակ՝ առաջնորդեցին նրանց 1619 թուէն սկսած՝ միշտ աճեցուն թուով դէպ ի այդ խորդուբորդ ու անմշակ երկիր, ուր տեղ կարող էին, գտնէ, ազօթել Աստուածն իրանց հանդիսի և հետեւիլ աւելի նրա օրէնքներին քան թէ մարդկանցը, այդ մի յիշատակելի դարագլուխ է լուսաւորութեան պատմութեան մէջ և մեր այս օրուայ դաղթականութեան վազուն ընթացքին էլ ակունքը։

Պլիմութի ընկերութիւնը պաշտօն առած՝ հիւսիսաւ կողմում դաղթա-

կանութիւն հաստատելու, որուն Հիւսիսային Վիրգինիա էին ասում, կա-
րող չէր եղած այն տեղ մի չինութիւն կանգնել: Միայն ժամանակ ժա-
մանակ ոտրտում էր նա երկրին մէջ երկրացող հետ մուշտակեղէնի փո-
խանակութիւն անելու: Այդ ժամանակներում էր, որ Հոլլանտիում փա-
խած բաւական թուով պարզակրօնները իրանց աչքերը դարձուցին այդ
հեռաւոր երկրին վրայ: Ցակոբ Ա.ու մի հրովարտակը ձեռներում նա-
ման հարիւր քսան հոգու չափ և ոտը դրին 1621 ին ազատութեան
երկրին վրայ, Մասսաչուսէտսի խորշում գօղ հրամանգաձի կչռին, ուր
տեղ հիմնեցին Նոր ՊլիմուԹը: Ուրիշ վախտականք էլ շատ չուտով վեր
կացան գնային նրանց մօտ ու հետները միացան: Պէտք եղաւ ընդար-
ձակուել, և այդ իրողութենէն 1626 ին մի նոր քաղքի չինութիւնն յա-
ռաջ եկաւ, Բօստոն: Փիչ փիչ անտառները բացուեցան, մշակութիւնը
տարածուեց և պէտք եղած ուտեստ տուեց բնակիչներին: Գաղթականք
պահելով իրանց կենդանութիւնը՝ շատ արագութեամբ մեծացան ամեն
կողմէն, թէ և մի քանի ճգնաժամեր և մահկրօնութենէ ծագած ան-
կարգութիւնք եղան իրանց մէջ: Գաղթականք չորս գաւառի բաժնուե-
ցան: Մասսաչուսէթ, Քոննեգտիկութ, Րօտայլընդ և Նիու Համբշայր,
որոնք Նոր-Ընկլիա անունով մի դաշնակցութիւն կազմեցին: Գաղթակա-
նութիւնը նամանաւէս առաջանում էր Հիւսիսային Ամերիկու ուրիշ կող-
մերումն էլ: Վիրգինիա, ուր տեղ ծխախոտի մշակութիւնն արդէն մի
ընդարձակ ծաւալում էր ստացած, իր մօտն ածեց թագաւորական կա-
ռավարութեան պատկանող միշտ աւելացող թուով գաղթականաց: Մարի-
լընդի գաղթականք 1632 ին հաստատուեցան Լօրդ Բէլտիմօրի ձեռքով,
որուն թագաւորը չնորհեց դրանց՝ աւատի անունով: Հինգ տիրը, որ մի
ջերմեռանդ Գաթոլիկ էր, այդ տեղն իր կրօնակիցներին մի պատսպա-
րան չինեց, որոնք հալածուում էին պարզակրօնների անհանդուրժողա-
նէն: Նիու Եօրք և Նիու Ջերսէյ քաղաքների չինութիւնը 1664 թուին
է: Երկիրը սակայն, արդէն հերկուած էր Հոլլանտացոց և Շուէտացոց
ձեռքով: 1662 ին Նոր-Ընկլիոյ գաղթականք մի հրովարտակ ձեռք բերին.
յետագայ տարին կարդը Գարօլինային եկաւ: Մի պատսպարան՝ խղճի
ամենամբողջ ազատութեան համար 1682 ին բացուեց Պէնն անուն երե-
սականի ձեռքովը՝ Պէնսիլվանիա անունով: 1735 ին վերջապէս, Ջէոր-
ջիան, նոյնպէս մի ապաստանատեղի մատուց հալածանաց զոհ եղող-
ներին:

Այդ գաւառները շատ տարբեր կերպով էին սահմանադրուած՝ իրանց
հրովարտակների բովանդակութեան համաձայն: Մի քանիսը, ինչպէս
Վիրգինիան, Նիու Եօրք և Քարօլինա՝ թագաւորական անմիջական իշխա-
նութեան ներքեւ էին, միւսներն՝ ինչպէս Մարիլընդն ու Պէնսիլվանիան
մի տեսակ աւատ էին կազմում մասնաւոր մարդկանց չնորհուած. դեռ
ուրիշներ էլ, ինչպէս էին Նոր-Ընկլիոյ գաւառներն, մի ժողովրդապե-
տական սահմանադրութիւն ունէին: Բայց առ հասարակ գաղթականք

վայելում էին Անկլիացի անունով, ազատ քաղաքացու իրաւունքները:
Իրանց հրովարտակների մեծ մասը նրանց յատուկ իշխանութիւն էր տալի
ազատօրէն և ուղղակի օտար երկիրների հետ առուտուր անելու: Այդ
ուրեմն, պարագ տեղ կարծուեց՝ թէ Անկլիական գաղթականք Ամերի-
կում, սկզբումը հիմնուած էին առևտրական դրութեան ազդեցութեան
ներքեւ, մի երկրագործ ժողովուրդ առաջ բերելու նպատակով, և սահ-
մանուած՝ փոխանակելու առանձնակի իր խակ բերքերն ձեռագործ կամ
մեքենագործ ապրանքների հետ: Վիրգինիան իր ծխախոտին համար
Միդրելբուրիում և Ֆիլէտելֆիում առանգատեղիք ունէր:

Մի և նոյն ժամանակում, մարդիկ իրանց աչքերն դէպի արեւմտեան
Հնդկաստան դարձուցին: Նրանով էր սկսած Ամերիկու պատմութիւնը,
նա եղաւ նպատակ ճամպրդութեանց մեծ մասին, ոպանիական առա-
ւտաձքների ոսկին ու արծաթը. որոնք հարեւանում էին, աչքածակ ու
յանդուգն մարդկանց դրդռեցին, և մի ընդարձակ ասպարէզ բացուեց
այն տեղ ասպատակութեան: Անկլիացի, Հոլլանտացի, մանաւանդ Ֆը-
րանսացի, բաւականին թիւ կազմող մարդիկ, որոնց մեծ մասը Եւրո-
պիոյ ընկերականութենէն դուրս քշուած էին ու մեկնած այն տեղից
տանուտէրներուդ դարու սկզբումը, քաղաքական և կրօնական հալա-
ծանքներէն ազատուելու, կամ թէ՝ իրանց յանցանքների համար կրելու
պատիժներէն պրծնելու, կամ թէ՝ իրանց յանդուգն բնաւորութիւն դո-
հացնելու մտքով հաւաքուում են ու հաստատուում, նախ՝ Իսբրեւ հովիւ
կամ որսորդ, յետոյ իսբրեւ ծխախէն, Սուրբ Դոմինիկի արեւմտեան մաս-
նում և Անդիլեան մի քանի փոքրիկ կղզիներումն, որ տեղից պարապում
էին մաքսանենգութենով և ամեն տեսակ աւազակութենով: Սակայն ծո-
վահէնական մի ընկերութիւն կազմելուց՝ և ոպանիական տորմիղին և ա-
վերին ահ ու սարսափ լինելուց առաջ, բոլորովին արհամարհել չէին
խաղաղ ղբաղմունքները: Սուրբ Դոմինիկում մանաւանդ, և հարեւան
կղզիներումն, վայրենի ցուլեր էին որսում, այդ ղբաղմունքն իրանց ցու-
լորս կամ եղորս (բուքանիէր) անուն տուեց:

Այդ կղզում Ոպանիացոց ձեռքէն իրանց քաշած անգութ հալածանք-
ներն և ցլերու և եղների չնջումէն 1670 թուին, յետին նեղութեան հա-
րուցին իրանց, և մինչեւ այն ժամանակ՝ իրանց չոկ չոկ սփռած արշա-
ւանքներն այնու յետոյ ուղղութեան ածուեցան մի ամրողջ և ընդարձակ
ծրագրով. այդ մարդիկ իրանք իրանց ֆլիպուստիէր (ծովահէն) կամ թէ յա-
ւս ֆլիբ ուստիէր (ափերը ճանապող կամ ափնագետ եղբարք) անունը տուին,
վասն զի ամենքն էլ ծովահէն չէին, իրանց մէջէն մի մասը չարուսակեց
եղորսական որսորդի կեանքն. միւսները, որոնց բնակիչ անուանեցին,
երկիր գործեցին: Այդ վերջինք, բուն ֆիլիպուստիէներին դաշնակից էին,
գրանք սրանց օգնութիւն էին անում և սրանցմէ էլ պաշտպանուում էին
իրանց վաճառականութեան և նաւարկութեան մէջ: Առաջ առաջ բոլո-
րովին օտար էին իրանց հին հարեւնեաց համար, յետոյ յետոյ՝ սկսան

իրարմէ բաժանուել, Ֆրանսիացի հպատակներէն և Անգլիացի հպատակներէն։ կարելի է Փիլիպուսիէններուն վաճառականական ծովահէնի անունը տալ, վասն զի իրանց յափշտակած ապարն ծառայում էր, անուղղակի կերպով, վաճառականութեան օգուտներուն, նրանցմով՝ մի բանակ չրջաբերութիւն հարստացուց Անգլիական կղզիները և իրանց ոջիները վաճառքների մէջերանց եղան։ Շատ ժամանակ պաշտօնապէս պաշտպանուեցան Ֆրանսիացին և Թոյլտուութիւն տեան Անգլիացին, ինչպէս նաեւ Հոլանտացին, որոնք մի և նոյն նպատակով իրանց անհաչտ ատելութիւն գործածեցին Սպանիոյ դէմ։ Բայց երբ այդ նպատակին հասնուեց և երբ Փիլիպուսիէնները սկսան անխիղճ կապտել կողոպտել բարեկամներին և թշնամիներին, նուաճեցին դրանց մի երկարատեւ կռւով, և տասնութերորդ դարու սկզբումն, իրանց ընկերակցութենէն՝ մի միայն վիպասանական յիշատակներ էին մնացել։ Այդպէս եղաւ Փիլիպուսիէններուն ծագումն ու վախճանը։

Դրանք եղան, ինչպէս Անգլիական գաղթականութեանց, այնպէս էլ Ֆրանսիական գաղթականութեանց ճշմարիտ հիմնադիրներն ամերիկեան Հնդկաստանում. մայրաքաղաքն անձնապահ էր լինում. նա՝ նախ օգուտ ունէր թոյլ տալու, որ այդ անիչխանութեան վիճակը մնայ։ Անգլիական առաջին գաղթականութիւնն այդ կողմերում Բարբատան եղաւ. մի Անգլիացի վաճառական, Գուրտէն անունով, ընկերը դառաւ 1624 ին Մալբօրու դքսին հետ, որ մի արտօնութիւն ձեռք բերեց Ջակոբ Ա. ից և գրկեց այդ կղզում երեսունի չափ ոք մին, որոնց ձեռքով չինուեց ձեմս Տաուն։ Փիլիպուսիէնք իրանց պաշտպանութեան ներքեւ առին այդ գաղթականութիւնը և իրանք էլ նրանց միջում բնակուեցան։ Մի և նոյն ժամանակներում, մի ուրիշ գաղթականութիւն, Սուրբ Գրիստոփինը՝ իր հիմնադրութիւն միայն Փիլիպուսիէններին պարտաւորուեց։ Թէ և նա խնդրեց ու ձեռք բերեց Անգլիոյ պահպանութիւնը Գարլայդլի դքսը Մալբօրուի պաշտօնաթող լինելուց յետոյ, մի ընդհանուր արտօնութիւն ձեռք բերելով բոլոր Անգլիական կղզիներու համար։ Մայրաքաղաքում տրաքուած խռովութիւնք՝ արգելք եղան կառավարութեան աւելի նոր նոր և անհատատ չինութիւնով զբաղելու. ուստի դրանց՝ իրանց գլխին թոյլ տուեցին։ Այդ թոյլտուութիւն իրանց աւելի օգտակար եղաւ քան թէ վնասակար, խռովութիւնք պատճառ եղան շատ Անգլիացոց իրանց հայրենիքը թողնու և երթալ Ամերիկում հաստատուելու։ Գաղթականութիւնք այդպէսով բազմացան և քիչ քիչ մի կանոնաւոր կարգաւորութիւն ստացան։ Փոքրիկ Անգլիական կղզիներուց շատերը նէվիս, Անտիկա, Մոնսէրրատ, Տօրտօլա, Բարբատան և այլն յատկացան իրենց դքսաց՝ Սուրբ Գրիստոփինն։ Այդ կղզիք ապրում էին խնամքով բարեկամութեամբ Փիլիպուսիէնների հետ, որոնց ծովահէնութիւնն միայն Սպանիացոց էր սպառնում, հասարակաց թշնամուն։ Մշակութեան առաջին առարկայքն եղան ծխախոտն ու բամբակը, մի աւելի ջորաւոր

ժողովուրդ և աւելի մեծ դրամագլուխ, որն որ գաղթականներն էին բերած, շատ շատ Անգլիացի անկարկուներին (բլանդէօր) առաւելութիւն տուին Ֆրանսիացի անկարկուներին վրայ. Բրէդֆիլեան չաքարաեղէգն բերել տուին և՝ Բարբատանում և Սուրբ Գրիստոփում բուսցուցին։ Շաքարի բերքն այնքան չուտով յառաջադիմեց, որ 1650 էն սկսած՝ Բրէդֆիլեայ առուտուրն խափանուել էր Հոլանտացոց՝ Պօրտուկալցոց հետ ունեցած պատերազմներէն, Անգլիական կղզիք էին չաքար մատակարարողները մեծ մասնով Եւրոպիոյ։ Նոյնպէս այն ժամանակում սկսան սեւամորթ գերիներու վաճառատարութիւն գաղթականաց ծառայութեան համար, բարբատան, առաջին Անգլեանն, ուր՝ հանդիպում էին սեւամորթ գերիներու նաւերը, երկար ժամանակ գլխաւոր պահեստատուն եղաւ այդ մարդեղէն ապրանքին, որն որ մաքսանենգներն այն տեղից հաստատուն ցամաքում և միւս կղզիներում էին տանում։ Ամերիկեան ընկերութիւնը՝ 1672 թուին հիմնուեց կարոլ Բ. ի ձեռքով, դրա անդամների չարքումն էր Եորքի Դուքսը, որ յետոյ Ցակոբ Բ. անունով Անգլիոյ թագաւոր եղաւ. դա ամենամեծ արտօնութիւն էր վայելում միւս քաղաքացոց վերայ։ Անգլիացի գաղթականք, արեւմտեան Հնդկաստանում ստիպուած էին նրանէն գնել իրանց գերիները՝ երկու անգամ աւելի թանգ գին վճարելով այն ժամանակուայ գնու վրայ՝ երբ իրանք էին բերել տալի կամ թէ ըստ իրանց կամքին էին գնում։ Այդ արարքի դէմ եղած առատիկ բողոքների վրայ, խորհրդարանը 1698 ին սեւամորթների առուտուրն ազատ հրատարակեց 100/10 մի տուրք դնելով դուրս եղած արժէդնին վրայ, և մի փոքր յետոյ էլ 1750 ին Ամերիկեան ընկերութեան լուծմանը վճիռ տուեց։ Ինն անձով կազմած մի անօրէն յանձնաժողով՝ պաշտօն ստացաւ բարձր հսկողութիւն անելու այդ վաճառականութեան վրայ և 10 էն մինչ 15,000 փաունդ Ստերլինկ տարէնը մի դումար քաւէարկեց հարկ եղած ամրոցների ու զօրքերի պահպանութեան համար։ Ամերիկեում առուտուր անելու համար մի հրաման պէտք էր ձեռին ունենալ 2 փաունդ Ստերլինկ վճարելով Լօնտօնի կամ Լիվերբուլի կամ թէ Բրիստօլի գանձապետին։ Այդ երեք քաղաքներն իրանց միջում բաժանում էին յանձնաժողովին անդամներին նշանակելու իրաւունքը։ Այդ ժամանակէն իրանց կապոտութիւնն ուրիշների կարողութեանց հետ միացնելով՝ սկսան ընդարձակ առուտուր անել։ Լիվերբուլ գլխաւոր հրապարակն եղաւ այդ առուտրին, և՝ 1771 ին 105 նաւէն պակաս չգործածեց այդ բանի համար, մինչդեռ Լօնտօն 58 հատով գործ տեսաւ և Բրիստօլն էլ 25 ով։ Այդ թիւն իրաւ է որ, յետագայ տարիներում 28 ի իջաւ, սակայն կարելի է ընդունել, որ 1750 էն մինչ 1783 միջին թուով երեսուն հազարի չափ սեւամորթ գերի տարէնը կրուեց Անգլիական դրօշակով։ Խորհրդարանի վճիռն 1727 ին հարաւային ծովու ընկերութեան իշխանութիւն տուեց Մատակասկար կղզում գերի ծախու առնելու։ Մարդկային իրաւունքներն տանակոխ լինելուց զգծուեցն առաջիկայ չրջանի վերջերուն եղաւ,

մի քանի հաւատով և անձնուէր մարդկանց խօսքովը ու դրչովը, և 1772 ին Բրիտանական դատարաններն այն սկզբունքն հաչակեցին՝ թէ ամէն գերի ազատ էր, հէնց՝ Անգլիոյ հողի վրայ ոտք էր դնում։ Բայց բոլորովին գերութենէ ազատութիւնն յետագայ չրջանին էր վերապահուած։ Անգլիոյ գիրքն այդ ժամանակում չատ նպաստեց այդ փայլուն և արագ զարգացողութեան։ Սովորական էր եղած ամէնքին հասարել Անգլիական կղզիքն իբրեւ մի առանձին սեպհականութիւն, գրեթէ իբրեւ մի չնչին ստացուած տերութեան համար։ Բայց այն անկարելիութիւն, որու մէջ տերութիւն գտնում էր նրանց կառավարելու, գլխաւոր հետեւանք ունեցաւ իրանց վաճառականութեան ազատութիւնը։ Նրանք իրանց բերքն իրանց ուզած երկիրն ուղարկեցին՝ ուր որ լաւ էր վաճառում, և իրանց նաւահանգիստներն բաց արին անխտիր ամէն վաճառականներին։ Այդ անտահման ազատութիւն չտհատոր եղաւ Հոլլանտացոց, որոնք իրանց ձեռաց ներքեւ պատրաստ ունենալով պէտք եղած միջոցներին՝ տէր եղան Անգլիական գաղթականաց ողջ առուտրին, ամէն տեղ Անգլիական ներում իրանց գործակատարներն հաստատեցին, և վաճառատարութիւնն ու վաճառաբերութիւն իրանց նաւերով կատարեցին, այն աստիճան որ տասնեւօթներորդ դարու միջերում Անգլիական գրօշակն գրեթէ բոլորովին անհետեւան էր եղած Ամերիկեան ջրերում։ Մի ուրիշ հետեւանք չատ աւելի կարեւոր, իրանց տահմանադրութեան զարգացումն եղաւ։ Գաղթականք մայր քաղաքէն բերին իրանց տէրն երեսփոխանական գրութեան վրայ և հետզհետէ բազմանալով, գրգիռ եղան այդ տեսակ կարգերի ու սովրների հաստատութեան, իրաւ է որ խիստ յաճ և յաճ ձեւերի ներքեւ, բայց առ հասարակ վեհապետի իրաւանց մասին յիշատակութեան կարող։ Այդպէս հանդամանքներէն օգուտ քաղելով, Արեւմտեան Հնդկաստանի գաղթականք կամաց կամաց անկախ եղան և իրօք ճշմարիտ հասարակապետութիւնք։

Եամպքեան 1655 թուին Գրոմուել Սպանիացոց ձեռքէն առաւ։ Այդ կղզին մի զինուորական վարչութեան ներքեւ դրուեց, որ սակայն արգելք չդրեց չաքարի, կոճապղպղի, քաքաօի և լեղակի մշակութեան։ Եամպքեան, Սպանիական Ամերիկու հետ մաքսանենգութիւն անելով և Ֆիլիպեաստիէների հետ էլ յարաբերութիւն ունենալով հարստացաւ։ Ֆիլիպեաստիէք մեծ սէր ունենալով այդ կղզու վրայ, իբրեւ իրանց հանգստատեղին և զբօսատեղին, այդ տեղ էին տանում իրանց աւարն և վատնում անառակութեամբ։ Անգլիացոց ստացուածքներն Արեւմտեան Հնդկաստանի տասնեւօթներորդ դարում Քերմուտա և Բանամա կղզիներում եղած հաստատութիւնքն էին։ Այս վերջինք, որոնց մէջ ամենէն ծանօթը Նախանամութիւնն է, աւելի կարեւորն էր՝ իբրեւ զինուորական քան թէ վաճառականական դիրք։ Անգլիացիք 1662 թուին, ոտք դրին կեդրոնական Ամերիկում Եուքատան թերակղզու վրայ Գամպեչի խորշու մէջ և այն տեղ ներկափայտ կտրելու զբաղեցան, որ տեղ խիստ առատ էր։ Այդ

կղզրի մասին անդադար վիճաբանութիւն վեր կացան Սպանիոյ հետ, որ չէր կամենում տարածել մինչեւ ի Եուքատան 1670 թուի համաձայնութիւնը, երկու տերութեանց Ամերիկում ունեցած տատացուածոց վերաբերութեամբ։

Նմանապէս մի քանի հաստատութիւնք հիմնուեցան տասնեւօթներորդ դարում, նոր երկրում Գատաիտում կամ Նոր Սկովտիտում։ Անկախացիք այդ տեղ Ֆրանսիացոց հետ չատ կռիւներ ունեցան և երկրին մինակ տէր՝ Ուտրեխտի խաղաղութենէն յետոյ եղան։

Երեւում է որ, ոչ մի վաճառականական ծրագիր առաջուց չէ պատրաստած, Անգլիական գաղթականութեանց մեծ մասին Ամերիկում հաստատուելու կամ կազմակերպուելու համար. իրանց գարգացում պատահական էր եղած գրեթէ՝ որն որ իրանց իրաւունք էր տուած անկախութեան դիմելու։ Բայց իրերու այդ վիճակն վերջ ունեցաւ, հէնց որ մայր քաղաքն միջոց գտաւ, Գրոմուէլի ժամանակ, գրաղելու գրաւեալ անցկացածներուն հետ, և միջոցներն էլ ունեցաւ իր վտանգումն ընկած շահերն ապահովելու։ Գաղթականք, այնքան աւելի նրա ուշադրութիւն դրաւեցին, որքան որ իրանք առաջ էին բերում իրանց քաղաքական կրնաւներն և թէ իրանց միջում չատերի մէջ թագաւորականք, որոնք ամբողջովին գաղթած էին յեղափոխութեան ժամանակ, ուրիշ ոչինչ բանի դիտում չունէին, հապա մի ամբողջ բաժանում կատարելու հասարակապետութենէն։ Երբ բանը Հոլլանտացոց մի հարուած տալու վրայ եկաւ, նաւարկութեան օրէնքով Անգլիական կառավարութիւն ուզեց գաղթականաց պրծացնել օտարների չահագործութեան աւարկայ լինելուց և այդ չահագործութիւնը մայրաքաղաքին համար ապահովացնել։

Անց ենք կենում այն փոփոխութեանց վրայ, որոնք տեղի ունեցան Գրոմուէլի ժամանակ և աւելի մեծ թուով՝ վերահաստատութեան ժամանակ, գաղթականաց քաղաքական կարգաւորութեան մէջ, որոնք իրանց համար նպատակ ունեցան նրանց միջում թագաւորական իշխանութիւն ամրացնելու։ Սակայն յետագայ դէպքերու հակացողութիւնն հեչացնելու համար, վայելուչ է դիտել տալ որ՝ նոյն իսկ նոր վարչութեան ժամանակ Ամերիկու գաղթականք չարունակեցին մի եւնոյն իրաւունքները վայելել, ինչպես Անգլիացի քաղաքացիք, որոնք առ հասարակ պահպանում էին ու գործադրում իրանք իրանց վրայ տուրք դնելու իրաւունքն և թէ վերջապէս ենթակայ չեղան ուրիշ տահմանափակութեանց, բայց միայն մայր հայրենեաց վաճառականական միջնավաճառութեան տահմանադրածներին։ Այդ միջնավաճառութիւն, նաւարկութեան օրէնքով, իրանց վրայ տատակապէս հարկ դրուեց և այդ բանում զգուշութենէն է ակսում Անգլիոյ գաղթականական գրութիւն։ Արդէն երկար խորհրդարանը՝ իրան 1650 թուի վճռովը դրա հիմունք դրած էր, վերապահելով գաղթականաց վաճառատարութիւնն ու վաճառատարութիւն Անգլիական գրօշակին, բայց այդ դրութիւն կատարելագործուեց միայն 1660 թուին

միացուցած կարգ ու կանոններով, որոնց համաձայն համրուած ապրանքները կարելի չեղան էլ դուրս հանուել ուղղակի՝ ոչ մի օտար երկրի համար, հապա նախ պարտաւոր եղան ներս Անգլիատում բերուել, յետոյ նորէն յաղարկուիլ՝ ապրանքն մի նաւուց միւս նաւում փոխադրելով, իրանց վերջին տեղերը հանելու։ Արդէն այդ ապրանքների մասին յիշեցինք, նրանց միջում պարունակեցին յետոյ խահվէն, քաքաօն, համեմքն և մորթերը։ Բայց, բուսական չինելով սակեցնելուց դաղթականաց՝ վաճառելու իրանց ողջ բերքն Անգլիատում, նրանց պարտաւորեցին գնելու Անգլիացի վաճառականներէն և գործածան տերերէն իրանց դործածելու համար պէտք եղած բոլոր ապրանքները։ Այդ բանի համար 1663 ին սահմանեցին որ ոչ մի ապրանք, եւրոպական առաջբերութեամբ, չէր կարելի ներս տարուիլ Բրիտանական դաղթականներում ուրիշ կերպ, հապա միայն Անգլիական նաւահանգիստներէն և Անգլիական նաւերով։ Այդ կանոնի պատճառներում, ասուած է որ՝ մանաւանդ դրած էին բարեկամական յարաբերութիւնք առնել տալ թէ՛ դրսի և թէ՛ ներսի Անգլիացի հպատակների մէջ, դաղթականներէն աւելի կախուած անելով մայրաքաղաքէն աւելի արդիւնաբեր անելու իրան համար և թէ նաւարկութիւնն այդ բանով աւելի ապահով և աւելի դիւրագին էր լինելու, և թէ Անգլիա՝ այդ կերպով մի վաճառանոց էր լինելու, ոչ թէ միայն իր դաղթականաց բերքերին համար, հապա օտարների ապրանքներին համար էլ, և թէ մի սովորութիւն էր եղած բոլոր միւս աերութեանց, իրանց ձեռքով չահու ածելու իրանց դաղթականական վաճառականութիւն։

Այն ժամանակուայ մարդկանց անձնասիրութեան հոգին յայտնուում է այդ յանգի խօսելումը։ Դաղթականական դրութիւնը Անգլիատում այն-քան կատակելոյ գտաւ որքան որ Ապանիատում գտած էր։ Հիւսիսային Ամերիկու Բրիտանական դաղթականք, գտաց մի օր, Լօրա Փամամ "Մի ձիու պայտ անդամ չինելու իրաւունք չունին", և մի և նոյն ժամանակաշրջանի վերջերում, մի ուրիշ ազնուական Լորա պնդեց որ՝ Ամերիկեան դաղթականք, այնքան պատճառ ունին դալու և ծնուելու, որքան որ իրանց պէտքն Անգլիատում էին հագալու ու ճարելու՝ և թէ իրանք եւ առանձնակի իրանց համար էին դործածելու Անգլիոյ միջնորդութիւնն իրանց բերքերն տեղատրելու և չահու ածելու համար։

Հենց այդ օրէն հասկացում է, որ մայրաքաղաքի խնամատարութիւնը դաղթականաց վրայ, բոլորովին եսական եղաւ։ Թիստ և կրկնակի արդելադրութիւն 1632 և 1661 թուերին ծխախոտ մշակելու Անգլիատում, ուրիշ նպատակ չունէր, բայց միայն աւելացնելու այն ահագին տուրքերի արդիւնքն որ վաճառականութեանց վրայ ծանրանում էր։ Մայրաքաղաքին՝ հիւսիսային Ամերիկուց ստացած առաջին և կարեւոր ապրանքն եղաւ ծխախոտը. 1607 թուէն սկսած այդ ապրանքէն յաղարկութիւնք եղան։ Անդլիական կղզիներում չաքարի մշակութեան արած զարդացումն

էլ նոյնպէս թագին եկամուտներ առաջ բերեց, որ մաքս դրաւ նրա վաճառականութեան վրայ։ Անգլիա՝ Սպանիային աւելի լաւ կարող եղաւ հատուցանել և տեւական առաւելութիւնք դանել դաղթականացմէ քաղելու. մի և նոյն դովեստը կարելի է տալ նաև Ֆրանսիոյ, Հոլլանտիոյ և Դանիոյ։ Ուստի և այդ բոլոր աերութեանց դաղթականական դրութիւնը լաւ հետեւանք ունեցաւ։ Բայց այդ հետեւանքները տասնութերորդ դարու պատմութեան է պատկանում։ Մինչեւ 1688 թուի յեղափոխութեան՝ Անգլիա պատրաստում էր միայն մի դաղթականական աերութիւն լինելու Ամերիկում, և այնպէս այդ ժամանակէն հետէ՝ կամ թէ նաւարկութեան օրէնքը դնուելուց հետէ՝ որ նա այն տեղ բուսականին կարեւորութեամբ առաստուր արեց։

Նրա դաղթականական վաճառականութիւնը նշանաւոր է այն նկատողութեան արժանի հանդամանքով, որ այդ վաճառականութիւն, ինչպէս միւս երկիրներուն եղած էին պէս, արտօնաւոր ընկերութեանց ձեռն չմտաւ։ Այդն Անգլիացի կարող էր, նաւարկութեան օրէնքին տրամադրութեանց համաձայնուելով՝ ազատօրէն առուտուր անել Ամերիկու հետ։ Բայց Հուդսոնի խորշու ընկերութիւնը՝ որուն կարդ Բ. չնորհեց 1670 թուին այդ խորշու և նրան կից եղող երկիրներու վաճառականութեան մենաշնորհութիւն, երբէք կարող չեղաւ օրինաւորապէս օգտուիլ թագաւորական հրովարտակով, որն որ խորհրդարանի կողմէն հաստատութեան վճիռը ձեռք չէր բերած։ Այդ ընկերութիւն, իրօք վարեց այդ մենաշնորհութիւնը, պատճառ որ այդ հիւրատեաց երկիրներում մանաւոր մարդիկ չատ դժուարութիւն պիտի ունենային մարմընչելու՝ արդէն աէր եղած ընկերութեան հաւաքական կարողութեանց դէմ, որ հարկ եղած դդուշութիւնքն արած էր իր հաստատութեանը համար։ Նրա գլխաւոր դործողութիւնք մուշտակեղէնի վրայ էին, գլխաւորապէս Լրյան մորթու, որոնք ձեռք էր բերում Հնդկացոցմէ՝ փոխարէն հրացան, վառօդ, դանակ, օղի, ծխախոտ և այլն տալով։ Այն ընկերութեան վրայ հարկ էին դրած նաև՝ սկզբում՝ չարունակելու հիւսիսային արեւմտքով մի ծովային անցք դանելու։ Դանատան Ֆրանսիացիք առաջին էին չահու ածողներն մուշտակեղէնի առուտուրը։ Ուստի այդ ընկերութեան մրցումն անվերջ կռիւներ պատճառեց, որոնք քաղաքական մի կարեւորութիւն ստացան՝ Անգլիացոց իրաւապահանջումներէն Հուդսոնի խորշու երկիրների վրայ, որն որ իրանց ազգայնոցմէ միեն էր դալ այն ժամանակ, իրաւ է Հոլլանտացոց ծառայող, և որոնց վերջ տուեց Անգլիացոց օգտին Ուտրեխտի դաշնադրութեամբ։ Բայց սակայն այդ դատառներում մշակութիւն չէր կարելի, վասն զի բնութեամբ էին. հապա մի քանի օրինաց և ամրոց հաստատել այն տեղ բանց։

ԳԼՈՒԽ Է.

Անկլիացոց հատատութիւն Աբեւելեան Հնդկաստանաց.—Նոր ընթացողութիւն գանըցեցողութիւն.—Մուրատ.—Դիմադրութիւն ընկերութեան ղեկավարութեան դէմ.—Նահանգութիւն և ատաւելութիւն Հուլանդացոց.—Անկլիացոց գաշնակցութիւն Շահ-Աբբասայ հետ.—Օրմուզի առումը.—Անկլիացոց վճռականութիւն Պորթկէզաց.—Հայ.—Ազատ առուտուր Հնդկաստանաց հետ.—Գումարքն ընկերութեանը.—Հին արտօնութեան վերանորոգութիւն.—Բօմբէյէն սպացոմը.—Զայլ վճռականութեան սկզբնաւորութիւն.—Ընկերութեան դժբախտութիւնք ու ախտմոռնելը.—Զայլ երեք.—Սասքի դէմադրութիւն ընկերութեան դէմ հայր տալոմ.—Հնդկաստանաց վճռականութիւն նորին ազատ է հռչակում.—Մի երկրորդ ընկերութեան արտօնութիւն է ընդհանուր.—Նոր գործութիւնը հնաւ հետ և գնավաճառութեան վերահաստատութիւն.—Ռուսական ընկերութիւն.—Աբեւելեան ընկերութիւն.—Վճռական բախտախնդիր:

Ա.յդպէս Անկլիոյ գաղթականական գրութիւն կարգաւորելիս և հաստատելիս Նոր–Աշխարհում, Հին–Աշխարհումն էլ էր յառաջադիմութիւն անում, բայց այն տեղ տարբեր կերպ և ձեւ ստանալով: Յիշեցինք եղիսաբեթ թագուհու ժամանակում Արեւելեան Հնդկաստանու ընկերութեան հաստատութիւնը և նրա առաջին ճամպրդութեան յաջողութիւնը, յաջողութիւն, որ պէտք էր տպաւորում լինէր այդպիսի շահաւոր վաճառականութեան շատ աւելի մեծ թեւեր թռչելու համար: Սկզբներում, ձեռնարկուներն իստուկ հաշուն համար տեղի ունեցան ճամպրդութիւնքը որ ամեն անգամ հաւաքում էին պէտք եղած դրամագլուխը: 428,691 փաունդ Ստերլինկով մի ընկերական դրամագլուխ դրուեցն 1613 թուին եղաւ հատատ բաժինով: Նախընթաց տարին ձեռք էին բերած Դելհու Շահէն (Մոնղոլ խան) կարեւոր առաւելութիւնք, գլխաւոր ամենուն Մալաբարայ ափի վրայ, Սուրատում մի ֆաբրիկա վաճառականութեան դործակալաց համար մի տուն հաստատելու հրաման: Ա.յդ վաճառատուն գլխաւոր վաճառաքարն եղաւ մինչեւ Բօմբէյի ստացումը: Անկլիական ընկերութիւնն իր վաճառաշահութեան համար հաստատեց այդ դործակալաց տները, առանց ամենափոքր թագուն խորհուրդն ունենալու իրան համար ամուր տեղանք և նպաստաւոր կայանք անելու երկրակալութեան համար: Պօրտուկալցիք և Հոլլանտացիք էլ սկզբներում շատ աւելի բարձր դիրքաւորութիւնք չէին ունեցած, բայց յետոյ տեսնուեց՝ թէ ինչպէս չուռով մի մտնով հարկէն ստիպուած մի յարձակողական քաղաքականութիւն էին ընդունած ու աչխարհակալ էին եղած: Ա.յդ կերպով իրանց ձեռք բերած առաւելակշռութիւնը նախանձութեան հետ միացած, որ իրանց ներշնչում էր մի նորերեւան մրցում, շատ արդելքներ յարուց Անկլիացոց առջեւ առաջին ժամանակներում, շատ օգուտներին նրանց զրկեց և պարտաւորեցուց վերջին ու վերջը՝ իրանց նախորդներին օրինակին հետեւիլ:

Ջնայելով այն դժուարութեանց՝ որ Անկլիական ընկերութեան պատահեց, և այն կորուստներն որ հետեւարար կրեց, նոր վաճառականութիւն խաղային բաւական չահաւոր եղաւ իրան համար: Նա մայր քաղքում շատ քիչ օդնութիւն դտաւ և երբեմն էլ դիմադրութիւն: Ոչ թէ ծովորած չէին անցելում առանձին արտօնութեանց, հապա ընկերութեան արուած իշխանութիւն 30,000 փաունդ Ստերլինկ կանխիկ դրամ դուրս հանելու, մի մեծ յուզմունք պատճառեց: Իրաւ է, որ ընկերութիւնը պարտաւոր էր մի այնքան նորէն ներս բերելու: Բայց իր հակառակորդները պնդում էին որ այդ պարտան չէր կատարուած, և նոյն ժամանակ ուայ դազափարով ոսկու և արծաթի դուրս հանուելն էլ բոլորովին ձեռնասկար էր համարուած երկրին համար: Ընկերութիւնն ու իր կուսակիցք չէին կարող յաջողութեամբ պատասխանել առանց այդ սուրբ վարդապետութեան դպչելու, որ խափան էր լինում թանկագին մետաղներ դուրս հանելու: Նրանք չէին կարող ամենեւին հաւանձակել պնդելու, թէ և այդ մտքին գաղափարն էլ ունեցած լինէին թէ՝ դրամատարութիւն Հնդկաստան չահաւոր էր, այն պարզ պատճառով, որ նոյն այդ դրամով դնուած վաճառքներն աւելի մի արժողութիւն ունէին Անկլիաստ, դրամատարութիւնը չահաւոր էր, պնդում էին, վասն զի Հնդկաստանէն ներս բերուած վաճառքները նորէն դուրս էին տարում մեծ մտնով ուրիշ երկիրներում, որոնք նրանց համար շատ աւելի բարձր դումարներ էին տալի Հնդկաստանու դնուած դնուն վրայ:

Թող մեզ ներուի այս առթով առաջ բերել այս տեղ մի ընդհանուր դիտողութիւն: Տուրեւառիկ դրութիւնը, որ մի աերութեան նիւթական բարեբաստութիւնը նրա վաճառականութեան նպաստաւոր եղող կշռաքի վրայ է չափում, կամ թէ՝ իր վաճառատարութեանց արժողութեան իր վաճառաբերութեանց արժողութեան վրայ տրած յաւելուածով, երեւում է իր ծագում առած լինի այն մէջ բերուած առիթներէն այն հանգամանքում, որու ինդիրը դրամատարութեան նպաստաւոր լինելու վրայ է եղել: Ա.յդ ժամանակէն առաջ դրամատարութեան արդելադրութիւնը տրտաղան էր ինչպէս Աւեռաբանը: Յօրէն որ լաւ համարուել է սկսել այդ դրամատարութիւն, իբրև պատճառ տուող խակ և չինուած բերքերի յուզարկութեանց այնպիսի երկիրներում, որոնք դրամով էին վճարում: Առաջուայ նախապաշարմանց հետ բաղդատութեամբ, որ բացարձակ արդելադրութիւնն էր վճռել, հիմա այդ կերպ հայեացք ունենալը, մի տեսանելի ճանապարհ էր դէպի աւելի առողջ գաղափարներ: Ա.յդ նայեացքը Արեւելեան Հնդկաստանու ընկերութեան դործողութեանց չջնաջեմ չհնաց, հապա կամաց կամաց տարածուեց միւս տուրեւառութեանց մէջն էլ, և վերջն ու վերջը խորհրդարանումն էլ իր ազդեցութիւն բանեցուց, որ 1663 թուին մի վճիռ արձակեց, յետ առաւ հին արգելադրութիւնքը, և թոյլ տուեց ամեն մարդու դուրս հանել այնքան ոսկի ու արծաթ որ յարմար էր դատում:

Շահ-Աբբաս, Սօֆեանց յեղէն այդ պատերազմասէր իշխանն անկախ էր կացուցել այդ տէրութիւն Թուրքացէ, և նրան՝ իր առաջուայ փայլն էր տուած: Նա սիրում էր և յարգում խաղաղութեան արհեստները, քաջալերում էր ձեռարհեստներն ու վաճառականութիւնը և իր առաջաձեռնութեամբ օտարականներին իր երկրումն էր քաշում: Պահանջում մի հայկական գաղթականութիւն կազմուեց, որ չատ չուտով կարող եղաւ Պարսկաստանի ողջ առուտուրն տիրապետել: Շահը՝ չատ անգամ մասնակից եղաւ նրա ձեռնարկութեանց և նրան մեծ գումարներ տուեց:

Հայք, դրեթէ բացարձակ տէր եղած Ասիոյ յամաքային վաճառականութեան՝ իրանց գործողութիւնքը մինչեւ Եւրոպու դլխաւոր հրապարակներում տարածեցին: Մենք պատահում ենք այդ դարում Հայոց, Վենետկում, Գենովաւում, Մարսէյլում, Լիսբոնում, Ամստերդամ և Լոնդոնի մէջ:

Պօրտուկալցիք, որոնցում ահ ընկած այդ համբաւի վրայ, կամ թէ այն հին մրցողութենէն, որոնք կարծում էին հեռացուցած լինել միջնադարից՝ սկզբէն, Ալբուկէրկի ձեռքով (Պօրտուկալցի մեծ նաւորդ) ամեն տեսակ դժուարութիւն յարուցին: Արդելք դրին Պարսից որ ուրիշ տեղացիք ապրանք չառնեն, հապա միայն իրանց վաճառամթերներէն: Ապրանքների դները կարեցին, և թէ որ երբեմն թոյլ էին տալի նրանց երթալ բուն իսկ բերքն առաջ եկած տեղից ապրանք առնել, այդ՝ այն պայմանով էր՝ որ իրանց նաւերը դործածեն՝ բարձր վարձ և մեծ մաքս վճարելով: Այդ բռնութիւնը զայրացուց Շահ—Աբբասին: Իմանալով Անկլիացոց Հնդկաստան դալը և նրանց Մուրատաւում դործակալութիւն հաստատելը՝ ու Պօրտուկալցոց հետ էլ նրանց չունենալը՝ յանդգնաբար լինելով նրանց առջեւ, բռնաբարութիւն դործելով, նա առաջարկեց Անկլիացոց միասին պաշարելու Օրմիւզը: Անկլիացիք մի փոքրիկ տորմիղ ուղարկեցին և չատ չուտով 1662 թուին քաղաքն ստիպուեց անձնատուր լինելու: Մի հարուստ աւար յաղթողներին վարձատրութիւն եղաւ, և դլուխ եղած բանն էլ այն եղաւ որ Պարսից խորշում վաճառականութիւնն ու նաւարկութիւնը նորէն ազատ եղան: Օրմիւզը իր աւերակ վիճակէն նորէն չկանդնեց: Բայց մի ուրիշ հարեւան նաւահանգիստ մի քանի մղոն հեռուն՝ նրա տեղը բռնեց, կամ թէ Բէնտէր Աբբասին տնտեսուեց վաճառհամբար լինելու նոր վաճառականութեան Պարսկաստանու և Հնդկաստանու միջում: Անկլիացիք այդ խորհրդին դործակցեցան: Պարսիկք նրանց ազատ կացուցին հարկատուութենէ, և մաքսատուութեանն էլ կէսն փոխարէն՝ քչէն քիչ երկու մարտանու պահելու խոչդում և յետ մղելու Պօրտուկալցոց պատահական յարձակումները:

Բէնտէր Աբբաս, որ մինչեւ այն ժամանակ մի ողորմելի գիւղիկ էր ձկնորսարնակ, չնայելով իր չքնաղատեսն աւերակ տեսքին, մի չահաստան քաղաք եղաւ: Անկլիացիք բերում էին այն տեղ Հնդկաստանէն համեմք, խնկեղէնք, տաքդեղ և չաքար: Եւրոպիուց էլ արճիճ, չուխա և երկաթ:

Այդ դործողութիւնով իրանց արդիւնաւորած չահն աւելանում էր Հայոց վճարած նաւային բարձր վարձադնով, որոնք միչտ իրանց ձեռումն ունէին Պարսկաստանի ողջ առուտուրը: Հայք նմանապէս տէր էին եղած բամբակեղէն տարազագործութեան: Դրանք վեր էին կենում ու դնում Հընդկաստան: այն տեղ բամբակ էին դնում և բաժնում բամբակ մանողներին ու կտաւագործներին: Այդ ապրանքն այդպէս իրանց աչքի առաջը չինուելով Հայք յուղարկում էին Բէնտէր-Աբբասիէն Սպահան: Այն տեղից այդ կտաւները տարածւում էին տէրութեան ողջ դաւառներում, Օսմանցոց կայսրութեան մէջ և մինչեւ Եւրոպա, ուր պարսիկ անունն էին տալի Դօրօմանտէյ ասիի բերքերին: Փոխարէն այդ վաճառաբերութեանց՝ Պարսկաստան տալիս էր թանկագին առարկաներ, գլուխ ամենուն, մետաքս, որ այն ժամանակ ամենքէն աւելի էր փնտռուած, յետոյ բուրդը և փիրմանու այծեմազը, սուտակ (փէրուզէ), մարդրիտ, ոսկեդիպակ, դորդ, այծու կաշի, վարդեղուր, դեղային նիւթեր, ձիան լայն:

Անկլիական ընկերութեան կենդռան վիճակը մի փոքր լաւացաւ Գրոմուէլի Հոլլանտացոյ վրայ տարած յաղթանակներով: Սակայն պաշտպանը երեւում չէ մի նշանակութիւն տուած լինել Հնդկաստանու ստացուածոց կարեւորութեան: Նա՝ եղած ձլտաններու համար փողով հատուցում առնելով գոհ եղաւ: Էլ այնու յետոյ լինդիր չեղաւ Եւրոպա կղզուց և Մոլլուկեան կղզիներուց անկլիական դործակալութեանց Անկլիացոցմէ առնելու մասին, և Հոլլանտացիք ամեն տեսակ փախուստներով պարապն հանեցին Պօրտուկալցոց ըստ պայմանադրութեան յետ դարձնելու: Սակայն մի բարոյական արդիւնք ձեռք բերուած էր: Էլ Հոլլանտացիք պատչաճ չդատեցին բրիտանական հպատակների հետ մի և նոյն լրբութեամբ վարուելու: Նորէն լինդիր եղաւ ընկերութեան պահպանութեան մասին Գրոմուէլի ժամանակ: Եղիսաբէթ թագուհու նրան չնորհած հրովարտակը խորհրդարանի կողմէն ընդունուած չլինելով, կորուսած էր իր վաւերականութիւն կարող Ք. ու մահուան և թագաւորականութեան չնչման հետ: կարող թագաւորն լինը տուած էր 1635 ին Մըր վ. Գուրջնի և դեռ ուրիշ մարդկանց Հնդկաստանու այն կողման հետ առուտուր անելու հրամանն, ուր ընկերութիւնը չարունակ մի յարաբերութիւն չէր անում: Նա՝ այդ իշխանութիւն տալուն այն պատճառն էր բռնում թէ ընկերութիւնն իր պարտքը չէր կատարում, թէ իր յատուկ չահերու մասին էր դրաղում և ոչ թէ թագին եկամտի մասին, մի խօսքով չէր կատարում իր արտօնութեան պայմանքը:

Գուրջն ընկերութիւնը գործի ձեռնարկեց, ու կարոլ թագաւորութեան վերջին տարիներում, առանց մի մեծ յաջողութեան Հնդկաստանի առուտուրն արեց: Բայց մի պահիկ, Համաբակապետութեան ժամանակ վաճառականութիւն ազատ եղաւ և անպայման կերպով դուներն էլ բաց՝ մասնաւոր մարդկանց չահագիտութեան: Այդ բանը՝ Հոլլանտոյ հետ եղած պատերազմէն առաջ տարիներում եղաւ 1654 էն մինչ ի 1656:

Ընկերութիւնը կարող չեղաւ ընդունել տալ իր հրովարտակին օրինաւորութիւնը: Եւ հաստատակաց կարծիքն հակառակ էր այդ գործին վերահաստատութեան: Պատճառ՝ որ արդէն ճանաչուել էր՝ որ ազատ մրցողութիւնը ընդհանուրի չահն աւելի լաւ էր դոհացնում: Ոչ թէ միայն Հնդկաստանու ապրանքները չատ աւելի մեծ քանակութեամբ դուրս էին բերուում, հապա նաև չատ աւելի աժան գնով էին, և բանն այն էր որ Ամստերդամն անդամ այդ զգուշ էր և Հոլլանտական ընկերութիւնն էլ սարսափում իր մենաշնորհութեան մասին, թէ որ վաճառականութեան ազատութիւնն էլ ճոպած էր լինելու Անգլիաում, էլ իր բանն բուսած էր: Առաջ էին բերում իրաւունքով Ամերիկան, ուր վաճառականութիւնը նաւարկութեան օրէնքով երկրին մի մենաշնորհութիւնն էր հրատարակուած և ոչ թէ մի ընկերութեան: Այն լուսաւոր կարծիքը, որ մի դար առաջ էր ապահովացնելու Հնդկաստանու վաճառականութեան այս օրուայ ունեցած զարգացումը, դժբախտութեամբ արժողութիւն չունեցաւ: Այն պատրուակով որ ընկերակցութիւնն մի հարկ էր Հնդկաստանում մի քաղաքական դօրութիւն առաջ բերելու համար և գէմ դնելու որ և է պատահական պատերազմի, ընկերութեան հին հրովարտակը վերանորոգուեց 1657 ին, յետոյ Թագաւորական ցեղի վերահաստատութեան՝ 1661 ին կարող Բ. էն էլ հաստատուած, որ նորէն նրան քաղաքական իրաւունքներ չնորհեց և հրաման՝ խաղաղութիւն և պատերազմ անելու, ամուր տեղեակներ չինելու, քաղաքային և պատժական դատավարութիւն անելու և այլն: Բայց ինչպէս որ այդ հրովարտակն էլ նմանապէս դուրկ էր խորհրդարանական հաստատութենէն, գանուեցան մանաւանդ անձինք, որոնք ընկերութեան վարելու իշխանութեան չրջանում մի տեսակ մաքսանենգական վաճառականութենով պարապեցան: Մանաւանդ չահագէտ մարդիկ, իրանց ողջ գործունէութիւն բանեցընելով՝ կատարութեամբ էին հետամուտ իրանց օրսին և ընկերակցութիւնը էին կարգաւորում օրէնքէն խոնարհելու վտանգն աչքն առնելով: Ծովու վրայ և ճանապարհութեան միջում իրանց նաւերն մի ամբողջ ապահովութիւն էին վայելում, պատճառ որ ընկերութիւնը՝ մանաւանդ մարդկանց վաճառականութեան դէմ գործելու իրաւունք, միայն նրանց յանցանքի վրայ բռնելիս ունէր: Ուստի իր մենաշնորհութիւնը հեռու էր մի ամբողջ բան լինելուց: Այդ բանն էլ եղաւ վերջապէս, բայց 1688 ի յեղափոխութենէն յետոյ խորհրդարանի մի օրէնքով:

Այդ հանդի պայմաններում ընկերութեան վաճառականութիւնը կամայ կարող էր աւելնալ: Հոլլանտացիք չատ աւելի մեծ կարողութեան տէր՝ և պինդ հաստատուած իշխանութեամբ, ամէն տեղ նրա գործողութեանց առաջ կնճիռ և դժուարութիւնք էին հանում, երբ այդ մասին աւելի էին դանում: Բնիկ իշխանաց միջում անիշխանական կուսակներն էլ նպաստաւոր չէին մի խաղաղ և կանոնաւոր զարգացողութեան համար: Մի թանկագին ատացում եղաւ ընկերութեան համար Բօմբէյ

կղզին, որն որ նրան տրուեց 1668 ին կարոլ Բ. էն, որուն իր կինը՝ Պորտուկալցի իշխանուհի՝ իրրեւ օժիտ էր բերած: Այն օրէն Բօմբէյ Հընդկաստանու ամենակարեւոր տեղն եղաւ, և Սուրատի տեղը բռնեց իրրեւ բնակատեղի կառավարչին: Կարոլ Բ. ի թագաւորութիւնը նշանակում է, ընկերութեան տարեգրերում, իրրեւ դարագլուխ սոյդ ակզբնաւորութեան չայի առուտուրին: Չայի առաջին յիշատակն եղած է մի պինդագրում՝ ուղղուած 1667 ին Բանտամում հաստատուած գործակալին, նրա միջում խնդրուում է յուզարկել հարիւր լիտր ընտիր չայ Անգլիա: Այդպէս է եղած ծագումն մի առուտրի, որու կարեւորութիւն պէտք էր չուտով անհուն լիներ Անգլիոյ համար, և առանց որու Արեւելեան Հնդկաստանու ընկերութիւնը, խիստ չատ ժամանակէ հետէ դադարել էր գոյութիւն ունենալուց, գոնէ իրրեւ համապատասխան վաճառական:

1680 թուին Հոլլանտացիք համարձակեցան մի բռնաբարական գործ գործել՝ բոլոր Անգլիացոցը Բանտամէն դուրս հանելով: Ընկերութիւնը, մոքում դրեց այդ թշնամութեան փոխարէնը հատուցանելու և մի ահագին տորմիղ պատրաստեց: Բայց կարոլ Բ. որ միչտ փողի պէտք ունէր, ազգային պատիւը վաճառեց՝ երկու միլիոն երկու հարիւր հազար ֆրանքի համար՝ գող եղած Հոլլանտացոց, և արչաւանքին դէմ կեցաւ: Այդ անօգուտ պատրաստութենէն սպառուելով, ընկերութիւնն իր նաւերը տարաակ կամ անբեռ Հնդկաստան ուղարկեց այն հրամանով, որ փոխադրվի բեռնաւորուին:

Ինչպէս որ մինչեւ այն օրն հաւատարմութեամբ իր խոստմունքն ու յանձնարարութիւնք կատարած էր, հեչտութեամբ ձեռք բերեց ութ միլիոն ֆրանք արժողութեամբ ապրանք: Բայց նա՝ պիտի անարժանօրէն փոխարինէր իրան եղած վստահութիւնը: Չայդ, երկու եղբայրները, մինը անօրէն Լօնտօնում, միւսը կառավարիչ Բօմբէյում, խօսք մէկ ալ՝ Հնդիկ պարտապահանջներին ամենալիրը կերպով խաբելու: Նրանցմէ բոլորովին անհիմն պահանջներ արին, որոնք մերժուեցան, ինչպէս որ Չայդ եղբարք սպասում էին: Այդ մերժումը պատճառ բռնեցին 1688 ին Հնդիկների բոլոր նաւերը գրաւելու, որոնց մէջ և մի քանիսն էլ չորեն բարձած չատուկ Մոնղոլի խանին համար: Այդ չլսուած չարչատութեան լուրը ողջ Հնդկաստանում սաստիկ զրգռութիւն տարածեց և Անգլիացու անունն էլ աւելի եղաւ: Ընկերութեան չարկին ու վարկին բանը պրծաւ, իր առուտուրն կանգ առաւ, Մոնղոլների Օրանկ-Զէբ խանի վրէժխնդրութիւնն իրանց խիստ մեծ դումարի նաւեց, մի չատ նաւեր էլ վրայ տալով և այդ խանի հետ խաղաղութիւնն էլ կատարուեց մի խոշոր խոնարհութիւն տուժելով, ծնկան վրայ չոք եկած՝ հրապարակում ներողութիւն խնդրելով:

Ֆրանսիոյ և Անգլիոյ միջում ծագած պատերազմ, Ստուարդների ընկնելուց յետոյ, տարածուեց մինչեւ գաղթականաց երկիրներում: Եւ արեւելեան Հնդկաստանի ընկերութիւնը զգալի կորուստներ կրեց Ֆրան-

սիայի ծովահէնների կողմէն։ Սակայն Մոնղոլի մեծ խանի հետ հաշտուելուց յետոյ, նա յաջողուեց իր բռնած տեղերում ինքն իրան պահպանել։ 1680 ին բէնկալաում երկիրներ ձեռք բերեց և կալկաթան հիմնարկեց։

Ընկերութիւնն իր յատուկ երկրումն էր որ՝ իր ամենաբուռն հակառակորդներն էր դանում։ Ազգային ձեռարհեստաւորներն և մանաւանդ կատէղէն ձեռարհեստաւորները, որոնք այդ ժամանակամիջոցում զարգանում էին Իռլանտիաում և Սկովտիաում, ձայն վեր կացուցին Հնդկաստանի բամբակեղէն կտաւեղէնի վաճառաբերութեան դէմ և նրա դէմ արգելադրութիւն պահանջեցին։ Ռուսիոյ և արեւելեան ընկերութիւնքն էլ նմանապէս վեր կացան ու պնդեցին թէ իրանք էլ են ղրկանք կրում իրանց երաւանց մէջ, պատճառ մէջ բերելով իրանց դործերի նեղութիւնը։ Արեւելեան Հնդկաստանի ընկերութեան անօրէնութեան ամենամեծ ապացոյցն էր վերանորոգում։ Ազատութեան հոդին, 1685 թուի յեղափոխութեան ծնունդը, առհասարակ հակառակ էր մի քանի մարդկանց չահուն համար եղած սահմանափակութեանց, և՛ել ընդունում չէր՝ ինչպէս ընկերութեան մենաւաճառութիւնն՝ այնպէս էլ թագաւորութեան։ Մտերումը բերին այն մի քանի տարին, որու միջոցին Հնդկաստանի վաճառականութիւն ազատ էր եղած և իր արդիւնաբերութիւնն էլ յայտնի. վերջն ու վերջն ասացին թէ ընկերութիւն չէր կարող պահանջող լինել մի առանձնակի արտօնութեան, որովհետեւ իր հրովարտակը դեռ ատացած չէր խորհրդարանի հաւանութիւնը։

Միւս կողմէն ընկերութիւնն իր կատակիցներն ունէր և մեծ չանքեր էր անում իր հակառակորդներին դէմ կենալու։ Իր անդամներում քաղքի (Սիտի) ամենահարուստ վաճառականներին ունենալով և կրծոն տալու կամ կաշառելու ամենադդու միջոցներն էլ ձեռնին ունենալով՝ երկու միջոցներն էլ հաւատար դործածեց։ Այդ կերպով եղաւ որ մի դատ չահեց, որն որ ինքն էր բաց արել Հնդկաստանի հետ եղած առանձին դործ, և ձեռք բերեց կառավարութենէն 1693 ին իր արծաթութեան մասին և ձեռք բերեց կառավարութենէն 1693 ին իր արտօնութեան կրկնանորոգութիւնը։ Բայց դործն յետադայ տարումը խորհրդարանի առաջն բերուելով՝ նա ընդհանուրի կամքին միտ դնելով՝ ազատ հռչակեց ամէն Անկլիացի հպատակների համար արեւելեան Հնդկաստանի հետ առուտուրը, մի և նոյն ժամանակ էլ թող տալով, որ ընկերութիւնն էլ իր դործերն ունենայ։ Բանը մնաց այդ վիճակում մինչ 1698։ կառավարութիւնն որ վաղի համար մեծ նեղութիւն էր կրում մի վոխ լնդրեց ընկերութենէն։ Մինչդեռ դա դժուարութիւն էր ասնում, մի քանի վաճառականք՝ որ ընկերացած էին իրար հետ Հնդկաստանու առուտուրը չահու ածելու, մեծ փոխ ցոյց տուին և ուրիշ ոչ մի պայմանք չէին խնդրում, միայն թէ իրանք էլ իրաւունք ունենան իրրեւ արտօնատէր ընկերութեան։ Ազատ վաճառականութեան կատակիցները

պահանջեցին, բայց կառավարութեան ստիպողական և չատպողական չահն ամէն դժուարութիւն մի դէն դրեց։ Նոր ընկերութիւնը մի արտօնութիւն ձեռք բերեց օրէնսդրապէս, երկու համապատասխան ընկերութիւն երկուսն էլ օրինաւորապէս ստրքուած տեսնուեց, երկուսն էլ մեծամասն ունենալու մի առանձնակի իրաւունք մի և նոյն ատացուածքի վրայ, սկզբում երկու ընկերութիւնք իրարու վրայ ամենաբուռն նախանձ և ատելութիւն ցոյց տուին, բայց իսկոյն հասկանալով, որ այդպէսով ուրիշ բան չէին անելու վերջապէս, հապա իրանց կործանումը գլուխ հանել և ազատ վաճառականութեան յաղթանակն ապահովացնել, որոշեցին 1702ին վերջ տալ իրանց կռիւներուն ու հաշտուել ու ձուլուիլ մի միայն և մի և նոյն ընկերութեան մէջ Մլուցած ընկերութիւն Անգլիացի Վաճառականաց Արեւելեան Հնդկաստանու Վաճառականութեան համար անուանով։ Նոյն տարուայ խորհրդարանի մի օրէնքը նուիրագործեց այդ դործութիւնը։

Մենաւաճառք յաղթանակը տարած էին և մի դարուց աւելի պէտք էր անց կենար, մինչեւ որ վաճառականական ազատութեան կորուսած դատը մի փառաւոր վրէժ հաներ, ինչպէս այդ մասին՝ նոյնպէս և ուրիշներին։ Մի այդպիսի վանդոլական հոդի տիրող ժամանակում, մեզ զբաղեցնող ժամանակին նման, այդ եղած ազատական չանքերը մի հետաքրքրական միջնավէպ են կազմում։

Միւս առեւտրական ընկերութեանց մէջ Անկլիատում, պէտք է յիշել, բայց ի Ռուսիական ընկերութենէն, որու մասին Ռուսաց առեւտրական պատմութեան մէջ է խօսուած, Արեւելեան երկիրների ընկերութիւնը։ Եղիսաբէթ թագուհու ժամանակ հիմնուած, չատ անգամ ձեռք բերեց իր արտօնութեան նորոգութիւնը։ Իր դուրս հանած վաճառքները գլխաւորապէս բրդեղէն կերպասներ էին, և այնքան մեծ քանակութեամբ որ կարող էին վճարել դրան փոխարէն առնուած մեսուքսեղէն կերպասները, ուղտու բուրդը, բամբակը, մոմը, դորգը, մրգերը, դազարը և ուրիշ դեղեր և խնկեղէնք։ Անկլիա մրցում մղեց վենետկեցոց հետ կոստանդնուպօլսում և իզմիրում և այն տեղերում երկար ժամանակ ֆրանսացոց ամպի տակով առաջ, մինչեւ որ այդ վերջինք Գոլբէրտի ժամանակ կորուսած ժամանակը ձեռք բերին այն ժամանակէն՝ երբ նուրբ և թեթեւադին կերպասներն որ ֆրանսիա չինում էր Սպանիոյ բրդով, գլբաւեցին Արեւելքի առուտուրը։ Մարսիլիոյ դիրքը չատ աւելի առաւելութիւն ունէր, քան թէ Լօնտոնինը, մի այդպիսի առուտրի համար, և Անկլիական ընկերութիւնն 1744 թուին խորհրդարանին առաջը հանած մի տեղեկադրում խոստովանեց իր նուազութիւնն ու տկարութիւնը, բայց և այնպէս մաքառեց Արեւելքի առուտուրն ազատելու առաջարկութեան դէմ։ 1753 թուին իր հրովարտակին չահերը, մինչեւ այն ժամանակ Լօնտոնի վաճառականաց մէջ ամփոփուած ուրիշ հրապարակների վաճառականաց վրայ էլ տարածուեց, որ և է Անկլիացի կարող եղաւ ընդունելի լինել ընկերութեան մէջ մի սահմանաւոր դումար վճարելով և

առաւտուր անել Բրիտանական ամէն նաւահանգիստներէն արեւելքի հետ, բայց այդ փոփոխութիւնը քիչ հետեւանք ունեցաւ։

Մի քանի ապրանքների վերաբերող մենաւաճառութիւնք, ինչպէս որ դահը սովորութիւն ունէր ըստ իր կամքին իր շահուն համար հնարելի, բողոքովին ջնջուեց հասարակապետութեան ժամանակ և վերահաստատութիւնը (Ստուարդներին) չհամարձակուեց դրանք վերահաստատել։ Բրդեղէն կերպասների վաճառատարութեան դէպ ի Գերմանիա և Ստորին Նահանգները միայն մեծ առանձին արտօնութիւն բախտախընդիր վաճառականաց ընկերութեան, որուն հրովարտակը շատ անգամ վերանորոգուած էր և ընդարձակուած 1617 ին և 1643 ին։ Այդ ընկերակցութիւն կազմուած էր մօտ չորս հազար անդամով, վճարելով մի տուրք՝ որ նախ 32 փաունդ Սաերլինկ, յետոյ 100, որոնցմով մի դրամագլուխ էր կազմուած և հասարակաց ծախուց գիմանալու համար, ամէն մարդ, վերջապէս գործ էր տեսնում իր յատուկ հաշուին։ Գրամ ուելի ժամանակ, Հրեայք դուրս քշուած 1290 թուէն հետէ հրաման առացան Անկլիա՝ մնալ, Լօնտօն ուելի գեղեցիկ դուրս գալով մեծ հրդեհի աւերակներէն 1666 ին, բարձրանալով էր բարձրանում, քանի որ Ամստերդամ ցածրանալով էր ցածրանում։ Աշխարհի եւրոպիոյ ամենէն մարդաշատ քաղաքը տասնեւեօթնեւորդ դարու վերջին մօտ էր լինելու տիեզերքի վաճառականութեան դուխս քաղաքը։

ԳԼՈՒԽ Ը.

1688 թուի յեղափոխութեան երեւոյթը Անկլոյ վաճառականական էկոնոմիական մասին։

Անկլիան՝ 1688 թուի յեղափոխութենով՝ իր մեծագոյն հասակին անցաւ հասաւ հասակի արիականութեան և անկախութեան մէջ։ Ան ժամանակ աւարտուեց արդարութեամբ այն հոյակապ չէնքը, որուն հիմքերը եղիսաբեթ թագուհին էր դրած, իրաւանց առաջարկադիր (բիլլ) ամբողջացուց մեծ հրովարտակը կամ թէ Օրինադիրքը, որ մի ճշմարիտ ազգային յաղթանակ եղաւ, ազատելով հասարակ ժողովրդին միջին դարերու վերջին արդելադրութեանց լուծէն, ապահովացնելով նրան հաւասարութեան առաւճանը երկրի երեսփոխանութեան մէջ, և նրանց բարձրացնելով անգամ Լօրտերի վրայ հարկ և տուրք քաւէարկելու առանձնակի իրաւունքով։ Ցզագրութեան ազատութիւնն ու անձնապաշտպանութեան օրէնքը հաբեաս կորպոս (տէր եղիր մարմնոյդ) իրանց անբընաբարութիւնն երաշխաւորած տեսան, ոչ թէ միայն բուն օրինադրովը՝ հապա հասարակաց ոգւովը։

Այդ ազատ կառավարութիւնք (սելֆ կօվերնմէնդ) ինքնավարչութիւնք մի այնպիսի ժամանակում երբ հաստատուն ցամաքի ազգերն դեռ չէին ներսնէն բռնած էին մեծ ածուում, յետ չէին կարող ծնալ տնտեսական ամենամեծ արդիւնքներ ունենալուց, մի երկիր, ուր ամէն մարդ կարող էր ընտրել իր ասպարէզն և հետեւել նրան ազատօրէն, ուր սեպհական-նութիւն և մարդիկ կամարար իշխանութենէն պատսպարուած էին, ուր ամէն կարիք և պէտք գործի և միջնորդ էին գտնում, ուր քաղաքային տնօրէնութիւնը՝ հասարակայ կարծեաց հակողութեան և ազդեցութեան ներքեւ էր դրուած, և ուր օրէնք և կանոնք, սարք և կարգ ազգային կամեցողութեան ցոյցն ու նշանն էր, մի այդպիսի երկիր պէտք էր որ՝ իշխանութենից մասին իրական բարեյաջողում և զօրութեանց ֆնասին էլ միաբան հաւասարակշռութիւն ընծայել։ Մարդուս ազատութիւնն այդ երկրում, ընկերականութեան և վարչականութեան պետին իրաւանց հետ միաբանուեց, և թէ որ երբեմն վէճեր ու կռիւներ են վեր կացել, միշտ դրանք ընդհանուր շահու և օգտին համար են վերջացել, տարան և ժամանակին պահանջմանց՝ իմաստուն զիջողութիւնք անելով։

Անկլոյ սահմանադրութեան նման մի սահմանադրութիւն ամենազգուշութեամբ ներդործելու համար էր չլուսած վաճառականութեան ընթացքին և զարգացման վրայ։ Ոչ ոք այդ մասին ապացոյց պիտի կամենայ, առեւտրական քաղաքականութիւնը հաստատուն ցամաքի վրայ երբեմն տէրութենական մի բան համարուած՝ Անկլիաում ազգային կամ երկրային գործ եղաւ։ 1688 էն առաջ, իրաւ է որ, անկլիական վարչականութիւնը շատ օգտակար բաներ էր արած երկրի նիւթական յաջողութեան համար, բայց պէտք է նկատել այդ եղած բաներում աւելի անձնական խորհրդածութիւնք քան թէ ազգովին կամքով եղած կանոնաւոր դրութիւն։ Այդ բաները՝ թագաւորների և իրանց պաշտօնեաների հայեացքին կամ կամքին համաձայն փոփոխուում էին։ Անկլիաում ազգային երեսփոխանութիւնն Ստուարդների դուրս քշուելուց յետոյ կարող եղաւ մի գործօն մասնակցութիւն ունենալ օրէնսդրութեան մէջ՝ վաճառականութեան, ձեռարհեստաւորութեան, երկրագործութեան և նաւարկութեան մասին, և պատուէր տալ սահմանադրապէս՝ մի պետական վարչականութեան անդամ, մի առեւտրական աշխարհավարութիւն ազգին շահուն համաձայն։ Եւրոպու ոչ երկիրը, այդ ժամանակում, այդպիսի մի տեսարան էր ցոյց տալի։ Հոլլանդան վայելում էր մի համանման ազատութիւն, բայց պակասում էր նրանից միութիւնն ու մեծութիւն, և Ֆրանսիան՝ որ միութիւն և մեծութիւն ունէր, չունէր այն ազատութենէն, որու տեղ, ոչ մի տէրութենական մարդու ամենաբարձր հանճարը չէր կարող բռնել երկար ժամանակ։ Տեսէ՛ք ի՞նչպէս, Գօլբէրտի փառաւոր արարքները փճացան։

Կուլիելմ Գ. նոր հարստութեան հիմնադիրը բերում էր իրան հետ Անկլոյ գահի վրայ վաճառական հասարակապետութենէն, որու մէջ էր

էր կեանքն անց կացուցած, քաղաքային անտեսութեան մասին ողջ հայեացքները, որոնք բնականօրէն հեշտացուցին ընդունելու միջոցները ծըրանոխոյ մրցողութիւնը մի դէն կանգնեցնելու համար և գրաւելու ծովերու վրայ մի գլխաւորութիւն, որ էլ արդէլքների չէր պատահելու։ Սպանիոյ և Պօրտուգալի ծովային զօրութիւնքը չատնց էր կործանած, Հոլլանտիոնն էլ ակարացած էր։ Եւ որովհետեւ ծովերու վրայ տիրապետութիւնն ապահովացնում էր աշխարհի վաճառականութիւնը, Անգլիա կարող եղաւ յաջողութեամբ սիրել թէ՛ միւսն և թէ՛ միւսին վրայ, և մնէք պիտի տեսնենք նրա միջում, ատանութերորդ դարու ընթացքում, որ վաճառականութիւնը անունդ պիտի ասյ դանձուն, դանձը ծովային զօրութեան, և ծովային զօրութիւնն էլ անդադար պիտի պարապի նորանոր յաղթութիւնք ատնել առեւտրի և գանձուն օգտին համար։

Երկարատեւ ծովային և ցամաքային պատերազմները, որ 1688 թուի յեղափոխութեան վրայ հասան, նախընթացների վրայ ատելի նշանաւոր եղան առեւտրական արդելադրութեամբ։ Մի ընդհանուր պաշարում, նման նրան, որ տեղի ունեցաւ մեր դարում, այդ ժամանակ Անգլիա և իւր դաշնակիցք յատաբարձրին Ֆրանսիոյ դեմ։ Լուդովիկ ԺԴ-ի աշխարհակալութեան ծարաւն ու անսանձ փառամոլութիւնը, որ բացարձակ հետամուտ էր լինում Եւրոպում՝ տիեզերական միապետութեան, պատճառ եղան որ՝ բոլոր միւս տերութիւնք իրար հետ միացան, որոնց նոյն և մի վտանգն էր սպառնում։ Անգլիան և Հոլլանտան, որ իրան հետ էր միացած մի և նոյն թագաւորի անձնում, գլխաւոր հարուածը կրած լինելով, քաղցին նմանապէս պաշտպանութեան գլխաւոր առուելութիւնքը, և երբ՝ Ուդրէխտի հաշտութիւնը Ֆրանսիոյ ամբարտաւանութիւնը խանարհեցուց, Եւրոպա միաք չարեց ամենեւին, իր անհետաքրքրութեան մէջ, որ քաղաքական հաւասարակշռութիւնը Մանշի նեղուցի դէմը հաստատած՝ նորէն խանգարուած էր նեղուցի դէնը օգուտ տալու համար, և թէ Ֆրանսիոյ վտանգութեան մի սանձ էր գրուած Անգլիոյ առեւտրական յուժին ներքեւ ընկնելու համար։ Հակառակ նաւատորմը (Ֆրանսիոյ Հոկ հրամանդանի և ամրոցի մօտերումը տեղի ունեցաւ, ուր Ցուվիլ Ֆրանսիոյ ծովակալը չարաչար յաղթուեց Անգլիական և Հոլլանտական միացած տորմիղներէն) 1692 ին հետեւանք ունեցաւ Անգլիոյ նաւային գլխաւորութիւն և այդ տերութեան մշտնջենաւոր դաշնակցութիւն Ֆրանսիոյ անհաշտ թշնամի Աւստրիոյ հետ, մի և նոյն ժամանակ ապահովելով նրա քաղաքական աղդեցութիւնն Եւրոպա վրայ։

ԳԼՈՒԽ Թ.

Տօրհեորհնի պրօրնեան աղբեցութիւն. — Անգլիան յեհաբնեհոնների յահաջդիմութիւն. — Բրդեղնի տարաշխարհութիւնը. — Կահաեղնի յեհաբուհեսորնութիւնը, նրա ներտաձութիւնն իւլանտհահամ. — Մեհատեղնի յեհաբհեսորնութիւնը. — Աբեհելան Հնդկահոռնոտ կերպասներին արգելադրութիւն. — Բամբակեղնի տարաշխարհութիւն Մանչեստրամ կամաց կամաց ե ընդգանում. — Մեխենաների ատաջին գործածումը. — Մեհաշխարհական յեհաբուհեսորները Բիրմինկհամ և Շեֆիլդ։ Թղնաշնութիւն, պատկաշնութիւն և եհեցեկցութիւն, Ռոբոկոտ. — Աշհատութեան բաժանում վաղուց գործածուած. — Նեղէն ատեատի աճեցած կարեւորութիւն. — Մատենի եկամտի վճռատեղութիւնքը և վճռատատարութիւնեան ցուցակները. — Այդ ցուցակների բացատրութիւն։

Առեւտրական դրութիւնն որ Գրոմուել հաստատած էր նաւարկութեան օրէնքով, հէնց այդ ժամանակէն սկսաւ ընդարձակ և անընդհատ գործածութիւն ունենալ։ Աշխարհի ամէն մասում տարածուած երկիրների չնորհիւ՝ Անգլիոյ վաճառականական նաւարկութիւնը բաւական զօրութիւն առաւ, որպէս զի Հոլլանտիոյ մրցողութիւնն էլ կարող չլինի ջնաս հասցնել նրան։ Այնքի վտանգութիւնն ու ձկնորսատեղիք, որոնք հրաշալի զարգացում ստացան, նրա համար աքանչելի գպրոցներ եղան։ Եւ թէ որ, մեր ուրիշ տեղ առաջ բերուած պատճառներով, նաւարկութիւնը չէր կարող նաւարկել այնքան ցածր գնով, որքան որ Հոլլանտական նաւարկութիւնը, նա բաւական գործ գտնում էր մի յատուկ վաճառականութեան մէջ, որմէ դուրս էին քշուած ամէն օտար դրօշակները։ Թէ և Անգլիացիք սակաւ էին կարող լինում անուղղ տալ այդ յատուկ վաճառականութեան և աճեցունել այն, որու առաջ իրանց դէս ու դէն ատացած երկիրները մի ընդարձակ դաշտ էին բաց անում, կարող էին, առանց ջնասու, թողնել Հոլլանտացոց առաջին կարգը միջնորդական վաճառականութեան մէջ։ Կարեւոր բանը՝ վտանգակութեան առարկաների քանակութիւնն ու արժողութիւնն ատելացնել, մայր քաղքում տարաղաղ գործ ձեռնարհատուներին դրդիռ տալ և գաղթականաց մէջ էլ՝ երկրի բերքերի առաջ բերումը դրդռելն էր։ Ցուրեւատիկ դրութիւնն այդ ժամանակում կատարելապէս ծառայում էր այդ երկու նպատակներին։ Անգլիա անձնաձոյ եղաւ այդ բանին, առանց ինքն իրան բռնելու մի ամբողջ համոզումով, և նա՝ ինքն իրան չհկաւ և իր միտքը չփոխեց, մինչեւ որ իր ամենատանդին գաղթականաց ձեռքէ գնալը չտեսաւ այն անդունդքը, որու վրայ նա հասել էր։

Իր զանազան ձեռնարհատներում, բրդեղնէի տարաղաղործութիւնը, որ ամենէն հինն էր և երկրին ամենէն յարմար եկողը, դեռ առաջին կարգումն էր։ Թորհրդարանի առջեւ հանուած մի տեղեկագիր 1739 ին՝ տարաղաղութեամբ պարապող անձանց թիւը մէկ ու կէս միլիոն էր

հաշտում։ Յօրէն՝ որ Սպանիոյ բուրդը մեծ քանակութեամբ դուրս էր հանում, Ֆրանսիա ու Բելճիկա, իրաւ է, իրանց գնու չափաւորութեան շնորհիւ՝ մի ծանր մրցողութիւն արին Անկլիոյ դէմ օտար չահատաններում, մանաւորապէս Արեւելքում։ Գերմանիա էլ՝ ուր Սաքսոնիոյ կոտոշաւոր ցեղը կատարելութիւն էր առացած՝ 1763 թուին Սպանիոյ Գէնոա ոչխարների մուտ դանելուն վրայ, սկսաւ աւելի նուրբ տեսակէն կերպաներ տարազատրծել։ Բայց և այնպէս Անկլիա իր գերազանցութիւնը պահում էր։ Ֆրանսիացի Հիւկնօտների (Բողոքականների) և Հոլլանտացի գործաւորների գաղթականութիւնն Անկլիաում, որոնք վարժ և կերթ էին գլխաւորապէս ներկելու և պատրաստելու արհեստում, նրա գործառնները մի հաստատուն յառաջման վիճակում պահեցին։ Բրդի դուրս ծառուները մի հաստատուն չափով էին, որ 1660 թուին ընդունուեց առանց ամենափոքր զիջողութեան, պահպանուեց. սակայն բնիկ բերքը չատ հեռու էր բաւելուց։ Յօրէն՝ որ ոչխարներ էին մեծացնում դրանց մեկն օգուտ քաղելու համար, բուրդն իր տեսակը կորուսած էր։ Այդ պատճառով հետզհետէ սակաւղական եղաւ օտարին վաճառաբերութեան դիմել։ Տասնեւեօթներորդ դարու վերջերում, Անկլիաում բրդի տարեկան կտուրքը երկու միլիոն փաունդ Ստերլինկ էր գնահատուում, արժեզին՝ որն որ գործածուելումը քառապատկում էր։ Պաշտօնական քաղուածներին նայելով, Անկլիայէն դուրս հանուած բրդեղէնի արժէքինը, 1700 թուին, երեք միլիոն փաունդ Ստերլինկ էր հանում։ Այդ բրդեղէնը գլխաւորապէս Գերմանիաում, Ռուսիաում, իտերական թերակղզում, Արեւելքում և գաղթականաց մէջ էին քչում։ Անկլիական ձեռարհեստական բերքերում, դրեթէ այդ բերքն էր միայն որ արեւելեան մարդ ընդունուած էր իր հաշուին գործեր անելու, չարունակեցին իրանց առանդական գործառնութիւնքը, և որոնք իրանց ընդհանուր կայանքը Համբուրգումն ունէին։

Մինչդեռ բրդեղէնի տարազատրծութիւնը բուն իսկ երկրում մի առաջ առաջնանալի ճարելով, կարող էր կալ ու ծնել և մեծանալ առանց պաշտպան և արգելադիր իրաւանց անգամ, ուրիշ չատ ձեռարհեստներ կենդանութեան ածուեցան կառավարութեան և օրէնսդրութեան միջամտութեամբը և արուեստով էլ քաջալերուեցան, այդպէս եղաւ կտաւի ձեռարհեստը։ Այդ ձեռարհեստը՝ անչուշտ չատ ժամանակ էր որ կար

Իռլանտիում առանձին ձեռարհեստաւորութեան վիճակում. բայց այդ միջոցում միայն վաճառք դուրս հանել և իր բերքերն օտար հրապարակներում երեւեցան, ուր տեղ մինչեւ այն օր միայն Ֆրանսիական, Նիւերլանտական, Ռուսիական և Գերմանականն էին տեսնուած։ 1696 թուին խորհրդարանը մի օրէնք տուն տուեց «Իռլանտիում կտաւի ձեռարհեստը քաջալերելու» նպատակ ունեցող, ինչպէս նաև վաչի և կանեփի վաճառաբերութիւնն ու առադատ չինելու կտաւի տարազատրծութիւնը։ Իռլանտիում տարազատրծուած կտաւեղէնը մաքսէ ազատ էին Անկլիում ներս բերելիս, նմանապէս թոյլ էր տրուած ուղարկել դրանք ուղղակի Իռլանտիոյ նաւահանգիստներէն գաղթականաց երկիրներում։ Մի և նոյն ժամանակ, ամեն կերպով նպաստում էին և օգնում Ֆրանսիոյ բողոքական վախտականաց բնակաւորութեանը, որոնք փորձ և վարժ էին նուրբ կերպասների չինութեան մէջ։ Ուրիշ խիստ չատ հանգամանքներ ամեն տեսակ դիւրութիւնք մատակարարեցին նոր ձեռարհեստին, փոխարինելու համար Իռլանտիում այն չափաւորութեանց, որոնց ներքեւ էին ենթարկած բրդեղէնի տարազատրծութիւնը Անկլիոյ տարազատրծութեան չահուն համար, բաց ի այն բարձր մաքսերէն, որոնց դրուեցան օտար կտաւների վրայ, և որոնք դուրս հանեցին դրանք սպառելուց, մեծ մեծ վարձքեր չնորհեցին ազգային բերքին և 1746 թուին մի ընկերութիւն կազմուեց Բրիտանական կոռոլեղէի ընդհանուր վերնագրով 100 հազար փաունդ Ստերլինկ դրամագլխով, որու նպատակն էր «Ափրիկէի և Ամերիկա գաղթականաց հետ առուտուր անող Անկլիացի վաճառականաց մի և նոյն տեսակ կտաւեղէնք մատակարարելու, որոնք մինչեւ այն օր սակաւած էին եղել օտարներէն գնելու»։ կտաւեղէնի ձեռարհեստը նմանապէս ծաւալուեց Սկովտիում և 1753 թուին երեք հազար փաունդ Ստերլինկ չնորհուեց բարձր երկրներում բնակաւորելու այդ ձեռարհեստը։ 1689 թուին իռլանտացին վեց հազար փաունդ Ստերլինկէն աւելի կտաւ դուրս չէր գնում. 1760 թուին Բրիտանական վաճառականութիւնն էր 900 հազար փաունդ Ստերլինկ, որուն Սկովտիան կիսէն աւելին էր մատակարարում։ Դուբլինում մի ընդարձակ վաճառանոց կար կտաւի, ուր տեղ առուտուրն էր լինում, գործատները հիւսիսակողման կոմսաերկրներում էին հաստատուած, որ տեղ էին բնակուած և Բողոքականները։

Մեսաքսեղէն կերպասները՝ ամենէն թանկագին ապրանքն էին Ֆրանսիական վաճառաբերութեան Անկլիում։ Բնիկ գործատները, որոնք եղեսաբէթի թագուհու թագաւորութեան ժամանակէն էին, այնքան քիչ էին կարող կտաւի բռնուել, որքան պաշտպան իրաւունքն որն որ նրանց խոստացուած էր տալ, իրանց բնաւ չնորհուած չէր. թէ որ չնորհուած էլ էր, չատ թերակատար կերպով էր եղել վերջին Ստուարդների ժամանակ, որոնք Ֆրանսիոյ էին միչտ նպաստաւոր։ Բայց այդ ձեռարհեստին մէջն էլ մի մեծ փոփոխութիւն եղաւ։ Նանսի հրովարտակին յետոյ կոչումը նրա համար դիւրագլուխ ճարեց, մանաւանդ փորձառութիւն և

գիտութիւն, որոնք չատ աւելի արժողութիւն ունէին։ Փախստականք, որոնք մեռաքսեղէնի հիւսող էին, իրանց արհեստը բանեցան Սպիտէլֆիլդսում Լօնտօնի մօտ և նորանոր մանուածոյթիւնք մտցուցին, իրանց խնդիրքը պաշտպանութեան և մենաշնորհութեան մասին կառավարութեան կողմէն չատազողական ընդունելութիւն գտան, որ բախտաւոր էր համարում ինքն իրան այդ կերպով մի հարուստ տալ Ֆրանսիոյ։ 1697 թուին խորհրդարանի մի օրէնք արգելք դրեց ամէն օտար մեռաքսեղէնի վաճառաբերութեան և քիչ տարի յետոյ 1700 թուին այդ արգելադրութիւնը տարածուեց Հնդկաստանի և Պարսկաստանի մեռաքսեղէնին համար էլ, նմանապէս ներկուած և տպուած բամբակեղէն կերպասներին, առարկայ մի չահաւոր առուտուրի ընկերութեան համար։ Բայց սակայն թոյլ տրուեց և նպաստուեց անդամ այդ հիւսուածների վաճառաբերութիւնը կրկին վաճառատարութեան համար։

Այդ արգելադրութիւնը, մի կերպով երկրին դաղթականական չահն դէմ ուղղուած և դեռ աւելի խստացուցած 1721 թուին մի երկրորդ օրէնքով, նոյնպէս մեր ժամանակում, դոփուեց տուրեւառիկ դրութեան և պաշտպան իրաւանց կուսակիցներին՝ խորադիտութեան իրեւ մի նշանաւոր օրինակ, որ ցոյց էր տալի այն ժամանակուայ վաճառականական քաղաքականութեան ոգին։ Այդ միջոցով, ասուեց, Անկլիա աշխատ էր կացուցանում իր ձեռարհեստը, մինչդեռ նա ծառայեցնում էր ցամաքային Եւրոպիոնը։ Նա նախապատիւ էր համարում տալ ցամաքային Եւրոպիոյ արեւելեան Հնդկաստանի ապրանքներն և ինքը թանդ վճարել իր գործատանց հասարակ բերքերին համար։ Այդ հարցի քննութիւնն յատուկ քաղաքական անտեսութեան պատմութեան գործն է։ Սակայն մի իրողութիւն կարող է այս տեղ իր տեղը գտնել. այն է որ, եթէ արգելադրութիւնը տահմանուած էր յաջողացնելու համար մեռաքսեղէնի տարաշխարհիկ առևտուրի Անկլիատար, բոլորովին իր նպատակին հասնելուցետ մնաց, և թէ երկրին արած գոհութիւնը՝ հանուան կենալով թանդ վճարելու անպիտան ապրանքների համար՝ բոլորովին վնաս եղաւ։ Իրաւ հատատատուեց, որ 1700 թուէն մինչեւ ժամանակին վնաս եղաւ։ Իրաւ հատատատուեց, որ 1700 թուէն մինչեւ ժամանակին վերջերը, Ֆրանսիան ներս էր տարել Անկլիա, միջակ տարին մաքսանենգութեան ճամբով 500 հազար փաունդ Սաերլինկ արժողութեամբ մեռաքսեղէն, որ մի պաշտօնական տեղեկագրի նայելով՝ այն տեղ 1766 թուին 7072 էն պակաս պարապ ոստայնագործի (թէնկեհաղ) չկար և թէ անկլիական մեռաքսեղէնի վաճառատարութիւնն ոչինչ էր. թէ և վարձք էլ էր տրուում և թէ ներսերումն էլ նրանց գլուխը չտաւսորուել էր, երբ մի փոքր յետոյ բամբակեղէնի տարաշխարհիկ առևտուրը վերա կացաւ։ Բայց ոչինչ բան այնքան ձախորդ չեղաւ, որքան որ եղաւ Սպիտալֆիլդս կոչուած օրէնքը, որ իրաւունք էր տալի մեռաքսագործներին մի կոչուած վարձք պահանջելու իշխանութեան ձեռքով որոշուած։ Այդ անշնորհք կարգադրութիւնը մենաշնորհութեան ամրողջացնում

էր. բայց որ և է առաջացում էլ լսափանում։ Գործատան տէրը ստիպուած լինելով վճարելու մեքենաչէն ամէն բերքերի համար այնքան՝ որքան որ ձեռաչէն գործի համար էր վճարելու, մի կատարելագործութիւն կամ մի հնարողութիւն անելու համար մոտածելն յիմարութիւն էր լինելու։ Ուրիշ անդամ առիթ կ'ունենանք, 1824 թուի Անկլիոյ վաճառական նաւական պատմութիւնը ճառադրելիս, այն տարին՝ երբ Հիւսքիսըն մենաշնորհութեան առաջին հարուածը տուեց, մանրամասնօրէն լուսել այդ նիւթի մասին։ Կ'ուզենք այս տեղ, պատմական ճշմարտութեան դաշտի վրայ այն կուսակցութեան հոգու մոլորութեանց դէմ կրնուել, որ այս նորերումս առաջ են եկել առեւտրական քաղաքականութեան և քաղաքական տնտեսութեան խնդիրներում։

Բամբակեղէնի տարաշխարհիկ առևտրի մասին արդէն յիշատակն արած ենք տասնուվեցերորդ դարու մէջ տեղերում, չատ կամաց զարգացաւ։ Արեւելեան Հնդկաստանու ժամն հիւսուածքները, կերպասներն արգելուած էին, բամբակէ կտաւներն էլ առհասարակ մի նորաձեւութիւն էր, որու հետ ազգը դժուարութեամբ էր վարժուում։ Սակայն այդ ձեռնարհեստը մի փոքր բարձրացաւ, քանի որ Ամերիկու գաղթականք սկզբան բամբակ դուրս հանել։ Մինչեւ այն բանի համար գլխաւոր տեղն եղաւ, և այդ նիւթով չինուած զանազան կերպասները, մանաւանդ թաւիշն, իրանց անունն այդ քաղքէն ստացան, Այսօրուայ պէս, մանուածքի և հիւսուածքի մեծամեծ հատատատութիւնք չկային դեռ։ Մինչչորսորի վաճառականք 1760 թուին սկսան ուղարկել իրանց գործակալներին պտոյտ անելու չրջակայներում. բամբակ մանողների և հիւսողների հետ սակարկելու, որոնց վուշի (քթանի) թել և մանելու բամբակ էին տալի։ Այդ բանն հարկաւ մի յառաջադիմութիւն էր նայելով այն ժամանակին, որ տարաշխարհիկ գործները ստիպուած էին իրանց ճարելու խակ նիւթեղէնն և իրանց բերքին համար սպառողներ գտնուելու, բայց որքան քիչ բան էր այդ՝ համեմատելով այն զարգացման հետ, որն որ ապագան իր միջումն էր պահում։ Բամբակեղէն ձեռարհեստը մեծ տարածութեան վերջինն էր և Մինչչորսորի մի տեղեկագիր 1760 թուի 200 հազար փաունդ Սաերլինկէն աւելի չէ արժեցնում իր տարեկան բերքի արժեգինը։ Սակայն բարակ քթանի չարունակ թանդանալուն վրայ՝ աչքէ չհանեցին բամբակը, որու գինը նուազում էր քանի որ մշակութիւնն աւելանում դաղթականաց մէջ, և երբ 1767 թուին Հարկրեւ Հիւսնը Բլաքֆորնում Պրէսթ'ճէնի Անուա մանող գործին հնարեց և թէ քիչ տարի յետոյ էլ Լրբվրայթ մի աւելի կատարելագործ մանող և հինող մեքենայ երեւակայեց, մի աննման յեղափոխութեան կատարուելը տեսանուց։ Բամբակի տարաշխարհիկ առևտուրը չատ չուտով հեռուն թռցեց բոլոր միւս ձեռարհեստները և բոլոր դժուարութեանց յաղթեց, այն աստիճան որ, ոչ Հնդկաստանու բանուորների վարձքի չափազանց ժանութիւնը և ոչ նրանց աչխատութեան հին կատարելութիւնը կարող եղան դէմ դնել,

կառուցել մեքենական հնարքների դերազանցութեան դէմ և թէ կարելի եղաւ երթալ 3000 անկլիական մղոն հեռու Հնդկաց աշխարհում փնտռել բամբակն և նորէն տանել այն տեղ մեծ շահով հիւսած կերպաս եղած : Մանկ մեքենայի հնարողութիւնը մեր պատմութեան մէջ դարագլուխ եղաւ. այդ դէպքի թուականէն է սկսում Անկլիական ձեռարուեստական դերազանցութիւնը, առաջիկայ ժամանակաշրջանին վերջին հասնելով, յետագային է որ տալիս է այդ դէպքն իր դրօշմն ու կարեւորութիւնը :

Նոյնպէս և մետաղագործական ձեռարհեստի մասին, այսօրուայ Անկլիոյ այդ միւս հարստութիւնը, տասնութերորդ դարը, պատրաստութեան ժամանակն ուրիշ բան չեղաւ : Սակայն այդ ձեռարհեստը միւնոյնական չեղաւ, ընդհանուր առաջադիմութեան մէջում և քարածխի գործածութիւնը գործատներում այն ժամանակ կանոն եղաւ : Կայեկն ու արճիճն երկրին առատ ածուխը չարունակուեց : Կալլէսի նահանգում, Դերբի կոմսաերկրում և Անկըսի կղզում պղնձահանութիւնն այնպիսի մի աճեցողութիւն ստացաւ, որ օտար երկրէ ներս բերելը դադարուեց, և թէ՝ 1790 թուէն էլ դուրս տարուեց : Բայց համեմատելով մեր դարու ահագին առաջադերութեան հետ, երկաթի առաջադերութիւնն այդ թուականին չնչին բան է երեւում. որ և է համեմատութեան նայելով՝ 1740 թուի տարուան համար 17 հազար տակառի թիւն է տրւում, 1750 թուի տարուայ համար 20 հազար և 1788 թուի տարուայ համար 68 հազար : Վաճառականութիւնն հազիւ թէ 12 հազար տակառն անց է կենում և Սպանիայէն, Շուէտէն և Ամերիկուց ներս է բերւում սովորաբար աւելի մեծ քանակութեամբ բարձր տեսակ երկաթեղէնք : Երկաթագործութեան մէջ, մանաւանդ պողպատաչինութեան՝ Անկլիացիք գերազանցում էին արդէն բոլոր միւս ազգերին :

Բիրմինկեմ տալիս էր, որքան մեռապէ հասարակ դործեր, այնքան էլ ամէն տեսակ մանր մանր ոսկեզնձեղէնք, դեղնապղնձեղէնք, անագեղէնք, կապարեղէնք, երկաթեղէնք, պողպատեղէնք ամենատատ մի խառնուրդ և շեֆիլտի դանակաչինութիւնը, դարերուց հետէ հռչակաւոր, ամէն վաճառանոցներում տիրում էր : Քարածուխը քանի դնաց վաճառականութեան մի առարկայ եղաւ և Ֆրանսիա և Հոլլանտա էր տարւում : 1688 թուի յեղափոխութենէն մինչեւ 1783 թուի տարին, քարածխի ներքին սպառումը գրեթէ եռապատկել էր :

Միւս ձեռարհեստներում, թղթաչինութիւնն ու գտակաչինութիւնը յիշուելու արժանի են : Անկլիա թէ՛ մոյն և թէ՛ միւսին կատարելագործութիւնը Ֆրանսիացի վախտականներին է պարտական : 1688 էն առաջ ապրանք ծրարելու կամ պատատելու համար գործածուած սեւ թղթէն դատ չատ հազ ընտիր թուղթեր չինում, 1721 թուին իր տարեկան թղթաչինութիւնն 300 հազար լուրէ էր հասնում, իր սպառմանը գրեթէ երկու երրորդ մասին, և 1783 թուին այդ տեսակ առաջ բերուած

արժէքինը 780 հազար փաունդ Ստերլինկ էր գնահատւում : Գտակաչինութեան համար Ամերիկու հիւսիսային ամենախորը գաւառների սառցեայ, այն գաւառների, որոնք ջրյան մերթ էին մատակարարում, ամենաթանդ էր : Վերջապէս վայել է որ յիշենք պատուակչինութեան և ամանաչինութեան սկզբնաւորութիւնն էլ, որ Ուէտկուտ առաջ բերեց 1760 թուին Ստաֆֆորդ կոմսաերկրի խոպան տափերում և թէ չատ չուտով մի տարր աւելցուց Անկլիոյ ձեռարհեստական զօրութեան վրայ :

Անկլիական ձեռարհեստները չատ ժամանակ ենթարկուեց հմարտուեստագէտ (քօրքօրատիօն, հէնքեար, էանաֆ) վարչութեան : Բայց ուեստաւօրայ կարիքն ու չահերն ազատ կացան նրանց միջում աւելի չուտ քան թէ ուրիշ երկրներում նրա խիստ դժարատար տրամադրութիւնէն, և դիւրատար սովորութիւնք առաջ բերին անչնորհք օրէնքների մեռ. նմանապէս Անկլիան եղաւ առաջին ճանաչողը գործատնական ձեռարհեստի և աշխատութեան բաժանմունքը : Ամէն մարդ իր մասնարհեստն ունէր, որու մէջ կատարելագործւում էր, ինչ որ ուրիշ երկրներում մինակ մի արհեստի էր առարկայ, չատ անգամ երեք կամ չորս խիստ չոկ չոկ արհեստներ էր կազմում նոյն արհեստէն : Էլ աւելին, կառավարութիւնը հետամուտ չէր, ինչպէս հատատաուն ցամաքում, ամեն բան մասրամասնօրէն կանոնաւորելու. նա աւելի վատահ էր լինում մասնաւորների չահուն, լաւութեանը և խելքին վրայ : Վերաքննութեան կամ կրկնատեսութեան (քօնտրօլ) միջոցներն, ինչպէս են տեսչութեանց և կանոնադրութեանց դիւանները բերքերի տեսակութեան վերաբերող, չատ քիչ կային, դրանց հակառակ ուրիշ կանոնադրութիւնք էին նկատում, որոնք այսօր խիստ տարօրինակ էին երեւալու, բայց արդարացնումէր այն ժամանակուայ հոգին, ինչպէս օտար երկրում գործատուն հատատեայ, գործիներ և մեքենայք դուրս տանելու արգելադրութիւնքը և այլն : Գործիքների դերազանցութիւն, իրաւ է որ, մի տակաւ առաւելութիւն չէր Անկլիական ձեռարհեստների համար : Մի և նոյն ժամանակ նրա խիստ միաւորութիւնը վաճառականութեան հետ՝ որ նրան մատակարարում էր լաւ նիւթերը, չատ անգամ առաջուց դրամագլուխ էր տալիս նրան և կանխիկ վճարում նրա ապրանքների համար, նրան մի առաւելութիւն տալով միւս երկրների ձեռարհեստների վրայ, ուր՝ այդ յարաբերութիւնք գոյութիւն չունէին, ուր գործատան տէրը՝ աշխատում էր չատ անգամ առանց առաջուց ապսպրուած լինելու և գէն ու վտանգ իր վրայ առնելով՝ պարտաւոր էր լինում նոյն ինքն թէ՛ արհեստաւոր և թէ՛ վաճառական լինել և այն վարին էլ չէր վայելում, որ է մեծ լծակ :

Այդպէս, մենք գտնում ենք արդէն այդ ժամանակաշրջանում չատ տարերքներ, որոնք մեր օրերում աւելի բարձր մի աստիճանի վրայ անկլիական ձեռարհեստներին զարդն ու պչին եղան. մենք նչանակեցինք դրանք, վասն զի չատ անգամ դրանցմով գանց առնուեց՝ տուրեւառիկ դրութիւնը միայն գոլելու համար : Այդ դրութիւն միայն ներքին առ-

ուծախին վրայ ուղղակի նեխգործութիւն ունեցաւ, որու սպառողական զօրութիւնն հետեւեց բնակիչների և բարեկեցութեան արագ աճեցողութենէն։ Սկովտիոյ միաւորութիւնն Անկլիոյ հետ 1707 ին այդ նեքքին առեւտրին վրայ, միջնորդական մաքսային դծի վերնալովը և առեւտրական մի և նոյն դրութեան դործածութիւնը, ամենայաջող ներգործութիւն վարեց։ Այդ միաւորութեան սաստիկ գրգիռ եղաւ միաւորուած երկրում ձեռնարկութեան հոգին զարթեցնելու և աշխատութեան սէրը վառելու։ Իսկ Իռլանտիոյ մասին նա մի առանձին քազաքային տնօրէնութիւն և ներսիհոսանութիւն էր պահում իրան համար, ուր տեղ յաղթողներն յաղթուողների ջնասոյզ արտօնութիւն էին վայելում, իր առուտուրն էլ անհամար սահմանափակութեանց էր ենթարկած, և չատ հեռու էր մի և նոյն սահիճանում լինելուց, ինչպես որ էր Անկլիունը Իռլանտան իբրեւ մի նուաճուած նահանդ էր համարուած և ըստ այնմ էլ կառավարուած։

Անկլիում կառավարութիւնը, 1688 թուականէն ազգի քննողութեան ներքեւ դրուած, երբէք ընդհանուր շահու հակառակ միջոցների չէր դիմում։ Թէ որ այդ ժամանակում, ընդհանուր շահը պահանջում էր արդելադրութիւն և պաշտպանողական իրաւունք, չատ անգամ էլ դրա հակառակն էր պահանջում, և կարելի է ասել Անկլիոյ մաքսային օրէնսդրութեան պատուոյն համար որ առաջինն եղաւ գործատանց օգտակար նիւթերն մաքսէն ազատ կացուցանելու կամ փոքրիկ մի տուրք դնելու ըստ կըզբունքն ընդունողը։ Դուրս հանելիս՝ բաց ի բրդի արգելադրութենէն, տուրքերը, երկրի դլխաւոր ապրանքների վրայ աւելի ցածր էին միւս երկրներէն, մանաւանդ Ֆրանսիայէն։ Անկլիոյ մաքսերի եկամուտը 1590 թուին եղիսաբէթ թադուհու թադաւորութեան ժամանակ 50 հազար փաունդ Ստերլինկէն դէնը չէր անց կենում, 1612 ին 148 հազարի հասաւ, 1660 ին թադաւորական դեղի վերահաստատութենէն յետոյ 422 հազարի և 1688 թուականի յեղափոխութեան ժամանակ՝ 782 հազարի։ Այդ եկամուտը սաստիկ աճեց Կուլիելմ Գ. ի և Աննա թադուհու ժամանակներում։ 1712 ին մաքսերը 1 միլեան 316 հազար փաունդ Ստերլինկի մի յըստակ եկամուտ տուին և Պարլիզու հայտութենէն յետոյ 1763 ին երկու միլիոնի մօտ։

Հրապարակային գրուածքներ, որոնք Անկլիում երկրային ամէն բաներն ու դործերը լուսաւորում էին և կառավարութեան պատասխանատուութիւնը խորհրդարանի առջեւ, թելադիր եղան մանրամասն տեղեկադրերի, ձեռարհեստների և առեւտրի վիճակի վրայ մի այնպիսի ժամանակում, երբ ցամաքային Եւրոպում դիւանապետութիւնն ամէն բան խորհրդումն էր պահում։ Հրատարակուած մաքսային քաղուածներն 1696 թուականէն՝ չատ պատուական տեղեկութիւնք են ընծայում վիճակադրութեան համար, առանց գոհացնելու կարող, մեր ժամանակուայ պահանջմունքները։ Բնաւ ամենեւին մոռներում չունինք այս տեղ

թուանշանները դիզելու, սակայն մեզ ներսի թող բացատրվի կերպով այդ բանն անել այս տեղ և ամբողջացնելու համար վերեւի տեղեկութիւնքը մաքսերի եկամուտների մասին, առաջ բերել այս տեղ Մանք-Գիլլօկէն վեր առնելով, փաունդ Ստերլինկով, Մեծն Բրիտանիոյ վաճառականութեան վրայ մի կարճ հայեացք խաղաղութեան միջին տարինեերի համար։

1. վաճառաբերութեան Մեծն Բրիտանիոյ.

	1698–1701	1749–1755	1784–1792
Եւրոպէն	3,866,720	4,527,911	9,193,015
Ասիէն	656,031	1,119,158	3,179,136
Ափրիկէէն	17,424	34,279	92,252
Ամերիկէն	1,029,780	2.529,998	5,252,342
Ամբողջ	5,569,952	8.211,346	17,716.745

2. վաճառահանութեան Մեծն Բրիտանիոյ.

	1698–1701	1749–1755	1784–1792
Եւրոպու համար	3,383,463	9,291,338	10,411,023
Ասիոյ „	214,212	714,105	1,795,747
Ափրիկու „	114,043	213,841	809,546
Ամերիկու „	737,876	2,001,690	5,605,626
Ամբողջ	6,449,594	12,220,974	18,621,942

Վաճառքների պաշտօնական արժեգինը մի և նոյնը մնալով, մինչդեռ իրանց առեւտրական արժեգինը չատ կերպակերպութեանց էր ենթարկուում և մաքսանենդութեան դումարն էլ զանց առնուելով, այդ քաղուածները չէին կարող սաստիկ ճիշդ տեղեկութիւն տալ, մանաւանդ գնահատելու թէ վաճառականութեան կշռաքը նպաստաւոր էր կամ չէր։ Բայց դոնէ մի գաղափար են տալի Անկլիական վաճառականութեան հըսկայական յառաջադիմութեան մասին, չահաւոր վաճառականութիւն իր ամէն ճիւղերում, առանց վաճառատարութեան և վաճառաբերութեան միջում եղած տարբերութիւն միշտ ոսկով կամ արծաթով վճարուած լինելու առեւտրական դրութեան ցնորքներին համաձայն։ Անկլիում նոյնպէս այդ մասին օրէնսդրութիւնը կոպիտ մոլորութեանց մէջն ընկած. բարեբախտութեամբ գործատէր մարդկանց գործնական խելքին ու մարքին չնորհիւ՝ այդ մոլորութիւնք քիչ վնասակար եղան քան թէ ուրիշ երկրներում։ Յատակ մեռազով վճարմունք կանոնաւորապէս տեղի ունեցան միայն Ֆօրտուկալէն Մեծն Բրիտանիում, Մեծն Բրիտանիան Եւրոպու հիւսիսային երկրներում, միւս բոլոր երկրների հետ հաւասարակշռաքն հաստատուած էր վաճառականական չահաժողութեամբ. չահաժողութիւն՝ որու մանրամասնութեանց մէջ մտնելն անհնարին է։

ԳԼՈՒԽ Ժ.

Անկլիոյ վաճառականութիւնն եւրոպա էլլէնէլէ հետ.—Նաւարկութեան օրինէն հետեւանքը.—Նաւարկութեան և չինուորագիրքոյ ընդհանրութիւն.—վաճառականութիւնը քաջչը ու ձեռ քան համարուած.—Նոր գաղութական կարեւորութիւնը.—Նոր գործակցութիւնք ուրէ էլլէնէլ.—վաճառականութեան և գաղութականութեանց խորհուրդը.—Ընկերացողութեան հոգու արդիւնք։

Անկլիոյ՝ Եւրոպու այլ և այլ երկրների հետ ունեցած վաճառականութեան մանրամասն պատմութիւնը գանուում է այդ երկրներէն կամ ազգերի մասին ճառադրող գրութիւններում։ Անկլիոյ ձեռարհեստական ապրանքները գեռ չէին տիրում Եւրոպու հրապարակների վրայ, ինչպէս որ յետոյ տիրեց։ Այդ ապրանքները միայն Պօրտուկալում ունէին մուտ Մէթուէնի դաշնադրութեան զօրութեամբ, նոյնպէս և Գերմանիում այն նպաստների պատճառով, որոնք յուզարկում էր նա ձեռագործ ապրանքի ձեւով։ Միւս տէրութիւնք արգելում էին ներքին առուտուրն մենաւաճառութեամբ կամ արգելադրութեամբ, մանաւանդ Ֆրանսիա, որ այդ ժամանակաշրջանում մրցելու էր վեր կացել Անկլիոյ հետ, ինչպէս քաղաքականութեան մէջ՝ այնպէս էլ վաճառականութեան մէջ գերխաւորութիւնը կամ առաջնութիւնը իւրացնելու։ Այդ երկու տէրութեանց միջում չուտ չուտ տեղի ունեցած պատերազմները, նոյնպէս վաճառականութեան համար են եղած և ամենաչար տեսակէն թշնամութիւնք բնական յարաբերութեանց առաջն արգելք դրին, որոնք կարող էին չատ բանուկ լինել երկու հարեւան աշխարհների միջում։ ընդհակառակն այդ յարաբերութիւնքը դրեթէ մաքսանենգութեան միջոցներով լինելու վերջապէս ցածրացան։ Պօրտուկալի գինու ազատօրէն ընդունուիլը միայն էր հասցնում Ֆրանսիոյ գինուն, և ռօմի (չաքարօղի) առաջբերութեան մասին եղած դիւրութիւնքն արեւմտեան Հնդկաստանու գաղթականաց մէջ, նոյն նպատակին էին դիմում։ Նաւային մաքսախոյս առուտրում (ֆօռեր ենթերլօ) Անկլիա՝ մի ակնոցու միայն էր կրում. պատճառ որ, Ֆրանսիա՝ գլխաւորապէս գուգոի առարկայ եղող ապրանք էր առաջ բերում փոքրիկ հակերով, բայց բարձր գներով, որոնց փոխարէն՝ Անկլիական ձեռարհեստաւորք, որ ողջ աշխարհի համար էին աշխատում, չունէին դրանց հատասարը դուրս հանելու։ Բայց Անկլիա՝ այդ միջոցու փոխարէն հատուցում տացաւ մաքսանենգութեամբ Սպանիոյ հետ. մանաւանդ յօրէն՝ որ կիպրալտար իրան թողուց Ուարէխոի հաշտութեամբ։ Արդէն պատմած ենք, Սպանիացոց վաճառականութեան վրայ դրելիս, թէ ի՛նչ յայտնութեամբ Անկլիա այդ մեծ ճարտարութիւնն էր բանեցընում Սպանիական Ամերիկում և թէ ի՛նչպէս չարաչար վարուեց նա այդ մասին, Աֆրիկոյի դաշնադրութեան (գերեվաճառութեան համար եղած)

պայմաններում, և ի՛նչպէս Սպանիոյ դիմադրութեան վրայ՝ պատերազմ հրատարակեց նրա դէմ 1739 թուին։ Այս տեղ նորէն կրկնելն աւելորդ ենք համարում։ Այս ասենք միայն որ՝ Անկլիոյ հետ կնքուած գրեթէ ամեն հաշտութեան դաշնագրութեանց՝ տասնութերորդ դարու ընթացքում, միացած են և վաճառականութեան դաշնագրութիւնք, որոնց մէջ նրա ծայրագոյն. ճարտարութիւնն երեւում է։ Անկլիա կիպրալթարի տիրելուց յետոյ, կարող էր հեշտութեամբ մի լիակատ անցունել Բերբերիա տանու ծովահէնների գլխին, բայց նա աւելի լաւ համարեց դրանց ձեռքէն պահպանել իր վաճառականութիւնը, նրանց մի կրծօն տալով, և թողեց նրանց՝ որ ջատեն ծովեզերական փոքրիկ տէրութեանց վաճառականութիւնը, մանաւորապէս իտալական մանր տէրութեանցը, որոնք չէին կարող իրան պէս խոշոր կրծօն տալ այդ գաչէներին։

Այդ միջոցներումն է որ, նաւարկութեան օրէնքը ցոյց տուեց իր ողջ արդիւնաւորութիւնը։ Ահեւորական նաւարկութիւնն ամրացել էր և յօրէն՝ հիւսիսային Ամերիկու գաղթականք առատ և ածան նիւթեղէն էին մատակարարում, նաւային չինութիւնը կարգէ դուրս զարգացում էին ստացել։ Անկլիոյ ձեռք բերած տիրապետութիւնն իր ստորիվներով և իր ծովային փառաւոր յաղթանակներով, որ՝ էլ ոչ մրցող և ոչ էլ հատատրող ունեցաւ, Պարիզու հաշտութեան օրէն 1763 թուին մի վճռական ազդեցութիւն վարեց։ Անկլիական դրօշակը՝ ոչ մի տեղ պաշտպանութենէ չէր զրկւում և ամենափոքր թշնամութեան կամ նախատինքի համար հատուցում էր ձեռք բերում։ վաճառականութիւնն ու նաւարկութիւնն ամեն տեղ ղրտում էին վստահութեամբ, վասն զի գիտէին թէ՝ ի՛նչ հաստատ և տեւական գործունէութեամբ իրանց շահերը պաշտպանուած էին թէ՛ ազգի, թէ՛ երկրի և թէ՛ կառավարութեան կողմէն։ Ողջ ազգին ծովային հանճարը պարզուեցաւ երեւաց։ Եղերական նաւարկութիւնը, որ քարածուխ էր կրում, մանաւանդ ձկնորսատեղիք այնպիսի նաւաստիք և նաւորդներ պատրաստեին, որոնք ոչ ինչ բանում յետ չէին մնում Հոլլանտիու նաւաստիներէն, և նրանց գերազանցում էին հայրենասիրութեամբ և ազդասիրութեամբ։ Խորհրդարանը մի յատուկ խնամատարութիւն ցոյց տուեց ձկնորսատեղեաց համար, և մի առատ վարձատրութեամբ հատան կացաւ նրանց նպաստելու համար չափազանց զոհողութիւնք անել. իրաւ է որ, պէտք եղաւ առաջին աստիճանը Հոլլանտացոց թողնել, բայց դրա փոխարէն, Ֆրանսիացոց մրցումն աներեւոյթ եղաւ Տեռնէօֆ անուն երկիրը թողելուց և հիւսիսային Ամերիկումն իրանց ունեցած ստացուածքներն ու ազդեցութիւնը կորցնելուց յետոյ։ Մինչեւ այդ օրն ազի նուազութիւնն ու թանգութիւնն՝ անկլիական ձկնորսատեղեաց զարգացումը կանգնեցուցել էր, այդ արգելքը մի գէն դրուեց երկրի հարուստ աղահանքները բանեցնելով։ Աղի առաջբերում չուտով այն աստիճան մեծ եղաւ, որ ոչ միայն Անկլիում բաւական եղաւ, հապա դուրս հանելու համար էլ։ Տեռնէօֆի մեծ աւազակոյտը գլխաւոր թաղն

եղաւ ձկնորսաւեղեաց։ Հաշիւ է եղել որ, 1763 թուէն սկսած այդ թաղում ձկնորսուել էր, միչեւ տարին 200 հազար կենդինար ձողաձուկն (մօրիւ) որոնց արժէքն էր 400 հազար փաունդ Սթէրլինկ։ Իսկ հաբանի (մի տեսակ տարեխ) ձկան և կիտի մասին, պէտք եղաւ, ինչպէս որ արդէն ասուեց, բաժանել Հոլլանտացոց հետ։

1663 թուէն Մեծն Բրիտանիում նաւարկութեան առաջադիմութեան վրայ պաշտօնական տուցակներ կան, առեւտրական անօրէնութեան կողմէն հրատարակուած, որոնք ցոյց են տալի, մաքսատան քաղուածներէն վեր առնելով, Բրիտանական նաւահանդստների ելումուտը։ Դրանցմէ վեր են առնուած այս յետագայ թուանշանք։

	Բէրթանական դրօշակ	Օտարական դրօշակ
1663	95,266 տակառ	47,634 տակառ
1688	190,533 „	95,267 „
1712	326,620 „	29,115 „
1728	432,832 „	23,650 „
1740	384,191 „	27,260 „
1749	609,798 „	51,368 „
1765	726,402 „	72,215 „
1770	806,495 „	68,176 „
1779	642,981 „	49,040 „
1784	932,219 „	118,268 „

Դէնն անելով, պատերազմական երկու ժամանակաշրջանները Սպանիոյ հետ 1739 ին, և Հիւսիսային Ամերիկու հետ 1776 էն մինչ 1780, այդ ցուցակով յայտնում է մի չարունակ յառաջադիմութիւն. օտարական դրօշակներէն աննչան պաշտօնը ցոյց է տալի, որ Անկլիոյ ծովային միջամտութեան մեծ մասը Եւրոպիոյ հետ է, միջամտութիւն (Ինթերվընս) որ նաւարկութեան օրէնքը թոյլ էր տալի տերութեան նաւերուն՝ տեղի էր ունենում անկլիական նաւերով։

(Մխա դիր, լանդրեմ, Հայ ընթերցող, այս յետագայ մի տուն դըրուածքին)։

Ինչպէս իտալական հասարակապետութեանց դէպեցիկ ժամանակներում, Անկլիատանի էլ, վաճառականութիւնը պատուաւոր մի գործ էր ամեն կարգի մարդկանց համար։ Այդ երկրում, բարեբախտաբար, ծանօթ չէր եղած ցամաքային տերութեանց մէջ տիրող այն նախապաշարմունքն, որ համարում էր վաճառականութիւնը կեղտոտ և գձուձ պաշտօն կամ թէ իբրեւ մի անարդ և անվայել գործ մի աղնուական ընտանիքի համար։ Այնն ժամանակ Անկլիական աղնուականութիւնը, առհասարակ, ուելի հայրենասէց և ազգին ծառայեց, քան թէ թագաւորին, և նախապատուիրատու համարեց հայրենասիրի և ազգասիրի պաշտօնը, արքունական պաշտօնէն։ Ինչպէս ուրեմն նա արհամարհելու էր արուեստներն ամենէն չահաւորն։ Աղնուականք կամ լորտերն, որոնց կրասեր որդիքը քաղաքացոյց կարգումը մնալով, ստիպուած էին այդ տեղ անել իրանց համար ասպարէզ, շատ և շատ անգամ տեսնուեց որ, առաջին կարգի ընտանեաց տէրերը ու զլուխները, այսինքն մեծամեծ լորտեր, ուղղակի մասնակցին առեւտրական գործառնութեանց, և զլուխ անց կեցան նոր ձեռնարկութեանց և բանին ու պաշտպանեն դրանց առատաձեռն դոհողութեամբ։ Վաճառականութիւնը շատ անգամ ճամպայ եղաւ աղնուականութեան առաջնորդող։ Բանի՛ քանի՛ լորտեր, դքսեր, առաջ են եկած Սէուէն քաղքի վաճառականէ կամ խանութպանէ կամ թէ լեյ քաղքի գործատան տէրէ։ Այն ծիծաղելի սովորութիւնն որ, պահանջում ամուսնութեան մէջ ծննդեան հաւասարութիւն, միչա օտար բան է եղած Անկլիուհին, և՛ մի աղնուական Անկլիացի այդ բանում ամենեւին չէր կարծում իր աղդատոհմին նուաստացնել կամ ցածրացնել՝ իր ձեռքը մի արհեստաւոր մարդու աղջկան տալով։ Անկլիացի վաճառականը շատ վաղուց մի քաղաքական կարեւորութիւն ունեցաւ։ Խորհրդարանի անդամ ընտրուելով, պատուիրատու էր նա տուն տալ իր խորհուրդը օրէնսդրութեան վրայ, և կառավարութիւնն էլ քննութեան ներքեւ ածել։ Անկլիացին իր առաջը ճամպան բաց էր դանում, իր վաճառատունէն վեր կենալով՝ հասնելու մինչեւ տերութեան առաջին պաշտօնեաներին, և ա՛րն որ վիներ կառավարող կուսակցութիւնը, մի պաշտօնեայ, որ արհամարհում էր և անդիտանում քաղաքական անտեսութեան խնդիրները, նա անկարող էր մի պաշտօնակալ լինելու։

Թէ որ մանր առուտուրն և քաղքի արհեստները սահմանադիր օրէնքների էին ենթարկուած, մեծ առուտուրն ու տեղանաւորութիւնը գոնէ՝ պատսպ էր ամենքին համար, Անկլիացի կամ օտարական, քրիստոնեայ կամ հրեայ։ Այդ ժամանակէն ծովային վաճառականութիւնն՝ աշխարհիս դիրաւոր նաւահանդստներում իրան օգնական մի շատ գործակիցներ ուներ հաստատած։ Անկլիացիք շատ կանուխ դերազանցեցին Հոլլանտացոց իրանց գործառնութեանց տարածութեան և արագութեան կողմէն, դրանք ամենափոքր միջոցներով վտանգներ էին իրանց աչքն առնում և որքան որ պաշտպանուեցան իրանց երկրի աճեցուն զօրութենէն, մի այնքան էլ իրանց բախտն յաջողուեց։

Կոլիէլմ Գ. էր, որ առաջինն եղաւ 1696 թուին տերութեան առեւտրական գործերի համար մի անկախ և տեւական անօրէնութիւն հաստատողը, վաճառականաց և զաղթականաց խորհուրդն և նրան այնպիսի իրական իրաւունքներ յատկացուց, այսօր բաժնուած առեւտրական տեսչութեան (Բօարդ օֆ Տրէդ) և զաղթականական տեսչութեան մէջ։ Ցաւուկ մարդկանց դումարումը, բան տերերամ եղած քննութիւնք, յանձնախմբերի յուղարկութիւնք, մի խօսքով՝ մանրամասն տեղեկագիրք նախագաւառում էին ամեն մի որոշմանց քաղաքական անտեսութեան մասին և տարօրինակ կերպով հակապատկերն էր ցոյց տալի մի և նոյն պատգաւում ցամաքային Եւրոպու դիւանագիտական կամարարութեան։

Ազատութեան օդում, ընկերակցութեան հոգին ամեն օր զարդանալով էր զարգանում, որ չատ կանուխ տեւական եղաւ Անկլիական ազգում և ամենաընտիր արդիւնք տուեց, մեր այս պարագած միջոցին։ Ընկերութիւնք կազմուեցան երկրի ամենէն նշանաւոր մարդկանց մասնակցութեամբ, արհեստների, ձեռագործների և առուտրի քաջալերութեան համար։ Ամենքի վրայ հռչակաւոր եղաւ Լօնտօնինը 1754 ին հիմնուած։ Ճարտարամիտ մարդիկ, բեղմնաւոր երեւակայութեան տէր անձինք, հանդիսա կարող էին լինել իրանց յղացմունքն իրագործելու միջոցների մասին։ Ընկերութիւնը միշտ պատրաստ էր նրանց նուիրելու ամենաառատ օգնութիւն, և ամենեւին ետ չէր քաշւում հասարակաց չահուն համար էլ որ և է ծախք անելուց։ Արքունի հրովարտակներ ապահովացնում էին հնարողին համար մի արդար հատուցում և վարձ։

Թէպէտև բոլոր այդ կարգերն ու սարքերն, որոնցմով Անկլիացիք հմուտ վաճառականներ եղան, միայն մեր օրերում իրանց ծլերն ու ծաղիկները բաց արին, սակայն՝ այդ առաջնակայ ժամանակաշրջանում սկսում էին արդէն ծլել ու ծաղկիլ։ Մենք դրանք յիշեցինք իբրև այն բնոյթին պատկերը (քարակտէր) որ զանազանում էր ու ջոկում Անկլիան ցամաքային Եւրոպէին։ Այսօր, այդ կարգ և սարք, որոնց մէջ Անկլիա պահում է դեռ գլխաւորութիւնը, ամեն քաղաքակիրթ ազգաց հասարակ ստացուածքն եղան։ Բայց Անկլիան է՝ որ առաջինն եղաւ նրանք ընդունողն ու գործադրողը։ Հոլլանտիոյ հասարակապետական աղատութիւնը զուրկ էր ազգային միութենէն և յաջողելու համար էլ պէտք եղած զօրութենէն։ Ուրիշ տեղ միութիւնք որ միութիւն էլ, զօրութիւն էլ ունէին, չունէին այդ ազատութիւնն, առանց որոյ յաջողումն էլ անհնարին էր։ Թէ միոյն և թէ միւսին առաւելութեանց բարեյաջող միութիւնն եղաւ Անկլիոյ յաղթանակն ապահովացնողը։

ԳԼՈՒԽ ԺԱ.

Լօնտօն, աշխարհի ամենամեծ շուկապանը.—Տարաձիրի տպաւորութիւնը.—Լիվերբուլի նեղ ծոցը։

Լօնտօն, արդէն երեւելի միջին դարերում աճել էր ու ծաղկել Տուտորների և Սաուարդների ներքեւ, և ամէն ժամանակ Անգլիոյ վաճառականութեան պատան էլ եղել։ Տիեզերքին վաճառականութեան մայր քաղաք, տասնութերորդ դարու ընթացքումն եղաւ։ 1700 թուին, Տամիզի մէջ 839 բրիտանական նաւ և 496 օտարական նաւ էին մտել։ Իննսուն տարի յետոյ 2284 բրիտանական, 1256 օտարական նաւ մտաւ։ Այդ քաղքի հսկայական մեծացումն որ ծանօթ եղած ամեն համեմա-

տութեան վրայ անց էր կենում, ինքն իրան եղաւ պէտքերի և չահերու ներդործութեամբ միայն։ Այդ բանը՝ մի թագաւորի կամքով չեղաւ, հապա վաճառականութեան բնազդեցիկ զօրութեամբ. ընդհակառակը, վարչականութիւնը չանք արեց այդ մեծացումին առաջն առնելով կանգնեցնել ու սահմանաւորել։ Լօնտօն՝ տերի առեւտրական ընկերութեանց, վարկի հիմնադրութեանց, ապահովական ընկերութեանց և մանաւանդ վաճառականաց պորտի, պակաս չէր ծնալու մեծ հրապարակը լինելուց՝ ինչպէս փողի համար, նոյնպէս և ապրանքի. և կեդրոն՝ որքան վաճառատարութեան համար, այնքան էլ վաճառաբերութեան։ Ձեռարհեստաներն էլ նոյնպէս իրանց ճիւղերէն մեծ մասը, Լօնտօնում իրանց դէմերն ունէին։ Այդ մայրքաղքում էր որ օտար փախստականք իրանց ոտքն էին դրել և մեծամեծ ձեռագէն պորտերն էլ ծնելու վրայ էին։ Մինչեւ 1774 թուին 41 հազար բնակչէն աւելի չունէր։ Լիւց՝ հազիւ 18 հազար և Բիրմինկեմ և Շեֆիլդ քաղաքներն էլ դեռ նոր են ծլել ու ծաղկել։ Կլասքով արագ ծաղկեց այն միաւորութեամբ, որ Սկովտիու նաւահանգստները հաւասարեց Անկլիոյ նաւահանգստներին գաղթականական վաճառականութեան համար։ 1718 թուին Գլայդ քաղքէն առաջին նաւն դուրս գալը տեսնուեց, որ Աղլանտեան Ովկիանով անց կացաւ։ Այդ քաղաքը Մարիլենի և Վիրգինիոյ ծխախոտի գլխաւոր պահեստատեղին եղաւ։ Բայց այն ձեռարհեստին, որով նա մրցում է այսօր Մենչսթրի հետ՝ պաչտօնը դեռ չատ համեստ էր։ Շատ արհեստատներ դիւղերումն էին ցրուած դէս ու դէն։ Աչխատութիւնը գործատներում և իրանց տեղաւորութիւնը քաղաքներում ընդհանուր՝ մեքենականութիւն գործածելուց յետոյ եղաւ։ Նաւահանգստների մէջ, Բրիստոլ՝ Լօնտօնէն անմիջապէս յետոյ է գալի, և պէտք էր որ հնութեան կողմէն առաջին կարգն ունենար. բայց վաճառականութեան մէջ կանխագրաւում չկայ. Սաւերնաի հին պահեստատեղին, առաջնակայ չրջանի վերջերում ինքն իրան չատ յետ ձնացած տեսաւ Մէրսէլի ափերում մի նոր երեւած պահեստատեղից։ Լիվերբուլի այսօրուայ վիճակութիւնն իր ստորին ծագմանը հակառակն է ցոյց տալի։ Տասնուվեցերորդ դարում այդ քաղաք գիւղիկ մ'էր առանց թեմական եկեղեցու, չրջանը չորս մղոն ակռով ու 133 բնակչով. երկու կամ երեք նաւ միայն ունէր հազիւ 223 տակառի կարողութեամբ։ Լիվերբուլ եղիսաբեթի թագուհուն մատուցած մի աղերսագրում ինքն իրան համար՝ էր վհհափառ ընկած խեղճ ոտն էր առում։ Սեւամորթների առուտուրն եղաւ նրա բաղդին դուռը բաց անողը։ Իր նաւահանգիստը, որ նշանաւոր եղաւ առաջին դէպերի (ատազան և կացարան նաւերու) հաստատութեամբը, մի չատ նաւեր սարքող սեւամորթ գերիներու վաճառականաց համար։ Տասնեօթներորդ դարու վերջերում իր բնակիչների թիւը հինգ հազար էր և Ամերիկու պատերազմին յիսուն հազարի էր հասել. սեւամորթների առուտուրն տեղը բռնեց չատ չատով մի աւելի պատուաւոր առուտուր։ Մի զօրաւոր ընկերութիւն

մենավաճառութիւն էր անում Արեւելեան Հնդկաստանում։ Լօնդօնի վաճառական տներն այն տեղ տիրում էին, բայց թողելով Լիվերպուլն։ Այդ ժամանակ Լիվերպուլ իր աչքերը դեպի Արեւմտեան կողմեր դարձուց։ Կանուխ յարաբերութեանց մէջ մտնելով անգլիական գաղթականաց հետ՝ իր նաւահանգստներում գրաւեց հիւսիսային Ամերիկու ողջ առուտուրը նրանց ազատութենէն յետոյ։ Այդ իրողութիւնը թեեւ յետագայ ժամանակաշրջանին լինի վերաբերում, բայց հէնց անց կացած տարուց այդ քաղքի առեւտրական դործունէութիւնն դդալի եղաւ Մէնչեստրի հարեւան դործատներէն և այդ քաղքով էր որ յարաբերութիւն էր լինում Իռլանտիու հետ։ Իրրեւ պորտ հիւսիսային եւրոպու հետ եղած դործերին, պէտք է յիշատակել Հիւլլ (քաղաքը) և Իրրեւ դլխաւոր ամբար քաղաքի Նիւքեասդլ։ Բոլոր այդ ծովային տեղիք իրար հետ կապուած էին ջրանցքներով, որոնք դալիս էին ձեռարհեստականութեան և երկրագործութեան դլխաւոր տեղերին և նրանց բերքերն էին տանում ու բերում։

ԳԼՈՒԽ ԺԲ.

Դրամատէրն և կամ դրամագուն (բանկ) և վարկական դրութիւնը. — Իրանց ուղիները. — Ոսկերիչ. — Ասիլեայ բանկէ հիմնարկութիւն. — Իր երաշխաւորները ու դրամագլուխը. — Ճէնթամ. — Սկովտիայ բանկերը. — Մեռած դրամի ընդհանրութիւն ուժգնացնելու։

Թեեւ Անգլիա ոչ մի ժամանակ մի աղքատ երկիր չէ եղած, և թէ նոյն այն ժամանակում երբ իր վաճառականութիւնը իր երկրի բերքերով էր միայն, նա արդէն մեծ չահեր էր երացնում, թէ և այն միջոցին յանկարծ մանակցելով միջազգային վաճառականութեան դէպի իրան էր հրաւիրում Ամերիկու հարստութեանց մի մեծ մասը, ինչպէս Հոլլանտան նոյնն էր արած Պօրտուկալի և Սպանիոյ ձլաս տալով, և այդպէս աճեցուց չրջաբերութեան մէջն եղած իր դրամագլխին ամբողջութիւնն. այդ դրամագլուխը սակայն դեռ հեռու էր բաւելու այն կարգէ դուրս չահերին, որոնք իր դիտաւորութիւնքը պահանջում էին ծովային և առեւտրական դլխաւորութեան համար։ Իր քաղաքային զօրութեան զարդացման հետ իր առեւտրական դործատնութիւնքն ուելացել էին մի ուելի արագ յառաջադիմութեան մէջ։ Որևիցե բանի՝ նոր դրամագլուխ ճարելն էր վարկով, և մեռածի սակի տեղ բռնել տալ չրջաբերութեան համար չինելի միջոցներ։

Անգլիա, որ այնքան հեռուն էր տանելու բանկի և վարկի զարդացումն, այդ մասին յետ էր մնացել ցամաքային եւրոպէն։ Երկար ժամանակ իր թագաւորներն և յետո ու յետոյ կարող չ. իրաւունք էր տուած ինքն իրան դրամասեղան սարքելու. Թագաւորի փոխանակութիւնը (չանջ բէյ) ասում էին։ Փողերանոցը փողի պահեստատեղին էր, բայց մի ապահով տեղ համարուելուց դադարեց, երբ քաղաքային պատերազմները դրաքուեցան կարող չ. ու ժամանակ, և երկիրն անիշխանութեան ուրս եղաւ։ Այդ ժամանակ ոսկերիչներին դիմեցին։ Այդ համարհեստաւորք, խիստ երեւելի համարուած, միչտ տէր լինելով մեծ գումարների և թանկագին մետաղների, հարկաւ ուելի յաջողակ էին լինելու նրանք պահելու մասին՝ քան թէ հասարակ վաճառականքն, որ չէին կամենում այդ բանի համար ծախք անել։ Ոսկերիչների մէջ այդ մասին պատրաստութիւն տեսնելով, նրանք հեչտութեամբ վարժուեցան իրանց փողը նրանց ձեռումն յանձնել և նրանց ձեռքով իրանց վճարմունքներն անել տալ, որն որ իրագործւում էր պարզ դրութեանց միջոցով. երբ ոսկերիչներն, ինչպէս չատ անգամ պատահում էր, իրանց ձեռաց ներքեւ ունէին թէ՛ պարտատիրոջն և թէ՛ պարտականին դրամագլուխն։ Այդ՝ մանաւոր մարդկանց պահեստ դրամասեղանն էր։ Պահեստառուն մի փոխարէն հատուցում ստանալով պահեստատուէն, որն որ վճարուելով մի չատ մարդկանցմէ, դրանց ամէն մէկին համար թեթեւ բան էր ընկնում։ Ոսկերիչք՝ իրանց ձեռում պատրաստ մեծ քանակութեամբ դրամ ունենալով, որոնք չատ քիչ անգամ էին համրում, կամաց կամաց իրանց ակդրնական նպատակէն չեղելով ուրիչ օտար դործատնութեանց մէջ մըտուեցան. խոշոր տոկոսով ահագին գումարներ փոխ տուին Գրոմուէլի պատերազմին։ Միւս կողմէն իրանց միջոցներն էլ աճեցնելու համար, գումար փոխ էին առնում չափաւոր տոկոսով մի անորոչ ժամանակի համար և միչտ պատրաստ էին յետ դարձնելու այդ գումար իրանց պատրաստերներին, երբ սրանք իրանց դրամագլխէն պէտք ունենային։ Այնպէս պատահեց, որ իրանց դանձանակն ամեն հարուստ մարդկանց փողերն ընդունում էր և թէ առանց մի արտօնութեան և ձեւակատարութեան՝ ոսկերիչք փոխատուութեան բանքի ամեն դործերը կատարեցին։ Այդէն, Գրոմուէլի ժամանակէն, հասարակաց կամ տէրութեան մի բանքի հիմնարկութիւնը՝ չատ անգամ առաջարկուեց։ Բայց այդ առաջարկութեանցմէ ոչ մինը հետեւանք չունեցաւ և ոսկերիչք էլ անչուչտ իրանց ողջ ազդեցութիւնը դործ դրին այդ առաջարկութեանց ձախողութեան համար։ Դրանք կամենում էին փոխատուութեան մենավաճառութիւնն իրանց համար պահել և այդ բանով, որքան կարելի է, այնքան չատ չահ անել։ Դրանք հարիւրին վեց էին տալի՝ իրանց մօտ պահեստի դրուած փողին համար, իսկ հարիւրին 10 էն մինչեւ 20 էին պահանջում իրանց՝ ուրիշներին տուած կանխիկ փողին համար։ Այդ համարհեստաւորների ազդեցութեամբ փողի չահու սակագինը բարձրացաւ։ Փոքրիկ ձեռարհեստաւորը և փոքրիկ հողատէրը անկարող եղան տոկոս վճարելու։ Շատ հողեր անմիչտ ծնացին դրամագլխի պակասութեան համար և իրանց

նակ իր թագաւորներն և յետո ու յետոյ կարող չ. իրաւունք էր տուած ինքն իրան դրամասեղան սարքելու. Թագաւորի փոխանակութիւնը (չանջ բէյ) ասում էին։ Փողերանոցը փողի պահեստատեղին էր, բայց մի ապահով տեղ համարուելուց դադարեց, երբ քաղաքային պատերազմները դրաքուեցան կարող չ. ու ժամանակ, և երկիրն անիշխանութեան ուրս եղաւ։ Այդ ժամանակ ոսկերիչներին դիմեցին։ Այդ համարհեստաւորք, խիստ երեւելի համարուած, միչտ տէր լինելով մեծ գումարների և թանկագին մետաղների, հարկաւ ուելի յաջողակ էին լինելու նրանք պահելու մասին՝ քան թէ հասարակ վաճառականքն, որ չէին կամենում այդ բանի համար ծախք անել։ Ոսկերիչների մէջ այդ մասին պատրաստութիւն տեսնելով, նրանք հեչտութեամբ վարժուեցան իրանց փողը նրանց ձեռումն յանձնել և նրանց ձեռքով իրանց վճարմունքներն անել տալ, որն որ իրագործւում էր պարզ դրութեանց միջոցով. երբ ոսկերիչներն, ինչպէս չատ անգամ պատահում էր, իրանց ձեռաց ներքեւ ունէին թէ՛ պարտատիրոջն և թէ՛ պարտականին դրամագլուխն։ Այդ՝ մանաւոր մարդկանց պահեստ դրամասեղանն էր։ Պահեստառուն մի փոխարէն հատուցում ստանալով պահեստատուէն, որն որ վճարուելով մի չատ մարդկանցմէ, դրանց ամէն մէկին համար թեթեւ բան էր ընկնում։ Ոսկերիչք՝ իրանց ձեռում պատրաստ մեծ քանակութեամբ դրամ ունենալով, որոնք չատ քիչ անգամ էին համրում, կամաց կամաց իրանց ակդրնական նպատակէն չեղելով ուրիչ օտար դործատնութեանց մէջ մըտուեցան. խոշոր տոկոսով ահագին գումարներ փոխ տուին Գրոմուէլի պատերազմին։ Միւս կողմէն իրանց միջոցներն էլ աճեցնելու համար, գումար փոխ էին առնում չափաւոր տոկոսով մի անորոչ ժամանակի համար և միչտ պատրաստ էին յետ դարձնելու այդ գումար իրանց պատրաստերներին, երբ սրանք իրանց դրամագլխէն պէտք ունենային։ Այնպէս պատահեց, որ իրանց դանձանակն ամեն հարուստ մարդկանց փողերն ընդունում էր և թէ առանց մի արտօնութեան և ձեւակատարութեան՝ ոսկերիչք փոխատուութեան բանքի ամեն դործերը կատարեցին։ Այդէն, Գրոմուէլի ժամանակէն, հասարակաց կամ տէրութեան մի բանքի հիմնարկութիւնը՝ չատ անգամ առաջարկուեց։ Բայց այդ առաջարկութեանցմէ ոչ մինը հետեւանք չունեցաւ և ոսկերիչք էլ անչուչտ իրանց ողջ ազդեցութիւնը դործ դրին այդ առաջարկութեանց ձախողութեան համար։ Դրանք կամենում էին փոխատուութեան մենավաճառութիւնն իրանց համար պահել և այդ բանով, որքան կարելի է, այնքան չատ չահ անել։ Դրանք հարիւրին վեց էին տալի՝ իրանց մօտ պահեստի դրուած փողին համար, իսկ հարիւրին 10 էն մինչեւ 20 էին պահանջում իրանց՝ ուրիշներին տուած կանխիկ փողին համար։ Այդ համարհեստաւորների ազդեցութեամբ փողի չահու սակագինը բարձրացաւ։ Փոքրիկ ձեռարհեստաւորը և փոքրիկ հողատէրը անկարող եղան տոկոս վճարելու։ Շատ հողեր անմիչտ ծնացին դրամագլխի պակասութեան համար և իրանց

գներն էլ ընկան։ Գործերը նուազեցան և պէտքացու ուտեստի և ձեռա-
չէն բերքերի գինը վեր եկաւ, երկրի հարկ տուող ստացուածք և հարըս-
տութիւնք սաստիկ նուազեցան և կարող բ. մնքն անգամ կարող չեղաւ
1674 ին ճշդութեամբ վճարել բարձր տակոսները, որոնք պարտական էր
ոսկերիչներին 1,328,526 փաունդ Ստերլինկ մի փոխառութեան համար։

Մեծ մեծ կորուստների պատճառ լինելուց յետոյ՝ այդ դեղմունք
դադրեցան. իրաւ է, բայց աւելի սաստիկ զգալի եղաւ մի ընդարձակ
և հաստատուն վարկի հիմնարկութեան հարկը, այն կերպով որ գոհաց-
նում լինի վաճառականութեան օր օրուան վրայ աճեցող պէտքերին։
Վարչականութեան դրամական նեղութիւնքն չտապեցուցին դրա հիմնար-
կութիւնը։ Լօնտօնի Սէթէլ վաճառականք, որոնց գլխին էր դանուամ
Սկովտիացի Պատրոն, կառավարութեան 1200 փաունդ Ստերլինկ մի փո-
խատուութիւն առաջը դրին, իբրեւ գին մի արտօնագրի, որ իրաւունք
տայ չրջաբերութիւն ունեցող մի տէրութենական բանկի հիմնարկութեան։
Կառավարութիւնն ընդունեց առաջարկութիւնն և 1694 Թուին յունիս 27ին
Անկլիոյ Բանկի հաստատութեան հրովարտակը չնորհեց։ Ցերութեան
փոխ տրուած գումարն անմիջապէս նրան յետ յանձնուեց մուրհակով,
յանձն էլ առաւ տէրութիւնն հարիւրին ութ էլ չահ տալու և չորս հա-
զար փաունդ Ստերլինկ Բանկի անօրէնութեան ծախուց համար էլ նպաս-
տելու։ Անկլիոյ Բանկի գործերն էին այն ժամանակ և են դեռ այսօրուան
էլ, երեք տեսակ. այսինքն փոխանագրերի չահու կտրում (էֆֆդ), ձուլ
ոսկու և արծաթի առուտուր և կանխիկ փոխատուութիւն կառավարու-
թեան հաւաքած տուրքերին գոյացած գումարի վրայ. այդ փոխատուու-
թիւնը մինակ Բանկն է կարող անել և որոնց համար նա սահմանում է հա-
րիւրին 3 տարեկան չահ։ Նա այդ կերպով կառավարութեան բանկն է,
և իր պաշտօնն էլ խառն է. նա իր թղթով ոչ թէ միայն վաճառականու-
թեան և ձեռարհեստաւորութեան օգնութեան է հասնում, հապա նաև
տէրութենական դանձուն էլ։ Իր արտօնութիւն ամբողջուեց 1708 ին
խորհրդարանի օրէնքով, այդ օրէնքն արդելում է Անկլիում վեց ընկե-
րակցէ աւելի ունեցող որ և է ուրիչ Բանկի հիմնարկութիւնը. ինչպէս
նաեւ օրէն՝ կամ վեց ամիս պայմանաժամով թղթեր մուրհակներ դուրս
հանելու. իր՝ 4,402,543 փաունդ Ստերլինկ դրամագլուխ 1708 ին 10 մի-
լիոն 780,100 փաունդ Ստերլինկ բարձրացաւ 1746 ին, այդ թիւը մնաց
մինչեւ ժամանակիս չրջանին վերջը։

Բանքը, բուն իր հիմնարկութեան առաջին տարին, մի ճգնաժամ
ենթարկուեց, ընդհանուր դրամների նորէն հալուելուն պատճառով և
ստիպուեց անգամ իր վճարմունքը կանգնեցնել։ Սակայն կառավարու-
թեան օգնութիւնն և բանքավարիչների, անօրէնների իմաստութիւնն ա-
զատեցին նրան։ Այն ակզբունքները, որոնցմով անօրէնութիւնը վարուեց,
միշտ խոհեմ և արդար ճանաչուեցան. իր բաժինների սակադինն որ հա-
րիւրին ութն երբեք չանցկացաւ և միջին հաշուով 5 1/2 էր բարձրանում,

ապացոյց է բաւականին, որ ընդհանուր չահը զոհուած չէր բաժանորդ-
ների մանաւոր չահուն, և թէ միշտ պահուած է եղել չափաւորութիւնն
ու հեռատեսութիւնը։ Դժուար է ճշդ թուեր տալ դուրս հանուած
թղթերին, բայց երեւում է որ, արդէն ընդունուած էր դանձանակում
պահելու դուրս հանուած, չրջաբերութեան արուած թղթին, դոնէ եր-
րորդ մասին արժէնքով մետաղ դրամ։

Անկլիոյ Բանքի արտօնութիւնը Սկովտիում չէր բանում։ Լօնտօնում
արուած օրինակին, իսկոյն և եթ այդ երկրում հետեւեցան, որու քնա-
կիչք մի յատուկ խորագիտութիւն ցոյց տուին հաստատակաց տնտեսական
դիտութեան մէջ. և մանաւանդ դրամու և վարկի դժուարին խնդիրնե-
րում։ Առաջինն բանքն այն տեղ 1695 Թուին հաստատուեց Սկովտիական
Բանք անունով։ Նրանէն յետոյ, 1727 Թուին Լսինբուրգի Թագաւորական
Բանքու վեր կենալն երեւաց. 1746 Թուին, Բրիտանական վաւաճառ,
կտաւավաճառ ընկերութիւնը, 1767 Թուին, Ըրէյրին և ուրիշ դրա նը-
մանների ընկերութիւնը։ Այնպէս որ, 1783 Թուերում Սկովտիան արդէն
տասնուչորս Բանք ունէր, որոնց ամենքն էլ Թղթերչէին դուրս հանում և
օդնական ճիւղեր ունէին։ Սկովտիում Բանքերը մի առանձին դրութիւն
սահմանահիմնեցին։ Այդ տեղ առուտուրը չատ մեծ չէր և չրջաբերու-
թեան մէջն եղած դրամադլուխն էլ մի միլիոնուկէս փաունդ Ստերլինկ,
որն որ խիստ չատ նուազ էր կարող լինելու առեւտրական վարկագրերի և
փոխանակագրերի (էֆէ) չահակտրումով բանականին դրաղեցնել Բանկերը։
Ուստի չուտով դրաւադրական վարկն իրանց գլխաւոր նպատակն եղաւ
և ամենէն առաջ փոխատուութեան Բանքեր եղան, իրանց ունեցած
պատրաստի դրամագլխու ամբողջ հաչուին համար, բայց էին անում այն
մարդուն առջեւ, որ ցոյց էր տալի հաստատելու կարողութիւնը ծա-
նօթ երկու կալուածատեր, պատասխանատու լինելու համար փոխա-
տուութիւն ետ դարձնելու և օրինաւոր չահը վճարելու. մի վարկ կամ
Թէ, ինչպէս իրանք էին կոչում, դանձանակի մի հաչիւ իրանց հաչուե-
դրքերում և դիւրութիւնքն աւելացնելու համար, ընդունում էին իբ
վճարմունքներն օրադրութեամբ կամ ժամադրութեամբ։ Ամեն վաճա-
ռականք և դրեթէ բոլոր նրանք, որ դրամագլխու չարժմունք ունէին
գործելու, առաւելութիւն էին գտնում իրանց համար մի դանձանակի
հաչիւ բաց անել տալու Էդինբուրգի Բանքերէն մէկուն մէջ։ Դրանք չահ
ունէին այդ Բանքերի գործօղութեանց նպաստելու, թէ նրանց վարկա-
դրերն ընդունելով իբրեւ վճարմունք, թէ ուրիշ մարդկանց էլ ընդունել
տալու այդ վարկագրերն, ինչպէս իրանք ընդունում էին։ Երբ մի խա-
նութպան դրամագլուխ էր կամենում Բանքերէն, Բանքերը նրան սովո-
րաբար վարկագրեր էին տալի։ Այդ վարկագրերով խանութպանն իր
պարտքն էր վճարում ձեռարհեստաւորին, որ իրան իր ձեռագործն կամ մե-
քենագործն ապրանքներն էր տուել։ Ձեռարհեստաւորն էլ նոյնպէս իր
պարտքն էր վճարում երկրագործին, որ նրան ուտեստ էր տուած։ Երկ-

բազմածը վարկագրերը խանութպանին էր բերում նրա ապրանքները վճարելու համար. այդ վերջին էլ վերջին ու վերջին ետ էր դարձնում այդ վարկագրերը բանկին իր գանձանակի հաշուին կանոնաւորութեան համար, կամ թէ իր պարտքին չնչման համար: Այդ կերպով Սկովտիում կատարուել են և կատարւում մինչեւ այսօր, գրեթէ բոլոր վաճառականաց իրար հետ ունեցած գործերը: Բանկերի միջնորդութեամբ և այդ հաստատութեանց մէջ ընդունուած կարգաւորութեան եղանակը Անգլիոյ դրութեան անունով է նշանակուած: Ամեն բանկերի նման, ընդհանրապէս, այդ բանկերն էլ իրանց ամբողջ գործունեայ մեր ժամանակուայ չրջանում հասան: Սակայն Սկովտիոյ ձեռնարհեստաւորութիւնն և վաճառականութիւնն, որ մինչեւ այն օր մի աննշան բան էին, նրանց են պարտական իրանց զօրութիւն, նոյն իսկ այդ ժամանակուայ չրջանում որու վրայ է մեր խօսքը: Այդ ձեռնարհեստաւորութիւնն ու վաճառականութիւնը գրեթէ հնգապատկուել էր առաջին բանկի հաստատուելուց մինչեւ տասնութերորդ դարու միջում: կասկով, որ առաջ մի չնչին բան էր, Ամերիկու ծխախոտի կամ քթախոտի պահեստատեղին էր եղել և ապագայով լիքը մի տարածագործ քաղաք:

Բայց, մարդկային ամենալաւ կարգերն ու սարքերն իրանց պակասութիւնքն ունին. թղթադրամին խիստ արագ աճումն՝ այն օրէն զեղծմունք և փորձանք առաջ բերեց: Առաջին բանկի հիմնարկութեան ժամանակ ութ միլիոն փաունդ Ստերլինկէն աւելի չէին արժեցնում Անկլիում չրջաբերող դրամագինը: Հեշտ էր մոլորուելը կամ թէ թոյլ գրատնուէն անհամեմատ վարկագրեր դուրս տալու և յետոյ աննպաստ և ձախորդ հանգամանքներում կտոր ընկնելը, անվտանգութեան հասնելը: Խիստ հիասկ էլ է որ, բանկերն ու իրանց վարկագրերը շատ ու շատ օգնեցին Անկլիոյ վաճառականութեան և ձեռնարհեստաւորութեան, որոնք մեծ նպատով էին մեծանում, այն ասուիճան որ չրջաբերող դրամագլուխն աճելով էր աճում: Անկլիա, կարող եղաւ իր դրամէն մի մասը՝ ուրիշ աշխարհներում դրաւ դնել և աւելի երկար վարկեր տալ օտար վաճառականներին, այդ բանն արեց նա՝ դլխաւորապէս Ամերիկու գաղթակատնաց միջեւ Ռուսիայում: Պատերազմի ժամանակ նա՝ պարտաւորուեց ցամաքային եւրոպում ահագին դումարներ ուղարկել: Նա՝ պատերազմին անուղղակիր կերպով էր մասնակցում և իր դաշնակիցներին փողերն պաշարով էր դիմանում աւելի քան թէ զօրքով: Ի՞նչպէս, իր մեծ տարածագրամի արժեգինը պակասեցնելով նա կարող էր լինելու չարունակել աշխատին առանց մի ուրիշ չրջաբերող գործիքի: Իր մեծատարածրամի արժեգինը այդ պատճառով կորած չէր: Նա՝ ուշանում չէր այդ մեծատարածրամ նորին դէպ իրան քաշելու, ահագին չահերով դիզուած ու աւելցած, իբրեւ վճարմունք իր տարածագործ ապրանքների յուզարկութեանց, և իր սեղանաւորք ամենագործօն յարաբերութիւնք էին բռնում օտար աշխարհների սեղանաւորների հետ: Ամեն հրապարակներ

րում, բաց ի Ամստերտամու հրապարակէն, փոխանակութեան ընթացքը լօնտօնի էր նպաստաւոր: Ամերիկու պատերազմէն առաջ մեծատարածրամի չրջաբերութիւնն Անկլիում քսանուեօթն միլիոն փաունդ Ստերլինկ էր արժեցուցած:

ԳԼՈՒԽ ԺԳ.

Պատերազմներէ աշխատութեան վաճառականութեան և չեռնարհեստաւորութեան վրայ. — Յաճախ պատճառ յաղթութեանց ցամաքային եւրոպում. — Տերութեան փոխառութիւն. — Հաստատուց (տերութիւն) պարտէ պրութիւն. — Պարտաքրքրան պրամագլուխ. — Լծորդի պարտը (վճառականաց), հաստատուց վրդիպերէրէ և փոխանակութերէրէ առարտար. — Բանծանօրդութեամբ չեռնարկութիւն. — Շահաբերութիւն (ապիտալ) ասկի և սրծամբ պրամի. — Հարաւային ծովու ընկերութիւնը, կառավարութիւն է նրա կոր ընդհանրապէս անկախ պատճառ:

Անկլիոյ պատերազմները, տասնութերորդ դարում, յատուկ մի աղդեցութիւն արին վաճառականութեան և ձեռնարհեստականութեան վրայ, տերութենական պարտքին մի ահագին աճում պատճառելով: Մինչեւ 1694 թուերը, առ հասարակ տուրքերի աւելադրութեամբ արտասովոր ծախքերի դէմ էին դրուած. դոնէ, փոխառութիւնք բացառութիւն էին եղած և շատ անգամ էլ թագաւորներէն էին առնուած իրանց անձնական անունով: Այդ փոխառութիւնք կուլիէլմի ժամանակ սկսան մի դանձային դրութիւն սարքելու: Սկզբում, Տերութիւնն էր, առհասարակ իր եկամտէն մի բաժին սահմանում դրամագլխին հատուցման, ինչպէս նաեւ նրա չահերուն համար: Բայց վճարումները ցանցառ էին տեղի ունենում: Տերութեան պէտքերը՝ նուազելու տեղ՝ աւելնալով էին աւելնում, փոխառութիւնը չարունակուեց, տերութենական եկամուտների դրամագրութեամբ նորնոր փոխառութիւնք էին լինում: Վերջնուվերջը, ձեռը վեր առնուեց՝ ժամանակին կամ մի սահմանուած օրին հատուցանելու յանձնառութենէն, և փոխառութեանց մեծ մասը միանգնական եկամուտներ առաջ բերին, որոնք Տերութիւնն էր գործածում մինչեւ որ նա կամենար դրամագլուխը հատուցանել: Այդպէս է եղած Տերութեան պարտքի ծագումը, որն որ սահմանուած էր յետնոյետոյ մի այնպիսի կարեւորութիւն և տարածութիւն ունենալու, որ այդ ժամանակում ոչ մի մարդու մտքովը չէր անցկենում:

Պատասա դրամագլխի նուազութիւնը և յեղափոխութենէ նոր դուրս եկած կառավարութեան վրայ եղած անվստահութիւնը բացատրութիւն կը տան տոկոսների այդ բարձր արժեգնին, որ պէտք եղաւ վճարել առաջին փոխառութեանց համար: Բայց՝ երբ նոր վարչականութիւնը մի լաւ հաստատուեց, և ներսուանց ու դրսուանց մեծ վստահութիւն տուեց ամենքին իր վրայ, դրամական առաջարկութիւնք, մանաւանդ Հոլլանտիոյ

կողմէն, ուր տեղ, ինչպէս տեսանք, ահագին դումարները անդորձածելի էին ճնում, խիստ մեծ չափով ապրյան, և կառավարութիւնն էլ կարող եղաւ 1717 թուին, 100 ին 3 վար ածել տոկոսադինը, որ մի քիչ առաջ օրինաւոր արժեգին էր հրատարակուած և նոյն իսկ 1727 թուին 100/4, առանց մի որ և է կարեւոր պահանջողութիւն յարուցանելու վճարման մասին և առանց ճնշելու տերութեան վարկագրերի ընթացքը: Տոկոսների այդ նուազացումով առաջ եկած չահն ազգային պարագին հատուցման դրամագլխին համար գործածուեց: Այդ բանին առաջին օրինակը տուած էր 1655 թուին Հօլլանտիան, որ նմանապէս առաջին էր եղել տոկոսի արժեգնին ցածրացնողն: Այդ գործը, սակայն ո'ր ակղբունքների վրայ որ հիմնուած էր, ճշդութեամբ պահպանուած չլինելուն համար՝ չը մատուց այն ծառայութիւնը, որմէ սպասուած էր, այդ պատճառով մի շատ կերպարխութիւն կրեց յետադայ ժամանակագրեանում ու վերջապէս ընկուեց:

Այդ կարգի սարքաւորութենէ զատ, Անկլիա և իր վարչականութիւն վայելում էին ոչ աչքառնում մի անդրդուելի վարկ. մի այդպիսի մեծ պարագ ահ չէր տալի երբ տեսնում էր ամեն մի նոր փոխառութեան՝ որ իր հետ ունէր կամ բերում էր երկրին առաջ բերող ուժերի աքանչելի զարգացումը, տերութեան զօրութեան և նիւթական յաջողութեան մի նոր աճեցողութիւն: Ինչպէս որ, դրամի մեծ մասը վոխ էր առնուած նոյն իսկ երկրում, դրութեան ամեն մի առաջադիմութիւն, կառավարութեան դրամական չահերն՝ ազգին չահերուն հետ պինդ էր կապում: Միանգամ որ վարկը ապրուէր կամ հանգէր, վոխառութեանց բանն էլ պրծնելով, հետեւաբար կառավարութեան զօրութիւնն էլ էր վերացած: Մի այդպիսի դրութիւն, այդ կերպով ահմանադրութեան խմորն եղաւ: Բայց, մինչդեռ տերութեան առաջացում իրը հետեւանք չարունակ պաշտօնների աւելացնելն եղաւ, ազգին կամ տերութեան յաջողութեան համեմատական աճեցողութիւնն էլ ահմանադրութեան պահպանութեան մասին մի երաշխաւորութիւն էր ընծայում. մեծ նպատակ, որու համար Անկլիական կառավարութիւնն, աւելի քան մի ուրիշը, պարտաւոր էր ամեն բան զոհել: Փառք ահմանադրութեան, վարկին և ազգային յաջողութեան անքակտելի համերաշխաւորութեան, Մեծն Բրիտանիա ետ չմնաց ձեռք բերելուց կարգաւորական մի ուժ և զօրութիւն, որ ցանքային տերութիւնը չատ հեռու էին մեր աչքի առաջն հանելու: Անկլիական պարագին թուանշանը, որ 664,263 փաունդ Սաերլինկ էր 1688 ին, բարձրացել էր մինչեւ 249,851,628 փաունդ Սաերլինկ 1783 թուին, վերջապէս լսազգութեան տարին, պէտք չէ առանձնակի կարգացուին, հապա դէմ ու դէմ դնելով այն քաղաքներն, որոնց մէջ նշանակուած են վաճառականութեան, ձեռարհեստականութեան, նաւարկութեան և երկրագործութեան առաջադիմութիւնը մի և նոյն ժամանակշրջանում:

Տերութենական պարտքի աւելումն չատ մանաւոր մարդկանց հարստութեան աղբիւրներ բացաւ, ընդարձակելով դրամական գործառնութեանց դաշտը: Տերութենական վարկաթղթերի առուտուրը՝ ղօնտոնի վաճառականաց պորտում, ինչպէս որ արդէն Ամստերտամի պորտին էր, մի մանաւոր և կարեւոր արհեստ եղաւ: Շահագիտութիւնը, քանի գընաց, աւելի ընդարձակուեց և հեռագնեաց ապրանքների վրայ էլ տարածուեց: Ամեն մարդ բաժինով ձեռնարկութիւն անելու սիրամոլուեց, ամենաանշնորհք և ամենաանճառնի խորհուրդներ, ծրագրեր դուրս եկան և չահագութեան ոգին և չատ չուտով հարստանալու մոլեկան կիրքը, եւրոպա գլխաւոր պորտերում յաղթելով, տասնութերորդ դարու առաջին քսան տարիներում, այնքան աւելի պարզամիտներ գտան, որքան որ կառավարութիւնը, մի յանցաւոր մտամոլութեամբ նրանց քաջալերում էին և իրանք էլ դրանց մասնակցում: Հարաւային ծովու ընկերութիւնն, արտօնատէր եղած 1711 թուին, այդ մասին ամենէն հռչակաւոր օրինակն է Անկլիում:

Այդ ընկերութեան սարքուելուն ամենէրեւ նպատակն էր կառավարութեան դրամական մի չահագիտութիւնը: Սպանիոյ գահուն յաջորդութեան համար եղած պատերազմը գանձը սպառած էր և այնպիսի պարտքեր էր դիզած, որոնց դէմ տոկորական աղբիւրները չէին ներում դնել: Տերութեան վարկը լրացած էր, չահաչնչման արժեգինը բարձրացած, արդէն վաճառականաց պորտն էլ ցոյց էր տալի իր թուլութեամբ իր քիչ ունեցած վստահութիւն պաշտօնէութեան վրայ, որ անց էր կացել Ուիլկների ձեռքէն Տօրների ձեռին: Այդ վերջինք Ֆրանսիոյ հետ, հաւարակաց կարծիքով մերժուած մի խաղաղութիւն կնքելու վրայ լինելիս՝ մի օդնութենէ պէտք ունէին, որն որ հնարագիտութեամբ յոյս ունէին ձեռք բերել ապահովկերպով Ֆրանսական կարողութեան տէր ընկերն: Այդ յոյսն ամենեւին զատարկ չէր: Շահու ածելով ճարպիկութեամբ չահագութեան սիրոյ ճաշակն և վաճելով մարդկանց ծակաչքութիւն, նորէն Ամերիկուց դուրս քաշելու ոսկի և արծաթ անհուն արժեգների հեռանց երեւութովը, չնորհել առաջարկուեց, զատ երեւութին ամենաազատական պայմաններով, մի նոր ընկերութեան, Օրէնօքի հարաւային կողմն եղած նոր ցամաքի արեւելեան և արեւմտեան ծովափերի առանձին վաճառականութիւնը: Առաջարկութիւնն յաջողուեց, բաժանորդների թիւը խելքէ դուրս բան եղաւ: չահագութիւնը (ֆէյսթ) չատ չուտով ամեն արժեգնների ընթացքին մի բարձրութիւն պատճառեց և կառավարութիւնն էլ իր ձեռքը բերեց ձեռնարկութեան վարչութիւնը, որն որ իրան համար էական բան էր:

Ընկերութիւնն, յայտնի բան է որ, հիմնուած էր այն կարծիքի վրայ՝ թէ Անկլիա, Սպանիոյ հետ դաշնադրելիս՝ ամենէն չահաւոր պայմանքը ձեռք է բերելու, հարաւային Ամերիկու հետ եղած վաճառականութեան համար, և թէ նա՝ այդ վաճառականութենէն խելքէ մտքէ դուրս չահ

և օգուտ էր քաղելու։ Արդ, Սպանիա ամէնօրի դաշնադրութեամբ Անգլիացոց միայն գերիների մի որոշ թիւ և մինակ մի վաճառաքարձ նաւ Պօրտօ–Բէլլօի նաւահանգստում ներս մտցնելու իրաւունք չնորհեց։ Այդ չնորհումն ամենևին չէր բաւական ընկերութեան փայլուն յոյսերն իրագործելու։ Իրաւ է որ, որքան որ մաքսանենգութիւն կարող էր եղած՝ մաքսանենգել էր ամէնօրի նաւով։ Բայց արեւմտեան Հնդկաստանի գաղթականք այդ բանում շատ վաղուց էին ձեռնարկած և շատ էլ առաջ գնացած։ Այդքան սահմանափակ գործողութիւնը չէին կարող ընկերութեան դրամագլուխը գործածելու և ոչ էլ այն չահագիտութեան եռանդը բանեցնելու, որով նա վառուած էր։ Ուստի ընկերութիւնն՝ ուրիշ ձեռնարկութեանց վրայ միտքը դարձուց։ Այն ժամանակ կառավարութիւնն առաջարկեց նրան իր հաշուին վեր առնել սէրութեան պարտքը։ Ընկերութիւնն այդ առաջարկութիւնն ընդունեց և 1719 թուին իր դրամագլուխը տասներկու միլիոն փաունդ Սթերլինգի մօտ հասուց։ Գրեթէ մի և նոյն ժամանակում երբ Լաօվ Ակովախացու գրութիւն օրօրում էր Ֆրանսիան Միսիսիպու և Լուիզիանայի ցնորքներով, խելքէ փչած անճառնի ցնորաբաններ տեսնուեցան։ Ուրախութիւն անց էր կենում ծրագրերի թիւն որոնց ամենքն էլ նորանոր բաժինների բաժանորդագրութեան վրայ էին հիմնուած, իրաւամբ՝ դրանց համար խարէական դողութիւնը բնութիւն էին ասում, բայց այն ասելիան էր կուրութիւնն, որ հազարաւոր մարդիկ կործանեցան, մինչեւ որ ողջմտութիւնն իր տերութիւնը ձեռք առաւ։ Լրագրերը լիքն էին բոլորովին նոր նոր գործերի ազդերով և յանուցմունքներով, որոնց բաժանորդները չատ շուտով կրեասոններ (լիուտացոց հարուստ թագաւոր հնումն) էին դառնալու և մինչեւ անդամ իբրեւ ճշմարտութիւն վեր առած այս յետագայ ծաղրածութիւնը. "Այս ինչ տեղ, բայց է լինելու եկող երեքշաբթի, երկու միլիոնի մի բաժանորդագրութիւն, չահու ածելու համար, տաշտքները ձուլելու և նրանց մով անձակ և անճեղ պատուական տախտակ չինելու հնարողութիւնը։"

Այդ տենդի մանրամասնութիւնն, որու նմանը Ֆրանսիաում էլ ենք տեսնելու, մեզ շատ հեռուն կը տանէ։ Երեք անգամ կրկնուած մի բաժանորդագրութեան միջոցով, հարատածոլու, այսինքն Այտանեան և խաղաղական Ովկիանու հարատամասին, ընկերութիւնն 1720ին բարձրացուցած էր իր դրամագլուխը մինչեւ 37,802,883 փաունդ Սթերլինգ, այն ժամանակուայ համար հսկայ գումար։ Բայց այդ մի միայն անուանական արժողութիւն էր, չահածութիւնը բաժինների ընթացքն, որ առաջուց 100 փաունդ էին, 400 ի հասցնելով և վերջն ու վերջը մինչեւ 900 ի։ կարելի է դատել այդ բանէն եղած կորուստն, որն որ արին այդ վարկադրերի տէրերը, կամ թէ այդ վարկաթղթերէն իրանց ձեռին ունեցողները դրեթէ ամեն ծրագրուած ձեռնարկութենէն ձեռք վեր առնելով։

1720 թուականը մի սարսափելի աղէտով վերջացաւ. գրեթէ ողջ հարստութիւնք տակնուվրայ եղան Անգլիում։ Այդ տակնուվրայութիւն

այնքան սաստիկ եղաւ որ բաժինների ահագին բարձր գինը պատճառած էր դրամի և ամեն բանի գների չատ մեծ նուազում. բայց գլխաւորապէս անչարժ կալուածքների։ Այդ ճգնաժամը մի չատ յանդիմանութեամբ և ամբաստանութեամբ լիքը ամենակծու գրուածքների գրգիռ եղաւ, մանաւորապէս կառավարութեան դէմ։ Ցայտնի բան է որ կառավարութիւնն յանցաւոր էր իբրեւ առաջին հեղինակ և մանաւանդ այդ անկարգութեանց, սակայն՝ երբ ճգնաժամը դրաբուեց, նա որ և է կամովի զգուշութիւն անելուց ինքն իրան բռնեց և աւելի բախտաւոր քան Ֆրանսիոյ կառավարութիւն, կարող եղաւ պահպանել տէրութեան վարկն այդ մտանաւորի եղած ձախորդութեան մէջ։ Բայց վերջն ու վերջը, պէտք է պատճառն այն աչքածակութեան տալ՝ որ ընկերականութեան ամեն կարգի ու աստիճանի մարդկանց վրայ տիրել էր։ Ընկլիա այդ կարծր դասէն պէտք ուներ իր կուրութենէն բժշկուելու համար, և աւելի ճիշդ դաղափարներ կազմելու հարստութեանց աղբիւրների վրայ։

ԳԼՈՒԽ ԺԴ.

Ընկլիական երկրագործութիւնը, տասնուերրորդ դարում, այն քայլով առաջ գնաց, ինչ քայլով որ առաջ էին գնացել վաճառականութիւնը, ձեռարհեստականութիւնն և նաւարկութիւնը։ Աւելի լաւ գործուեց մի հողի բերքերի մեծ մասն, որ թէթեւ հարկի ներքեւ ու ծառայութենէ ազատ՝ խելօք ու ժիր երկրագործին աչխատութիւնքն ու բարւոքումները փոխարինում էր և վարձատրում։ Ոչ մի տեղ, թէ որ դուրս հանենք Սատրին նահանգները, երկրի եկամուտն այնքան բարձր չէր։ Մսի սպառումը, որ ընդհանուր էր Ընկլիատում, սատրին դասու մարդկանց մէջ անդամ, յատուկ հողատիրոջ ուշադրութիւնը գրաւեց դատարաքանութեան վրայ դարձնելու։ Աւրօրներում անուցուած դատարը՝ էլ չէր բաւական երկրի պէտքին։ Գոմումը գիրացուցին, սուտ մարդեր չինեցին և դատարի թուին աճումն երկրագործութեան վրայ լաւ ազդեցութիւն արեց՝ աւելի մեծ քանակութեամբ աղբ տալով։ Ընդարձակ հողեր, որ առաջուց ամուլ էին մնակուեցան, ջրալի տեղուանք ցանքեցան. չոր ու ցամաք տափերն էլ չդատուեցան։ Դրամագլուխն ու վարկը կենդանացուցին երկրագործութիւնն էլ, ձեռարհեստականութիւնն էլ։ Ազնուականք իրանց հողերումն էին բնակում և իրանք էին մեծ եռանդով դրանք չահու ածողները. հարստացող ձեռարհեստաւորք և վաճառականք հող գնելու էին հետամուտ և իրանց հարստութեան մի մասը

դրա վրայ էին գնում, երկարատև վարձակալութեանց դաչինք դրուե-
ցան, որոնք ժամանակ էին տալի հողակալին ցանելուց յետոյ էլ հնձել.
իրաւանեան, իրաւ է, բոլորովին ուրիշ մի վիճակ էր ցոյց տալի. այն
տեղ, հողն որ երկրակալութեան իրաւունքով սեպհականութիւն էր ե-
ղած բնակիչներին թշնամի ազնուականաց և նրանց կրօնէն տարբեր մի
կրօնի եկեղեցականաց, չատ վատ էր մշակուած: Հողատէրք չատ ան-
գամ բոլոր իրանց կեանքում բացակայ էին գանուում իրանց հողերէն և
նրանց եկամուտն Ընկղմուում էին ապառում: Հողավարձական մի դրու-
թիւն, որ կատր կատր էր անում հողն անհամար փոքրիկ մասերի բաժ-
նելով, ծայրագոյն չարիք հասուց, և այնպէս եղաւ որ գրկողութիւն,
թշուառութիւն, սովը կացին ու մնացին մինչեւ այս մեր վերջին օրե-
րում այդ անբախտ կղզուն բաժին: Հիւսիսային կոմսութերկրներում միայն
կտաւային ձեռարհեստը մի փոքր ցնցում տուեց երկրագործական աշխա-
տութեան, մանաւորապէս վչու, քթանի մշակութեան գրգիռ լինելով:

Արմտեաց առատութիւն՝ արդէն առաջիկայ շրջանում, Ընկղմոյ համար
մի ամենակարեւոր գործողութիւն և օրէնսդրութեան մէջ մի ծանր ա-
ռարկայ լինելով՝ մեր խնդրէն դուրս եղած չենք լինել, թէ որ մի արագ
հայեացք դարձնենք նրա անցեալոյն վրայ: Արդէն շատ անգամ ասուեց,
որ երկար ժամանակ՝ հողագործական շահն առաւելութիւն էր ունեցել
այդ երկրում և թէ արմտեաց առաջքերութիւնն այն տեղ խաչնապա-
հութեամբ բնակիչների դժկամութ պարապմունքն էր եղած: Սկզբում,
դրանք դուրս հանուելն արգիլուած էր, 1436 թուէն թոյլ տրուեց դուրս
հանուելը, երբոր գնները երկրին ներսերը՝ չէին անց կենում իրանց ար-
ժեգնէն դէնը: Այդ արժեգինը փոփոխուեց ժամանակին հետ գների
ընդհանուր աւելմանը վրայ: Պատիկ բարձրացաւ, ինչպէս տեսանք,
եղիսաբէթ թագուհու ժամանակ, 3 շիլինկնոց ցորենը 8 էն 10 և 20 շի-
լինկ քառորդ լիտրը (մի չափը), և վերակարգութեան ժամանակ, մինչեւ 53
շիլինկ: Մի և նոյն ժամանակ մի մեծ մաքս դրուեց ցորենի վաճառատա-
րութեան վրայ, բնակիչների օգուտը պատճառ բռնելով, բայց երբոք
բանը՝ մի եկամուտ ճարելն էր միայն փղազուրկ գահին համար: Մինչեւ
1670 թուէն, ցորենի վաճառաբերութիւնն ազատ մնաց. բայց ինչպէս
ուրիշ երկրներում՝ առանց մանաւորապէս քաջալերուելու: Այդ տար-
ուայ մէջ տեղի ունեցաւ այդ ազատութեան առաջին վնասատուութիւնը:
վաճառաբերութիւնն արգիլուեց քանի որ մի քառորդ լիտր ցորենի գինը
53 շիլինկ չէր հասած, այդ գնի վրայ վաճառաբերութիւն թոյլ տրուեց
8 շիլինկ մաքսադրութեամբ, բայց արգելադրութիւնը քիչ ներգործու-
թիւն կարող էր ունենալ. պատճառ որ մի տոյդ եղանակ չկար գնները
ճղդելու համար, և կարուած գնի բարձրութիւնն՝ աւելի շահաւոր չէր
լինում երկրագործութեան, արմտեաց վաճառատարութեան վրայ դըր-
ուած մաքսերը պահպանուելուն համար: Մի ուրիշ աւելի խնայտուն օ-
րէնքով՝ խորհրդարանը 1663 թուին արմտեաց վաճառականութեան ա-

զատութիւն տուեց երկրին ներսերը: Մինչեւ այն ժամուն արգիլուած
էր ամենախիտ պատիժներով ցորենի պաշար պատրաստելը կամ թէ
ցորեն գնելը մի հրապարակի վրայ, ուրիշ հրապարակի վրայ ծախելու
դիտաւորութեամբ և ոչ ոք առանց մի յատուկ հրամանի չէր կարող ցո-
րեն տանել իր երկրէն դուրս:

Կալիելմ Գ. ի գահակալութեան ժամանակ, մի նոր դրութիւն աւելի
ղօրաւոր երեւաւ, հողագործութեան չահերն առաջին կարգի համարուե-
ցան և նրանց նպաստելու համար բաւական չեղաւ դուրս հանելիս՝ դը-
րանց վրայ դրուած մաքսը ջնջել միայն, հապա 5 շիլինկ մի վարձ տրուեց
չափ դրուած ցորենի և այդ կերպն արմտեղէն վաճառատարութեան դրգիռ
եղաւ: Երբ ցորենի գինը 48 շիլինկ կամ աւելի ցածր էր իջնում, վաճա-
ռատարութեան վերաբերող բաներում, 1670 թուականի օրէնքը զօրու-
թիւն ունեցաւ. Ընկղմոյ ամբողջ արմտեղէնի վաճառահանութիւնը 1697
էն մինչեւ 1765, 33 միլիոն քառորդ լիտեր հասաւ, և վարձերն էլ՝ դը-
րեթէ վեցերորդ մասին՝ դուրս հանուած արժեգնէն: վաճառաբերու-
թեան միևնոյն չրջանում, մի խիստ ցածր արժեցողութեան նպատով՝ չէր
հասնելու 1 միլիոն 600 հազար քառորդ լիտր. սակայն վաճառատարու-
թիւնն այն տարիներում որ ամենէն շատ էր, միայն երկրի սպառողու-
թեան երեսուն երկրորդ մասին էր համահասարում:

Երկրի արագ մարդաշատութիւն և ձեռաչէն բերքերի չայողութեան
սատիկ աճեցողութիւն, պարիզու խաղաղութենէն յետոյ, 1763 ին,
նուազեցուց յանկարծ ցորենի վաճառատարութիւնը և վաճառաբերու-
թիւնն էլ պէտքական արեց: Ջնջուեց հետեւաբար, ներս մտնելու հա-
մար եղած սահմանակարգութիւնը և 1773 թուին՝ մի նոր օրէնք էլ դըր-
ուեց, որ օտար ցորենը ենթարկում էր սովորական 6 դ մարաչափ (քա-
ռորդ լիտր) դրամ և դուրս հանուելու վարկն էլ ջնջում էր՝ երբ գինը
44 շիլինկէն աւելի էր լինելու: Այն ժամանակ վաճառաբերութիւնը նը-
չանաւոր համեմատութեամբ աւելուեց և կալուածատէրերը սկսան վա-
խենալ առաջքերութեան համար իրանց արած ծախքին բարձրութեան
նպատով՝ թէ կարող չեն լինելու, չնպատելով իրանց ունենալու միս ա-
ռաւելութեանց, մրցումն բռնել օտարների դէմ և տեսնել իրանց երկ-
րին կախուած լինելը դրսէն գալու յուզարկութեանցմէ: Այդ անհան-
գըստութիւնը թեպետեր եղաւ սահմանդիր ղեկչութիւն հաստատելու
1791 թուին, բայց չատ չուատով մի բացարձակ դրութիւն ձեռք առնուեց,
որ մի մեծ պաչտօն է կատարում յետագայ չրջանին առեւտրական պատ-
մութեան մէջ:

ԳԼՈՒԽ ԺԵ.

Անկլիական Աբեթելեան Հնդիսապառնաս թագաւորութեան պատմութիւն. — Անկլիական պետութեան հիմնարկութիւն. — Ընկերութեան աշխարհական աշխարհավարութիւն. — Մանուշեանի պետութեան փոքրութիւն ու կործանումը. Նաբոբենելի պատերազմութիւն. Անկլիացոց և Ֆրանսիացոց գլխաւորութիւն և նախանձութիւն երկու ազգաց դէմ. — Անկլիան է պատերազմողութիւնը. — Ընկերութեան պնդութիւնից դէմ անշէնանութիւն. — կռիւ բաժանորդաց և Ցնծութենից դէմ. — կառավարութիւն գլխաւորութիւն և օրէնդիրների ու կանոնների դէմ կերպափոխութիւն. Բաժինների նահանգութիւն. կորուստ (քաց) և պարտ. — Հնդկաստանի վճռաւականութիւն Հնդկաստանում. — Զայլ վճռաւորութեան երեքի դատ ածումը. — Ռուսից հետ մրցում Զինաստանում. — վճռաւականութիւն Աբեթելոյ և Պորնեսոստի հետ։

Յեղափոխութենէն յետոյ, Հանովերի տան կառավարութեան ներքեւ մանաւանդ, Անկլիոյ գաղթականական զօրութիւնն արագութեամբ դէպի իր փառաց պիտը քալէց։ Այդ զօրութիւն պարտաւոր է Միանդամայն բախտին և արիական չանքին։ Մայրքաղքի կռիւները երբոպում, գաղթականաց մէջ էլ տարածուեցան և հետեւանք ունեցան ընդարձակել այն տեղ իրանց երկիրն ու վաճառականութիւնը։ Գաղթականական աշխարհավարութիւն, որ և է կերպով եղած լինի նրա գործադրութիւնն իրրև սկզբունք, խելքով էր բանեցուցած, և Միացած Նահանգների թագուհին անդամ ցոյց է տալի՝ որ ազատութիւնն ու լուսաւորութիւնը չատ աւելի քիչ խեղդուած են եղել Անկլիոյ ատացուածներում միս տերութեանց երկիրների վրայ։

Անկլիացիք, ամեն բանէ առաջ, իրանց մեծ տիրապետութեան հիմունքը քցելու աշխատեցան Հնդկաստանում։ Հոլանտացիք արդէն ամուր հաստատուած էին կղզիներում. բայց ցամաքի վրայ, ուր Մոնղոլ խանին տիրապետութիւնը՝ օրէ ցօր անիշխանութեան մէջն էր տապալուում և կործանելով էր կործանում և այդպէս մի աւելի ընդարձակ դաշտ էր բայ լինում Անկլիացոց առջեւ։ Բանը՝ բանագնացութեանց ճամպէն բռնելով սկսուեց։ 1715 թուին մի դեսպանութիւն ղրկուեց Դելհի արքունիքին խնդրելու համար ընկերութեան արտօնութեանց և երկրի ընդարձակութիւն։ Ընկերութիւնը ձեռք բերեց կարեւոր չնորհ՝ մունք թէ՛ երկրի մասին, թէ՛ վաճառականութեան մասին և թէ՛ նաւարկութեան։ Կալկաթաի և Մատրասի հաստատութիւնք բոլորուեցան և այլ և այլ առեւտրական առաւելութեանց վրայ Անկլիացիք ազատ կացան մաքսատութենէ։

Ընկերութեան հրովարտակը վերջանալու վրայ էր 1730 թուին, երբ մի նոր փորձ եղաւ Լ. Օնատոնի, Բրիստոլի և Լիվերպուլի մի քանի վաճառականների կողմէն նրա կրկնանորոգումը արգիլելու համար և չնչլեու-

մի մենաւաճառութիւն, որ հակառակ էր ընդհանուր շահուն։ Ինչպէս որ, ընկերութիւնը, փոխանակ իր կացութիւնը ծանօթացնելու, կարող եղածին չափ թագուն էր պահում, հասարակաց կարծիքը նրա շահերը չատ աւելի բարձր էր գնահատում քան իսկ իրօք եղածէն։ Բայց, չնայելով՝ իր առաջ բերած պաճառներին, դիմադրութիւնը՝ նախընթացին նման աւելի յաջող երք չունեցաւ։ Ընկերութեան ժամանակն երկարուեց մինչեւ 1766, վճարելով 200 հազար փաունդ Ստերլինկ տէրութեան և 1745 ին մի միլիոն նրան փոխ տուած լինելով 100 ին 3 ով նորէն նոյն եղաւ մինչեւ 1780։

Ընկերութեան համար՝ 1743 թուի տարին մի յիշատակելի թուական է։ Այդ ժամանակէն իր գինուորական քաջութիւնք և իր ընդարձակ երկրաւարութիւնք ամպի տակովը արին իր առեւտրական կերպարանքը։ Երբոպու՝ Հնդկաստանի հետ ուղղակի հաղորդակցութիւնք հաստատուած լինելուց առաջ, երկար ժամանակ, Մոնղոլ խանն աշխարհիս վրայ՝ ամենէն զօրաւոր և ամենէն հարուստ թագաւորն էր համարուած։ Մի օտար բական ընտանիք, որ Տիմուրլենկէն էր առաջ գալի և բնիկների կրօնէն տարբեր կրօն էր դաւանում, իր ձեռի տակ էր նուաճած Հնդկաստանը՝ 1400 թուին։ Այդ և այլ նահանգների նահանգական վարչութիւնը, նրբ կոչուած պաշտօնատարներին էր յանձնուած, որոնք իրանց վարչութեան մէջ մի իշխանութիւն էին վարում նման անթիւ իշխանութեան՝ Հռոմէական կայսրութեան մէջ։ Քանի որ Մոնղոլ կայսերք իրանց նախնեաց քաջութիւնն ու աշխուժութիւնը պահեցին, կարող եղան հնազանդութեան մէջ պահել իրանց անհուն կայսրութեան այլ և այլ մասերը, Նաբաբներն էլ հաւատարմութեամբ գործադրեցին դէլհուց եկած հրամանները։ Բայց չատ չուտով այդ կայսերք թուլացան և ապականեցան և իրանց կառավարութիւնն էլ մեր աչքի առաջ՝ ամեն տեսակ մոլութեանց և ամեն կարգի անկարգութեանց մի տեսարան դրաւ։ Այն ժամանակ՝ երբ Կուլի խան Պարսից գահը գրաւելով՝ Հնդկաստանին էլ սիրեց, սիրող Մոնղոլ խանը, յանկարծակի գալով՝ կարող չեղաւ դիմանալ, տկար ու վատարի՝ իր կրած յարձակումն անդամ վրէժ չառաւ։ Այդ եղաւ նշան իր կայսրութեան բաժան բաժան լինելուն։ Կուլի խան (Դահմաշ) քաշուեց թէ չէ՝ Նաբաբները մերժեցին կայսր ճանաչելու կամ թէ՝ էլ նրա հրամանները բանի տեղ չդնելով, գործադրել էին ձեւանում։ Այդ անկախութիւնն, որն որ Նաբաբներն իրանք իրանց էին տուած, չատ չուտով իրանց մէջէն պատերազմներ առաջ բերաւ. և ճանաչելով երբոպացոց գինուորական մեծութիւնն, Անկլիական և Ֆրանսիական ընկերութեանց դաշնակցութիւնը խնդրեցին, նրանցմէ օգնութիւն ձեռք բերելու համար։ Ընկերութիւնք, որոնք ըստ իրանց չահուն, երբեմն միան կողմն էին բռնում և երբեմն միւսին, այդ անիշխանութենէն օգուտ քաղելուց յետ չմնացին։ Բաւական չդնելով իրանց ձեռին ունեցածով, ինչպէս որ մինչեւ այն ժամանակ ունէին,

պարզ վաճառականներ և մի քանի ամրացած տեղեր, մոքերնին դրին ամբողջ գաւառների տէր լինել և մի երկրային տիրապետութիւն հիմնարկել. ուստի չուտով մի կռիւ բացուեց այն հարցի վրայ, ոչ թէ դիտենալու, թէ բնիկ իշխաններէն որո՞ն էր պատկանելու գլխաւորութիւնը, հապա, որո՞նք Ֆրանսիացոցմէ կամ Անկլիացոցմէ, Հնդկաստանի տէրերն էին լինելու։ 1756 թուին վեր կացած պատերազմները, երկու իրարու նախանձորդ ազգաց միջին, կանգտան անտառներում միւս կիսագնտի վրայ, Գորոմանտէլայ եզերքի ծօթ երկնքի ներքեւ և Գանգէսի գետափերի վրայ չարունակուեցան։

Արեւելեան Հնդկաստանի Անկլիական ընկերութեան պատերազմների պատմութիւնը մեզ չատ հետաքրքրական է։ Ֆրանսիայ վաճառականութեան պատմութիւնը մեզ աւելի պիտի տայ նորէն այդ առարկայի վրայ դալու։ Ուստի բաւական ենք համարում ճշդելու, որ մի քանի ժամանակ Ֆրանսիական գլխաւորութիւնն աւելի բախտ ունեցաւ, քան թէ Անկլիականը, Անկլիացիք այդ գլխաւորութիւնը եօթնամեայ պատերազմէն յետոյ տարան, երբոր Գլայվ, հաւատարապէս նշանաւոր թէ՛ իբրեւ զօրավար և թէ՛ իբրեւ աշխարհավար, հրամանատարութիւն ձեռին առաւ։ 1761 թուին Պոնտիչէրու առնուելուց և աւերուելուց յետոյ, Բրիտանական զօրութիւնն հաստատուեց Գորոմանտէլայ եզերքի վրայ, նոյն իսկ ապագային համար, թէ և Անկլիացիք յետ տուին Պոնտիչէրին Փարիզու խաղաղութեան ժամանակ։

Բայց չուտով ճանաչուեց, որ այդ եզերքի ստացումն՝ իրան բերած եկամուտէն աւելի պիտի թանգ ժժէր։ Գանգէսի հովտի ստացումը, մանաւանդ Բէնկալայ հարուստ գաւառինը, ուր երկար ժամանակէ հետէ զօրաւոր կայսրներ ունէին Անկլիացիք, կարող էր միայն հաստատել Անկլիացոց տիրապետութիւնը Հնդկաստանում իրանց մեծամեծ եկամուտներ բերելով։ Բէնկալայ նուաճումն 1765 թուին աւարտուեց։ Այդ նուաճումն աւելի նենգութեամբ քան թէ զինու զօրութեամբ էր ձեռք բերուած. որ պատճառ եղաւ իշխաններն իրար չարդէն։ Ընկերութիւնն, արդէն տէր՝ երկրի վաճառականութեան այն ժամանակ ձեռք բերեց նաեւ դերիշխանութիւնն ու վարչականութիւնը, բնիկ իշխանների ձեռին իշխանութեան ատուերը թողելով։

Այն օրէն որ, ընկերութիւնն իր ձեռաց տակ ունեցաւ մի անհուն և հարուստ երկիր, թէ և նա չատ հետաքրքրական էր դեռ հարստանալուց, ինչպէս որ ինքն յայտ ունէր, չահու համար մի կռիւ վեր կացաւ մի կողմէն բաժանորդների միջին, միւս կողմէն անօրէնների և իրանց պաշտօնավարների միջին։ Առաջինները, պահում էին Հնդկաստանի և Եւրոպայ միջին եղած առեւտրին չափաւոր չահը. բայց նրանք ոգատում էին իրանց բաժինների մի աւելում նոր եկամուտներին, որոնց չահը, երկրորդները կամենում էին իրանց յատկացնել։ Սրանք ամեն տեսակ անիրաւութիւն էլ գործեցին և արագ աշխարհակալութեանց մէջ, փոխանակ վերահսկելու

յեցողութիւն անելու բարձր վարչութեան վրայ, անկարգութիւնն իր չափն ու սահման չատ ու չատ էր անց կացել։ Անկլիացիք յաջողուել էին իրանք իրանց ազատ կացուներելու բարձր մաքսատուութենէն, որուն ենթակայ էին Հնդկաստանի ամեն վաճառականներն, և այդպէս ողջ առուտրին տէր էին եղած։ Մինչեւ անգամ բնիկներէն առնուելու վաճառքներին դներին ու քանակութեանց՝ չափ ու սահման դնելու վեր կացան։ Մինչդեռ ընկերութեան պաշտօնավարներէն մեծ մասը յետ էին գառնում Եւրոպ անհուն հարստութեամբ, ինքն ընկերութիւնը մի նեղ կացութեան մէջն էր։ Այսեն բան նպաստում էր ու մանաւանդ բէնկալի թշուառ գաւառը կործանելու, մի անխոհեմ և բռնաւոր վարչութիւն և մի ամենաճնշիչ մենաշնորհութիւն, աղի, օղու, ափիոնի ու ծխախոտի։

Իրերի այդ վիճակում, կառավարութիւնն հարկ համարեց միջամտել։ Ընկերութեան հրովարտակը մի էական վերանորոգութեան ենթարկուեց։ Լօնտօնում կացող վարչապետք և անօրէնք մինչեւ այն ժամանակ իշխանութիւնն էին կազմած, որմէ նշանակում էին չորս նախադահութեանց վարչապետներն իրարմէ անկախ։ Այսեն մի վարչապետ առանձին էր գործում և ընչեր անց չէր կենում արգելք, մինչեւ Անկլիաէն իրան հրամաններ կարող լինէին հասնիլ։ 1773 թուի կանոնադիր օրէնքին նպատակն էր այդ պակասաւոր կարգաւորութիւնը բարեկարգել, որուն չարեաց գլխաւոր աղբիւր լինելը ճանաչուել էր, միութիւն ներմուծելով Հնդկաստանու կառավարութեան մէջ և ընկերութեան գահէն կախուած անելով։ Բանուչորս անօրէնների ընտրութիւնն աւելի լիսա կանոնների ենթարկելով, հազար փաունդ Ստերլինկ բաժին ունեցող բաժանորդները միայն այնուհետեւ ընդունելի անելով, քուէ տալու ընդհանուր ժողովներում, Բէնկալայ կառավարչին յանձնելով Բրիտանական ողջ ստացուածքների կառավարութիւն, դատաստանական մի բարձրագոյն ատեան հաստատելով, և թագաւորական վաւերացումն էլ մի քանի պարագայներում պահանջելի անելով, ահա՛ դրանք եղան նոր օրէնքին գլխաւոր տրամադրութիւնքը։

Այդ կրկնակի կարգաւորութիւնը դազրեցուցիչ մի փոքր աւելի կախուած արաւ մայր քաղքէն, բայց քիչ արդիւնք ունեցաւ Հնդկաստանի և ընկերութեան համար։ Վարչութիւնն իրաւ է, աւելի լաւ ամփոփուեց. սակայն վատահ չէր կարելի լինել մի տեւական խաղաղութեան վրայ, հետեւաբար և ոչ էլ ապահովութեան։ Հարստահարութիւնք դիմակալութիւն գրգռեցին, դիմակալութիւնն էլ պատերազմներ՝ բնիկների Մահրատտաների, Հայդար-Ալու և Տիպպօ-Սահիբի հետ, ինչպէս նաեւ Ֆրանսիացոց և նրանց դաշնակիցների հետ. պատերազմները ծախքերի պատճառ եղան, ծախքերն էլ նորանոր հարստահարութեանց։ Դիմանալու համար ստիպուեցան երկրակալութիւն անել։ Մահրատտաների հետ եղած պատերազմին յաջող ելքն ամենեւին չբարւոքեց ընկերութեան դրամական և առեւտրական վիճակը։

Ամենաձանր հարստահարութիւնք կարող վիճակում չդրին ընկերութիւնն իր պարտաւորութիւնքը կատարելու կառավարութեան առջեւ, գրեթէ իբրեւ կատր ընկած (անձնկութեան մէջ) էր նայում նա նրա վրայ: վերջին պատերազմները ցոյց էին տուել որ այդ ընկերութիւնը մի տէրութիւն էր կազմում տէրութեան մէջ: Ամեն կուսակցութիւնք համաձայն էին ընկերութիւնը կառավարութեան հետ աւելի սերտ կապելու և նրա հրովարտակը կատարելապէս վերակարգաւորելու հարկաւորութեան վրայ: Ցօքս պաշտօնէապետ 1783 թուին, այդ բանի մասին փորձ անելում չյաջողուեց, բայց նրան էր պահուած նպատակին հասնելու, յետագայ տարին իր առաջարկադրով արեւելեան Հնդկաստանի մասին, և այդպէսով հաստատելու գաղթականական ընդարձակ տէրութիւնք նոր և հաստատ հիմունքների վրայ:

1773 թուի առաջին կանոնադիր օրէնքը սահմանուելիս՝ ընկերութեան դրամագլուխն էր 2,594,029 փաունդ Սաերլինկ, 2,153 բաժանորդների վրայ բաժնուած: Բայց այդ դրամագլուխն իրմէ բաղմապատիկ մեծ պարտքերի ներքեւ էր ճնշուած: վարչութեան համար եղած ծախքերը, պատերազմի համար վատնուած փողերը, ցամաքային բանակին և ծովային տորմիղին վճարուած թոշակը անչափ դումարներ էին կուլ տալի, ո՛չ բովհետեւ Անգլիական ընկերութիւնը, չատ բանի կողմէն խնայող չէր Հոլանտական ընկերութեան նման. ուստի բաժինները մինչեւ առաջին կայ չրջանի վերջին, երբէք 100 ին 12 ը չանց կացան, և ըստ սովորութեան 6 կամ 8 բռնեցին:

Այդ իրողութիւնք լաւ հերքում են տալի այն մոլար կարծիքին, որ դոյացաւ երկար ժամանակ՝ ընկերութեան վաճառականութեամբ ձեռք բերած ահագին չահերու մասին և որու համար արդարութիւն մեր դատումն եղաւ, արեւելեան Հնդկաստանի վաճառականութեան ազատութեան վրայ վիճելիս: Այդ վաճառականութիւնը, մանաւոր մարդկանց ձեռնհասութեամբ, ազատ մրցողութեան չնորհիւ ուրիշ կերպ չհասաւր էր լինելու և հրապարակի վրայ աւելի առատութեամբ և աւելի ժան գնով ապրանք էր պատրաստելու, որն՝որ չարեց մի արտօնատէր ընկերութիւն: Այդ բանը նէն դուրս եկաւ այն հետեւութիւնը նրա հրովարտակին ամեն կրկնորոգութեան ժամանակ: ընկերութիւնն իր առեւտրական յանձնարարութեանէն դուրս եկաւ իր ձեռք առած երկրակալ քաղաքականութեամբը և որու մէջ Անգլիոյ հաւատարմող չեղաւ Հնդկաստանում հաստատուղ միւս Եւրոպացի ազգաց մէջ: Ի՞նչպէս, կարելի էր յաջողութեամբ առեւտուր անել, երբ մի ձեռքով թուր էր բռնուելու և միւս ձեռքով հաչուեդիրք. երբ պէտք էր մի տեղ բանակների հրամայել և ճակատամարտ մղել, միւս տեղ չայ ու լեղակ ծախել:

Սկզբներում, ընկերութիւնը մի առեւտրական տորմիղ ունէր. յետոյ նա՝ մանաւոր մարդկանց պատկանող նաւեր վարձու բռնեց: Այդ նաւերն յատուկ ահմանուած էին ճղութեամբ հակելու ճամպռ գծի և

նաւերուն ուչանալուն վրայ: Սուրբ Հեղինէ կղզին 1673 թուին Հոլանտացոց ձեռքէն առնուած, կանգուհանդ առնելու տեղին էր արեւելեան Հնդկաստանի ճամպռդութեանց ժամանակ: վարձուած նաւերու նաւատարբիչները կարող էին նաւերում իրանց ձեռին ունենալ մի փոքր պարապ տեղ Հնդկական ապրանք դնելու համար, ընկերութեան 100 ին 30 վճարելով ապրանքին արժեգնին վրայ: Այդ տուրքը կիսով չափ նըւազեց 1773 թուին և մի փոքր ժամանակ յետոյ ջնջուեց բեռնելու իրաւունքն էլ միասին, որն որ չարաչար էր դործածուում ապօրինի վաճառաբերութեամբ:

Ընկերութիւնը Հնդկաստանու առուտուրն Հնդկաստանում ազատ էր թողած ամեն Անգլիացոց համար: Իր մենավաճառութիւնը մայրաքաղքի հետ ունենալու յարաբերութեանց մէջն էր սահմանուած: Սակայն բրնաւահմանադրութեանց էր ենթարկուած: Արեւելեան Հնդկաստանու բերքերն որոնք մրցում էին արեւմտեան Հնդկաստանու բերքերի հետ՝ կրկնամաքսի ներքեւ էին վերջինն իրան օդտին համար և միայն մայր քաղաք կարելի էր յուղարկել, որոնց ներառածումը մի քանի նաւահանգըստներէն էր միայն ներելի:

Բայց ի մեխակէն և հնդընկուզէն, Հնդկաստանի բոլոր բերքերը անուցանում էին Անգլիոյ վաճառականութիւնը: Բենկալի առացումը՝ նրան մի անչուչտելի առաւելութիւն էր տալի մի քանի կարեւոր ապրանքների մասին, որոնք էին բամբակը, բեհեզը, մետաքսը, լեղակը, չաքարը, բրինձը, սակերորակը, աղբորակը և այլն: Բայց ամենէն թանկագինն էր չայը: Արեւելեան ընկերութիւնն, իրաւ է, ոչ գաղթական և ոչ էլ երկիր ունէր Չինաստանում, բայց նա՝ չատ վաղուց հաստատած էր գանուածում գործակալութեան մի մեծ տուն, ուր տեղ այդ տուն մի և նոյն ատեճանով էր ընդունուած ինչպէս բոլոր միւս ազգացը: ինչպէս Հնդկաստանու ապրանքների համար, նոյնպէս Չինաստանու վաճառքների համար, նա՝ վաճառատարութեան համար Անգլիում մի արտօնութիւն ունէր: Մենք տեսանք տասնեւեօթնեորդ դարու վերջերում, թէ ո՛րքան չայը այն տեղ նուազ ու թանկ էր: Սակայն չայի սովորութիւնը տարածուեց և չուտով ազդային խմելիք դառաւ: 1710 թուին՝ ընկերութեան ձեռքով ամբողջ ծախսուած չայի սպառումը հասնում էր 141,995 լիտեր, 1731 թուին. 2,619,277 լիտեր Հասաւ 1761 թուին. 8,608,457 լիտեր 1784 թուին: Իսկ մաքսախոտութեամբ ներս բերուած չայի սպառումը մաքսատրութեան բարձրանալովը, քչչէն քիչ նոյնքան չատ էր: ընկերութիւնն և տէրութեան դանձն հաւատարապէս ձեռնուած էին իրանց չահերում այդ մրցողութեամբ և Պիտտ նրանց մի հաւատար ծառայութիւն մատուց իջեցնելով 19 էն 12 1/2 ի 100 ին, 1784 թուին, պատիժը թեթեւացնող կամ բարեխառնող կոչուած առաջարկադրով բ.լ.լ.:

Ռուսական վաճառականութեան ընկնելը կիսատառում, բայց էր սրած Չինաստանում Անգլիոյ ձեռաչէն վաճառքների առջեւ, մանաւանդ նրա

բրդեղէն ապրանքներուն բոլորովին մի նոր դուռ, որն որ սկսեց նաւագե-
ցընել մեծապ գրամներուն դուրս ածումն, որոնցմով Եւրոպացիք պար-
տաւոր էին մինչեւ այն ժամանակ իրանց վճարմունքն անել երկնային
կայսրութեան մէջ: Մուշտակեղէնի առուտուրն էլ այդ բանին նոյնպէս
նպաստեց: Արեւելեան Հնդկաստանու ընկերութեան, երեւում էր որ,
չահն էր նպաստել կարելի եղածին չափ մուշտակեղէնի ներսածումն Ամե-
րիկու հիւսիսային արեւմտեան եզերքէն, իբրեւ մի ապահով միջոց հե-
ռացնելու Անգլերին Չինաստանի հրապարակներէն և այն տեղ բաց անել
Անգլիական բերքերի համար աւելի մեծկակ և աւելի բանուկ մի առու-
տուր, որովհետեւ անգլիական ապրանքներն ընտիր տեսակէն էին և ա-
ւելի աժան ուրիշ ազգականներէ վրայ. Չինացի վաճառականք, նոյն իսկ կայս-
րութեան հիւսիսակողմէն, գալիս էին հեռուէն չատ անգամ փանտոնի
նաւահանգիստը, նախապատիւ համարելով կիախտայի մօտակայ հրապա-
րակէն: Իրերի այդ վիճակն՝ արեւելեան Հնդկաստանու ընկերութիւնը
Հուտսօն ծոցի ընկերութեան հետ միաւորելու գաղափարը յղացուց,
այդ միաւորութեամբ չահու ածելու Չինաստանի վաճառականութիւնը և
ձեռք բերելով նրա մենաշնորհութիւնը՝ այն տեղից դուրս քշելու կա-
մաց կամաց Անգլերին, որոնք էին մինակ վախենալու մրցողները Անգլիա-
ցոց համար: Պէտք է ճանաչենք որ, Անգլիացիք հէնց նոյն օրէն գնահա-
տել էին Չինաստանի հետ լինելու առուտրին կարեւորութիւնը, և թէ
բաց ի կանոնէն փորձ էլ փորձեցին իրանց առաջ բաց անելու կայսրու-
թեան հիւսիսային նաւահանգստներն: Այդ նաւահանգստները մուշ-
տակեղէնի առուտրին համար ամենէն նպաստաւոր կայանքներն էին,
նմանապէս Գորէայի և Ճաբօնի հետ ունենալու յարաբերութեանց հաս-
տատութեան համար: Այդ խորհրդին էր պատկանում Մաքարտնէյ Անգ-
լիայու միջնապաշտօնէին (Ենկախաթէօր) հանդիսաւոր պաշտօնը Պեկի-
նում 1792 թուին: Իրաւ է, նպաստակին չհասնուեց այդ անգամ, Ֆրան-
սիական յեղափոխութիւնը Լօնտօնի և Ս. Պետերբուրգի գահընկէնքն ի-
րար հետ հաշտեցուց, որ չեղբնների խնդիրը գրանց խռովացուցել էր
իրար հետ և Ռուսաց վաճառականութիւնը Չինաստանի հետ չդադար-
ուեց, սակայն ծանրացաւ եղաւ. մինչդեռ Անգլիացոցն առաջ էր գնում
և տիրում էր մինակուկ եզերքին վրայ:

Հնդկաստանի՝ պարսկական խորշու և կարմիր ծովու հետ ունեցած
յարաբերութեանց մէջ, յարաբերութիւնք՝ որ տարածուում էին մինչեւ
Ասիոյ պորտում և արեւմտեան եղող հրապարակները, Անգլիացիք կամաց
կամաց իրանց նախանձորդների վրայ անց էին կացել մանաւանդ Հոլլան-
դացոց: Սրճենին (խահուէի տունկը), քանի որ յաջողուել էր Սանդա
կղզիներում և արեւմտեան Հնդկաստանում, Մէքքէի հետ եղած առու-
տուրը սաստիկ նուազել էր: Աւելի ձիտաէ էին յաճախում Մէքքէի ա-
մենէն մօտ նաւահանգիստը, Մարդարէի գերեզմանի կշտին բացուած
առնտրավաճառին համար: Ձիտաէին էր նաեւ Սուէյշի տորմիղն ժամադրա-

թեան տեղին, այդ տորմիղը քանի չափ թուրք նաւերով բաղկացած,
ամեն տեսակ ուտելիք էր բերում ուխտաւորների համար և վոխարէն
հնդիկ ապրանք և խնհուէ էր բարձում:

Այն փայլուն ապագան, որ Օրմուզի առումն և Շահ-Աբբասի հետ
եղած դաշնակցութիւնը բաց էին արել Անկլիացոց վաճառականութեան
առջեւ Պարսկաստանի հետ, պարապը հանեցին այդ պետութիւնն ան-
դադար պատերազմող սարսափելի խռովութիւնք: Բէնտեր-Աբբաս խաւար-
ուեց 1740 էն յետոյ Մասգատի ծաղկելովը, որու գերքն Աբրաիոյ արե-
ւելեան եզերքի դէմուդէմ էր, համանուն ընդարձակ եզերքի գլխաւոր
տեղին: Մասգատ քաղաքն իր իմամի ներքեւ ձեռք էր բերած մի տեսակ
անկախութիւն, և կարգաւորութիւն և ապահովութիւն էր վայելում:
Շատ անց կացաւ ոչ, այդ քաղաքը՝ ողջ խորշուն գլխաւոր համբարն և-
զաւ: Բէհրէյն կղզիք, որոնց գերքը հարեւանում էին, այն տեղ էին
յուզարկում իրանց մարգրիտը, անպատ հին ժամանակներէ հետէ, քիչ
սիլտակ, բայց աւելի խոշոր Սէյլան կղզու մարգրտէն:

Մարգրտի որսը՝ գլխաւորապէս Պարսից ձեռքով էր չահու ածւում և
աղատ էր այդ կողմերում մի չափաւոր տուրքով, փոխանակ մի մենա-
վաճառութիւն լինելու, ինչպէս որ էր Հնդկաց աշխարհում: Բասրա, մի
և նոյն երկրագաւառում պրծել էր ու ազատուել էր բազմաթիւ վոր-
ձանքներէն: Անկլիացիք կանոնակարգ այն տեղ գործակալութեան մի տուն
հաստատելին՝ ազդեցութիւն բանեցնելու համար Ասիոյ կարավանների
գործողութեանց վրայ:

ԳԼՈՒԽ ԺԹ.

Անգլիական Ընդհանուր կազմութիւն գործոց. — Իրանց բերքերը ուղղին Ֆրանսական Ընդհանուր բերքերին. պատճառք այդ ապրնթացին և գործածած ջղջոցներ այդ ապրնթացը դադրեցնելու. — Շահու համար հակառակորդու-
թիւն Հիւսիսային Ամերիկո գաղնիականաց հետ. — Սկովտիական ընկերութիւնը Տրէան պարանոցի (խորշ Ընդհանուր ծովու):

1688 թուի յեղափոխութենէ հետէ, Անգլիան ձեռք բերեց՝ դրեթէ
ամեն խաղաղութեան դաշնագրութեան մէջ երկրային մեծագումնք Ամե-
րիկում, Ուտրեխտի խաղաղութեամբ Ֆրանսիա թող տուեց նրան Տէե-
Նէօվի մեծ մասը, Նոր Սկովտիան, Հիւսոն խորշը, Սուրբ Քրիստոփ
ծովեզերքը: Պարիզու խաղաղութիւնը 1763 թուին նրան միացուց Գա-
նատան Բրէտօն հրուանդանով. կրէնատան, Ս. Վիչէն, Դոմինիկ, Տաբա-
կօն, Սպանիան էլ պարտաւորուեց Ֆլորիտան կղզիներուց ձեռը վեր
առնել:

Այն ամեն ձլերն որ, մեծ երեք գարուց հետէ եւրոպացիք ցանել

էին ու մշակել նոր Աշխարհում, սկսում էին հասունանալ թէ որ Սպանիան էր այդ տեղ ամենէն ընդարձակ սահմանադրութիւնը ունեցողը, Անգլիան էլ այդ տեղ ամենէն մեծ առեւտուր անողն էր. Ֆրանսիան թէև վաճառուր կռիւներ մղեց, Արեւելեան Հնդկաստանի կռիւների նման, բայց դրանք արդիւնք չունեցան, պարապ տեղ Անգլիացոց հետ դերիշխանութեան մասին կռուեց: Յաղորութիւն է եղած ամենքին, Անգլիոյ գաղթականական տիրապետութիւնը բացատրելու համար, գլխաւորաբար նրա նաւային գերազանցութիւնը պատճառ բռնել, որ պատերազմի ժամանակ անգամ, պահպանում է եղել իր գաղթականաց հետ ունեցած հաղորդակցութիւնը, մի առաւելութիւն, որ Թոդ չէր տրւում իր թշնամիներուն, որոնց վաճառականութիւնն էլ մեծ կորուստներ էր կրում այդ միջոցին: Մենք մեր բոլոր կարծով մի աւելի մեծ կարողութիւն ենք տալի այն վաճառականական հանճարին, որն որ Անգլիացիք ցոյց տուին, հասկանալով որ իրանց Անդրադարձութեան սահմանադրութիւնները սահմանելու էին մի իսկական և տեւական արժողութիւն, ոչ այնքան ոսկու և արծաթի աչքածակ պրպտողութեամբ, որքան հողագործական մշակութեամբ: Իրանց գաղթականական դրութիւն գրեթէ այնքան խիստ էր սկզբունքով, որքան որ էր Սպանիացոց դրութիւնը, բայց մենք առիթ պիտի ունենանք տեսնելու թէ ինչպես գործադրութեան մէջ այդ դրութիւն կակուղցել էր և փափկացել, և այս մի որոշ բան է որ՝ սահմանափակութիւնք միայն վաճառականութեան մէջն էին խստութիւնք բերում առանց ամենափոքր վերաբերութիւն ունենալու գաղթականաց հաւատքին և նրանց քաղաքային իրաւանց հետ:

Գաղթականական արմուեաց սպառումը, գլխաւորապէս չաքարինը՝ խիստ շատ էր աճել Եւրոպում սահմանադրողները դարու երկրորդ կիսէն սկսած, և արդէն յիշեցինք էլ այն մեծամեծ յուզարկութիւնք որ Անգլիական Անդիլեանք, նրանց գլխին Բարբատան անում էին իրանց մայր քաղքին, որ տեղաց նորէն դուրս էր տարում մեծ քանակութեամբ հիւսիսային նահանգներում, սոյն աստիճան որ Բրէդիլիոյ չաքարն աչքէ էին հանած: Բայց 1700 թուականէն յետոյ՝ չաքարի առաջբերութիւն և վաճառատարութիւնը յանկարծ կանգ առան և յետ մնացին անգամ Անգլիական գաղթականաց մէջ. մինչդեռ Ֆրանսիական կուսակալուպ և Մարտինիկ կղզիներում տնկերը մի հսկայ դուրս առաջնացում ստացան, և ոչ թէ միայն աւելի՝ այլ շատ ընտիր չաքար տուին: 1740 թուերում, Ֆրանսիական չաքարը Եւրոպական հրապարակների վրայ տեր էր եղած, իսկ Անգլիական չաքարն Անգլիոյ սպառողութեան համար էր բաւական: 1742 թուի մի համեմատական քաղուածքէ վեր առնելով, Ֆրանսիացիք, այդ տարին Անգլիացոցմէ 679 կենդինար աւելի չաքար էին հնձել և հեռաւոր կարող էլ էին եղել իրանց չաքարը շատ աւելի աժան ծախել: կորուստն ու բացը՝ այնքան մեծ էր ու վտանգ սպառնում գաղթականաց առեւտրական չահերուն, ինչպես նաեւ անդրադարձեան նաւարկութեան, այն նաւարկութեան՝ որու գլխաւոր ծախքը չաքարի առուտրով էր հանւում, որ խորհրդարանը մի քննութիւն հրամայեց անել չարեաց պատճառների և նրանց մասին դարման տանելու միջոցների վրայ: Նախ, ենթադրեցին թէ՝ գաղթականաց հողը սպառուած էր և թէ առաջուց բերքնաւորութիւնն էլ կորուսել էր և չէր հատասարում, կամ թէ Ֆրանսիական Անդիլեանց հողերին արժողութիւնը չունէր: Բայց շատ չուտով պարտաւոր եղան ճանաչելու, որ այդ չատ թեթեւ ստորնութիւնն զգալի չէր լինելու թէ որ Ֆրանսիացոց չանգի մշակութեան և չահածութեան նման մի մշակողութիւն և չահածողութիւն ձեռք առնելու լինին: Մի աւելի իրական պատճառն էլ էր տուրքի և մաքսի բեռն, որ աւելի ծանր էր Անգլիոյ գաղթականաց վրայ՝ քան թէ Ֆրանսիոյ գաղթականաց. բայց գլուխ պատճառն էր վեր կացած հակառակութիւնք չահու համար, չաքարի խնդրում, արեւմտեան Հնդկաստանի գաղթականաց և հիւսիսային Ամերիկու գաղթականաց միջին:

Հիւսիսային Ամերիկու գաղթականաց երկիրները, մանաւանդ վիրգինիան և Նոր Անգլիան, յարմար չէին արեւագարձի ներքեւ եղող երկիրների արմտեաց մշակութեան համար, իրանց բերքերն Եւրոպու բերքերին էին մօտենում. թէ և մեծ մասն այն տեղ դրսէն բերուած և ընտելացուցած էին օդին և հողին հետ: Այդ, այն կոյս անտառներն, որոնք կրակի տալով տափ էին բաց անում, չատ չուտով մի անակնկալ հարստութեան աղբիւր ընծայեցին: Անգլիոյ նաւային գօրութիւնն որ չատ արագ էր մեծանում նաւարկութեան օրէնքը հաստատելուց հետէ, սովորաբար, Շուէտէն և Ռուսիայէն էր առնում իր նիւթեղէնը նաւաշինութեան համար, որոնք՝ այդ ապրանքներէն չատ մեծ չահեր էին արգիւնաւորում. 1703 թուին, Կարոլ ԺԲ. մի յիմար միաք արաց կռապրի և ձիւթի (զարանի և պիճիճի) վաճառահանութիւնը մի արտօնատէր ընկերութեան տալ, որ չափէ դուրս գները բարձրացուց: Նաւաշէնների աչքած արտունչները լանլով և կրած ջնասները տեսնելով՝ Անգլիական կառավարութիւնն, իր աչքերը հիւսիսային Ամերիկու գաղթականաց վրայ քցեց, իրրեւ նրանց մեծ հարստութիւն ընծայելու կարող: Թէ որ ծխախոտը մի գէն գնենք, մինչեւ այն օրն այդ գաղթականաց բերքերն՝ իրրեւ քիչ չահ բերող բանի տեղ էին դրուած մայրաքաղքին համար: Ցանկարծ այդ միջոցին, այդ հայեացքը փոխուեց: Լուսաժիտ և ձեռնհաս մարդիկ յուզարկուեցան և յարմար եկող զգուշութիւնք ձեռք առնուեցան և չատ չուտով ձիւթ ու կռապր, նոյնպէս և ամեն տեսակ չինութեան վայր յուզարկուեցան գաղթականաց կողմն Բրիտանական նաւահանգիստներում այն աստիճան մեծ քանակութեամբ, որ կարելի եղաւ հարեւան աղգաց վրայ էլ վաճառել: Որպէս զի այդ նոր առուտուրն արագութեամբ զարգանայ, վարկ չնորհուեց վաճառաբերութեանն և վաճառատարութեանն համար էլ՝ արդէն առնուած հարկին յետ հատուցումը: Շինութեան նիւթեղէնի գինը ընկաւ և կառավարութիւն կարծեց այն

ժամանակ դանձուն համար ծանր տուրքեր քաղել. նա չէր մոռացած նաւավարձու դնին մէջ եղած տարբերութեան վրայ, որն որ բոլորովին հիւսիսային եւրոպու շահուն համար էր: Մի և նոյն վարձադնով, Ամերիկու վաճառաբերութիւնն ընկզմելու էր, բռնելու համար, պէտք եղաւ մանր մունր տուրքեր դնել և ապահովագնները վերահաստատել, բայց որովհետեւ Ամերիկու վայրը աւորին էր Ռուսիոյ վայրէն, կարելի չեղաւ բոլորովին ձեռը վեր առնել այդ վերջինէն, մանաւանդ մարտանաւու չինութեան համար:

Ամերիկու երկաթը մինչեւ այդ ժամանակ, գրեթէ արգելադիր տուրքերով էր ծանրաբեռնած, մի քանի բնիկ երկաթագործ վարպետներին նպաստելու համար. նրա առաջը բաց արին մայրքաղքի հրապարակը, իրաւ է, տարօրինակ պայմաններով, Ամերիկու երկաթը միայն Լօնտօնի նաւահանգստէն կարելի էր դուրս հանել Անկլիում և տաքը միոն հեռուն միայն ներսերը յուզարկել: Խորհրդարանի մի օրէնքը 1757 ին ընդհատ այդ օրէնադրական անճոռնիութիւնը և գաղթականաց երկաթը մայրքաղքի երկաթին հաւասարեց: Այդ երկաթը թէ և, անյարմար նուրբ գործերի չինութեան, ինչպես չղթայի և խարսխի:

Բոլոր այդ դժուարութիւնքն առաջ էին գալի Բրիտանական նաւարկութիւնը կարելի եղածին չափ օտարականէն անկախ անելու ցանկութենէն: Այդ դժուարութեանց արդիւնքն էլ՝ հիւսիսային Ամերիկու գաղթականաց՝ իրանց կարեւորութեան դգացմունքը տալն եղաւ: Սրանց առաջ բերութիւնքն ու առեւտրական գործունէութիւնք, այն աստիճան աճեցան, որ մայրքաղքի հրապարակը նրանց բաւական չեղաւ և սկսան ուղղակի յարաբերութիւն կապել Հոլլանտական և Ֆրանսիական Անդիլեանց հետ: Այդ յարաբերութիւնք հարեւանական էին երկու գաւառների միջին իրարու պէտքերին հասնելու համար: Հիւսիսային Ամերիկու չինութեան նիւթեղէնքը, ձուկն ու ապած միսը՝ այնքան պիտանի էին արեւմտեան Հնդկաստանին, որքան որ շաքարը, շաքարօղին (ռօմը) խահուէն և համեմք պէտք էին հիւսիսային Ամերիկուն: Ի՞նչ պատճառ և ի՞նչ ծախք այդ փոխանակութեամբ առաջ էին գալու՝ թէ որ եւրոպու միջնորդութեամբ կատարուելու պարտաւոր լինէին. էլ աւելին, գաղթականական ուռելիք աւելի ածան էին ծախսում Մարտինիկում, Գուրասաօում, քան թէ Բարբատաի և Ճամայքայի մէջ և աւելի շահաւոր էր լինում հիւսիսային Ամերիկու ապրանքները Ֆրանսիական կղզիներում առնիլը, պատճառ որ, այն տեղ այդ ապրանքները մաքսախուսութեամբ էին մտնում, և թէ շատ աւելի քիչ մաքս էին տալի քան թէ Անկլիական կղզիներում: Արդ, թէ և մի այդպիսի առուտուր մի ուղղակի օրինաւորութիւն կամ դիմադարձութիւն էր նաւարկութեան դրին և հոգուն դէմ, նեղելի եղաւ սակայն, բարձր քաղաքականութեան պատճառներով և աչք խուեցին այդ ապօրինութեան վրայ:

Բայց չուտով բանը մի դժուար կացութեան մէջ ընկաւ, երբ Անկլի-

ական Անդիլեանք վերկացան և բացարձակ յայտնեցին թէ այդ ապօրինութիւն պատճառ է իրանց կործանման: Այդ բանումն է, ասում էին, մինակ բացատրութիւնն այն աճեցողութեան, որ առացել էր շաքարի առաջերութիւնն Ֆրանսիական կղզիներում իրանց ձնաս հասցնելով: Շարաբն առաջ քիչ արժէք ունէր Ֆրանսիացի անկարկուների համար, նրամէն հանուած ռօմն արգիլուած էր Ֆրանսիում օղու օգտին համար: Հիմա այդ ռօմն՝ իր ամենէն շահաւոր քշուելու տեղն էր գտել հիւսիսային Ամերիկու գաղթականաց մէջ: Հիւսիսային Ամերիկու ստացած փողը իբրեւ վճարմունք իր Անկլիական Անդիլեանց մէջ տարած բերքերին համար, Ֆրանսիացի անկարկուների ձեռումն էր անցնում, որոնք գործ էին ածում այդ փողը մեծացնելու և կատարելագործելու օր օրուայ վրայ իրանց շահաւորութիւնը: Սեւամարդկանց գինն աւելանում էր և մայրքաղաքն էլ ընստուել էր ու ցաւել, երբ շաքարի մշակութեան նուազումն յետոյ, արեւմտեան Հնդկաստան կարող չէր գնել առաջուայ պէս այնքան ձեռաչէն ապրանք, և երբ նաւարկութիւնն իր շահաւոր վարկն էր կորցնում և մաքսի եկամուտն էլ նուազում: Ամերիկու գաղթականք և իրանց փաստաբանք յանդուգնել չէին ինում այդ առաջերուած պատճառների առջեւ: Իրանք ալ նկատողութիւն էին անում, ասելով թէ, Անկլիական Անդիլեանց առաջերութիւնք անբաւական էին և շատ էլ թանգ, և թէ իրանց ողջ ռօմն ու շարաբը մայրքաղքին համար էր պատրաստած, և թէ նոր Անկլիոյ նահանգները, պէտք ունենալով իրանց ձկնորսաւեղեաց և իրանց՝ Հնդիկների հետ ունեցած առուտրին համար մեծ քանակութեամբ ռօմ, մինչեւ 1 միլիոն 260 հազար կալօն, ստիպուած էին Ֆրանսիացի անկարկուներէն ուզելու: Վաճառականութիւնը նրանց կարող վիճակումն էր դնում ահագին գումարներ անցունելու Անկլիում և այդպէս վճարելու իրանց յուզարկուած ձեռաչէն ապրանքները: Հիւսիսային Ամերիկն աւելի էր արժանի ակնածութեան, իբրեւ ազգային նաւարկութեան շատ աւելի գոր՝ տուող քան թէ շաքարահան կղզիները. թէ որ այդ կղզիք չէին յառաջանում, պատճառն իրանց անհոգութեան պէտք էին տալ և ոչ ուրիշ բանի, նրանք անչուշտ ռօմ էին քրանեցնում, ծորեցնում, բայց ոչ բաւականին, և նրանք աւելի էին սիրում Անկլիա յուզարկել, ուր այնպիսի գներ էին ձեռք բերում, որոնց նմանը հիւսիսային Ամերիկը վճարելու վիճակում չէր: Իրանց թագուն փառասիրութիւնն էր իրաք, մինակ իրանք ծախեն ռօմ և շաքար բոլոր Բրիտանական հպատակներին և իրանք հարստանան, առանց ուրիշի շահու մասին միաք անելու:

Անկլիական կառավարութիւնը սաստիկ էր չուարել, ճանաչելով հիւսիսային Ամերիկու գաղթականաց յառաջադէմ կարեւորութիւնը, նրանց առաջերութեան խելքէ դուրս աճեցողութիւնը, և նրանց առաջը մայրքաղքէն զատ իրանց բերքերն ու ապրանքները քշելու մի տեղ բաց անելու հարկաւորութիւնը. սակայն մարդ չէր համաձակում նաւարկու-

թեան օրէնքով անց կենալ։ Ուստի միջին ճամպու վրայ կանդնել որոշուեց ու 1733 թուին գնադրութեան մի եղանակ ձեռք առնուեց, որ նպաստում էր չաքարի առաջբերութեանը, և օտար երկիրներէ եկող չաքարին, ռօմին և չարաբին վրայ բարձր մաքսեր տրուեց. և որպէս զի կարելի եղածին չափ հիւսիսային Ամերիկացոց վաճառականութեան և նաւարկութեան առջեւ դուռը բաց թողնեն, թոյլտուութիւն եղաւ ուղղակի վաճառք տանելու Անգլիական նաւերով, Անգլիական գաղթականաց չաքարը եւրոպու երկիրներում ֆինխատերրէ սարաւանդէն դէնը դէպ ի հարաւ, նոյն թոյլտուութիւնը ֆրանսիան արդէն քսան տարուց հետէ արած էր իր գաղթականաց։

Այդ կարգադրութիւնք, ինչպէս բոլոր կցկտուր կարգադրութիւնք, ոչ ոքին գոհ չարին։ Հիւսիսային Ամերիկան՝ էլ աւելի եռանդով վեր կացաւ իր բնական իրաւանց ազատ գործածութեան ցանկանալ և Արեւմտեան Հնդկաստանը, չնայելով պաշտպան գնադրութեանց, պարտաւորուեց ձեռը վեր առնել յաղթելու յուսէն ֆրանսիական մրցման, որ աւելի վախենալու էր եղել Ս. Դոմինկան գաղթականութեան հաստատուելուց հետէ։ Բայց և այնպէս իրանց մայրաքաղքի յաղթական դրօշակի պաշտպանութեամբ, այնքան նեղութիւն չքաշեցին գաղթականական պատերազմների ժամանակ, որքան Սպանիական և ֆրանսիական գաղթականքը, մանաւանդ Եամայքան, Անգլիական Անդիլեանց մէջ ամենէն մեծը, մի նշանաւոր առաջացում ստացաւ և 1766 թուին ազատ նաւահանգիստ հրատարակուեց օտար գաղթականաց վաճառականութեան համար, ուրբանչիւր գլխաւորապէս ստեղիք և սեւամարդ էր առնում. 1750 թուին էլ իւլանտիոյ հետ ուղղակի առեւտուր անելու չնորհն ստացաւ։ Մինչեւ 1772 թիւը, Եամայքան չաքարի վաճառականութիւնը 11 հազար տակառէն դէնը չէր անցած. երկու տարի յետոյ 78 հազար տակառի էր բարձրացել, դուրս հանելով 26 հազար հակ չարաբ, և 6547 պարկ լաճուխ։

Դրանք էին Անգլիական Անդիլեանց գլխաւոր բերքերը. լեղակը, հալմեմբը և բամբակը իրրեւ աւելորդ բան էին համարում նրանց մէջ։ Սարուհների ներսածում սեւամարդոց մարդաշատութիւնը չափէ դուրս աճեցնելու ցաւալի հետեւանքն ունեցաւ. մինչդեռ սկզբում մարդաշատութիւն չատ հեռու էր մի և նոյն աճեցողութեան հասնելու։ Անդիլեանք ստանում էին Մեծն Բրիտանիայէն բոլոր այն ապրանքները, որոնք մի տարազատ երկիր կարող էր մատակարարել արեւագարձի ներքեւ եղող և հաղիւ մի քանի արհեստ ունեցող մի երկրի։ Սակայն այդ յուզարկութեանց ամենամեծը մասը միայն սպառուած էին գաղթականաց մէջ. Անգլիական կղզիք, միւս Անդիլեանց կղզիներու նման մեծ պահեստատեղիք էին, ուր մաքսատոյս վաճառականութիւնը Սպանիական ցամաքին համար ապրանք էր պատրաստում։ Միանգամ ասացինք, թէ ինչպէս Անգլիացիք այդ վաճառականութիւն անում էին. ինչպէս ափա-

պան գօրքեր դրուեցան և ինչպէս 1739 թուին՝ այդ բանի համար Սպանիոյ հետ մի պատերազմ տրաքուեց։

Հիմա պիտի յիշատակել Սկովտիական ընկերութեան մի հետաքրքրական փորձը. այդ ընկերութիւնն՝ ուղեց 1695 թուին մի գաղթականութիւն հաստատել կեդրոնական Ամերիկում, Տարիական պարանոցի վրայ։ Այդ դիտաւորութեան հեղինակն էր, նոյն այն Սկովտիացի Պատերսըն որ հիմնադրողն եղաւ Անգլիոյ Բանկին։ Մեծ խնամքով պարանոցին ամենէն նեղ մասն ընտրուեց, այն մասը, որու վրայ այսօր փորձ են անում չոգեկառքերով և չոգենաւերով մի հաղորդակցութիւն հաստատել երկու Ովկիանններու միջին. (այս ժամուս ջրանցքաբացութեամբ)։ Պատերսըն այդ դիրքով մտքումն էր դրած տիրապետելու թէ՛ հարաւային Ամերիկու և թէ՛ արեւելեան Հնդկաստանու հետ եղած վաճառականութեան վրայ։ Կուլիէլմ Գ. մի հրովարտակ չնորհեց ընկերութեան և սա 1698 թուին մի չատ նաւեր դրկել տուեց։ Նաւերը յաջողութեամբ հասան, այն տեղ Ս. Անդրէաս ամրոցն և Նոր Էտինբուրկ քաղաքը չինուեցան և տարածուելու վրայ էին, երբ մի բուռն Սպանիացի այդ գաղթականութեան դէմ։ Սպանիան բողոք բարձաւ այդ հաստատութեան դէմ, որն որ նկատում էր նա՝ իրրեւ մի բռնաբարութիւն իր գերիշխանական իրաւանց ոտքատրերի վրայ և արեւելեան Հնդկաստանի Անգլիական և Հոլանտական ընկերութիւնք նկատեցին Սկովտիական ընկերութեան միջում մի վտանգաւոր նախանձորդ։ Սկովտիացիք պարապ տեղ աշխատեցան հաստատելու թէ՝ Տարիականը Հնդկական կղերին էր պատկանում և թէ՝ Սպանիա իրօք ամենեւին այդ տեղ ստացուածք չունէր. զուր տեղ իրանց հրովարտակ առած էին բերում. կուլիէլմ այդ հրովարտակն նրանցմէ յետ առաւ և արգելք էլ դրաւ սաստիկ Ամերիկու գաղթականաց՝ չօգնելու իրանց նորեկ եղբարցը, ուստիկք կամուրջ պաշար դրկելով նրանց։ Այդպէս երեսէ թողուելով՝ ձեռնարկութիւնը հարկաւ պիտի վիժէր։ Սկովտիացիք սաստիկ կատղեցան, սակայն կամաց կամաց հանդարտեցան մերթ միաւորութենէն յետոյ, մանաւանդ եղան Անգլիոյ վաճառականական ամեն առաւելութեանց։

ԳԼՈՒԽ ԺԷ.

Հիւսիսային Ամերիկոյ գաղթականութեան պատմութիւնը պարզ է. իրանց ընթացքին մէջ ուրիշ ոչինչ ունի՝ բայց եթէ ազատութեան, հանդարտութեան եւ բարգաւաճութեան պատկերը. — Այդ գաղթականաց առաջնորդները՝ կրօնասիրութեան, ազատասիրութեան եւ նաւարկութեան հոգին, իրանց յետնորդներուն ժառանգեցուցին. — Հիւսիսային Ամերիկոյ ծովային առաջացումը, եր առաջին պարագիցներուն մայրաքաղաքը հետ նոր պատմութիւն դնելը տեսին. — Բոստոնի մէջ լոյս ապագայութիւն. — Պարերազմ պատմութիւն է. — Միացած նահանգներուն անկախութեան հռչակագիրը ծանուցուեց վերջապէս խաղաղութեան։

Անկլիոյ ստացուածքները Հիւսիսային Ամերիկոյ ցամաքի վրայ չափէն աւելի կարեւոր էին իրանց արտաքին վաճառականութեան համար, մանաւանդ Պարիզու խաղաղութենէն յետոյ՝ այդ ստացուածքներն իրար հետ պինդ կապուած մի ամբողջութիւն կազմեցին Ս. Լաբրէնտէն մինչ Միսսիսիբի և Հունտսոն նեղուցէն Ֆլորիտայի հարաւային քիթը։ Անկլիա մի անճանաչ երկրի միջով կարող էր ազատ համարձակ դէպի արեւմուտք առաջ գնալ մինչեւ խաղաղական Ովկիան և հաղորդակցութիւն ունենալ այդ ճամբով իր Հնդկաստանի տիրապետութեան հետ. նա՝ այդ կերպով չրջապատելու էր երկրագունդն մի գաղթականական գօտով և ձեռն էր առնելու վաճառականութեան բանկիրը ողջ ցամաքներուն մէջին։ Բայց մի այդպիսի մեծութիւն բաժին չէր կարող լինել մի ազգի և պէտք էր որ մի վճռական ժամանակ գար որ նախանձոտութիւն դրան մի սահման դնէր։

Յոուարտների կառավարութեան ներքեւ, Հիւսիսային Ամերիկոյ գաղթականաց մեծ մասը՝ իրանք իրանց արդէն քաղաքականօրէն կազմել ու սարքել էին առ հասարակ իրանց հիմնարկութիւնք որոշող ռամկավարական սկզբունքներուն վրայ։ Գաղթականութեան չարժումը, որ առաջ Անկլիաէն էր միայն, ամեն երկրի վրայ տարածուեց, ուր անկախ մարդիկ չէին կամենում աշխարհական կամ եկեղեցական ճնշողութեան ներքեւ ընկնիլ։ Այն գաւառը հասան թէ չէ՝ որտեղ հաստատուելու էին գաղթականք, անմիջապէս այն տեղ քաղաքացի էին դառնում, այսինքն ազգայնութիւն ստանում, որով և կապում իրանց նոր հայրենեաց հետ։ Ուսոի և պահեցին իրանց մէջ քաղաքական ամեն տեսակ փորձութեանց և փոփոխութեանց միջին նոյն և մի անտարամանկախութեան, նոյն և մի եռանդոտութեան և մի և նոյն անձնուիրութեան հոգին, որ ներանց վճռել էր տուել իրանց հայրենիքը թողնել և գնալ կոյս անտառներում մի նոր կեանք վիճակել իրանց և իրանց սերնդին համար։ Մայրաքաղաքը, որ մտքովը չէր անց կացնում թէ այդ անհիւրընկալ երկրի վրայ, մին օր պիտի գայ, որ պիտի տեսնայ իր ամենէն վախենալու թշնամուն վեր կենալը, ազատօրէն ճանաչել էր Նոր

Անկլիոյ գաղթականաց վրայ, իր՝ ներանց չնորհած առաջին հրովարտակներում մարդու և քաղաքացու ողջ իրաւանց վայելողութիւնը և այդ կերպով ամրացուցած էր իր կողմէն այն հպարտութիւնը, որ վերջապէս ներանց ներշնչեց իրանց ամբողջ ազատութիւնը ձեռք բերելու ցանկութիւնը։

Հիւսիսային Ամերիկու անօրինակ բարեբաստութիւնն ու արագ աճեցողութիւն հեչտ են բացատրուում։ Իր նոր բնակիչքը մի լուսաւորուած ազգի ծոցէն դուրս եկած և վարժուած իրանց փոքրիկ հասակէն՝ իրանց դատաիարակութեամբ՝ աչխատութեան և քաղաքային կեանքի հետ, իրանց ձեռնարկութեան համար պէտք եղած ամեն միջոցներն ու գիտութիւնքն ունէին։ Ընտանեցած լաւագոյն և իմաստուն կարգերի և սարդերի հետ, կարող էին մի նոր ընկերականութիւն կարգաւորելիս՝ մի դէն դնել աւանդական զեղծմունքները և ընդունիլ օգտակար բարեփոխութիւնները. երկրաբնակների սակաւութիւնը, իրանց թոյլ էր տալիս տէր լինելու անբաւ անտէր երկիրների։ Ամեն մէկ գաղթականութեան հիմնարկութեան ժամանակ, մի ահագին բաժին հող, ամենաբերրի տեսակէն, ամեն մէկ գաղթականին տրուած էր և, ինչպէս որ, ոչ կալուածական տուրք և ոչ մի որ և է հարկ ունէին վճարուելուք, իրենց աչխատանքը հարկաւ պիտի փոխարինուէր։ Ամեն երկրէ աչխատողներ բերելու չանք եղաւ և շահաւոր էր լինում անոնց բարձր վարձք տալը. ինչպէս որ, չնայելով այդ ձեռաչխատութեան թանկութեան, միչտ նորանոր շահավարութիւնք կային ձեռնարկելու. գործունեայ գաղթականք շատ չուտով, փառք հողի առատութեան և աժանութեան, մեծամեծ հողատէրեր եղան, և հողատէր լինելով, նոր նոր աչխատողների պէտք ունեցան։ Այդ կերպով ամեն մարդ հարստանում էր և դրամագլուխն էլ մարդաչատութեան հետ արագութեամբ աւելանում։

Պատճառ կայ միթէ զարմանալու, որ գործունեայ ու խելօք մարդիկ, ինչպէս որ եղել են շատ վաղուց հիւսիսային Ամերիկու անկարկուտք, հետամուտ լինին թափ տալու այն գերութեան, որն որ մայրաքաղաքն դրանց վրայ հարկ էր դրած, առեւտրական գերութիւնը։ Անկախութեան ցանկութիւնը սակայն շատ բնական է բախտը բանուկ մի երկրագործ գաղթականի, որ պիտի ազդ դառնայ։

Մի կարճ հայեացք Հիւսիսային Ամերիկու գաղթականաց ձեռարհեստական և առեւտրական վիճակին վրայ, պարիզու խաղաղութենէն յետոյ, ցոյց կը տայ թէ ի՛նչ աստիճան առաջաբեր զօրութեան էին հասած գաղթականք։ Նոր Անկլիան, Նիւ Եօրք և Պենսիլվանիան նոյն հողն ու նոյն բերքերն ունէին։ Նոր Անկլիա, մանաւորապէս, չինութեան համար ամենաընտիր փայտ էր տալի. միւս երկու գաւառները, ամենասազնիւ ցորեն, մանաւանդ սիմինտ, ինչպէս նաեւ կանեփ, վուշ։ Մրգատու ծառերը, որ եւրոպէն էին բերած այն տեղ, չատ լաւ էին չաղոդուած։ Հաստատուած և ուռճացած կարնկիք իրանց կճէպէն մի չգանուած

ապաղ (մի տեսակ փոշի մոլթ մաքրելու համար) էին ածել և կաշին էլ բոստնէն դուրս եկած ապրանքներէն մինն էր։ Ա.յդ դաղթականք տէր եղած ամեն տեսակ պէտքական նիւթեղէնների, կանուխ սկսան պարապիլ նաւային շինութեանց և, ինչպէս որ, ձուկը սաստիկ առատ էր ի-րանց գետերում և ափերում, ձկնապանութիւն իրանց համար մի մեծ զբաղմունք եղաւ։ Իրանց նաւական գիտութիւնն այն աստիճան կատարելագործուեց, որ մի ուրիշի տեղի չէր տալի և գրգիռ էլ տուեց իր մրցողութեամբ մայրքաղքի նաւատարբիչներին դանգատներին։ Գաղթականք, իրաւ է, մայրքաղքի նաւատարբողներին հաւասարներն էին նաւարկութեան մէջ։ Հաւասնի ծոցում և Ցէռնէօվի ալաղակուտի վրայ, գաղթականք աւելի նաւ էին գործածում. ձուկը հեռուաբար իրանց ա-ռեւտրին գլխաւոր ապրանքներէն մին էր։ Բացի ձկնէն և ուրիշ ապ-րանքէն, դուրս էին տանում փայտ, կուպր, ձիւթ. արմտեղէն, ինչպէս ցորեն, գարի, սիմինտր, վարսակ հայն, ալիւր, աղած միս, կարագ. պանիր, երկաթ, մուշտակեղէնք։ Մուշտակեղէնի համար, մանաւանդ նիու-Եորք իր դրքին կողմէն, իր հաղորդակցութեանց պատճառով ներ-սերի հետ Հաւասնի ճամպով և Ալբանի քաղքի հիմնարկութեան համար մի գլխաւորութիւն ունէր։ Գաղթականք ազատօրէն առևտուր էին ա-նում մայրքաղքի, Ամերիկու միւս առագաստանքների հետ և բռնապատմա-նաց ներքեւ Սպանիոյ, Պորտուկալի, Իտալիոյ, Ասորեան և Բանարեան կղզիներու նաւահանգստաների հետ, ուր ղրկում էին փայտ, ալիւր և ձուկն։ Մենք տեսանք ինչ բանով էր բաղկանում իրանց յարաբերութիւնք Անկլիա, ինչպէս նաեւ Անդիլեան կղզիներում, որոնց հետ մաքսանեն-գութիւնը չէր դադարած։ Մարկանդ և Վիրգինիա քթախոտ և Ծխա-խոտ առած բերող գլխաւոր երկիրներն էին, և ինչպէս որ այդ գաղթա-կանք չունէին մի ուրիշ ձեռարհեստ, այլ այն արհեստները միայն որ մայրքաղքին ամենայատակ չահեր էր տալի։ Երկու հարիւր Բրիտանական նաւ ամեն տարի գործ էին ածում Ծխախոտի վաճառատարութեան համար 36 միլիոն լիտր քաշի չափ, 373 հազար փաունդ Ստերլինկ ար-ժողութեամբ։ Անկլիան պատրաստում էր այն ժամանակ Ծխախոտ, գը-րեթէ ողջ Եւրոպայ համար, այդ ապրանքէն առնուած տուրքերը յետ բերէ ողջ Եւրոպայ համար, այդ ապրանքէն առնուած տուրքերը յետ էին տրւում այն տեղ նորէն դուրս հանուելիս. Գարօլինն ու Վիրգինիան տալիս էին մի բրինձ չատ աւելի ընտիր Հնդկաստանի և Իտալիոյ բրին-ձէն։ Ա.յդ հարաւային գաւառներէն լեղակ, մամ և մեղր էլ հանում էին։ Իսկ բամբակ, որ այսօր իրանց գլխաւ բերքն է, մի լիտր անգամ դուրս չհանեցին, քանի որ այդ գաւառներն Անկլիոյ էին պատկանում։

Հիւսիսային Ամերիկու՝ մայրքաղաք յորդարկած ահագին գումարներն իր երկրէն եկած և իր ձկնորսութեան բերքերով չէին բաւում վճարելու այն ամեն ապրանքներն, որ նա պարտաւորուած էր ներմէն գնել իր գործածութեան համար։ Գտատպարտուած միայն երկրագործ ժողո-վուրդ ձնալու, նա չահում էր ածում տարագործ երկրի մայրքաղքէն,

որմէ կախում ունէր։ Գաղթականք տեսնելով որ, ստիպուած են գոնէ, մի քանի ամենակոպիտ ձեռարհեստներ բանեցնել իրանց մէջ, Անկլիա այդ բանի համար պատրիկ յորդորեց։ Մի հարկաւորութեան առջեւն անգամ, որ չճանաչէն անկարելի էր, այդ ձեռարհեստները բանէն ա-մենախիստ բռնապատմաններում դրին, թոյլ տուեց Ամերիկացոց, որ իրանք իրանց համարակ հագուստները չինեն։ Բայց սաստիկ արգիլուեց նրանց բրդի կամ բրդեղէնի առուտուրը մի գաղթականութենէ միւս գաղթականութիւն։ Ինչպէս որ Ամերիկացիք ջրշան, ճագարի և ուրիշ կենդանու մորթերն էին ճարում աւելի հեշտութեամբ և աւելի աժան գնով Անկլիացոցմէ, յաջողուել էին գտակաշինութեան մէջ և սկսում էին գտակ դուրս յորդարկել. խորհրդարանի մի օրէնքը 1732 թուին յանկարծ կործանեց այդ ձեռարհեստն ամենաանտանելի կանոնների հնա-թարկելով։ Ա.յդպէս, ոչ ոք գաղթականաց մէջ գտակաշինութիւն կարող չէր անել, մինչեւ որ եօթ տարի աշակերտութիւն չանէր, և ոչ մի վար-պետ չէր կարող երկու աշակերտն աւելի ունենալ և ոչ էլ տեւամարդ ծառայեցնել։ Երկաթ չէր ընդունում մայրքաղքում, հապա միայն իրրև ձող և անդուռ, գաղթականք չէին կարող երկաթն որ և է կերպով բա-նել և պատրաստել։ Նաւարկութեան օրէնքէն առաջ եկած արգելքներն ու խափաններն արդէն յիշուեցան։ Եւրոպ եկող գաղթականաց նաւերը չէին կարող բնա առնել իրանց դարձին, բայց միայն մայրքաղքների նաւահանգստաներում, այսինքն Անկլոյ նաւահանգստներէն, բաց ի եր-բեմն դինի Քանարեան կղզիներուց, Մատէրային և Ձկնորսատեղեաց հա-մար էլ աղ։ Ողջ գաղթականական վաճառահանութիւնք պէտք էին դեպ ի Անկլիա ուղղուիլ։ Սակայն, ինչպէս որ Անկլիա՝ բոլոր բերքերն սպա-ռելու անկարող էր, որ ութեան խստութենէն ազատ կացուց մի քանի բերքեր, այսինքն ցորենը, ալիւրը, բրինձը, շոր ընդեղէնը, տաճ միսը և չինութեան փայտը, որ դրանց ուղղակի վաճառատարութիւնը թոյլ էր տուած Ֆինիսաերրէ հրատանգանի հարաւ դէնն եղող նաւահանգըստ-ներում։ Միւս ապրանքները վերապահուած միայն մայրքաղքին համար։ Իտալիան անգամ, որ շատ չահաւոր մի դուռ կարող էր բաց անել ար-մրտեղէնի քշուելուն, կանեփն ու քթանը նրանց արգիլուած էին։

Ա.յսպէս բռնաբարում էին արդարութեան ամեն սկզբունքները։ Գաղ-թականք բռնապատուած էին տալու յանձնելու իրանց ողջ բերքերը մայր-քաղքի, այն բերքերն անգամ, որոնք մայրքաղաքը չէր գործածում կամ սպառում և միւս կողմէն էլ բռնի ընդունելու իրանց պէտք եղած ամեն տեսակ առարկայ, մինչեւ անգամ այն առարկայքը՝ որ մայրքաղաքը օ-տարականէն էր առնում։ Ա.յդ բուռն դրութիւն, հիւսիսային Ամերի-կու–գաղթականաց համար աւելի ճնահակար, աւելի խափանարար էր, որքան միւս բոլոր գաղթականաց համար. նախ, նրա համար որ՝ իրանց հողի, իրանց կլիմայի նմանութիւնը Անկլոյ հողին և կլիմային հետ, չէր ներում երկու հնդկաստանների հետ պրծած, վճռած բաժանման նը-

ման, աչխատութեան և առաջբերութեան մի բաժանում. երկրորդ, նը-
րա համար որ՝ իրանց ազատական կարգերն ու սարքերն և իրանց մի-
տաւոր մշակութիւնը իրանց չատ աւելի սաստիկ զգալուն էին անում.
անիրաւութեան ու ճնշողութեան. Անգլիոյ՝ նրանց չնորհած պաչտպա-
նութիւնը իրան առատօրէն էր վճարում այն բացառուվի իրաւունքով,
որ ընդունում էր իր գործածութեան համար պէտք եղած ողջ գաղթա-
կանութեան բերքերը և մատակարարում գաղթականաց, իր արհեստա-
րաններէն դուրս եկած ապրանքները: Այդ սահմանում, Անկլիան միայն
մի արդար մեծարանք կամ ակնածութիւն ունէր պահանջելու. դրանէն
զէնը, նա՝ իր իչխանութիւն ի չարին էր գործածում:

Մաքսանենգութիւնը, անճոռնի և անիրաւ օրէնքներին անպրծելի
հետեւանք եղաւ և Անգլիա այդպէս քաւեց, դոնէ մի մասով, իր ուրիչ
երկիրներին տուած վնասը: Օտար վաճառքները նենգութեամբ ներս
մտրուած Հիւսիսային Ամերիկում, օրինաւոր վաճառատարութեան քա-
ղորդն էր անց կենում, գաղթականաց նաւերը օգնում էին այդ գործո-
ղութեանց յաջողութեան համար: Միևնոյն ժամանակ այդ նաւային զո-
րութիւնը, որ մանակից էր եղած, մեծ մասով, մայրաքաղքի վառա-
ւոր յաղթութեանց. վատահութիւն չնչեց Ամերիկացի ժողովրդին, և նը-
րան՝ իր ծովային զօրութիւնն յայտնելով՝ ցոյց էր տալի նրան անկա-
խութեան և մի մեծ ապագայի ճամպէն: Եօթնամեայ պատերազմի հե-
տեւանքը մի սարսափելի վախճան պէտք էր որ չտապեցնէր, որն որ
առաջուց ողոքէր համարձակելու իմացնել կամ նախազգացած լինէր, Գա-
նատի Ֆրանսիական գաղթականութեան հարեւանութիւնը, երկար
ժամանակ, Անկլիական կառավարութեան համար մի ծանր առիթ էր
անհանգիստ չանելու իր Հիւսիսային Ամերիկու գաղթականներն իրանց
քաղաքական ազատութեանց վայելելում. թէեւ չատ անգամ այդ ազա-
տութիւնը իրան դլուխն էլ ցաւեցուցած լինէին: Բայց այն ժամանակ
Անգլիա դադարած լինելով վախենալուց, որ Ֆրանսիա մի ուղղակի թի-
կունք չտայ ժողովներին գուցէ և ապստամբներին, էլ իր փափաքը չը
ծածկեց գաղթականներին քաղաքականօրէն աւելի կախուած անելու
մայրաքաղքէն և մանաւորապէս նրանց տանել տալու, տուրքերի միջո-
ցով, Անգլիոյ բեռներէն և պարտքերէն՝ իրանց մասը, որոնք պատե-
րազմն աւելացուցած էր: Մինչեւ այն օր՝ գաղթականք երբէք դերծ չէ-
ին տուրքէ, բայց ողջ Անկլիացոց անջատելի իրաւունքից վրայ հիմնուե-
ով. իրաւունք, որ իրանց մանաւորապէս երաչխաւորուած էր հըրո-
վարտակներով, միչտ առաջուց իրանց հաւանութիւնը տուած էին:
Այդ, Բրիտանական խորհրդարանը՝ իր ծայրագոյն իչխանութեամբ ինքն
իրան աւելի նչանակութիւն և արժողութիւն տալով, ինքն իրան էլ իրա-
ւունք տուեց գաղթականաց վրայ տուրք դնել առանց նրանց հաւանու-
թեան: Գաղթականք այդ իրաւունքն նրան մերժեցին այն պարզ պատ-
ճառով, որ իրանք երեսփոխան չունէին խորհրդարանում: Առաջին կռիւը

բացուեց 1765 ին դրօչմի օրէնքի հարցով, որն որ կամավարի Ամերիկու
վրայ էր գործադրուած: Այդ պատճառով, գաղթականաց մէջ տեղի
ունեցած խռովութեանց և Նիու-Եօրքում եղած մի համաժողովի բանա-
գրած աղերսի իրաւանց յայտարարութեան վրայ, նոր պաչտօնէութիւնն
որոչեց իր դրած օրէնքն ետ առնել: Տրաքողը մի պահիկ այդ կերպով
կանգ առաւ, բայց արդէն բռնկած կրակը՝ մոխրի տակով էր թաղուած:
Քաչկռտուքներն երկարեցան և 1767 թուին Անկլիական կառավարու-
թիւնը կարծեց կարող լինել չայի, թղթի, ապակու և ներկի վրայ հար-
կեր դնելով՝ աւելի յաջողութիւն ձեռք բերելու: Բայց մի այդպիսի կա-
մավար հարկադրութեան դէմ դիմադրութիւնը կրկնապատկեց իր զօ-
րութիւն, մանաւանդ Մասսաչուսէտտում, ուր Բոստն չարժման պոր-
տըն եղաւ: Անկլիա Լորտ Նօրթի ներքեւ, նորէն մի քայլ յետ առաւ:
1770 թուին նոր տուրքերը չընդունեցան, բաց ի այն տուրքէն՝ որ չայի վրայ
էր դրուած: Բայց ի՛նչ էին լինելու այդ կցկտուր զգուշութեանց ար-
դիւնքը. ուրիշ ոչինչ, այլ անվստահութիւնն աւելացնել: Ո՛րքան Ամերի-
կացիք մտածում էին ու խորհում, ա՛յնքան համոզուելով էին համոզ-
ւում իրանց իրաւունքով: Մերժեցին գնելու այդ առանց իրանց հաւա-
նութեան հարկի ներքեւ ընկած չայը: Ցետոյ, երբ մայրաքաղքն ուզեց
բռնադատել նրանց գնելու, նրանք դիմադրեցին և մի մեծ և դժուխային
յուզման մէջ, որ տեղի ունեցաւ Բոստնում 1773 թուին, Դեկտեմբերի
26 ին, մի ահագին նաւու բեռ չայ ծով թափեցին:

Այդ օրն ու այդ երբ՝ վճռեցին Նոր Աչխարհի անկախութիւնն ու ա-
զատութիւնը: Անկլիա ուղեց պատժել ապստամբներին: Բոստնի նաւա-
հանգիստը պաչարի առնուեց: Մասսաչուսէտտի հրովարտակը պատ-
ռուեց և մի բանակ ղրկուեց Ամերիկում: Գաղթականք մինչեւ այն օր
խորհրդարանի պնդապահանջմանց հետ էին կռուի բռնուած և ոչ թէ
գահի հետ, այն ժամանակ գահէն էլ բաժնուեցան: Պատերազմ տրաք-
ուեց 1776 թուին. թէ և սկզբում տեղական էր եղած, բայց չուտով մի
ընդհանուր պատերազմ դառաւ: Ապստամբ գաղթականք եռանդուն
դաչնակիցներ գտան իրանց, Ֆրանսիական, Սպանիական և Հոլլանտա-
կան տէրութեանց միջում: Այդ տէրութեանց առնչութիւնն Անկլիոյ
դէմ իրանց աչքերը խուփ էին արել տեսնելու, որ օգնելով Հիւսիսային
Ամերիկուն իր անկախութիւնը ձեռք բերելու, ցոյց էին տալի իրանց
բուն գաղթականաց ազատութեան ճամպէն: Այդ վեց տարուայ պատե-
րազմի դէպքերը, որոնք տեղի ունեցան ցամաքի և ծովու վրայ, քաղա-
քական պատմութեան են պատկանում, Չեղոք դրօչակի իրաւանց յայ-
տարարութիւնը, փոքրիկ տէրութեանց նաւարկութեան արած յառաջա-
ցումն և այն զարմանալի միջոցներն որոնցմով Անկլիա պահպանեց ծովու
վրայ իր տիրապետութիւնն իր միաբան թչնամիներու դէմ, մեր առաջ-
կայի նիւթ են. բայց այդ իրողութիւնք չատ անգամ յիչեցինք ուրիչ
տեղ: Պատերազմի հետեւանքը, այսինքն Հիւսիսային Ամերիկու տաննե-

րեք նահանգների անկախութիւնն, որն որ ճանաչուեց 1793 թուին վէրսալլի դաշնագրութեամբ, մի նոր թուական է նշանակում լուսաւորութեան տարեգրերում, և ինչպէս որ արդէն ասել ենք, ոչ մի ուրիշ դէպք չէր կարող աւելի լաւ վակել այդ յաւաջիկայ ժամանակաշրջանը։

ԳԼՈՒԽ ԺԸ։

ՎԷՔԼԻ ԼՈՒՍԱԳՐՈՒԹԻՒՆ։

Ցոյս ունինք, որ այս գլխիս ընթերցողք, պիտի ճանաչած լինին, որ այդ ժամանակաշրջանի վերջէն սկսած՝ Անկլիական ազգը ծայրագոյն պլին (գագաթ ծայրին) էր հասուցել արդիւնաստու և առաջաբեր դործունէութեան տեսական և գործնական գիտութիւնն իր բոլոր ճիւղերովը։ Այդ ազգն եղաւ առաջինն՝ թագաւորաց մի սարսափելի և արիւնալի դաս սրբողը։ Նմանապէս այդ ազգն եղաւ առաջինը, այս նոր դարերում, հին հասարակապետութեանց եռութիւնը դործով կատարողը՝ իր երկրի նեղ սահմաններում։ Նոյն և մի գործունէութիւն, նոյն և մի զգացմունք դէպի մի նպատակ դիմելու, այդ երկրում և այդ ազգում ամեն կարգի ու աստիճանի մարդկանց վրայ տիրած էր։ Ամեն վաճառք, ամեն շարժմունք, ամեն խորհուրդ իրար էին պատահում այդ ազգում հասարակաց երախիկում։ Մինակ այդ լծակի օգնութեամբ, որ միլիոնաւոր թեւերով հասունցած և պատուական ու երեւելի մարդկանց ուղղութեամբն էր առաջ վարուած, Անկլիական ազգը մի նոր օրինակ տիրապետութիւն ձեռք բերեց, որն որ անց կացած վիճաբանական կամ կրօնական տիրապետութեանց հետ ամենևին նմանութիւն չունի։ Անկլիոյ առեւտրական դերազանցութիւնն իրան դլխաւոր հիմունք ունի՝ այն չահագատողութեան և նիւթական դործունէութեան մոլեկան սէրն, որ այդ երկրում շատ կանուխ յայտնուեց մարդկանց միջում և որն որ հասունցնելով ազգին ազատ դաստիարակութեամբ, քիչ քիչ երբեմն սկզբունք կառավարութեան հաստատուեց, և այն տեղ մնաց քաղաքական ամեն տեսակ փոփոխութեանց և ամեն տեսակ վարձութեանց մէջ՝ ազգային բնութեան ճշմարիտ նշանը։ Դժուար է որոշելը, թէ ո՛րը նիւթական զօրութենէն և բարոյական զօրութենէն, աւելի ներգործութիւն է ունեցել մինը միւսի վրայ, թէ ընկերականութիւնն է ունեցել մինը միւսի վրայ, եթէ ո՛չ ձեռարհեստների վրայ։ Տուրեւառիկ դրութիւնն ու նաւարկութեան օրէնքը, այն երկու բառերն են, որոնցմով մարդիկ միշտ պատրաստ են մեկնելու և բացատրելու Անկլիոյ վաճառականութեան մեծութիւնը։ Անշուշտ չէ կարելի դէնը թողնել այդ երկու տարերքը. սակայն կարելի է դրանք զէրծների հետ բաղդատել, որոնք պէտք ունին իրանց մէջ առաջ թռուանշաններ ունենալու, մի արժանութիւն ունենալու համար։

Մինակ այդ երկու տարերք չէին պատրաստելու Անկլիոյ համար աւելի մի բարձր վիճակ քան թէ Ֆրանսիոյ, Շուէտայ, Դանիոյ և միւս տէրութեանց, որոնք իրանց վատահութիւնն այդ թլու (դլխամու) վրայ դրին։ Անկախութեան և իրաւանց բնածին զգացմունքն ազգին մէջ, մտածողութեան լուսաւորութեամբ և գործողութեան արագութեամբ այնպիսի քնաւորութիւնք են եղել, որոնք կարելի է թէ՝ ցեղերի իրար հետ խառնուելուն բարեյաջող արդիւնքը լինին, քաղաքական և քաղաքային կարդերն ու սարքերը, օրէնքներն ու կանոնները, տէրութեան իշխանութեան առջեւ դրուած դաշնակաւոր սահմանաւորութիւնը, սահմանադրութեան պատմական զարգացումը, ժողովրդային դատաւորականութեան ձեռքով հրապարակում և անկախօրէն մատուցած արդարութիւնը, երկարատեւ խաղաղութիւնը, երկրին աշխարհագրական դրքին տուած ապահովութիւնը, օրէնդրութեան լիմաստութիւնն ու ազատականութիւնը ներսուանց, ու գօրաւոր առաւելակղութիւնն էլ դրսուանց՝ այն պայմանքն եղան որք Անկլիան այդ վիճակին հասուցին. առանց դրանց, նաւարկութեան օրէնքը, դաղթականական դրութիւնը, մաքսային տուրքերը, վարձքերն ու արդելադրութիւնք ամել և անօգուտ էին մնալու։ Այդ միջոցների օգտակարութիւնը, մանաւանդ այդ ժամանակներում, վան՞ դի այսօր էլ իրանց ժամանակն անց են կացուցել, համեմատական կարող էին լինել և ոչ բացարձակ։ Առաջին փորձերը յաջողելով՝ դրանց յետնէն օգնելու քաջալերութեան, յաջողութիւնն իրանց ամենայանդուդն ձեռնարկութեանց մղեց և վարչականութեան ձեռին էլ միջոցներ տուեց Եւրոպու դաշինքների ձեռքն բռնելով ման ածել. Հռոմայեցոց մէջ վաճառականութեան մենաշնորհութիւնը տիեզերական տիրապետութեան հետեւանքն էր եղած։ Անկլիա ուրիշ միջոց ձեռք առաւ։ Նա՝ վաճառականական մենաշնորհութեամբ հետամուտ եղաւ տիրապետել աշխարհի։

Անկլիա՝ բնութենէն ունեցած առաւելութեանց միջոցով, երեւում էր որ երկրորդ կարգի մի տէրութիւն լինելու էր վիճակուած։ Մի կղզի լինելով, օտար արշաւանքներէն պատսպարուած էր. բայց նա՝ աւելի լաւ դիրք չունէր ծովային վաճառականութեան համար արեւմտեան Եւրոպու աշխարհներէն։ Ընդհակառակն, արեւմտեան երկիրները, որոնք աւելի հեռու չէին նոր աշխարհէն, Անկլիոյ վրայ՝ մի աւելի սերտ մերձաւորութիւն ունէին Միջերկրականով հին աշխարհի միւս մասերին քան մաքսային վաճառականութեան չնորհիւ, որմէ Մեծն Բրիտանիա բոլորովին զուրկ էր։ Ինչ սաստիճանի որ, իր կրօնական, քաղաքական և ձեռարհեստական յեղափոխութիւնքն բարւոքած լինին իր կացութիւնը, աւելացուցած իր աղբիւրները և զարդացած իր հանճարը, դրանք բաւական չէին դեռ առաջին աստիճանին հասցնելու իրան։ Բայց քանի որ գինուորք և զօրականք, ազգերն ու ժողովրդներ ցամաքային Եւրոպում փողի համար պատերազմ արին, քանի որ փողը, ոսկին բաց արեց դաշ-

լիճների դուռը և դաշնադրութեանց պայմանները տուն տուեց, Անկլիա չուտով հասկացաւ որ մի տերութեան զօրութիւնը՝ իր հարստութենէն էր կախուած, և իր քաղաքական ազդեցութեան չափն ունէր իր միլիոններուն թուի վրայ։ Հարկ չէր որ այդ հարստութիւնն ու միլիոնները զուտ ոսկի կամ արծաթ լինէին. հապա բաւական էր արդիւնաբեր զօրութիւնք և երկրին բերքերն արդիւնագործել։ Անկլիա մանակից եղաւ, պաշարեղէնի միջոցով ամեն ցամաքային պատերազմներին, այդ բանի համար մեծ գումարներ անց կացան Գերմանիոմ։ Անկլիա իր դաշնակիցներուն յաջողութենէն օգուտ քաղելուց յետոյ, ո՛ր դաշնադրութեանց մէջ որ նա՝ իր զօրութիւնն ու ազդեցութիւնն առաջ էր քշում, հետամուտ էր լինում աւելի առեւտրական առաւելութիւնք ձեռք բերելու՝ քան թէ երկրային ստացուածք. նա՝ կարող էր խաղաղութեամբ չարունակել իր երկրում ձեռարհեստները, նա՝ ոչ մի մարդ չէր կորցնում, նա՝ չէր տեսնում երբէք իր հողը տակն ու վրայ և անարդ վիճակում։ և յետ էր առնում իր ձեռարհեստներէն դուրս եկած բերքերուն փոխարէն իջրեւ վճարմունք, իր մատակարարած դրամական օգնութեան մեծ մասը։ Շատ անգամ էլ այդ դրամական օգնութիւնը ապրանքով էր վճարուում։ Այդպէս՝ պատերազմներն ամեն տեղ աղետալի, Անկլիոյ համար հարստութեան և չահու և փող դատելու աղբիւր եղան։ Ցամաքային Եւրոպան՝ Անկլիոյ իր վրայ դրած այդ ծանր լուծը զգաց, բայց այն ժամանակ՝ որ էլ անկարելի էր թօթափ տալ այդ լուծն իր վրայէն, երբ Անկլիա՝ վաճառականութեան, ձեռարհեստականութեան և նաւարկութեան մէջ խիստ յառաջադիմութիւն էր արած, Եւրոպա անկարող էր նրան հասնելու։ Մինակ Ֆրանսիան մի պահիկ ճանաչեց վտանգը և չանաց դէն քշելու, բայց պարապ տեղ. այդ երկրում պաշտօնեից կամ դահլճի քաղաքականութիւնք փոփոխում էին վեհապետի հետ կամ պաշտօնեին հետ, մինչդեռ Անկլիում ազդային քաղաքականութիւնը կտակով էր անց կենում անփոփոխ, պորտէ պորտ։ Ցօրէն՝ երբ եղիսաբեթ թագուհին դուրս քշեց Հանսեականաց, ասելով, "Նախ իմ ազգը, յետոյ օտարականը", այդ օրէն է սկսում Անկլիոյ առեւտրական և ծովային քաղաքականութեան յաւուրկ հզին։ Այն արագութեամբ որ հասաւ նա մի անհամեմատելի բարձրութեան, և այն հաստատամտութեամբ որ նա այդ բարձրութեան վրայ ինքն իրան բռնեց, պահպանեց ու մնաց, մի հրաշք է աննման և անօրինակ պատմութեան մէջ։

ՀՀ Ազգային գրադարան
NL0342314